Հայկական առաջին մասնադիտական թատրոնին («Արեւելեան թատրոն») անդրանիկ ներկայացումը տեղի ունեցաւ 1861 Դեկտեմբեր 14ին : Հանդիսաւոր ձեռով ներկայացուցաւ Փրանսացի թատերադիր Ռոթայի «Երկու յրանապետները» : Դերակատարներն էին նորաստեղծ թատրոնին ղիւտար ուսերը՝ Պետրոս Մաղաքեան, Յովհաննէս Աճէմեան, Յովսէփ Չերաչէ, Մարտիրոս Մնակեան, Սերովբէ Պէնկ - լեան, Արուստեակ Փափազեան եւ ուրիշներ, որոնց շարքին նաեւ երիտասարդ Թրեանցը, որ ստանձնած էր նաւապետ Կիւթաի դերը : «Երկու յրանապետներ»ուն կը յաջորդեն Փելիկայի «Ճրան - չեքո տա Ռեմինի»ն, Պէշիկիւսի «Արշակ Բ.»ն, Թէրզեանի «Սանդուխտ կայսր», Հէքիմեանի «Չաղապանին աղ - վիկը», Երվանդի «Աւագանները» եւ այլ ներկայացումներ : Երկու թատրոնին ղիւտար բեմավարը՝ իտալացի Ասթի կը նկատէ Թրեանցի կատակերգակի յատկութիւնները եւ կը քաջալերէ այդ ուղղու -

թեամբ : Յետագային արդէն, երբ վերջնականապէս ձեւաւորուած էր իր «Կիծը», հետեւեալ կերպով ընտրուեց իր կոչումը, «Աշխարհի մէջ իւրաքանչիւր ոք մէկ - մէկ կոչում ունի, ամէն մարդ ժամկոչ է կրնար ըլլալ : Թատերական արուեստին մէջ ալ ասանկ է, ոմանք լացնելու յատկութիւն ունին, ոմանք զբոսելու, ոմանք պաղցնելու, ոմանք ահագնելու եւ ոմանք ալ խնդացնելու, բայտը զիս այս վերջինին տրամադիր ըրած է. ինչ դժ - րայտութիւն, լայտ փափաք ունեցած գիշերս ալ խնդալու, եւ որ ամէնէն ծանր է խնդացնելու ստիպումը եմ...» :

«Արեւելեան թատրոն»ին առաջին փա - կումէն ետք զինքը կը տեսնենք մերթ Մտեփան էքզեանի, մերթ Յակոբ Վար - դովեանի եւ մերթ Թովմաս Ֆասուլաճեանին խոսքերուն մէջ : Այս վերջին խումբին հետ, որուն կազմին մէջ էին երիտասարդ Աղամեանը, Պաշիկ Փափազեանը, Յովհաննէս Աճէմեանը եւ ուրիշներ, Թրեանց 1870ին կը մեկնի Նոր Նախիջ - ւան, ուր խումբը կը բոլորէ յաջող թա - տերաշրջան մը : Նիւթական դժուարու - թիւններու պատճառով թատերաշրջանի վերջաւորութեան խումբը կը լուծուի եւ կը վերադառնայ Պոլիս :

Բնական զործունէութեան ամէնէն բեղմնաւոր շրջանը կը սկսի 70ական թը - ւականներու վերջերք, երբ Ֆասուլաճեանի հետ կը մեկնի Պուրսա, ուր զերեք կը ստանձնէ Մոլիէրի կատակերգութիւնն - րուն մէջ : Մեծ տպաւորութիւն կը գոր - ծեն իր մարմնաւորած տիպարները՝ Սիւ - նարըլը, Ժօրթ Տանտէն, Պուրսանիլը, Արփահոնը ինչպէս նաեւ Տոն Կրեկորին՝ Կրտոնիկ համանուն թատերգութեան մէջ : Յատկապէս այս վերջինը եղաւ Թրեանցի չգերազանցուած գլուխ - գոր - ծոցը :

1883 Նոյեմբեր 23ին Թիֆլիսի մէջ ներ - կայացուցաւ վերոյիշեալ կատակերգու - թիւնը : Ականատեսներու վկայութեամբ բոլորին ուշադրութեան առանցքը Թըր - եանցի մարմնաւորած Տոն Կրեկորին էր : Բանի մը տարի շարունակ կը շրջագո - յի քաղաքէ - քաղաք, իսկ երբ 1891ին, երկարատեւ դադարէ ետք Գէորգ Պետ - րոսեանի ջանքերով Թիֆլիսի մէջ կրկին ծնունդ կ'առնէ հայկական թատրոնը, տեղական ուսերէն դատ, խումբին մէջ կը մտնեն նաեւ Սիրանոյշն ու Թրեանցը :

Այնուհետեւ հանդիսատեսը այդ բացա - ռիկ տաղանդի տէր կատակերգակին կը հանդիպի Պաքուի մէջ՝ 1897 - 98 թատե - րաշրջանին :

1898 Յունուարին իր բեմական զործու - նէութեան 25ամեակին առթիւ Պաքու կը հրաւիրուի Գէորգ Տէր - Դաւթեան : Ա - նոր պատուին, իր իսկ մասնակցութեամբ կը ներկայացուի նախ «Պիսոյն» եւ ապա Յունուար 10ին «Մըսիկնի խորամանկու - թիւնները», ուր ղիւտար զերեք կը ստանձնեն երեք անուանի կատակերգակ - ներ՝ Գէորգ Տէր - Դաւթեան, Դաւիթ Թրեանց եւ Արամ Վրոյր :

Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն

ԳՐԱԿԱՆ ՀԱՐՅՆԵՐ

Հայաստանի գրողներու տան (Երեւան) մէջ, Նոյեմբեր 17 - 18ին տեղի ունեցած է խորհրդակցութիւն մը, ուր քննութեան առնուած են թարգմանութեան հետ կապ ունեցող զանազան հարցեր :

Բացման խօսքը ըրած է գրողներու մի - ութեան վարչութեան առաջին քարտու - դարը՝ Է. Թովհանէ : Եւ շտապէ կ'ըսէ, թէ թարգմանական գրականութիւնը ներկա - յիս հասած է ակնառու աստիճանի մը եւ այդ մարդին մէջ շատ կարեւոր աշխա - տանք կատարած են Պաշիկ Դաւթեանց, Ս. Վահուհի, Վ. Յարութիւնեան, Մազման - եան, Վ. Միքայէլեան, Պ. Միքայէլեան եւ ուրիշներ, զեկուցարները այնուհետեւ

«Ներկայացումն ունէր մի շատ հետա - բերքի կողմ, — կը գրէ «Մշակ»ը, — նրան մասնակցում էին մեր այժմեան բե - մի երեք յայտնի քննիկները, Պ. Տէր - Դաւթեանի հետ խաղում էին Պ. Պ. Թըր - եանց եւ Վրոյր : Ներկայացումը մի տե - սանկ մըցուցութիւն էր : Մրցութիւնը ըստ ե - րեւոյթի յարել էր զերասանների ընդու - նակութիւնները եւ ոգեւորել էր նրանց, երեքն էլ փայլեցին իրենց խաղով» : Ան - դրադառնալով Թրեանցի խաղին, թերթը մասնաւորապէս կը շեշտէ. «Պ. Թրեանց խաղում էր աւելի յաջող, քան երեւելից է եւ կարծես թէ չէր ուզում զիջել առաջ - նութեան դասին մեր նշանաւոր քննիկին (Գ. Տէր - Դաւթեանին)» :

Կուսարտի 1897-98ի թատերաշրջանը եւ մինչ խումբը կը պատրաստուէր յաջորդ - թատերաշրջանին, Թիֆլիսի մէջ յետին չքաւորութեան մէջ 1898 Օգոստոս 20ին 58 տարեկանին կը մեռնի Ժիծաղի վար - պետը :

Իր «Բառասուն եւ հինգ տարի հայ բե - մի վրայ» յուշագրութեան մէջ զերասան Գրիգոր Աւետեան հետեւեալ կ'ըսէ ան - ուանի կատակերգակին մասին. «Նա իր շարժ ու ձեւերի մէջ շատ գուսպ ու ժլատ էր, չէր սիրում շարժիլ դիմել, ունէր չափազանց հարուստ միւլիկա : Մոսկու - յում երբ ես տեսայ Քորլին եղբայրներին, Բոմբեի Պրանսէլի այն երկու սրտերին, մեծ եղբայրը, որ յայտնի էր իր արտա - կարգ միւլիկայով եւ դրանով էր համար - եայ իր յաղթութիւնները տանում, Թըր - եանցին իր միւլիկայով ոչնչով պակաս չհամարեցի նրանից : Ամբողջ րոպէներ նա լուսն մ'ունջ խաղում էր եւ հասա - րակութիւնը ծիծաղից խեղդում էր ... Մեծ արտիստ էր...» :

Բնական հմայքով, բնածին հիւմորով, հարուստ եւ խօսուն դիմախաղով օժտը - ւած արուեստագէտին ստեղծագործու - թիւնը հայ բեմարուեստին փայլուն էջե - րէն էր :

Ռ. ՓՍՇԱՅԵԱՆ

անդրադարձած է վերջին տարիներուն լոյս տեսած կարգ մը անյաջող թարգմա - նութիւններուն եւ անոնց պատճառներուն մասին : Այս կարեւոր աշխատանքը շատ անգամ կը վստահուի անսիրտ կամ լեզ - ուական կարողութիւններէ եւ զեղազի - տական ճաշակէ զուրկ մարդոց : Քատ - րերու պակասն ալ զգալի է :

Պաշիկ Դաւթեանց դիտել տուած է, թէ լաւ թարգմանութեան պարագային ըն - թերցողը կը մոռնայ երկին թարգման - ուած ըլլալու հանդամանքը, որովհետեւ թարգմանողը այդ աշխատանքին մօտե - ցած է սրտով եւ հասկացողութեամբ :

Հայկական հեռագրական զործակալու - թեան տնօրէնին տեղակալ Գ. Մարտիրոս - եանի համաձայն թերթերուն, ձայնա - փելիքին, շարժապատկերին մէջ չկայ մի - օրինակութիւն տարազներու գործածու - թեան հարցին մէջ : Գիտութիւններու ա - կադեմիայի լեզուի կաճառը, ինչպէս նա - եւ տարագրամանութեան կոմիտէն շատ քիչ կը զբաղին մեր լեզուին զարգացման հետ կապ ունեցող այժմեական խնդիրնե - րով :

Համաձայն Ստ. Զօրեանի, օտար լե - զուներէ կատարուած կարեւոր թիւով թարգմանութիւններ միօրինակ են, ա - նոնց մէջ չեն պահպանուած հեղինակին ինքնատիպ ոճը, անոր արուեստին ա - ուանձնախառնութիւնները : Գրողէտը ա - ուաջարկած է օրինակ առնել Յովհ. Թու - մանեանի թարգմանական արուեստին եւ, մասնաւոր, ձեռք առնել զործնական քայլեր՝ թարգմանական գործը բարձր հիմքով վրայ դնելու համար :

Փրոֆ. Գ. Սեւակ խօսած է լեզուի մաք - րութեան, ձկունութեան եւ պատկերաւոր - րութեան հարցերուն մասին : «Լեզուն միայն հաղորդակցութեան միջոց, միայն շինանիւթ է, լեզուն նաեւ արուեստ է, որուն պէտք է տիրապետեն մեր գրողներն եւ թարգմանիչները», եղբակցացած է փրոֆէսօրը :

ՁԱՆԱԶԱՆ ԼՈՒԻՐԵՐ

ԵՐԵՒԱՆԻ մէջ մտաւորականներու հետ հանդիպում մը ունեցաւ Աւստրալիայի եւ Նոր Զելանտայի առաջնորդական փո - խանորդ Արամայիս Քհնյ. Միքայէան : Հայաստանի պատկան մարմիններուն յանձնեց Կարկաթա լոյս տեսած «Նոր Աղ - դարար», «Լոյս» եւ «Չայն» ամսաթեր - թերուն հաւաքածոները, ինչպէս նաեւ զանազան ձեռագիրներ :

ԱՐՈՒԵՍՏԻ հիմնարկութիւնը Ենայէն (Գերմանիա) նուէր ստացաւ դերմանա - կան «Շէյքսպիրեան տարեգիրք»ին 15 հատորները, որ կ'ընդգրկեն հարիւրամ - եայ պատմութիւն ունեցող այդ պարբե - րաթերթին 82 - 101 համարները : Նուէր զրկողն է Արշակ Մեղրան : Հատորները պիտի յանձնուին Շէյքսպիրեան դրաղա - րանին :

ԵՐԵՒԱՆԻ, Լեւինականի եւ Կիրովակա - նի մէջ նուագահանդէսներ տուաւ ծանօթ ջուլթակահար Մանուկ Բարեքեան, Լոն - տոնէն :

պիտի պայքարի իր իրաւունքներուն հա - մար :

Հոգ չէ թէ նոյնիսկ բարեկամ պետու - թիւններ, բարոյական ամէն սկզբունք ոտքի տակ առած, նիւթական շահերու համար, հովանաւորեն Ռեքագործ եւ Յե - դապալան Թուրքը եւ անոր ոճրամիտ կա - ռավարութիւնը :

ՀԱՅԿԱԶՆ Գ. ՂԱԶԱՐԵԱՆ

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (89)

ԴԱՆԱԿԸ ԾՈԾՐԱԿԻՆ

Բանի րոպէ ետքը, դարմանքով տեսայ, որ Փուարօ ձեռք առաւ հեռաձայնը եւ խնդրեց ձէննի Տրիվերէն ներկայանալու ժամը տասնութէկին :

Վստահ թէ պիտի չպատասխանէր ին - ծի, զրուշացայ հարցումներ ուղղելու իրեն :

Առաջինը՝ Պրիան Մարթէնը եկաւ : Ա - նիկա թէ Փիլիքեայէս եւ թէ բարոյապէս շատ առողջ կ'երեւէր. տպաւորութիւնս էր թերեւս, բայց զինքը քիչ մը նեղ կա - ցութեան մէջ մնացած կը կարծէր : Ձէն - նի Տրիվերէն հասաւ պահ մը յետոյ : Այս վերջինը եւ Պրիան դարմացան զիրար տեսնելով :

Փուարօ ժամացոյցին նայեցաւ : — Աստիկան ժարը չեմ կարծիր որ ու - չանայ :

Պրիան Մարթէն ցնցուեցաւ :

— Ուստիկան ժարը, հարցուց :

— Այո, վաղեմի բարեկամ մըն է ...

Ժամադրուած եմ իրեն հետ :

Այդ վայրկեանին ներս մտաւ ժար : Պրիան Մարթէնի եւ ձէննի Տրիվերէն ներ - կայութիւնը եթէ զարմացուց զինքը, շա - նաց չարտայայտել եւ իր սովորական քա - ղաքավարութեամբ բարեկեց Փուարօն :

— Տեսնենք, Պարոն Փուարօ, թէ ի՞նչ կը պահանջէ այս հաւաքոյթը : Կ'երեւի թէ կարեւոր յայտնութիւններ ունիք ը - նելիք :

Փուարօ ժպտաց :

— Շատ փոքրիկ եւ պարզ խնդիր մը... այնքան պարզ, որ կ'ամենամ կանուխէն նշմարած չըլլալուս համար : Եթէ կը թոյլատրէք սկիւմ պատմութեանս :

Ժար ժամացոյցին նայեցաւ :

— Եթէ ձեր պատմութիւնը մէկ ժամէն աւելի չի տեւեր ...

— Ապա ի՞նչ եղէք, շատ աւելի նուազ ժամանակ պիտի գրաւեմ միայն : Դուք կը փափաքէք ստուգել Լորտ Էճմարի, Միս Ատամսի եւ Տոնալտ Բոսսի ոճրագործը, չէ՞ :

— Եթէ հնարաւոր ըլլայ, ըսաւ ժար զրուշութեամբ :

— Հաճեցէք քիչ մը ուշադրութիւն ըն - ծայել ինձի, եւ ամէն ինչ պիտի դիտ - նաք : Քայլ առ քայլ պիտի առաջնորդեմ ձեզ հետքերուն վրայէն ... Յոյց պիտի

տամ ձեզի իմ կարողութիւններս եւ յիմա - րութիւններս : Բաւական եղան ինձի բա - րեկամիս՝ Հաստինիկ հետ խօսակցութիւն մը եւ փողոցին մէջ պատահարս ներկա - ցացած նշմար մը որ գտնեմ ուղիղ ձա - րան :

Պահ մը դադար առաւ եւ ապա շարու - նակեց .

— Կը սկսիմ Սալուս պանդոկի ճաշկե - րոյթէն : Լէյտի Էջմար կը մօտենայ ինձի եւ տեսակցութիւն մը կը խնդրէ : Ան կը փափաքէ ազատ արձակուիլ իր ամուսնի - նէն եւ կը յայտնէ, — անշուշտ առանց հետեւանքը խորհելու, — թէ զուցէ հարկ ըլլայ իր ձեռքով սպաննել ամուսինը : Պրիան Մարթէն լսած է այս խօսքերը ...

Ընդէ՞ր է, չէ՞, պարոն Պրիան Մարթէն :

— Բոլոր ներկաներն ալ լսած էին, պա - տասխանեց զերասանը :

— Համաձայն եմ : Ես բնաւ չկրցայ մոռնալ Լէյտի Էճմարի այս խօսքերը : Յաջորդ առաւօտուն Պրիան Մարթէն ներ - կայացաւ ինձ դանոնք վերջիչեցնելու հա - մար ինձի :

— Ներեցէք, գոչեց յանկարծ Պրիան Մարթէն, ես եկած էի ...

Փուարօ ձեռքով ազդարարութիւն մը ը - րաւ :

— Այո, իբր թէ եկած էիք ինձի պատ - մեռու ոչ պոչ եւ ոչ գլուխ ունեցող հե - տապնդումի մը մասին : Բայց մանուկ մը իսկ չէր կրնար հաւատալ ձեր ըսածնե -

րուն : Կին մը որուն հաւանութիւնը կ'ու - ղէիք ունենայ... մարդ մը որ ոսկի աղ - ուայ մը ունէր... : Բարեկամս, մեր օրե - րուն ոսկի աղաներ չեն չինքն այլեւս, մասնաւոր Ամբերիկայի մէջ : Ատամնա - րութեան մեծ յառաջընթացներ կատարած է այժմ : Օհ, ձեր յօրինած պատմութիւնը իրաւ որ շատ վրան բաց էր :

Երբ դուք աւարտեցիք այդ օր ձեր անհեթեթ պատմութիւնը, այն ատեն մի - այն հասաք ձեր բուն նպատակին, որ ուրիշ բան չէր, եթէ ոչ կասկածներ ըս - տեղծել իմ մէջս Լէյտի Էճմարի մասին : Աւելի յստակ խօսելու համար, ըսեմ թէ դուք նախապէս դետին կը պատրաստէ - իք, նկատի ունենալով այն պահը, որ կի - նը պիտի սպաննէր իր ամուսինը :

Պրիան Մարթէն չիփթած էր :

— Ձեմ դիտեք թէ ինչեր կը հետեւեցը - նէք, մրթմրթաց ան :

— Դուք կը փորձէիք ծիծաղելի դար - ձընել Լորտ Էճմարի ամուսնալուծման հաւանութիւնը : Կը խորհէիք թէ յաջորդ ամուսնութեան միայն ես պիտի տեսնէի զինքը, բայց ժամադրութիւնը յաւաքուցու - ցած էինք եւ նոյն օրը դացած էի ես իր մօտ եւ Լորտը յօժարած էր ամուսնա - լուծուելու : Լէյտի Էճմար այլեւս պատ - ճառ մը չունէր սպաննելու իր ամուսինը :

ԱԿՆԹՈՎ ՔՐԻՍՏԻ

(Շար.)

ՆՈՒՒՐ

Սարգիս Մինասեան Ենթակոմիտէի իր որդացեալ ընկերներու հողահանգրտեան պաշտօնի արարողութեան առթիւ Տիկին Նշանեանէ ստացած է քսան Փր. ամուսնունդն ընկեր Նշանեանի յիշատակին :

ՑԱԿԱԿՑՈՒԹԻՒՆ

ՎԱԼԱՆՍ — Հ. Յ. Դ. կոմիտէն, Նոր Սերունդը, Կապ. Խաչը իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն Այրի Տիկին Մկրտիչ Դաւիթեանի ընտանեկան պարագաներուն եւ բոլոր ազգականներուն, Ընկ. ՄԿՐՏԻՉ ԴԱՒԻԹԵԱՆԻ կսկծալի մահուն առթիւ :

X

Համախարհ. Միութեան Յրահարչի շրջանի կեդր. վարչութիւնը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Այրի Տիկին Հ. Տէր - Յարութիւնեանի եւ իր զաւակներուն, Ս. եւ Մ. Տէր - Յարութիւնեան եղբայրներուն, Տէր եւ Տիկին Հայ - րապետեանի եւ իրենց ընտանեկան բոլոր պարագաներուն, իրենց ամուսինին, հօր եւ եղբոր Հմայեակ Տէր - Յարութիւն - Եանի մահուն առթիւ :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ ԿԵՍԱՐԻՈՅ ԵՒ ՇՐՋԱՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Այս Կիրակի տեղի պիտի ունենայ հոգեհանգրտեան պաշտօն Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ, Կեսարիոյ եւ շրջանի 1895ի դէպքին, եւ 1915ի տեղա - հանութեան ընթացքին ինկող ընդհ. նա - հատակներու եւ կախազան բարձրացող մեր 53 հայրենակիցներու յիշատակին : Կը հրաւիրուին Կեսարիոյ եւ շրջանի բոլոր մեր հայրենակիցները որ փութան իրենց երկիւղած յարգանքը արտայայտելու անոնց յիշատակին :

Ս. ԹԱԳԵՈՍ ԵԿԵՂԵՑԻ (Մարտի)

Այս Կիրակի Սէնթ Թափուանի Ս. Թա - դէոս եկեղեցւոյ անունին տօնակատարութեան առթիւ հանդիսաւոր պատարագ պիտի մատուցուի : Կը պատարագէ եւ կը քարոզէ թաղիս հոգեւոր հովիւ ՎԱԶԳԻՆ ՎՐԴ. ՔԵՇԻՇԵԱՆ :

Այս առթիւ հողահանգրտեան պաշտօն պիտի կատարուի Ս. Թադէոս եկեղեցւոյ հիմնադիր վախճանեալ լուսահոյի Գրի - գոր Եպիսկ. Պալազեանի, եկեղեցւոյ վախճանեալ հոգեւոր հովիւներուն, զբ - պիրներուն, եկեղեցւոյ կնքամօր Օր. Նաւնիկ Տէր - Ղեւոնդեանի եւ նաեւ բոլոր եկեղեցւոյ շինութեան նուիրատու - ներուն, այս առթիւ թաղիս եկեղեցասէր Տիկնանց Միութեան եւ հաւատացեալ ժողովուրդին կողմէ մատուց կը մատուցուի, իսկ կէսօրէ ետք ժամը 3ին այցելութիւն Պալազեան Եպիսկոպոսին շիրիմին :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊ. ԽԱՉԻ միջմասնաձեւային ժողովը այս Ծարաթ ժամը 15ին, միութեան գրասենեակը : Շատ կարեւոր օրակարգ : Ներկայութիւն անհրաժեշտ :

ԿԱՊ. ԽԱՉԻ Պօմոնի մասնաձեւային վարչութիւնը կը հրաւիրէ շրջանի բոլոր ընկերակիցները բացառիկ ընդ. ժողովի, այս Կիրակի, կէսօրէ վերջ ժամը 3ին, Ս. Սահակ - Մեսրոպ սրահին մէջ : Կը խնդրուի շրջանակայիլ այս խիստ կարեւոր ժողովէն :

ԿԸ ՓՆՏՈՒԻՆ

Հայաստանէն Խաչիկ Կարապետի Ա - բուքեան կը փնտռէ Գրիգոր, Ալեքսան, Միսակ Յակոբի Աբուքեան, որոնք ծնած են Սերաստիոյ նահանգի Մանջրղ գիւղը :

X

Յովասափեան Կարապետ Անտոնի, Շալչերտցի՝ որ նախապէս ու գուցէ հի - մա ալ կ'ապրէ Մարտի, իրմէ լուր չունի քոյրը 1930էն ի վեր, փնտրողն է Սան - դուիս Անտոնի Չուրաբեան :

Լուր ունեցողներէն կը խնդրուի իմա - ցընել Մարտի Մայր եկեղեցին 339, Ա - վրնի Տի. Փրանսո, 13 Մարտի 8րդ :

IMPRIMERIE SPÉCIALE DU JOURNAL « HARATCH » 32, Rue de Trévis, PARIS (9^e)

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Գեկտ. 12, Կիրակի ժամը 21ին DANS ST. EUSTACHE ILLUMINÉE (12, Rue Dujour, Paris (1er) Métro : Halles

ՎԱՐԴԱՆԱՆՑ ԱՍՊԵՏՆԵՐՈՒ ԵՂՐԱՅՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Կը ներկայացնէ (համաշխարհային առաջին ունկնդրութիւն) : DU PROFOND DE L'ABIME (Oratorio)

ԱՊՐԻԼԵԱՆ ՅԻՄՆԱՄԵԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Կը մասնակցին՝ Christiane Eda-Pierre (Soprano) de l'Opéra, Paul-Emile Deiber (récitant) sociétaire de la Comédie-Française, Raffi Ourgandjian (au grand orgue).

LES CHANTEURS DE ST. EUSTACHE (Président-Fondateur R. P. Emile Martin)

ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՐԲ ԱՐՇԱՄ ԼՃԻԶՄԷՃԵԱՆԻ

ՅԱՅՏԱԳԻՐ — ԿՈՄԻՏԱՍ, ՀԱՅՐ ՄԱՐԹԷՆ, ՎԻՔՈՐՈՐԻԱ ՄՈՍԹԵ - ՎԵՐՏԻ, ՈՒՐԿԱՆՃԵԱՆ :

Տոմսերու գին՝ 5էն 25 ֆրանկ

Դիմել՝ Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցի, 15 Րիւ ժան Կուստի, Սէնթ-Ես - քալ (Հայ), Տիւրան (4, Փլաւ տը լա Մատրէն), Բալուեան զբոստան, (43 Րիւ Ռիշէ) :

ՄԱՐՏԻՅԻ — Հ. Յ. Դ. Շրջ. Կոմիտէն, ընկերակից ընդհ. ժողովի կը հրաւիրէ հետեւեալ խումբերը իրենց սովորական հաւաքատեղին : Սոյն ժողովներուն ներկայ պիտի դանուի Հ. Յ. Դ. Մարտի Շրջ. Կոմիտէի ներկայացուցիչը — ԱԿՆՈՒՆԻ խումբը (Սէն Լու) 5 Դեկտ. ժամը 15-30ին :

ՆԻԿՈՒ ԴՈՒՄԱՆ խումբը (Կարտան), 5 Դեկտ. ժամը 15-30ին :

ՎԱՐԱՆԴԵԱՆ խումբը (Պուա Լիւզի), 5 Դեկտ. ժամը 15-30ին :

ԼԻՈՆ — Հ. Յ. Դ. «Վարանդեան» կո - միտէն, ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերները այս Ուրբաթ ժամը 20-30ին, սովորական հաւաքատեղին : Կարեւոր օրակարգ :

ՊՕՄՈՆ — Հ. Յ. Դ. «Չաւարեան» ենթակոմիտէի ընկերակից ընդհ. ժողովը այս Ծարաթ, ժամը 21ին, սովորական հաւաքատեղին : Կարեւոր օրակարգ : Բո - լոր ընկերներու ներկայութիւնը պարտա - տրիչ է :

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Է

Համախարհերդցեակից Միութեան Յը - րահարչի շրջանի 1966ի օրացոյցը :

Գին 2-50 ֆրանք, դիմել մասնաձեւ - բու վարչութեանց :

ՇԱԻԼԻ Ս. ԳՐ. ԼՈՒՍԱԿՈՐԻՉ

Եկեղեցւոյ վերաշինութեան եւ օժման Տրդ տարեկարգը կը տօնուի Դեկտեմբեր 19ին, Կիրակի օր :

Այս Կիրակի պատարագ : Կը պատարագէ եւ կը քարոզէ ՏԱՐՕՆ Վ. ՃԷՐԷՃԵԱՆ :

ԴԵՐԱՍԱՆ ԹՐԱԳՕՇԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

11 Դեկտեմբեր, Շաքաթ երեկոյ ժամը 9ին Լիւնի Հայ Ազգ. Տան քատեքարանի մէջ :

Ա Ր Շ Ի Ն նուազախումբ եւ պարախումբ

Այս ներկայացումները կը կրկնուին Ս. Շամոն, Կրքնոպը եւ Փօն տը Շէրիւի մէջ, հասցի մէկ մասը Փօն տը Շէրիւի զպրոց եկեղեցիի ի նպաստ :

Մուտք 4 եւ 5 ֆրանկ

ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՅԹ

Կազմակերպուած Պանեո - Բաշանի Հ. Յ. Դ. Նոր Ս. ի Մուրախ խումբին կողմէ : Այս Ծարաթ ժամը 17-30էն 23-30

Cercle Commercial Suisse

10, Rue des Messagerie, Métro Poissonnière Գեղարուեստական բաժին

BUFFET

BAR

Grande Nuitée Nor Séround

Avec l'Orchestre ZANINI et les GOLDENS - La participation de LIZ SARIAN

Pour la première fois à Marseille Le Samedi 4 Décembre à l'Alhambra de 22 heures à l'aube Retenez vos places : tous les soirs au siège. 26 Rue des Convalescents de 19 h. à 20 h. sauf les Vendredi, Samedi et Dimanche

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՑԵՐԵԿՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 75ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Նախաձեռնութեամբ Սարսիլ - Առնուլ իլի Հ. Յ. Դ. ՎԱՐԴԱՆ Ենթակոմիտէի եւ հովանաւորութեամբ Հ. Յ. Դ. Շրջ. Կոմիտէի, մասնակցութեամբ Կապ. Խաչի եւ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի :

Կիրակի, Դեկտեմբեր 5, ժամը 15էն 24 Սարսիլի քաղաքակառարանի սրահը, Փլաւ տիւ 11 Նովանպը

Կը խօսի Ընկ. ԺԻՐԱՅՐ ԴԱՏԱՆՈՐԵԱՆ

Գեղարուեստական բաժին :

ՄԿՐՏԻՉ ՊՕՂՈՍԵԱՆ, ընկերակցութեամբ Կարպիս Ալիբեկեանի Սիփան - Կոմիտաս երգչախումբը զեկավարութեամբ ԿԱՐՊԻՍ ԱՔՐԻԿԵԱՆԻ « LES CAUCASE » Ալֆորվիլի պարախումբը

Ընկերակցութեամբ՝ ՊԷՐՆԱՐ ՏԷՏԷՃԵԱՆԻ Թատերական ներկայացում զեկավարութեամբ ԿԱՐՊԻՍ ԱՔՐԻԿԵԱՆԻ Ժամը 19էն ետք պարահանդէս՝ հուսալաւորութեամբ ՊԷՐՆԱՐ ՏԷՏԷՃԵԱՆ

ՓԱՐԻԶԱՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՈՐԲԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

GRAND - HOTEL Կիրակի, Դեկտեմբեր 5, ժամը 17էն կէս գիշեր Նախաձեռնութեամբ Տէր ԵՒ ՏԻԿԻՆ ԱՐՄԵՆԱԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ Կը մասնակցի սիրայօժար ծանօթ ՏԷՐ - ԱՐՄԱՄՈՅԻ (Karpoucha) Պալալաքաներու խումբը ORCHESTRE Մուտք 10 ֆրանկ Ապահովի սեղանները — 924-38-54 Ուսանողներու կէս գին



ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ՇՆՈՒՆԴԸ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՐԵԿԱՆԻ ՄԷՋ Արմենիա Հիւրանոցի մէջ որ կը պատկանի Առաջին դասակարգի : Տեղի պիտի ունենան մեծ անակնկալներ : Այս ճամբորդութիւնը տեղի կ'ունենայ ձմեռան եղանակի զինով, միայն 1900 Փր. Մեկնում Փարիզէն Դեկտ. 27ին, վերադարձ 9 Յունուար 1966 Երթ ու դարձ օդանաւով : Տեղերը սահմանափակ ըլլալով կը խնդրուի այժմէն դիմել եւ արձանագրուիլ :

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱՌՔԵՐՈՎ ՄԵԿՆՈՒՍ

Փարիզէն Երեւան երթուղարձ խումբը վ : Այժմէն դիմել պատրաստելու համար ձեւակերպութիւնները : Ինչպէս ամէն տարի, նոյնպէս մեկնում օդանաւով, Օդոստոսը անցընելու հա - մար Երեւան :

Բոլորը կազմակերպուած Հ. Մ. Ը. Մ. կողմէ

ԴԻՄԵԼ ԼԵՒՈՆ ԱՆՏՈՆԵԱՆԻ 17, Ave. des Acacias, 92 CLAMART — Tél. : MICHelet 58-39

Հարաւի համար դիմել՝ ԱԼԵԳՍԱՆԵԱՆ, հեռաձայն 20-63-43 :

ՅԱՐԱՇ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN
RÉDACTION - ADMINISTRATION : 32, RUE DE TRÉVISE - PARIS (9^e)

Fondé en 1925 T. C. C. Seine 57 A 2731
Tél. : PROvence 86-60
C.C.P. Paris 15069-82

ՈՒՐԱԹ
3
ԴԵԿՏԵՄԲԵՐ
VENDREDI
3 DECEMBRE
1965
LE NUMÉRO : 0,30 FR.

Փ Ր Ա Թ Ե Ր Թ

Հիմնադիր՝ ՇԱՎԱՐՇ ՄԻՍԱԿԻԱՆ

Ֆրանսա՝ Տար. 60 ֆ. Վեցամսեայ՝ 35 ֆ.
Արտասահման՝ Տար. 80 ֆ. Հատը 0,30 ֆ.

1109 ՏԱՐԻ — ԹԻՒ 10475

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

41e ANNÉE — N° 10.475

ԻՆՉ Կ'ԱՆՑՆԻ ԿԸ ԴԱՌՆԱՅ

ԹՈՒՐԻՑԻՈՑ ՄԷՋ

—*—

ԿՐԲ.— Կը շարունակենք քաղի քուրք քորքորու լուրերը, այնպէս ինչպէս արուած են, ցոյց տալու համար այն Ե — ռուզիքը, որ կը տեսնուի Թուրքիոյ մէջ, այս օրերուս :

ԱՆԳԱՐԱ.— Հանրապետութեան նախապատճառով կիրարկել Չանդարայի մէջ ընդունեցաւ վարչապետ Սիւլէյման Տէմիր — ընդ, որուն հետ երկարատեւ խորհրդակցութիւն մը ունեցաւ Կիպրոսի վերջին կայսրութեան մասին : Վարչապետը Չան — արային մեկնած պահուն, հետեւեալ բացատրութիւնները տուաւ լրագրողներուն :

— Մեր փառապանծ բանակը մեր ամբողջ ազգային ուժը կը կազմէ : Երբ որ պահեր, կրնանք մեր այդ ուժը ի սպաս դնել մեր ազգին ու հայրենիքին : Ոչ ոք կրնայ արդէն ըլլալ : Թուրք բանակը Թուրք պետութեան արամադրութեան տակ է : Գալով ՆԱԹՕի համաձայնութեան, կարգ մը թնտեսներ կան, որոնք պէտք է վերաբնդին : Սպարապետական վերջին ժողովին մէջ, քննուեցան Ազգ. Պաշտպանութեան, ՆԱԹՕի եւ Կիպրոսի խնդիրները, այլ ոչ քարեղէի հարցը եւ Ազգ. Ուժի մը կազմութեան ծրագիրը :

ԿԻՊՐՈՍԻ ՎԷՃԸ ԹՈՒՐԻՑԻՈՑ ԱՆՊԱՍՏ

ԱՆԳԱՐԱ.— Կիպրոսի խնդիրը անելի մը մէջ մտաւ եւ Արիւսեան քանդակը պետութիւններ Ազգաժողովին մէջ Թուրքիոյ դէմ դիրք բռնեցին : Այդ պետութիւնները իրենց համամտութեամբ յայտարարեցին իրարարար Կարօ Փրայցայի, որուն տեղեկագրերը Թուրքիոյ աննպաստ է եւ Մակա — ղիտի հացին իւր կը քսէ : Ռուսներն ալ Թուրքիոյ դէմ դիրք բռնած են եւ կ'առարկեն թէ պէտք չէ միջամուտ ըլլալ պետութեան մը ներքին գործերուն : Ահա թէ ինչու վարչապետ Տէմիրէլ իր մօտ հրաւերեց Անդարայի Ամերիկեան եւ Պոր — Տրայի ղեկավարները եւ ուղեց անոնց տեսակէտները իմանալ :

Ստացուած տեղեկութեան համաձայն, Ազգաժողովեան ՊորՏուրի մէջ Թուրքիոյ դէմ դիրք բռնած երկիրներէն կ'արեւելի է յիշել Քոնիօ, Չատ, Դանա, Քե — նիս, Նիկիթիս, Նեիալ, Ճամաիքա, Նոր Կիլիկիա, Ուկրանտա, Սոմալի, Փանա — մա, Հնդկաստան, Եգիպտոս, Եմէն, Եւր — ասիայի եւ ուրիշներ :

ՄԱԿԻ մնայուն պատուիրակ Օրճան է — րարի նոր յուշակիր մը տուաւ ընդհ — արարուցար Ու թանի եւ յայտնեց թէ Յունաստան շարունակաբար զինուոր կը դրկէ Կիպրոս :

Ազգաժողովին մէջ Թուրքիոյ դէմ գործողներէն մէկն է նաեւ Եգիպտոս, որ կը նախ ի նպաստ էՆՕՍԻՍԻ կուսակիցներ հաւաքել : Ռուսիա եւ Եգիպտոս Մակա — ղիտի համար նպաստաւոր ղեկներ մը բա — տեղծած են :

ՄԱԿԱՐԻՈՍ ԿԸ ՄԵՐՓԷ
ԹՐԻՑԻՈՑ ԶՕՐԱՍԻՒՆԸ

ԱՆԳԱՐԱ.— Իրերն ու երեւոյթները ցոյց կուտան թէ ՄԱԿը Թուրքիոյ ի նը — պաստ որոշում մը պիտի չտայ : Մինչ — այդ, արժանահաստ աղբիւրներէ կը հա — զարգուի թէ Մակարիտո պիտի չարտօնէ որ Թրքական նոր զօրասիւնը Կիպրոս եւ — ի ձևս ուղղութեամբ լուր գրկած է նաեւ Կիպրոսի Թուրք զորքակազմները : Ինչպէս կը յիշուի, Մակարիտո վերջին անգամ եւս զրկած էր Կարմիր Մահիկի օդու — թեան մեծագոյն մասը, պարէն, հանգր — ձեղէն, զեղարայք, եւ այլն : Մակարիտ

քաջալերուած է իր այս արարքէն եւ կը պատրաստուի նոր դժուարութիւններ յա — րուցանել :

ԱՆԳԱՐԱՅԻ ՄԷՋ ՅՈՒՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԱՐԱ.— Վերջին երկու օրուան ըն — թացքին, յուստեսութիւն կը տիրէ Ան — դարայի ՊորՏուրական եւ քաղաքա — կան շրջանակներու մէջ, որոնք իրարու կը հարցնեն թէ «Կիպրոսը ձեռքէ դնա՞ց արդե՞ք» : Արտաքին նախարարութեան եւ ՊորՏուրականին հետ կապ ունեցող շրջանակներ կը յայտնեն թէ այս պայ — մաններուն տակ պէտք չէ յուսադրուիլ եւ անկարելի է որ Թուրքիոյ ի նպաստ որո — շում մը ձեռք բերուի :

Ոմանք ալ կ'ըսեն որ եթէ ՄԱԿը Թուր — քիոյ աննպաստ որոշում մը տայ, Թուր — քիա պիտի ստիպուի ինքնազուրկ զորքել եւ պաշտպանել իր օրինական իրաւունք — ները : Պարզ խօսքով, Թուրքիա զինուոր պիտի հանէ Կիպրոս, յենեով իր դաշնա — գրային իրաւասութիւններուն :

Այս նպատակով, զինուորական եւ քա — ղաքական կարեւոր խորհրդակցութիւններ տեղի կ'ունենան Անդարայի մէջ :

×

ԱՆԳԱՐԱ.— Կառավարութիւնը տաս — նըմէկ օրինակներ պատրաստած է Զին — եալ Ուժերու մասին եւ զանոնք Ազգ. ժողովին պիտի յղէ մօտերս : Չանք պիտի թափուի, որպէսզի այդ օրինակները փութով վաւերացուին եւ ի դօրու դառ — նան : Այս օրինակներուն մէջ կան Բա — նակային Պարեւաւորման, Պատերազմա — կան Վարժարաններու, Սպարապետու — թեան, Ազգ. Պաշտպանութեան Կազմա — կերպութեան, Զինուորական Մատայու — թեան, Լիւսականներու զինուորութեան, Պաշարման Վիճակի վերաբերեալ օ — րէնքներ : Մի առ մի ճշգրտած են բանա — կի պարեւաւորման անհրաժեշտութիւն — ները, զինուորական ծառայութեան յա — րակից մանրամասնութիւնները, պաշար — ման վիճակի ստիպողութիւնները, զին — ուորական ծառայութեանց յետաձգման իրաւունքները : Զօրաշարժի պարագա — յին, զէնքի տակ կոչուող զօրախումբերը պարտաւոր պիտի ըլլան վեց ժամուան մէջ գտնուիլ իրենց բանակատեղին, — զինուոր, պահեստի սպայ կամ զինուորա — կան պաշտօնեայ : Անաստօղները պիտի պատժուին : Անոնք որ իրենց մէջ կը կու տարի յանրազարար իրենց կարգը կը կրկնեն, կամ իրենց աւարտելէ ետք հա — մալարանական քննութեան մէջ չեն յա — ընդիր, տարի մը զերծ կը մնան զինու — րական ծառայութեան :

ԱՄԵՐԻԿԱ ՀԻՒԼԷԱԿԱՆ ԶԷՆՔԵՐ
ՏՈՒՄ Է ԹՈՒՐԻՑԻՈՑ

ՈՒՈՇԻՆԿԹԸ.— Ամերիկեան Ազգ. Պաշտպանութեան նախարարութեան խօս — նակը յայտարարեց թէ ՆԱԹՕի անդամ Գ երկիրներու մէջ, որոնց կարգին՝ Թուր — քիոյ մէջ, Ամերիկա հիւլէական զէնք — րու պահեստ մը ունի : Բաները աւելցուց թէ 1963ին եւ 1964ին քանիցս հրապարակ — ուեցաւ այս պարագան, եւ ըսուեցաւ թէ Ամերիկա հիւլէական զէնքեր տուած է ՆԱԹՕի անդամ ինք երկիրներու : Թուր — քիայն զատ միւս երկիրներն են՝ Արեւ — մրտեան Գերմանիա, Անգլիա, Ֆրանսա, Իտալիա, Պելժիա, Բանատա եւ Յունաս — տան : Ամերիկեան բաները նաեւ բաւ — թէ այս հիւլէական զէնքերը յիշեալ եր — կիրներուն մէջ ղեկավարուած են սաւառ — նակներու մէջ, որոնք ղեկինն են, եւ պատրաստ ամէն վայրկեան թռչելու, հաւանաբար առանց սաւառնորդի :

Այս հիւլէական զէնքերը կը գտնուին Ամերիկեան կառավարութեան ամենա — խիստ հսկողութեան տակ, եւ կը հակա —

ԱՐՇԱՄ ԵՈՆԴԿԱՐԵԱՆ

Ցաւով կը հաղորդենք որ Չորեքշաբթի օր ժամը 16ին, իր մահկանացուն կնքեց Արշամ Խոնդկարեան :

Մեր ողբացեալ աշխատակիցը ծնած էր 1881 Յուլիսին, Հախլերէս (Իգտիրի շրջ — ջան) : Ուսումը կատարած է Գէորգեան ճեմարան, ապա աւարտած է Օտեսայի իրաւաբանական համալսարանը : Հայաս — տան վերադարձին եղած է Սինոզի ան — դամ : Յեղափոխութեան ժամանակ (1917) մեկնած է Թիֆլիզ, ուր եղած է ուսուս — կան «Յովհաննէան Սօսք» թերթի խմբագիր մինչեւ 1918 :

Ընդդիմազիր երեսփոխան Ազգ. Պոր — Տրայականի, Արդարութեան նախարար ե — դած է Քոալիսիոն կառավարութեան օ — րով : ԷՍ ԷՍ (Սոցեալ — յեղափոխական) կուսակցութեան անդամ էր :

Հայաստանի խորհրդայնացումէն ետք անցած է Պարսկաստան, ապա Փարիզ հաստատուած է 1924ին :

Հոս եղած է խմբագիր ուսական Տրնի (Օրեր) Գերէնակիթի թերթին ու նաեւ ան — դամ եկեղեցւոյ դատաստանական ժողո — վին :

Հմուտ հրագրակազիր, օժտուած սուր քննական միտքով, Արշամ Խոնդ — կարեան աւելի քան քառասուն տարի իր ձեռնհաս աշխատակցութիւնը բերած է

արտասահմանեան մամուլին զլիւսօրա — րար «Հայրենիք» Ամսագրի, ուր Ա. Ա. ստորագրութիւնով կը ներկայացնէր խոր — հրդրահայ կեանքը : Կ'աշխատակցէր կա — նոնաւորարար «Յառաջ»-ի, մասնազլիտա — կան յօդուածներով : Հաւանաբար ոչ ոք իրեն չափ հետեւած է ՊորՏուրային Հա — յաստանի պետական, մշակութային, եկե — ղեցական կեանքին եւ ոչ ոք իրեն չափ ըմբռնած խորհրդահայ վարչակարգի բո — լոր երեւոյթները :

Իր մահով կ'անհետանայ վերջին օ — դակներէն մէկը սերունդի մը որ սպասե — ցաւ արտասահմանի մէջ : Բախտն ունե — ցաւ, անցեալ ամառ այցելելու Հայաս — տան, ուր կրցաւ մասամբ առնել հայր — նիքի եւ իր ընտանիքին կարօտը եւ Հա — յաստանի կարօտը սրտին առ յուլտ կը բաժնուի այսօր մեկդէ :

×

Յուզարկաւորութիւնը կը կատարուի այս Ծարաթ օր, ժամը 14ին, Փարիզի Մ. Յովհ. Մկրտիչ եկեղեցին, ուրիշ մար — մինք պիտի փոխադրուի Հ. Բ. Ը. Միւս — թեան մասնորակներու դամբարանը : (Պանեօ — Փարիզիէն) :

Մեր ցաւակցութիւնները վշտաբեկ այ — րին :

ՕՐՈՒՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՒՆԿ

ՄԱՐԵՇԱՆ ԱՅՈՒՊ ԽԱՆ Ուսուցիչներն մեկնելու իր ճամբուն վրայ պիտի անցնի Փարիզէն եւ պիտի տեսակցի Զօր. տը Կոլի հետ, Դեկտեմբեր 14ին : Հաւանա — կան է, որ նոյնը ընէ նաեւ Հնդկաստանի վարչապետը՝ Շաւթի :

ԵՄԷԼԻ խաղաղութեան խորհրդաժողո — վը գաղղեցուց իր աշխատանքները : Հան — րապետականները բացարձակապէս մեր ժեցին ընդունիլ առժամեայ կառավարու — թեան մը կազմութիւնը, որ պիտի չունե — նար հանրապետական ղեկավարի : Կոլի — ները կրնան վերսկսիլ, թէեւ Եգիպտացիք ամէն ջանք պիտի թափեն, որպէսզի մի — անգամ ընդմիջաւ վերջ գտնէ Եմէնի պատերազմը :

ՄԻՍՏԵԱՆ Նահանգներու արտաքին նա — խարարը՝ Տին Ռեքը ղեկուստուաւ, թէ Ամերիկա կանոնաւոր կերպով յարաբե — րութիւն կը պահէ «հակառակորդ ճակա — տին» հետ : Այս շփոթմանը նպաստակն է ճշգրէլ բանակցութիւններու հաւանակա — նութիւնը :

ՀՆԴԿԱՍՏԱՆ, որ վերջերս ենթար — կուեցաւ երաշտի, սովի մը վտանգին տակ կը գտնուի :

ԻՆՏՈՆԵՉԻՈՑ Ժողովուրդին ուղղուած կոչի մը մէջ, նախագահ Սոքրատո շեշ — տեց անհրաժեշտութիւնը պահպանելու «ձախ զիրք»ը քաղաքականութեան մար — դին մէջ : «Եթէ աջ հակինք, մեր յեղա — փոխութիւնը կը փճանայ» :

ԱՆԳԼԻԱԿԱՆ օդուժը պիտի միջամտէ, եթէ Հարաւային Ռոտեղիա ձեռք զպցնէ Բարիպայի ամբարտակին, որ Չամպիի երկարակնութիւն կը հայթայթէ :

Կշուռն «կրկնակ փականքի» երկարունիկ զրութիւնով : Առանց նախապահ ձոնարնի հրամանին, անկարելի է գործածել այդ հիւլէական զէնքերը, որոնց զանուած վայրերուն վրայ ամերիկացի զինուորներ պահակ կը սպասեն եւ կը հսկեն հիւլէա — կիր սաւառնակներուն վրայ :

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ

Նոյեմբեր 22ին, 77 տարեկանին, Հա — յաստանի մէջ մեռաւ հայ երգիծարանու — թեան ժամանակակից մեծ դէմքերէն մէ — կը՝ Լեռ Կամսար, բուն անունով Արամ Թոյմասեան :

Ծնած էր Վան : 14 տարեկանին կը մեկնի Կովկաս եւ կ'ընդունուի Գէորգեան ճեմարան, էջ — միածին : Աւարտելէ ետք կը վերադառ — նայ ծննդավայր, ուր կը զբաղի ուսուց — չութեամբ : Առաջին գրութիւնները լոյս կը տեսնեն Վանի «Աշխատանք» թերթին մէջ :

Այնուհետեւ, վերջնապէս կը հաստատ — ուի Կովկաս, ուր կ'աշխատակցի զանա — կան թերթերու՝ «Հորիզոն» (Թիֆլիս), «Արեւ» (Պաքո), «Աշխատանք» (Երե —ւան) եւ այլն :

Հայաստանի խորհրդայնացումէն ետք ատեն մը կը պարապի ուսուցչութեամբ, ապա՝ կը շարունակէ աշխատակցիլ թեր — թերուն իբրեւ քրօնիկազիր :

Լեռ Կամսարի հրատարակուած գործե — րն են. «Անվաւեր մեռելներ» (1924), «Ազգային այրերնարան» (1926), «Վեր — պած արցունքներ» (1934) :

Ունի առօրեային քաղուած գեղեցիկ պատկերներ, զրուած սուր, հիւթեղ ս — ճով : Խալթոյ պատկերները՝ առնուած խոր — հրդային կեանքին, պատճառ կը դառ — նան քննադատութիւններու եւ ապա՝ աք — սորի :

Յետագային ողջ մնացած շատերու հետ կը վերադառնայ հայրենիք, բայց այլ — եւս զրեթէ կը լռէ :

Հազուադէպ առիթներով կը լսուէր իր ձայնը :

Համաձայն խորհրդահայ մամուլին վերջին տարիներուն կ'աշխատակցէր «Ող — նի» ամսագրին : Եւ. «Հայաստան» հրա — տարակազան կը պատրաստուէր լոյս ըն — ծայել անոր քրօնիկներուն նոր հաւարա — ծոն՝ «Գրաբար մարդիկ» խորհրդով : Պիտի անդրադառնանք իր գործին :

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ՅՈՒՇԵՐ ԵՐՈՒԱՆԻ ՏԷՐ-ԱՆԴՐԱՍԵԱՆԷ

Թարգմանական գրականության հարցերուն նուիրումը խորհրդակցութիւն մը տեղի ունեցաւ Հայաստանի գրողներու տան մէջ, Նոյեմբեր 17 - 18ին: Եւ, պարզուեցաւ, որ թարգմանական գործը անգոհացուցիչ պատկեր մը կը ներկայացնէ յատկապէս որակի տեսակէտով: Օրուան զեկուցարները՝ Էդ. Թովչեան եւ մաքրութեան փոխանակութեան կարգով խօսք առնողները (Պաշտպան Գալստեան, Ստ. Զօրեան, Փրոֆ. Գ. Սեւակ եւ ուրիշներ) հարցին մօտեցան դանդաղան անկիւններէ եւ քննադատեցին կատարուած աշխատանքը: Յատկապէս շեշտը դրուեցաւ լեզուի մաքրութեան, ճիւղումութեան, յատկապէս թեան եւ պատկերաւորութեան վրայ:

Դժբախտաբար, այս մարդերուն մէջ եւս անփութութիւնը ակնհայտ է: Այլապէս ուշադրաւ է խորհրդակցութեան մասնակցողներէն Ս. Դարոնեանի յօդուածը, որ լոյս տեսաւ «Գրական թերթ»-ի Նոյեմբեր 19ի թիւին մէջ:

Ժողովուրդներու «կերպարութիւնը» եւ «մեթոտները» ամուր եւ գործնական հիմքներ վրայ դնելու մտադրութեամբ, խորհրդակցին զրիշները տասնամակներ շարունակ խօսեցան թարգմանութիւններու եւ շփոթման միջոցաւ ժողովուրդներուն հոգեւոր դանձարանը բարձր լինելուն ընթացիկներու սեփականութիւնը դարձնելու անհրաժեշտութեան մասին:

Մինչ Հայաստանի մէջ հայերէն բարգաւաճութեամբ լոյս տեսած են գրքեր ուսուցիչ ամուսնի գրողներու գործերը, — ինչպէս իրտէլ կուտայ «Հայաստան» հրատարակչութեան գեղարուեստական թարգմանութեան բաժնին վարչը՝ Ա. Վարդապետեան, — անդին, «Մոսկուայի մէջ, ուսուցիչ լեզուով ոչ մի անգամ չեն հրատարակուել Արուսեանի, Դուրեանի, Պատկանեանի, Վարուժանի, Սիւսանի, Կուրդիանի բանաստեղծութիւնները ժողովածուները, չխօսելով արդէն միջնադարեան հայ քնարերգութեան (Նարեկացի, Տրիկ եւ այլն) մասին» (տես «Գրական քերթ»-ի Նոյեմբեր 19ի Բիւր, Ս. Դարոնեանի յօդուածը):

Համաձայն յօդուածագրին, Պորտ. Միութեան ոչ — հայ ընթերցողները ծանօթ չեն Րաֆֆիի, Ծերենցիի, Աղայեանի, Նար — Դոսի, Մանուկեանի, Փափաղեանի, Շանթի, Օտեանի, Թոթովեանի եւ «չառ ուրիշներու բազմաթիւ նշանաւոր ստեղծագործութիւններուն»:

Պորտ. Միութեան իշխանութեան տարիներուն Մոսկուայի մէջ լոյս տեսած են միայն Շիրվանզադէի գործերը:

Այսքանը արդէն խօսուն կը դարձնէ պատկերը. — Մէկ կողմէ մեծ ճիւղ եւ աշխատանք ուսուցիչականութեան ծանօ-

Սիրելի Նարգունի. — «Առիւծաբայն Հայոց Տրդատէս» վէպին հայերէն հրատարակութեան առթիւ, Յարազի մէջ, յուզումով կարդացիք զոգտրիկ ներքո — գահանդ, նուիրում՝ թէ այդ վէպին, որ դերմանեցն է գրուած, թէ անմոտանալի հայերիկիս, որ դայն թարգմանած մը: Գեղեցիկ եւ սրտառու պատեհութեամբ մը, այդ հոյակապ հատորին մօտալուստ տպագրութիւնը կը զուգարկիլի հօրս (թարգմանիչին) ծննդեան հարիւրամեակին: Արդարեւ, ծնած 1863ին, ան այժմ պիտի թեւակոխէր իր հարիւրերորդ տարին: Թոյլ տուր, որ այս առթիւ յիշեմ երկու դրուակներ, այլապէս յատկանշական, այն օրերէն՝ երբ Ֆրանսահայ մը տաւորականութեան փաղանդէն երկու հոգի դեռ իրենց աչքերն չէին փակած յստիտեանականութեան:

Պատերազմի սկզբնական շրջանին էր: Իմացած էինք որ Շաւարշ Միսաքեան եւ Յակոբ Տէր — Յակոբեան պատու կը դանուին: Վերադարձի ճամբուն վրայ ուղիղ էին հանդիպել իրենց զրջի երէց եղբոր, հօրս, որ քաշուած Լիոնի իր պատեանին մէջ, անհամբեր կը սպասէր Փարիզահայ մտաւորականներու այցելութեան, հոգեկան կազոյր եւ միթիարութիւն ունենալու համար:

Յետ միջօրէի մըն էր: Հայրս, անհան-

թացման եւ տարածման ուղղութեամբ, միւս կողմէ՝ գրեթէ անտեսում:

Այս դժբախտ հաստատումը աւելի ցայտուն կը դառնայ, երբ, համաձայն յօդուածագրին, ուսուցիչական պարբերականներուն մեծամասնութիւնը շատ քիչ տեղ կը յատկացնէ ազգային համրապետութիւններու գրողներուն: Օրինակ, Վերկու միլիոն տպագրականով լոյս տեսնող «Ռոման Գաղտնայ» իր զոյուրթեան բոլոր տարիները ընթացքում չի տպագրել եւ ոչ մի հայկական վէպ կամ վիպակ:

Թարգմանական գրականութեան հրատարակութեան կարեւոր բաժինը ստանձնած են Մոսկուայի հրատարակչութիւնները: Որով, իրերու այս կարգութեան մեծ մասին պատասխանատուութիւնը կ'իյնայ Ռուսերուն վրայ: Անտեսումն կամ անփութութիւնը կողմէ վերէն, կեղծութիւն: Եւ արդիւնք է հետապնդուած նպատակի մը:

Մեր այս հաստատումը աւելի հիմնաւորելու համար աւելցնենք, որ միշտ Ս. Դարոնեանի համաձայն, «Ներկայումս կենտրոնական ոչ մի հրատարակչութիւնում չկան հայերէն ու հայ գրականութիւն իմացող խմբակներ»:

Յօդուածագիրը, ապահովաբար, հա-

ղատութիւն մը կը զգար կուրծքին վրայ: — Գեղամ, բաւ, դէ՛ իր զգամ, դնա կանչէ Թոնամեանը (մեր դրացի հայ բըժիշկը):

Կը պատրաստուէի երթալ բժիշկը կանչելու, երբ մեր յարկարածին պատուհանէն տեսայ որ, դիմացի հրատարակին վըրայ, հանրակարգէն վար կ'իջնէին Շաւարշ Միսաքեան եւ Յակոբ Տէր — Յակոբեան:

— Հայրիկ, Շաւարշ եւ Տէր — Յակոբեանը կուզան, զոչեցի:

— Ի՞նչ կ'ըսես, իրա՞ւ ես:

Քիչ ետք անոնք արդէն մուտք կը դրնէին մեր տան մէջ: Անկարողութիւն էր խեղճ հայրիկիս ուրախութիւնը: Գրկաբայ ողջադուրեցաւ եկուորներուն հետ, եւ սկսաւ խանդավառ խօսակցութիւնը, որուն շուտով պիտի յաջորդէր «Ասիւ — Ժարքայն Տրդատէս» թարգմանութեան բարձրագոյն կէտը ընթերցումը, նոյնքան հրաւառ, լայն շունչով եւ զօրեղ ձայնով կատարուած: Քիչ առաջուան հիւանդը չէր այլևս: Բայց երբ պահիկ մը կարճ լուրթիւն մը տիրեց, մօտեցայ հօրս եւ ակնաջնի ի վար հարցուցի. — Կ'ուզե՞ս, կանչե՞մ Թոնամեանը: — Չէ, «օղուլ», չէ, անցաւ, աղէկ եմ հիմա:

Այդ պահուն, եթէ նոյնիսկ Թոնամեանը դար եւ լաւագոյն դեղն իսկ տար, պիտի չկրնար դուրսէ այդ անմիջական բարեկաւարեցութիւնը գործել: Հրաշք գործեց զրջի ընկերներու հետ տեսութիւնը:

Յետոյ քու կարգը էր դալ ու տեսնել «Արալ» ի հարապատ բարեկամը՝ «Տարաղ»: Ազատագրումէն ետքն էր, 1945

մաճայն գտնուի մեզի հետ, երբ հարց տանք, թէ աւելի նպատակալարմար պիտի չըլլա՞ր եթէ Հայաստանի մէջ փոխանակ ուսական վարժարաններու թիւը աւելցնելու, Ռուսեր հետեւէին հայերէնի եւ հայ գրականութեան դասընթացներուն, որպէսզի հրատարակչական մարմիններու մէջ հայերէնը եւ հայ գրականութիւնը ճանչցող խմբակները գոյութիւն ունենան:

Յօդուածագրին այն հաստատումը, թէ 1955 — 1959ի ժամանակամիջոցին ուսուցիչական թարգմանութեամբ 209 հայերէն գործեր լոյս տեսած են, ոչ մէկ ձեւով կը սքողէ իրականութիւնը, քանի որ, իր իսկ վկայութեամբ 45 տարուան ընթացքին ոչ միայն չեն հրատարակուած հայ գրականութեան իսկական նկարագիրն ու արժէքը բնորոշող գործեր, այլ, նոյնիսկ, մեր ժամանակակից մեծագոյն բանաստեղծներէն Յովհ. Շիրազի բանաստեղծութիւններու հաւաքածոն լոյս տեսած է... 1500 օրինակով:

Աւելցնենք առանց խորհրդածելու, թէ Միլիա Կապուտիկեանի բանաստեղծութիւններու հաւաքածոն հրատարակ հանուած է յիսուն հարար տպագրականով:

Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ

Ապրիլին, պատերազմի վերջաւորութենէն մէկ ամիս առաջ: Հայրս, այդ օրերուն, իր մահուան անկողինն մէջ էր: Երկար, շատ երկար ժամանակ է ի վեր, ճամբար կը սպասէր: «Շատերը կան, Նարգունին չեկաւ» չէր դադարէ կրկնել: Իր ամէնէն տղանապալից օրերէն մէկն էր: Այդ օրը անկողինն մէջ շարժելու իսկ կարողութիւն չունէր: Երբ ներս կը մտնէր սենեակէն, դարձեալ պիտի պատահէր փոքր «հրաշք» մը: Ելաւ նստաւ անկողնոյն մէջ եւ դոչեց. — Այն Նարգունիս, բարով եկար, աղաս, բայց այս վիճակիս մէջ պիտի դայիր դիս տեսնելու, ինչո՞ւ առաջ չեկար:

Եւ սեղմելով քեզ ուժգին, ճակովը գրողից կարօտալի համբոյրը: Սկսաւ խօսիլ, երկա՛ր խօսիլ անհաստատի ողբաւորութեամբ:

Բայց վախճալով որ կը յույնի եւ նոր տաղնալ մը կ'ունենայ, ինչպէս մայրս, նոյնպէս դուն, թողուցիք զինքը եւ քաշուեցաք հիւրասենեակ:

Երբ պահիկ մը դիմք առանձին թողուցիք, յանկարծ իր անկողինն դէպի քեզ ուղղեց վերջին ծայր դժուարին, իր թիւնը դարարար նախադասութիւն մը, պահանջելով անոր աշխարհաբար իմաստը: Եւ դուն վայրկեանապէս պատասխանեցիր. — այսօրուան պէս կը յիշեմ, — անտարակոյս ճշգրտութեամբ, քանի որ, հայրս դարձապէս ու հիւսցած, «այսինքն», ապրիս, աղա՛ս» բացապանչեց: Ես իր սնարին մօտ էի, դարձաւ ինձի եւ բաւ՝ քեզի ակնարկելով. — Չգիտցածը չկայ, չգտնուած միտք է:

Մեկնուէ՞լ քանի մը օր ետք, ախո՛ս, անխուսափելին կը պատահէր: 1945 Ապրիլ 25ի երեկոյ մըն էր: Չգաց թէ հնչած էր իր վերջին ժամը: Ամէնքս հաւաքեց իր մահճակալին առջեւ եւ պաղատեցաւ մեզի որ երբեք չյուսալքուինք իր կորուստով, զոր կը դանդաղ բնական, հասած մահաւանդ մեծ ձերութեան ափերը: Վերջին վայրկեանին փափաք յայտնեց որ իր մօտ կանչենք Լիոնի հայ տպարանատէր Պ. Հրանդ Թաղէսեանը, որուն տըպարանը յաճախ կ'այցելէր ժամանցի համար: Երբ հայրս իր վերջին շունչով անկեղան՝ կ'իյնար անկողինն վրայ, Հրանդ Թաղէսեան իր մատներով կը ճըպէր անոր զլխին եւ կ'ըսէր. — Այս դըլուխը ո՞ւր կը տանիս, Տէր — Անդրէասեան, եւ ի՞նչպէս կը բաժնուիս Մեծապահանջը...:

Պարզօրէն բուռած այս երկու խօսքերը խոր տպաւորութիւն թողուցին մեր վըրայ:

ԳԵՂԱՄ

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

Պէտք է պահեմ մարմնին ուժը՝ պահելու համար մտքին ուժը:

ՎՈՒՐՆԱՐԿ

ՌՈՒՍ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐԸ

ՊԻՏԻ ԳՐԱԿԵՒՆ ԱՆԱՏՈՂՈՒՆ

(ԻՆՉԵՐ ԿԸ ԳՐԵՆ)

ԹՐԻԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ

21. — ՊԵՏԻ Է ԲԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐԱՆ

Պէտք է Սամի պէյ, մասնաւոր պատուիրակութեան մը հետ, Մոսկուա մեկնեցաւ եւ տեսակցութիւն ունեցաւ Պորտ. Կոմիտարի օգնական՝ Լեւոն Գարախանի հետ: Այս բանակցութեանը ընթացքին, մեծ կարեւորութեամբ կանգ առին անոնք Հայաստանի ֆարսան կարգադրման ժամանակամիջոցի մէջ բանալու անհրաժեշտութեան վրայ, որպէսզի կարելի դառնայ Թուրքիա փոխադրել այն գեները, որոնք պիտի ուղարկուէին Անատոլու, իրենց օժանդակութիւն Անկարայի տեսակցութեան վրայ:

Գարախան կը պնդէր, թէ Լեւոնեանի զէպքերուն առթիւ պարտաւոր էին ուժ պահել այդ շրջանին մէջ եւ թէ դժուար էր զօրք փոխադրել հարաւ՝ բնութեամբ եւ ճնշումով ճամբայ բանալու համար կատարուելիք զինուորական օժանդակութեան: Ուստի, յարմար տեսնուած էր հարցը կարգադրել բանակցութեամբ, այսինքն՝ քաղաքական միջոցներով միայն:

Պէտք է Սամի պէյ Լեւոն Գարախանի տեղեկացուցած էր, թէ Անկարայի տեսակցութեան մարտիկները անմիջականութեամբ թէ չեն կրնար սպասել երկար, նոյնիսկ 15 օր անգամ: Ուստի խիստ կարեւոր է եւ կենսական՝ այդ ճամբան կարճագոյն ժամանակամիջոցի մէջ բանալու եւ ուղի մանիթի օգնութեան ապահովումը՝ կրուող ուժերուն:

Հակառակ այս կարգութեան, սակայն, թրքական պատուիրակութիւնը հազիւ տասը օր ետք անգամ մը եւս կարողացաւ տեսակցիլ Գարախանի հետ, այսինքն՝ 1920 Օգոստոս 4ին:

22. — ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌԻՃԵՐԸ

ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՄԷՋ

Այս տեսակցութեան ընթացքին, Գարախան յայտնեց, թէ Պորտ. ուժերը Նա-

խիլեան մտած են արդէն եւ հոն կապ հաստատած՝ թրքական ուժերուն հետ ու շարունակեց:

— Տեղեկացանք, թէ Անգարայի կառավարութիւնը ճանուցադրեց մը տուեր է Հայաստանի եւ անկէ պահանջեր, որ հայ զինուորները քաշուին իրենց զիջքերէն՝ մինչեւ այն դիմերը, որոնք դժուար եւ ճանչցուած են Պրեսթ — Լիթովսքի գաշնակին համաձայն: Մենք, կարգ մը պատճառներով անյարմար կը գտնենք որեւէ պահանջ ներկայացնել Հայերու թէ առանձնապէս Թուրքիոյ կողմէ եւ թէ Պորտ. Միութեան հետ՝ միասնաբար:

23. — «ՄԵՆԻ ԸՍՐՅԸ ԿԸ ԿԱՐԳԱՐԵՆԻ ԸՍՏԱՍՏԱՆԻ ՄԷՋ»

Գարախան շարունակեց. — «Նախկին Ռուսիոյ հոյակն սահմաններուն մէջ գտնուող Հայաստանի հետ, մենք հարցը կը կարգադրենք: Հակառակ անոր, որ պատերազմ չենք ուղեր, բայց եւ այնպէս՝ ամէն տեսակ պատրաստութիւն տեսած ենք Հայաստանի դէմ: Մեզի կը վերապահենք իրաւունքը՝ Հայաստանի դէմ պատերազմ հռչակելու համար: Այդ բանին համար ալ, մենք կարգ մը փաստեր ունինք մեր ձեռքը եւ գտնոք ձեռի մը բերելով, յարմար տեսնին պիտի հռչակենք պատերազմը Հայաստանի դէմ: Օրինակ, Հայերը բռնադատուած են

այն 25 Փետր ոսկին, զոր զրկած էինք Թուրքիոյ՝ իրենց օգնութիւնն»:

Լեւոն Գարախան, ապա շարունակեց. — «Մենք 48 ժամ միջոց տուինք Հայաստանի կառավարութեան, որպէսզի բանադրուած այդ ձոյլ ոսկիները վերադարձնէ մեզի: Իսկ Հայաստանի կառավարութիւնը ետ կանչեց այն հայկական պատուիրակութիւնը, որ կը գտնուէր Մոսկուայի մէջ:

«Մեծ կարեւորութեամբ կը դնան տեսնել օժանդակութեան այն կարիքը, զոր ունի Թուրքիան՝ իր այդ ճակատադրական պատերազմը յաջողութեամբ կարելի նալ գլուխ հանելու համար: Չեղ կը վըրտահանեմ եւ պէտք է լաւ դիտարեք, թէ մինչեւ ամսագրով անպայման պիտի բացուի այդ ճամբան: Բայց խնդրե՛ք դադարի թող մնայ: Այս պարագան ոչ ոքի յայտնեցէք, այլ միայն ձեր կառավարութեան տեղեկացուցէք:

(12 Շար.)

ՍՏՅՅԱՆԵՐ

«ԷՋՄԻԱՄԻՆ» պաշտօնական ամսաթերթ Մայր — Աթոռ Ս. Էջմիածնի: Օգոստ. — Սեպտ. 1965:

ՁԱՅՆԵՐ ԳԱՒԱՌԷՆ

ՅԱՋՈՂ ՀԱՅԿԵՐՈՅԹ ՄԸ

ԿՐԸՆՈՊՈՂ (Յառայ) . — Հայ Նախկին Մարտիկներու Միութեան Նոյեմբեր 14-ին, Կիրակի, սարքած էր հայկերոյթ մը Պուրսիէի ճաշարանին մէջ :

Հրաւիրեալներու թիւն էր շուրջ 60 : Շատ շուտով ստեղծուեցաւ մտերմիկ մթնոլորտ մը՝ նորհիւ սեղանապետ Մ. Նալպանտեանի ձեռնհաս ղեկավարութեան : Յաջորդաբար խօսք ստին ներկաներէն Պ. Մարանձեան, որ կարճ տեղեկատուութեամբ ներկայացուց Միութեան գործունէութիւնը, Պ. Ստանպուլեան, Պ. Միքայէլեան, որոնք զբուսական պատմեցին 1914 - 18ի անկողմարեան, Տիկին Միքայէլեան, որ իր խօսքը ուղղելով երիտասարդներուն թելադրեց հետեւի իրենց հայրերու օրինակին, Պ. Միքայէլեան եւ Պ. Մարթէն, որոնք խօսեցան Փրանսիայի ի պատիւ ներկայ Քըրանայի հիւրերուն :

Գեղարուեստական բաժնին իրենց մասնակցութիւնը բերին ներկաներէն շատեր : Ժազ Յովնանեան երգեց հայկական, Փրանսական երգեր, Մեսրոպեան, Օր. Յովնանեան արտասանեցին ու երգեցին : Ներկաները բաժնուեցան զո՛հ տպաւորութեամբ :

ՆԵՐԿԱՅ ՄԸ

Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն

ՁԱՆԱՁԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԱՄԱՊԱՀՆԵՐԸ պետութեան յանձնեցին 35 հազար թոն միս : Ըստ ծրարի պէտք է յանձնուէր 34-400 թոն :

ՀՐԱԶԵԱՅ ՆԵՐՍԻՍԵԱՆԻ ծննդեան 70-ամեակին առթիւ բազմաթիւ յօդուածներ լոյս տեսան Երեւանի մամուլին մէջ :

ԵՐԵՒԱՆԻ մարզադպրոցի մօտերը շինուեցաւ նոր մարզարան մը՝ օժտուած արդիական յարմարութիւններով :

«ՀԱՅԱՍՏԱՆ» հրատարակչութիւնը լոյս բերեց «Գ. Վարուժանի նամակներ», որ ցարդ եղածներուն մէջ ամէնէն ամբողջականն է : Կը պարունակէ 162 նամակներ, գրուած՝ 1903 - 15 թուականներուն : Յատուաբար կրճատ է բանասէր Գ. Մալոյանի :

ՄԱՅՆԱՆԻ ի վեր 7000 դրօսաչլիկներ այցելեցին Իջևան :

ԵՐԵՒԱՆԻ մէջ տեղի ունեցած իրապարտական ողբիական խաղերը ցոյց տուին, որ Հայաստանի կին մարզիկները զեռ շատ հեռու են միջազգային չափանիշներէն :

1964ին թանգարան այցելողներու թիւը եղած է 600-000 :

— Լաւ կ'ընէք, օրիորդ, պատասխանեց Փուարօ ժողովուրդ : Սակայն յիշեցէք նաեւ որ նոյն օրը սա տեսած էի ձեզի նոյնիսկ Պ. Մարթէնի հետ զլուս զլուս ճաշարան տանին : Դուք մօտեցաք իմ սեղանիս փորձելով զիս համոզել, թէ Միս Ատամ սկարութիւն մը ունէր ղէպի Բոնայտ Մարչը ... եւ ոչ թէ Պրիան Մարթէնը, ինչ որ իրականութիւնն էր :

— Բնաւ երբեք, բողոքեց զերասանը տիրաբար : — Թերեւս դուք չէիք անդադարձած, պարոն, ըստ Փուարօ հանդարտութեամբ, բայց կարծեմ թէ այդ է ճշմարտութիւնը : Եւ այս պարագան թերեւս լաւագոյն կերպով կը բացատրէ Միս Ատամի հակակրօնութիւնը ղէպի Լէյտի Էմմա-վարը, որ բացարձակապէս ատելի էր Գարլոթայի համար : Դուք անկասկած ձեր յուսախարութեան մասին խօսած էիք իրեն, չէ՞ :

— Այո, ես պահանջը կը դրայ սիրտս բանուր ունէ մէկուն, եւ Գարլոթան ... — ... Ձեզի հանդէպ համակրօնութիւն մը ցոյց տուած էր : Լաւ, ի՞նչ տեղի կ'ունենայ յետոյ : Բոնայտ Մարչ կը ձերբակալուի :

ԱԿԱՌԱՔՐԻՍԻ

(Շար.)

Եւ անոնք են որ դորձ կ'ունենան դրամա - տուններու հետ : Ճաշարանները, սրճարանները, «բեպար»ի խանութները՝ դրեթէ բոլորովին անոնց ձեռքը կը գրտնուին :

Բայց, սահիկա առաջին տպաւորութիւն է, որովհետեւ, եթէ աւելի լաւ դիտեմք մարդ, պիտի տեսնէ, որ որեւէ գործի մէջ, այրերու տեղը չէ որ կը բռնեն կիները : Այսինքն, զանոնք չեն վրձնուած, իրենք մտնելու համար : Այլ կըցած են շաղախուիլ անոնց հետ եւ այնքան լաւ որ կարելի չէ գանադանել մէկը միւսին : Ասիկա՛ անսովոր է միւս Եւրոպացիներուն եւ յատկապէս Հարաւայիններուն - Իտալացիներուն եւ Յուններուն համար :

Եւ սակայն, շատ տարիներ առաջ չէր, որ զլիսաւորաբար դերմանախօս Չուիցերիոյ կիներէն շատերուն համար, կիներ բարձրացնող երեք արժանիքներ կային : Այդ երեք արժանիքները ծանօթ էին իրեն «Երեք զէեք» — զանոնք բնորոշող կերպաներէն բառերու սկզբնատառերը — Բիւնտը, Բիւնտ, Բիւնտ, այսինքն, աղքատ, խոհանոց, Եկեղեցի : Այսօր, զրեթէ առանց բացատրութեան՝ բոլոր աղջիկները կ'աշխատին : Ու կ'աշխատին նոյնիսկ ամուսնացածները որոնք թիւր հեղձակ կը շատնայ :

Ի՞նչ բանի արդիւնք է այս երեւոյթը : Մեծ մասամբ, տնտեսապէս անկախ ըլլալու աղջիկներու ցանկութեան, որպէսզի կարենան «իրենց կեանքը ապրիլ» առանց պէտք ունենալու հաշիւ տալ իրենց ծրնողներուն : Այսպէս, ոչ հազուադէպօրէն կարելի է տեսնել 17 - 18 տարեկան կամ աւելի փոքր աղջիկներ, որ զպրօցին մէջ իրենց ուսումը աւարտելով՝ Յիւրիս կ'երթան աշխատելու :

Ուրիշ պատճառ մըն ալ այն է, որ պատերազմէն ետք, Չուիցերիոյ մէջ, ճարտարագիտութեամբ այնպիսի զարգացում մը ունեցաւ բոլոր մարզերէն ներս, որ շարունակ կը ստեղծուին գործի նոր տեղեր, որոնց մեծագոյն մասը, այսօր ալ պարագայ կը մնայ, աշխատող ձեռքերու պակասին հետեւանքով :

Ատոր համար, ոչ միայն կիները կը հրաւիրեն նոր ստեղծուած տեղերու մէջ գործ բռնելու, այլեւ անոնցմէ կը խնդրեն աշխատանքի շատ նպաստաւոր պայմաններ առաջարկելով : Ուրիշ պատճառ մըն ալ՝ կիները կը մղէ աշխատելու — պերճանքի մոլութիւնը : Հարուստ երկրի մը մէջ ապրելով՝ կ'ուզեն հարուստի պէս ապրիլ եւ արդէն հարուստ են, քանի որ իրենց երկրի տնտեսութիւնը ծաղկաւ զինակի մէջ կը գտնուի :

Այսպէս կարելի է տեսնել պանդոկներու սենեկապանուհիներ կամ բանուորուհիներ, որ լաւագոյն դերձակներուն կարելի կուտան իրենց հագուստները եւ կը դնեն ամէնէն սուղ հագուստները :

Գանի որ իրենց թոշակները թոյլ կուտան՝ ինչո՞ւ իրենք ալ հարուստներու հաճոյքները չվայելին :

Թարգմ. ՎԷՆ

ԿԻՆԵՐԸ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ՄԷՋ

Չուիցերիոյ մէջ, մարդ ուր որ ալ գործընէ նայուածքը, ամէնէն աւելի պիտի տպաւորուի ոչ թէ զուիցերական տեսաբաններու զեղեցիկութիւններէն կամ քաղաքներու մէջ տիրող մաքրութեանէն, այլ՝ աշխատող կիներէն, որոնք դրամած են ամէնէն «արական» արհեստները : Թաքալի վարորդ, հանրակառքի վարորդ, ոստիկան, մարդատար ինքնաշարժի վարորդ, ահա մէկ քանին այն արհեստներէն, զորս ոչ միայն յաջողութեամբ կը գործադրեն էտրվայաններու եւ ժամացոյցներու երկրի կիները, այլ նաեւ՝ շատ մը պարագաներու մէջ այրերէն աւելի մեծ թիւ կը ներկայացնեն :

Իսկապէս, օրինակի համար Յիւրիսի մէջ, ուր Չուիցերիոյ միւս բոլոր քաղաքներէն աւելի մեծ է թիւր աշխատող «տրկար» սեռի ներկայացուցիչներուն, կիներ այն տպաւորութիւնը ունի, թէ ի վերջոյ այրերուն հետ հաւասարած է :

Եւ սխալ չէ, որովհետեւ, մարդ ուր որ ալ նայի, պիտի տեսնէ՝ թէ կիները կը տիրապետեն ամէն կողմ : Եւ ոչ միայն փողոցներուն մէջ : Կիներն են, որ օտարները կ'ընդունին մեծ պանդոկներու մէջ :

աղբային տօն : Փասթէօր կը բուժէ չընախար : Փուպէլ նահանգապետը կը հաստատէ տուփերը՝ որոնք իր անունը կը կրեն : Կրէյլի մասին կ'երգեն նաեւ. — « Ի՞նչ դժբախտութիւն փեսայ մը ունի նալը ... », որովհետեւ իրենք շքանշաններու տուածնախ է ըրած : Նախագահութեան կը ստիպուի հրատարակել :

ՄԱՏԻ ՔԱՐՆՕ (1887 - 1894) . — Ճարտարագիտ : Ընտրուած յուսու տարեկանին : Նախագահ Երկիրը կը չըլի եւ անոնք անկամ ըլլալով պաշտօնական արարողութիւններու յատուկ հագուստը կը հաստատէ : Փրանսա կը տիրէ Կիսի, Քոթ Խիլոն, Տահոմէի : Փրանսական նաւատորմը կ'այցելէ Կրոնթատի ուսուստորմը կուզայ Թուլօն, դաշնակցութեան մը սկիզբն է : Կը յայտնուի ինքնաշարժ եւ էյֆէլ իր աշտարակը կը բարձրացնէ : Պուրսիէ զօրավարը որ մենապետութեանը ձգտի, ժողովուրդը կը զրգո՛ք, բայց ի վերջոյ անձնասպան կը ըլլայ սիրուհիին զերեզմանին վրայ : Գայթակորութիւն ... Ֆէրտինան տը Լէսէփիս հիմնած ընկերութիւնը բանալու համար Փանամայի ջրանցքը, կը դադրեցնէ իր վճարումները, խորհրդարանն կանները կ'ամբաստանուին իրենք մըն խողներ : Անիշխանութիւնը իր առաջին ուսմբերը կ'արձակէ : Նախագահը զլիսատել կուտայ իր մարդոցմէ մէկը, Ռուսչոյ : Ուրիշ մը, Փագէթիօ խալալցին, Լիոնի մէջ կը սպաննէ նախագահը : (Շար.)

որ կ'ուզէ ամուսնանալ, այլ ուրիշէ մը հետ : Արդ, դուք պատճառներ ունէիք այդ նամակը անհետացնելու :

— Ե՛ս ... երբեք : — Սպասեցէք : Քիչ յետոյ կրնաք խօսիլ որքան որ ուզէք : Այժմ լաւ հետեւեցէք խօսքերուս :

« Դուք, որ իրական սեռի պաշտած կուտքն էիք, եւ կը կարծէիք թէ կիները անդրդուելի չեն կրնար մնալ ձեզ մօտ, վերաւորուած հոգեկան վիճակ մը ունիք անշուշտ : Ձեր ցասումին մէջ մէկ բան կը խորհէիք միայն, Լէյտի Էմմային տալ ստուկալի հարուստ մը : Եւ ի՞նչ կրնայիք մաղթել աւելի, եթէ ոչ զինքը տեսնել ամբաստանութեան մը ներքեւ ... կամ դատարարութեամբ : »

Ժար չկրցաւ յիշոց մը դսպել : Փուարօ դարձաւ ղէպի ոստիկանը :

— Այսպէս է, բարեկամս, այս է այն ճղճիմ դադափարը, որ մտքիս մէջ ծլած է, եւ որուն վրայ բազմաթիւ ուրիշ ղէպեր եկած են աւելնալ : Գարլոթա Ատամս բարեկամութիւնը ունէր երկու մարդոց՝ զնդապետ Մարչին եւ Պրիան Մարթէնին : Անկարելի չէ, որ մեծամեծ դուստրներ շահող Պրիան Մարթէնը եղած ըլլայ ծրարիք երիտասարդ դերասանուհիին ներկայացնողը եւ տասը հազար տոլար խոստացողը : Արդարեւ, Միս Ատամս պիտի չհաւատար, որ Բոնայտ Մարչ այդքան զբաւ կրնար յատկացնել :

(Շար.)

ՅԱՆԱՁԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՏԻ ՔԱՐՆՕ (1871-1873) . — Փաստաբան : Ընտրուած 74 տարեկանին : « Պատերազմի տարիներ անհիշելի դուրս բերէք մեզ » . 1870ի ամբողջ Փրանսան է որ այս կանչը ընտրութեանը համար մարտիկներու որ պիտի կոչուի «Երկրին այս պատերազմ» : Փրանսա հինգ միլիոն ոսկի փողով պարտական է Գերմանացիներուն, որ սակայն պիտի յաջողի վճարել թիէք, որ անկամ փոխառութիւններ կատարուին փողովուրդէն : Իրբեւ թէ չբաւէին փողով ստանալով 135-000 զոհերը . 1870ի պատերազմին «Քոմիւնը» պիտի աւելցնէին քսան հազար զոհեր եւս, որոնք հաշուելու Պատուոյ - Լեգէոնի, Կոմիւնիստական խորհուրդին, Փարիզի թափառութեան քաղաքապետարանի եւ Քիւրբիի պալատներուն հրկիզումները : Քիւրբի իշխանութեան օրով է սակայն որ կը բացուի Մոն - Սընիի հսկայ փապուղի, եւ որոշում կը տրուի ջրանցքներու փոխառումը Մէյզին ու Մօզէլը :

ՓԱՌԻՍ ՏԸ ՄԱՔ - ՄԱՀՈՆ (1873 - 1879) . — Չինուորական : Ընտրուած 64 տարեկանին : Ինքն է որ այցելելով Կաստիլիոյ ողորուած հարաւ - արեւմտեան շրջանները՝ պիտի գոչէ զարմացական . — Այս որքա՞ն ջուր, այս որքա՞ն ջուր : Ասիկա արգելք է սակայն որ իր իշխանութեան օրով վերջին դերմանացի զինուորը գուրս դայ Փրանսայէն : Երկիրը լրացի Այլաս - Լորէնէն) ի վերջոյ վերադառնալու է : Արատած, Փրանսա կը ձեռնարկէ կազմելու իր սահմանադրութիւնը : Առաջին անգամ ըլլալով վերջնականորէն կը հաստատուի Հանրապետութիւնը :

Նախագահը պիտի ընտրուի եօթը տարուան շրջանի մը համար համագումարի կողմէ, որ կազմուած է խորհրդարանի անդամներէն : Փարիզի մէջ Համալսարանի ցուցահանդէսը կը համախմբէ երկու հարիւր հազար այցելուներ : Գործածութեան կը դրուին արդէն երկատար կառուութիւնը, հեռաձայնն ու հեռանիւլ, իսկ երկաթուղին տակաւ պիտի գարգաւ : Օփերան կը բացուի :

ԺԻԻԼ ԿՐԻԻԻ (1879 - 1887) . — Փաստաբան : Ընտրուած 71 տարեկանին : 78 տարեկանին վերընտրուած : Էլիզէն կը բողոքեն իրանայ : Գորայի Կրէլի ինքն իսկ իր գնումները կը կատարէ : Իր ամուսինը, սիրահար Պիլյարի, կը խնամէ «Պէպէ» յորձրոնուած բազ մը եւ սպիտակ սարձակ մը : Փրանսան կը տարածուի ծովերէն անդին : Հոգատար կառավարութիւններ թունուելի, Մատակաւարի, Աննամի Ե. Թոնըրինի մէջ : Սառքեան տը Պրած - ձա կը կազմակերպէ Բոնիոն : Հակակրօնական օրէնքներու եւ ուսուցման պետական օրէնքներու (նախնական պարտադիր ուսում) շրջանն է : Վերահաստատուած է սպառարանը : Յուլիս 14ը հռչակուած է

ՄԱՏԻ ՔԱՐՆՕ (1887 - 1894) . — Ճարտարագիտ : Ընտրուած յուսու տարեկանին : Նախագահ Երկիրը կը չըլի եւ անոնք անկամ ըլլալով պաշտօնական արարողութիւններու յատուկ հագուստը կը հաստատէ : Փրանսա կը տիրէ Կիսի, Քոթ Խիլոն, Տահոմէի : Փրանսական նաւատորմը կ'այցելէ Կրոնթատի ուսուստորմը կուզայ Թուլօն, դաշնակցութեան մը սկիզբն է : Կը յայտնուի ինքնաշարժ եւ էյֆէլ իր աշտարակը կը բարձրացնէ : Պուրսիէ զօրավարը որ մենապետութեանը ձգտի, ժողովուրդը կը զրգո՛ք, բայց ի վերջոյ անձնասպան կը ըլլայ սիրուհիին զերեզմանին վրայ : Գայթակորութիւն ... Ֆէրտինան տը Լէսէփիս հիմնած ընկերութիւնը բանալու համար Փանամայի ջրանցքը, կը դադրեցնէ իր վճարումները, խորհրդարանն կանները կ'ամբաստանուին իրենք մըն խողներ : Անիշխանութիւնը իր առաջին ուսմբերը կ'արձակէ : Նախագահը զլիսատել կուտայ իր մարդոցմէ մէկը, Ռուսչոյ : Ուրիշ մը, Փագէթիօ խալալցին, Լիոնի մէջ կը սպաննէ նախագահը : (Շար.)

մահը, որ պատահեցաւ Դեկտ. 1ին, իր բնակարանը :

Յուղարկաւորութիւնը կը կատարուի այս Շարաթ (Դեկտ. 4) ժամը 14ին Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին, ուր կէ մարմինը կը փոխադրուի Պանէօ - Փարիզիէն զերեզմանատունը ամփոփուելու համար Ն. Բ. Բ. Մ. Ի մատուցած կանխուրդ դամբարանը :

Հանգուցեալին փափաքին համաձայն ոչ ծաղիկ, ոչ ծաղիկապակ :

Որեւէ մահազոյր զրկուած չըլլալով, կը խնդրուի ներկայս իրբի այդ նկատել :

Տիկին Հերմինէ Ասլանեան, Տիկին Զարուհի Ասլանեան, Տիկին Լեւոն Արփա - ճեան, Օր. Էմմա եւ Պ. Սերժ Արփաճեան, Տէր եւ Տիկին Փարսալ Քարման եւ զաւակը՝ Ժերար, ինչպէս նաեւ Մոմճեան, Գարակէօզեան, Ակորեան, Հէքիմեան, Խրտրեան եւ Քոչեան ընտանիքները ցաւով կը ծանուցանեն իրենց մօր, մեծ մօր, պարմուհիին եւ ազգականին՝

ՏԻԿԻՆ ԱՐԹԻՆ ԱՍԼԱՆԵԱՆԻ

(Ծնեալ Արթուրի Մոմճեան)

մահը, որ պատահեցաւ Նոյեմբեր 30ին :

Յուղարկաւորութիւնը կը կատարուի այս Երկուշաբթի (Դեկտ. 6) ժամը 10-30ին Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին, 15 Րիւ ժամ Կաթոն, ուր կէ մարմինը կը փոխադրուի Պուլուների զերեզմանատունը, ամփոփուելու համար ընտանեկան դամբարանը :

Մահազոյր զրկուած չըլլալով կը խնդրուի ներկայս իրբի այդ նկատել :

ՆՈՒԷՐ

Ս. Դաւիթեան եւ Օր. Ն. Դաւիթեան, ողբացեալ Փառանձեմ Դաւիթեանի մահուան Ա. տարեկիցին առթիւ, Հայ Կարմիր եւ Կապոյտ խաչերուն 50ական Քր. կը նուիրեն :

(Մտանալ «Յառաջ»էն) :

ՀԱԼԷՊԻ ԾԵՐԱՆՈՅԻՆ ՀԱՄԱՐ

ԽՄԲ. — Հալէպի Հայոց Ծերանոցին խնամակալութիւնը շնորհակալութիւն յայտնելով այն հետաքրքրութեան համար, զոր Յառաջ ցայց տուաւ Նոյեմբեր 6ին հրատարակուած գրութեամբ մը՝ կոչ ընելով օգնել Ծերանոցին 124 ծերերուն, կը խնդրէ հրատարակել նաեւ հետեւեալ նախառուարեանց ցանկը :

Շնորհակալութեամբ ստացանք Պ. Զատիկ Զատիկեանի միջոցաւ խնամակալութեան գանձապահ Պ. Յարութիւն Սարգիսեանին յանձնուած, 16 հազար հին Քր., փոխան ծաղիկապակի, հետեւեալ ազգայիններէն, ողբացեալ Ներսէս Քչիկեանի մահուան տխուր առթիով :

Պ. Պ. Աշատեան Քէնան 20 նոր Քրանք, Աճէմեան Մարտիկ հինգ, Աշնամեան Կիւլպէնի տասը, Բեռլոյեան Անահիտ 5, Գալաթեան Մելքոն տասը, Գալիկեան Թորոս հինգ, Գարակէօզեան Յովհաննէս տասը, Եսայեան Փիլիպպոս հինգ, Զատիկեան Զատիկ, Էմիրեան Զատիկ, Հայրապետեան Յարութիւն 10ական, Միսաբեան Ստեփան քսան, Շահինեան Թադեոս 15, Պէրպէրեան Յովակիմ տասը, Քեհասեան Միհրան հինգ, Քիրեմիթեան Աւետիս տասը Քր. : Գումար 160 Քրանք :

Վարիչ քարտուղար ԳՐԻԳՈՐ ԵՐԷՅԵԱՆ

Հալէպ, 28 Նոյ. 1965

ԽՄԲ. — Ընկ. Երուանդ Ատանայեան եւս պատասխանելով մեր կոչին, 400 ֆր. յանձնած է մեզի՝ ծերանոցին համար :

(Մտանալ «Յառաջ»էն) :

ՎԱԼԱՆՍ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգաբարձութիւնը կը ծանուցանէ թէ այս Կիրակի պիտի պատարագէ, քաղաք հիւրարար գտնուող եւ էջմիածինէն վերադարձող Յակոբ Եպիսկոպոսի վարդապետին :

ՅԱՐԱՇ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN
RÉDACTION - ADMINISTRATION : 32, RUE DE TRÉVISE - PARIS (9^e)

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Tél. : PROvence 86-60
C.C.P. Paris 15069-82

Ֆրանսա՝ Տար. 60 ֆ. վեցամսայ՝ 35 ֆ.
Արտասահման՝ Տար. 80 ֆ. Հատը 0,30 ֆ.

ԿԻՐԱԿԻ
5
ԴԵԿՏԵՄԲԵՐ
DIMANCHE
5 DECEMBRE
1965
LE NUMÉRO : 0,30 FR.

Օ Ր Ա Թ Ե Ր Թ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍՍԱԿԻԱՆ

ՏՄԻՒՍՏԻ — ԹԻԻ 10477

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

41e ANNÉE — N° 10.477

ՕՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ԻՐԵՆՑ ՎԵՐՁԻՆ ԽՕՍՔԵՐԸ

Վեց ԹեյնԱժՈՒՆԵՐԸ ԿՈՒՋԵՆ
ՖԻՆԱՆՍԱՅԻ ԱՊԱԳԱՆ ԾԻՆՆԸ

Այսօր, Կիրակի, 25 մեյիսին Ֆրանսայի
պայքարիչները իրենց քուէն պիտի տան
անոր որու կը յանձնեն իրենց եօթնամեայ
պալատին :

Վերջին անգամ, ութ վայրկեանի հա-
տար, կարգով խօսք առին. — Կը շեշտէ
թիֆօսիէ — ՎԻՆԵԱՆՔՈՒՌՈՒՄ — Կը շեշտէ
թէ եթէ, ըստ տը Կոլի, ընդդիմութիւնը
բաժանուած է, առիկա սխալ է, ինչ կը վե-

րաբերի իրենց ծրագրին, որ նոյնն է եւ
Թիբեթի ծրագրին է : Յայտնեց թէ փո-
խանցման շրջանի մը համար, կառավար-
ութիւնը պիտի յանձնէ Երեւանի յար-
կապէս : Կասթրոն Մոնթրիլի : Իրբեւ ըս-
տաւորապէս լիտանը, շեշտեց թէ տը Կոլ
յայտնած է որ պիտի չվերջացնէ իր ժա-

մանակաշրջանը, ուրեմն երկու ամիսէն,
հարաբաբաբով պիտի արտօնութիւն ուզէ
որ յաջողը, ինք նշանակելու եւ այդ
մէտով, Գեկտեմբեր 5ին եթէ ժողովուրդը
ար Կոլի քուէարկէ քուէարկած պիտի ըլ-

լայ անձանթի մը համար :
ՏՐԱՆՍՊՈՒՄ ՄԻԹՐԱՆ, ձախերու թեկ-
նածուն համար ընտրութիւնը Գ. եւ Ե.
Հանրապետութեանց միջեւ չէ : Ընտրու-

թիւնը ներկայ վարչակարգին եւ կուսակ-
ցութեանց միջեւ չէ : Ներկայ վարչակար-
ը վարչակարգին է միեւնակ մարդու մը եւ
որ ժամը դայ երթալու, պիտի նշանակէ
անձանթ յաջողը մը : Ինք, Միթրան

կուսակցութեան մը մարդը չէ ոչ ալ կու-
սակցութեանց համախմբումի մը : Ամբողջ
նախին թեկնածուն է, աղիւս, եղբայրա-
կան ձախին, որ իրմէ առաջ եւ իրմէ
տար, եղած է եւ պիտի ըլլայ այս ժողո-

վուրդին մշտական արժէքը : Ապա, Մի-
թրան իրբեւ ընտրան առաջ Փրանսական
փոստերին բառերը «Արտուութիւն, պաշ-
տուած պատուութիւն» :

ՊԱՐՊԻՒՄ այս կարգէ գուրս թեկնա-
ծուն, կոչ մը ըրաւ, որ իրեն քուէարկեն :
Այդ ձայները պիտի չօգտապարծէ այլ
տանարան պիտի գնէ, 15 օր, անկէ
տար, ով որու կ'ուզէ թող անոր տայ այդ
ձայները :

ՓԻԻԲ ՄԱՐՍԻԼԻԱՍԻ, պարկեշտ քա-
ղաքացիի տիպար, ոչ մէկ հոտանքի թեկ-
նածուն չտրհակալութիւն յայտնեց այն
համախմբութեան համար զոր ժողովուրդը
յոյց տուած է իրեն հանդէպ ընտրապա-
րարի սկիզբէն ի վեր : Թեկարեց որ ժո-
ղովուրդը ընտրէ ամէնէն կարողը եւ
չտարուի տարիքի կամ քաղաքական
անձանթարանութեանց տուեալներով :

Երբիւն ձախապարտը պիտի որոշուի
եօթն տարուան համար : Երկար է մար-
դու մը կեանքի մէջ : Երկար է աղբի մը
կեանքին մէջ :

ՉՕՐ. ՏԸ ԿՈՒ. — Տեղական մամուլը
(Քոմպ) կը սպասէ որ սպառնայ, բայց
չպատճառ : Յայտնեց թէ հինգ կենսական
պայքար կան. — Հիմնարկութիւնները
անկախուն, այսօր կայուն : Ա-

պալատի կանգնուածը որ կը բաժնէր
Պալատի կանգնուածը, որմէ 25 տարիէ Չրան-
ուս գրկուած էր եւ այսօր վերապտնուած
է : Էնֆիախիւնը, որու առաջին անուած
է, վերջապէս՝ անկախութիւնը : Վստահ
թէ իրմէ վերջ նոր Հանրապետութիւնը
պիտի տեւէ, կենդանի եւ պտղաբեր, ո-

րովհետեւ գերիշխան ժողովուրդը նշած
պիտի ըլլայ որ իրն է եւ թէ իրեն արժա-
նէ մարդիկ են, զոր պիտի ընտրէ ապա-
գային, համապատասխան իր ձախատա-
րին :

ԼԲՔԱՆԻԻԷ, տը Կոլի ձայներու գըլ-
խաւոր մըցակիցը նկատուած այս երի-

Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն

« ԱՐԱՐԱՏ » ՅԱՂԹԱԿԱՆ

« Արարատ » ոտնաղնակի խումբին
փայլուն յաղթանակը «Մոլոտովայ» դէմ,
որ տեղի ունեցաւ Նոյեմբեր 20ին, Երեւ-
անցիներուն ապահովեց առաջին տեղը
Սօր՝ Միութեան ոտնաղնակի ախոյե -
նութեան մըցաշարքի Բ. բաժանումի
մէջ :

Նոյն օրերուն, սակայն, նոյն ենթա-
խումբին մաս կազմող Արմա - Աթալի
« Կայրաթ », իր կարգին, փայլուն յաղ-
թանակով մը կը հաւասարէր «Արարատ»
- ան :

Երկու խումբերն ալ արձանագրած էին
38 կէտ :

Անհրաժեշտ էր լրացուցիչ հանդիպու-
մով մը ճշգրիտ առաջին տեղը :

« Արարատ » եւ « Կայրաթ » իրարու
հետ մըցեցան Կրողնի մէջ : Ինչպէս կ'ա-
կընկալուէր, տասնեակ հազարաւոր մար-
դակներ փութացած են դաշտ, իսկ մի-
լիոնաւորներ խաղին հետեւած են ձայ -
նասփռուի միջոցաւ :

Ողբ կը սկսի լարուած մթնոլորտի
մէջ : Հայ մարզիկները անմիջապէս
կ'անցնին յարձակողականի, բայց չարէն
աւելի աճապարանք ցոյց կուտան :

Ասիկէ կ'օգտուին Արմա - Աթալիները :
Արդարեւ, անուշադրութեան մը հետե-
ւանքով հայկական դարպասին մէջ կը
մանէ գնդակը :

Սակայն «առաջին կողմ պարտութիւն չի
նշանակեր» : Երկար յարձակողականներէ
եւ բաղմամբի փորձերէ ետք Երեւանցի-
ները կը յաջողին հաւասարեցնել խաղին
արդիւնքը :

Հարկ էր սակայն ապահովել յաղթանա-
կը :

Եւ այդպէս ալ կ'ըլլայ : Երկրորդ կողմ
հայ մարզիկները պարտութեան կը մատ-
նեն իրենց վաղեմի դորաւոր հակառա-
կորդը :

Այս յաղթանակով « Արարատ » ապա-
հովեց առաջին տեղը Բ. բաժանումի
մէջ :

Այժմ պիտի մըցի Ա. բաժանումի
մէջ, ուր կան շատ դորաւոր խումբեր :

տաղարտ թեկնածուն կ'ուզէ ջնջել բոլոր
սահմանները, ոչ միայն երկիրներու մի-
ջեւ այլեւ մանաւանդ խիզճերու սահ-
մանները : Շատ վտանգներ կան դրան
առջեւ : Պէտք է մտածել ազգային մա-
սին եւ կառուցանել : Հիմա նոր շրջան մը
կը բացուի նոր սերունդի մը համար, որ
ամէն ջանք պիտի թափէ որպէսզի ապա-
հովէ կարգի եւ հանդարտութեան մէջ,
փոխանցուի :

Պէտք է բոլորը միանան գործունէու-
թեան այս ծրագրին արդի ժամանակնե-
րու Ֆրանսայի տալու համար նոր դարկ,
զարկը եղբայրական, խաղաղասէր եւ
աղիւս Ֆրանսայի մը : Այս է իսկական
մեծութիւնը :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ փոխ-վար-
չապետը՝ Էրիք Ամէլ անձնասպան եղած
է, 48 տարեկանին :

ՎԻԵՆՆԱՄԻ մէջ մտահոգութեան նոր
պատճառներ կան արուած ըլլալով որ չի-
նացի թեքնիստներու թիւը օրէ օր կը
բարձրանայ եւ վախ կայ որ նոր «քորէ-
կան պատերազմ» մը ստեղծուի :

ՀՈՒՄԻՆ հասած լուրերու համաձայն,
հաւանական կը նկատուի որ պապական
որոշումով Ուրբաթ օրը գաղթի պահէ օր
ըլլալի :

ՊՐԱՋԻԼԻ լուրերը միշտ մտահոգիչ են :
Կարգ մը տեղեկութիւններու համաձայն
Նեկրան տը Հիմա որ Ռիոյի կառավարիչ
նշանակուած էր, ձերբակալուած է :

ԹՈՒՐԿԵՐԸ Կ'ԱՇԽԱՏԻՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ... Ա Լ Ա ԹՈՒՐԿԱ

ԽՄԲ. — Թրեական մամուլին պատեա -
լիքներէն ետք՝ բուրք դիւանագետները
ես գործի լծած են իրենց լեզուն : Թուր-
քիոյ արտաքին նախարարը, Չաղլալան -
կիլ, հազիւ Նիւ - Եորք հասած՝ հետե-
ւալ յայտարարութիւններն ըրած է. Նիւ
Եորք թաղմըի. —

« Մակարիոս Արք. ի յայտարարութիւն-
ներէն սա իմաստը հանեցինք. — Կիպրոսի
Յոյները մտադիր են կատարուած իրո -
յութեան մը հարթել այս վէճը, եւ ոչ
թէ բանակցութեանց միջոցաւ : Գիտե՞ք
արդէն թէ Մակարիոս բոլորովին ինք -
նիշխան կը գործէ եւ իր նպատակն է
հիմնովին ջնջել Կիպրոսի Սահմանադրու-
թիւնը եւ թուրք համայնքը դրկել իր օրի-
նաւոր իրաւունքներէն, այնուհետեւ ԷնՕ -
ՍԻՍ հռչակել : Երկու տարիէ ի վեր Կիպ-
րոսի Յոյները աստիճանաբար այս ծրա-
գիւրը կը գործադրեն, անկէ արդիւնք մը
քաղելու յոյսով : Կիպրոսի համաձայնու-
թիւնները բռնաբարուած են այս կերպով,
Կիպրոսի թրքութիւնը բնաջնջուած են -
թակալ է, տնտեսապէս պաշարուած եւ
հազարամէկ դժուարութիւններու մատ -
նուած : Հազարաւոր թուրքեր ստիպուե-
ցան հեռանալ իրենց ընտանեկան բոյնե -
րէն, աւելի ապահով վայրերու մէջ ա -
պաստան գտնելու համար : Ներկայիս
Թուրքերու վարչութեան տակ գտնուող
Կիպրոսի թրքութիւնը բնաջնջուած են 90 հա-
մաձայնութեամբ, եւ ոչ թէ հարիւրին
տասը համեմատութիւնով, ինչպէս կ'ա -
նարկէ Մակարիոս : Իրողութիւնը այս է
մի միայն, եւ այս պարագան ալ կը հաս-
տատէ թէ Թուրքերը երբեք պիտի չըն -
դունին յունական լուծը : Ապահովարար
Մակարիոս կը ջանայ ժամանակ չահիլ,
իւր նպատակին կարեւոր հասնելու հա -
մար : Եթէ կը խորհի թէ պիտի կրնայ մե-
կուսացնել Կիպրոսի թուրքերը, չարաչար
կը սխալի : Թուրքիա որոշած է մինչեւ
վերջը հողալ Կիպրոսի թուրքերը եւ չա -
հազրգուելի Կիպրոսի ձախառադրով,
չլքել այս գաղթը : Մակարիոս այստեղ է
որ կը խարուի ամբողջովին : Կիպրոսի
թրքական համայնքը կրնայ ընկճուել, ե -
թէ առանձին միայն, բայց Թուրքիա իւ -
րացուցած է անոնց ինչքի, կեանքի ապա -
հովութիւնը եւ անոնց գոյութեան իրա -
ւունքները : Պէտք չէ մոռնալ որ Թուրքիա
մէկն է այն պետութիւններէն, որոնք
ստորագրեցին Կիպրոսի դաշինքը, եւ
բնաւ պիտի չընդունին որ այս համաձայ-
նութիւնը խզուի եւ չեղեալ նկատուի :
Թուրքիա դատաւի պիտի չըլլայ երբեք
եւ պիտի չզաղորի պաշտպանել Կիպրոսի
թուրք համայնքին իրաւունքները : Իր
ամբողջ ջանքերով ի սպաս դրաւ, հաշտա-
բար միջոցներով եւ երկիւղովանի բանակ-
ցութիւններով կարողացուցանել կոտորած
մը գտնելու եւ խաղաղութիւնը պահպա -
նելու համար Արեւելեան Միջերկրականի
մէջ : Սխալ է նաեւ Մակարիոսի այն վե -
րադրումը թէ՛ Թուրքիա դորահանում
պիտի կատարէ Կիպրոսի մէջ եւ ինք այս
վտանգէն կը խրաչի : Թուրքիա երբեք
չպատճառ Կիպրոսի : Միայն թէ Կիպրոսի
յունական իշխանութեան յիշեցուց թէ
բնաւ պիտի չընդունին որեւէ կատարուած
իրողութիւն : Թուրքիոյ բռնած ընթացքը
այս է մի միայն : Նոյնինքն Մակարիոսն
է որ կ'ընդդիմանայ վերջնական համա -
ձայնութեան մը գաղափարին եւ ան -
մարդկային միջոցներու կը դիմէ, բունի
ուժով իր խորհածը պարտադրելու հա -
մար » :

ՋԱՐԳԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ...
Ա Լ Ա ԹՈՒՐԿԱ

Չաղլալանի յետոյ խօսեցաւ Կիպրոսի

«ՄԱՍՍԱ ՄԱՆՈՒԿ»

(ՀԱՏՈՒԱԾ ՄԲ)

Դառնաւի ու պագեւի
Մայրական հողը սուրբ Հայաստանի :

Դո՛ւն, ալն - արեւ աշխարհների ,
Որ դրել ես գահըդ ոսկեայ
Ազգերի մեծ փառքու վրայ :
Հազար ու մէկ պանծաւիկ ձեզի ,
Ազատ Մասիս ,

Բիւր լեռներու քաղ ու պտակ ,
Մեր աշխարհի հոգը գութէր :
Սիփան, Սասուն ,
Առնոս, Տարսուս, ու Ամանոս ,
Որ կ'երազէի հպարտ, մուշ - մուշ ,
Կայծակ կուտաք, կրակ կուտաք
Հայու սրտին, փափաք կուտին :
Հով կը շնչէք ցաղ ու անուշ
Չոր ու հովիտ լիք մշուշ :
Համբար ձեզի ,

Ըմբոտ Երասխ, կամուրջ քանդող ,
Տղմուտ, Եփրատ, Սիհուն, Ջիւան ,
Արածանի ու Այսարեան ,
Ամանական Հայոց գետեր :
Որ բխել էք մեր սրտերէն .
Հայոց ծովեր, երկնուց աչքեր ,
Որ միշտ կուլաք Հայու վերքեր ,
Կը մրկէք ոյս ու վրէժ :

Հազար ապրիք, դալար դաշտեր ,
Ոսկի արտեր սուրբ ցորենի
Հայ արիւնով, քրտնով շաղուած ,
Մեր պապերու, մեր մամերու
Սուրբ օրօրան, սուրբ գերեզման :
Հուր հաւեքիդ տաղերն անուշ
Մեր աշխարհի գովքը կ'անեն .
Դուն, գովական Հայոց աշխարհ ,
Լալ ու մարգաւտ քն ժեռ ու քար ,
Աւազանիկդ՝ մարգարիտ :

Ամէն ծերպէդ աղբիւր կուգար՝
Չանգի նման արծաթափունչ .
Հանդ - անգախտան՝ վարդերու փունջ՝
Ծառ ու ծաղիկդ մեղք կուտար :
Քո արեւդ ոսկեգանգուր ,
Վառ աչքերդ՝ գոհար ու հուր ,
Արեւելի դարպասներէն
Լոյս կը բաշխէր հեռու - հեռու՛ ,
Մաք աշխարհներ, մլար ծովեր :
Հեռու փամբարդ շէմք կուգար ,
Հարկ ու պատուով կ'անցներ .
Երեւի կ'աւեր մեր աշխարհին ,
Հազար ու մէկ օրհնաւիկ կուտար ...

ԱՒ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

մէջ ի գործ դրուած «յունական խժոճու -
թեանց» մասին եւ շարունակեց .

« Թուրքերու շարքերէն առաջ, որ տե-
ղի ունեցաւ 1963ին, Կիպրոսի Թուրքերը
կ'ապրէին 127 թրքաբնակ եւ խառն բը -
նակչութիւն ունեցող 106 գիւղերու մէջ :
Չարդերու հետեւանքով, Թուրքերը ըս-
տիպուեցան հեռանալ 84 խառն գիւղերէ
եւ 127 թրքական գիւղերէն 23ք պարպել :
Գացին բնակիլ թրքաբնակ աւելի ապահով
վայրերու մէջ : Կիպրոսի մէջ ներկայիս
կան խառն բնակչութիւն ունեցող 22 գիւ-
ղեր : Կիպրոսի Յոյները քանդեցին սո -
բողջովին քառասուն լքեալ գիւղերու բը -
նակարանները եւ մասամբ ալ 44 գիւղե -
րու բնակարանները : Մակարիոս կ'ըսէ
թէ համբերատար պէտք է ըլլալ, Կիպրո-
սի վէճը հարթելու համար : Ճիշդ է, բայց
համբերութիւնը բաւարար չէ ինքնին,
անհրաժեշտ է նաեւ բարեացակամութիւն
ցոյց տալ, եւ եթէ բարեացակամութիւն
ալ որեւէ զեր չունենայ, այն ատեն կամ -
քըն է որ կը խօսի եւ կը կարգադրէ ա -
մէն բան : Այս երեք սկզբունքները գոյու-
թիւն ունին Թուրքիոյ մէջ, — համբերու -
թիւն, բարեացակամութիւն եւ կամք :
Այս պատճառով է որ Թուրքիա կը համ -
բերէ » :

ՀԱՅ ՄՏԱԻՈՐԱԿԱՆԻՆ

ՄԱԿԸ

(ԱՐՇԱՄ ԽՈՆԴԿԱՐԵԱՆ)



— Մարդ երբ կը մտածէ՝ սարսափելի հետեւեալ է... կ'ըսէր Արշամ Խոնդկարեան, իր մահէն զեռ չորս — հինգ օր առաջ՝ իր մահուան ակնարկելով :

— Ո՛հ. պէտք չէ՛ աղպպէս ըսել. մահանալը երբ մարդ ապրած է ձերիսին նման թղթուկ կեանք. նոյնիսկ ի դին մեծ զբոսանքներու՝ ձեր իտէպիլին հաստարիմ անկող կեանք... դժուարաւ կրցայ մըրմընէլ երկար լուծիկէն մը ետք :

Դէ՛մքը դարձուց ինծի: Երկար, շատ երկար տեսեց այդ նայուածքը :

Աչքերուս առջև խառն ի խուռն տո — դանցեցին պատկերներ. վերջիւնցիլ նա — խաղաղութիւններ :

Արշամ Խոնդկարեան՝ երիտասարդ հայ ուսանող — ուսանողուհիներ իր շուրջը հաւաքած, Հայոց նորագոյն պատմութեան մասին դասախօսութիւններու շարք մը տուած ատեն. «Գարեւորը, իմանո՞ւմ էք ինչ է. կարենալ հարցերին մօտենալ տանց կիրքի. սպառարեւն պատմարանի անտարակիլի պարկէշտութեամբ. անկեղծ հարեւանակէր լայնախոս տրամաբանու — թեամբ...» :

Արշամ Խոնդկարեան՝ իր համեստ տան համեստ բայց հիւրասէր սեղանին շուրջը, աղպպին որեւէ հարցի առնչութեամբ կիրքով եւ թերեւս որոշ կողմնակալու —

թեամբ արտայայտուող երիտասարդ հիւրերուն մեծ համբերութեամբ բացատրած ատեն՝ հարցին բոլոր տուեալները. «բայց ոչ, սիրելիս աղպպէս չի կարելի ասել...» : Աղպպին խնդրի մը մասին նոր յայտ — նութիւն մը լսած ատեն զրեթէ չարածձի իր արտայայտութեամբ՝ «Ա՛խ, այդ — պէ՛ս...» :

Արշամ Խոնդկարեան, դասախօսու — թիւններու եւ հանդէսներու մէջ արտա — սանուած իւրաքանչիւր բոս մտիկ ըրած, գատած, եւ վրիպած չափազանցու — թիւնները կամ սխալ հաստատումները ունեւիրով մէկիւր — մէկիւր բռնած ատեն՝ զէպիլ ամէնէն մօտիկ նստած անձը ծռե — լով եւ Պոլսահայ չափազանցուած շեշ — տով՝ «հապա ասիկա եղա՞ւ մը, պա — րո՞ն...» :

Արշամ Խոնդկարեան, Հայաստանի եւ գաղութահայ իւրաքանչիւր թերթի զըլ — լաւուր յօդուածներու ընթերցումին ատեն անտեղի, անձիւր կամ կրքոտ նախադա — սութեան մը հասած պահուն, սրտնեղած թերթը սեղանին վրայ նստած ժամանակ՝ «Ախր, ի՞նչպէս կարելի է այսպիսի բան զրեւ. ի՞նչպէս կարելի է թոյլ տալ...» :

Մեր նորագոյն պատմութեան վերաբե — րող զրբերու ընթերցման ժամանակ, լու — սանցքին վրայ իր մանր զրբերով աւել — ցուցած սրբաբան կան նօթագրութիւնները արձանագրելու պահուն՝ իր զէմքին ար — ւած է խիստ արտայայտութիւն մը :

Համակ յիշողութիւն էր Արշամ Խոնդ — կարեան. ճշգրիտ, ժամը — ժամին յիշո — ղութիւն. իւրաքանչիւր կարեւոր զէպիլ ներկայ գտնուողներուն ոչ միայն արտա — սանած խօսքերուն, այլ եւ անոնց զէմքի արտայայտութիւններուն, ձայնի ելեւէջ — ներուն վերադարձումին վրայ հիմնուած յիշողութիւն: Մահուանո՞ւ 1917ին 1921ի միջև, ցարական վարչաձեւի անկումին, Հայաստանի Հանրապետութեան ստեղ — ծումին, Հայաստանի խորհրդայնացման հետ կապ ունեցող զէպիլներու մանրամաս — նութեանց տեսակէտէն՝ անզուգական, անփոխարինելի յիշողութիւն եւ ճշգր — տութիւն :

Եւ կ'ահկնկալէր որ ամէն մարդ այդ նոյն վերաբերմունքը ցոյց տայ մահուանո՞ւ մեր նորագոյն պատմութեան վերաբերմամբ : Կը ջղայնանար, կը քրթմնջէր, կը կը նկատէր կողմնակալ եւ դիտումնաստեղ մերձեցում, կամ պարզապէս մոռացու — թեան ու անզիտութեան պատճառաւ զբը — ուած սխալ հաստատումներ :

Շատ մեծ ջղայնութիւն կը պատճառէր իրեն՝ Հայաստան լոյս տեսած հրատա — րակութեան մը մէջ իր անունին առջև զրուած հետեւեալ բացատրութիւնը՝ «Դաշնակցական կառավարութեան մէջ նախարար» : «Ախր, չե՞ն իմանում. ի՞նչ — պէս կարելի է զրեւ աղպպիսի բան: Ես, էս էր Խոնդկարեան, Վրացեանի կազմած ֆոյախիւռն կառավարութեան նախարար եմ եղել. ի՞նչպէս կարելի է ասել՝ Դաշ — նակցական կառավարութեան նախ — արար...» :

Որքան մեծ վրդովումով հեռաձայնեց ինծի անգամ մը, երբ, մեծ հապճեպով զրուած յօդուածի մը մէջ, Վահան Մի — նախորեանի անունին զով փակազդի մէջ սխալմամբ զրած էի՝ Սոցիալ Դեմոկրատ, փոխանակ Սոցիալ Բեկուլիստներ: Փոր — ձեցիլ բացատրել, որ անապարանքով զբը — ուած ատեն անուշաղբութեան հետեւան — քով սխալ մը վրիպել է, ներողութիւն... «Էդ բոլորը լաւ. բայց միեւնոյն է. զիս չի գտնուցներ. ուշադիր պէտք է լի — նել: Ախր, ի՞նչպէս կարելի է...» :

X

Եւ Արշամ Խոնդկարեանը, որ Հայաս — տանի խորհրդայնացումի վաղորդայնին Հայաստանի հողը ձգած վայրկեանէն մինչեւ անցեալ տարի Փարիզի մէջ կ'ապ — րէր Հայաստանի թերթերէն կլանած իր լուրերով, Ստալինեան արհաւիրքի շըր — ջանին այդ թերթերու տողերուն ընդմէ — ջնէ թափանցելով չզրուած իրականու — թիւններուն, մահազդներու բաժնին մէջ իսկ մահազդի մը խմբագրութեան ձեւէն եւ ցաւակցութիւն յայտնողներու ցանկէն ու գործածած ոճէն հետեւեցնելով, թէ եւ — թական ի՞նչ պայմաններու մէջ հեռացած է կեանքէն, Արշամ Խոնդկարեանը, ու — բեմն, արտասահմանի մէջ ապրող խոր — հնդահայ կեանքի այդ հաղուարիտ մաս — նակէտը, անցեալ տարի իրականացուց իր տարիներու երազը, այցելեց Հայաստան. — «Որպէս թուրիստ, իմ ծախքերով» :

Վերադարձած էր բոլորովին վերանո — ղուած: Ամբողջ մէկ ու կէս տարի, վե — րադարձէն մինչեւ իր մահը, իր խօսակ — ցութիւններուն զլիաւոր, զրեթէ միակ առանցքը կը կազմէին սթալինեան արհա — լիրքի օրերուն Հայաստանի կրած չնկ — արգրուած տառապանքներն ու կորուստ — ները. այսօրուան նոր պայմաններուն մէջ՝ Հայաստան — արտասահման յարա — բերութիւններու ստանալիք բնոյթը : Կը խօսէր, կը պատմէր, կը յուզուէր, կ'ո — դեւորուէր :

«Ահաւոր, աներեւակայելի՛ տառա — պանք են կրել մարդիկը: Մենք, ֆոյախ — ւիռն կառավարութիւն, առանց մէկ հատ իսկ հրացան պարպելու երկիրը յանձնե — ցինք հայ բոլշեւիկներուն, որպէսզի Հա — յու արեւն չթափի: Իսկ Մոսկուայում նստած Սթալին ու Բերիա եկել են ու թուրքին կէս ձգած են ամբողջացուցեր: Մէկ միլիոն՝ թուրքը ջարդեց կ'ըսենք: Գրեթէ մէկ միլիոն էլ ոռու բոլշեւիկն ու երկրորդ պատերազմն են ջարդել: Մենք տարիներով բողբոջուած ենք, թէ Դաշնակ — ցութեան հետ կապ ունեցողները բըլ — աքսորել են: Եղբայր, առաջին մէկ օրէն ոռու բոլշեւիկները հետ յեղափոխութիւն ընող Հայերին իսկ բըլ են, տարել: Ո՞վ կարող էր ո՞ւմ պաշտպանել: Մէկ հատ ընտանիք չկայ Հայաստանի մէջ, որ աք — սորում կամ բանտում կորսնցուցած մարդ չունենայ: Տարիներ շարունակ, ամէն օր, ամէն վայրկեան, ինչ տառապանք է քաշել մեր ժողովուրդը: Այսօր, մենք, Հայաստանի ժողովուրդին ոտքերը պէտք

է համբուրենք, որ կարողացել է զիմա — նալ, մի կերպ վերապրել: Նոյնիսկ եթէ ստիպուած է եղել մասնութիւն ընել՝ վե — րապրելու համար: Վերապրել է ու այ — սօր նոր սկսում է քիչ-քիչ շունչ առնել, ծաղկիլ, արտադրել...» :

Եւ մի առ մի կը յիշէր իրարու գազա — փարակից, անբաժան, մտերիմ ընկերնե — րու անուններ. մէկը՝ մեռած է աքսորի մէջ, միւրը՝ մնացած է պաշտօնի վրայ, թերեւս նոյնիսկ ստիպուած է եղած հա — մամտութիւն յայտնել իր մտերիմ ընկե — րը աքսորելու որոշման, որպէսզի ինք եւս կասկածելի չզառնայ: «Այսօր՝ վերապ — րողը յօդուած է զրուած միւսին մասին: Ի՞նչպէս կարողանում է զրել: Բարոյա — կան ինչ տառապանք է սա...»: Եւ Ա. Խոնդկարեան կը յուզուէր այդ մարդուն հաշտոյն :

X

Շատ տխուր անցուց Արշամ Խոնդկար — ան իր վերջին ամիսները :

Միակ երազն էր ապրել զոնէ մինչեւ Մայիս ամիսը, որպէսզի երթար դարձեալ Հայաստան ու այնտեղ մեռնէր: Յաճախ կը խօսէր այդ մասին, տարակուսական եւ յուսահատ չեւոյով :

Հիւանդ էր: Օրէ օր կը տկարանար: Այցուցներու սակաւութենէն կը զանգա — տէր: «Հիմա շուտ — շուտ չէք զար զիս տեսնելու», բայց երբ որ մեռնիմ՝ թա — դումի՞ս պիտի դաք բաղմութեամբ: Կը նախընտրեմ հիմա՛ զաք, քանի ողջ եմ» :

Ուրախութեան պահեր այլ ունեցաւ սա — կայն, երբ իր այստեղի բարեկամները, մեծ մասամբ երիտասարդներ, գուրգու — րանքի ժեստեր ունեցան իրեն հանդէպ: Իր հին գործակիցները, հեռաւոր վայրե — րէ, Միջին Արեւելքէն, Ամերիկայէն, իր հիւանդութեան լուրը առնելով, համակ — րանքի ու անմոռաց բարեկամութեան ար — տայայտութիւններ հասցուցին իրեն: «Կը նշանակէ՞ զիս չեն մոռացել. յիշում են ինձ», կ'ոգեւորուէր: Բայց, երբ աչքը կը դարձնէր զէպիլ իր կեանքի ընկերու — հին, երբ կը վերադառնար իր համեստ սենեակին ու իր հիւանդութեան իրակա — նութեան, երբ կը մտածէր իր ետեւ մը — նալիք առանձին ու անպաշտպան էակին՝

... «Մարդ երբ կը մտածէ՛ սարսա — փելի հեռանկար է...» :

Չկրցայ պատասխանել իրեն .

— Ո՛հ. մա՛հը չէ բուն սարսափելին : Սարսափելին այն է, որ անհետացող եւ անփոխարինելի սերունդի մը զրեթէ վեր — ջին ներկայացուցիչներէն էք: Սարսափե — լին այն է, որ զուք, արտասահմանի իս — կական ու անշեղ, անկեղծ ու արդարա — միտ հայ մտաւորական ըլլալուդ հա — մար, այսօր պառկած էք ահա ձեր ան — շուք սենեակին մէջ, սարսափով կը դի — տակցիք թէ ձեր վերջին շունչը պիտի վը — չէք ձեր ամբողջ կեանքին միակ նպատա — կը եղող հայրենիքէն հեռու: Սարսափե — լին՝ հայ մտաւորականին մահն է, ար — տասահմանի մէջ :

ՇԱՔԷ ՏԷՐ-ՄԵԼԻՔՈՆԵԱՆ

«ՅԱՌԱՋ»-ի ԹԵՐԹՕՆԸ (92)

ԴԱՆԱԿԸ ԾՈԾՐԱԿԻՆ

Աւելցնենք, որ Ժերալտին Փարիզի վարժարանը կը գտնուէր վերջին Նոյեմ — բերին եւ կրնար հանդիպում մը ունեցած ըլլալ Գարլոթա Ատամսի հետ :

«Թերեւս անտեղի կը գտնուէր, որ Մեր — թոնի զբոսահիւն անունը կցած ըլլամ ցանկիս : Այդ մեծ տիկինը զիմած է իմ խորհրդածութեանս եւ կը կարծեմ թէ մայրական իրաւունքները չափազանցող կին մըն է : Իր բոլոր զբաղումները կեղ — րոնացուցած է ան իր գաւակին վրայ եւ շատ հաւանական է որ ամբողջ դաւաղը — րութիւն մը պատրաստած ըլլայ, կորուս — տի մատնելու համար այն կինը, որ եր — ջանկութիւն կ'ահկնկալէ իր միակ գաւակէն : «Չմոռանաք նաեւ Միս ձէննի Տրիվի — րը...» :

Փուարօ պահ մը կանց ատաւ եւ դիտեց

ձէննին: Կինը իր աչքերը պահեց անոր աչքերուն մէջ եւ հարցուց .

— Ի՞նչ ունիք ինծի վերադրելու :

— Ոչինչ, օրինոր, եթէ ոչ միայն այն, որ բարեկամուէի մըն էք Պրիան Մարթէ — նի, եւ որ ձեր ազգանունը կը սկսի «Տ» տառով :

— Այդքա՞ն միայն :

— Ոչ. զեռ ուրիշ բան կայ: Ոեւ ու — րիչէ մը աւելի դուք կ'իւրացնէք յանդը — նութիւն մը եւ հարկ եղած ուժը ոճիւր մը գործելու համար :

— Շարունակեցէք, ըսաւ երիտասարդ կինը առանց բորբոքելու :

Եւ գլանիկ մը վառեց :

— Պ. Պրիան Մարթէնի անմեղութեան ապացոյցը ճի՞շդ էր թէ կեղծ. ահա թէ ինչ կ'ուզէի ստուգել: Եթէ ճիշդ էր, ո՞վ էր ուրեմն Ռոնալտ Մարշի տեսած մար — դը, որ տունէն ներս կը մտնէր: Յան — կարծ յիշեցի որ Բէնէթ Գաթի այն գե — ղեցիկ արարողագիտը պարոն Մարթէնի հարազատ նմանութիւնը ունէր: Ան էր, անպայման, որ գնդապետ Մարշը տեսած էր, եւ ես այս լուծումին վրայ ենթա — դրութիւններ կ'ընէի: Արարողագիտը ա — ռաջներ եղած էր իր տիրոջ սպաննուած ըլլալը տեսնող : Լորտ Էնփարի կողմին մնացած էր հարիւր սթերլինի փոխաբէք Ֆրանսական թղթադրամ պարունակող պահարան մը: Արարողագիտը անկասկած գրպանած էր զրամը, զազտնօրէն զուրս

ելած եւ տարած եւ պահ ձգած էր զոգօնը բարեկամի մը մօտ, ապա վերադառնա — լով, Լորտ Էնփարի բանալին օդնու — թեամբ թէ մտած էր ներս տունէն :

Իր բժէ գէպիլներ բոլորովին անտեղեակ, սենեակապանուհիին թողած էր յաջորդ ա — ուսուտ դիակը գտնելու առաջնութիւնը : Իրեն համար ոչ մէկ վտանգ կը նախա — տեսէր ան, վստահ ըլլալով որ ոճիւրը գործուած էր Լէյտի Էնփարին կողմէ, եւ թղթադրամները արգէն տունէն դուրս կը գտնուէին, հաւանաբար անզլիական զբամի վերածուած, մինչեւ անբարաբ — ճուրից պահարանին անհետացումին : Եւ սակայն, երբ ան տեղեկացած է թէ Լէյ — տի Էնփար անմեղութեան գորաւոր փաստ մը ունի, եւ երբ Աքթիլանտ Եարտի կող — մէ հարցաքննութեան ենթարկուելով՝ քննուած են իր անցեալի արարքները, մեծ երկիւղ մը պատած է զինքը եւ խորհած է թէ լաւագոյն միջոցը միայն փոխուտը կրնայ ըլլալ :

Փար գլխու շարժումով մը վաւերացուց Փուարոյի տեսակէտը :

— Կը մնայ ակնոցներու հարցը : Եթէ Միս Գարլոթ ըլլար անոնց սեփականատէ — րը, ամէն ինչ շատ յոտակ կ'ըլլար, ինչ — պէս ժայռերու ջուրերը: Միս Գարլոթ կը — նար նամակը անհետացուցած ըլլալ եւ Գարլոթա Ատամսի հետ մանրամասնու — թիւններու մասին վիճած պահուն կամ ու — ճիւրի երեկոյեան ունեցած տեսակցու —

թեան մը ատեն, անուշաղբութեամբ ակ — նոցները սահած կրնային ըլլալ դերասա — նուհիւն պայուսակին մէջ :

«Բայց ակնոցները Միս Գարլոթ չէին պատկաներ: Իրիկուն մը, Հաստինիլի ըն — կերակցութեամբ բնակարանս վերադար — ձիս, բաւականին յուսալքուած, կը փոր — ձէի դասաւորել մտածումներս երբ պա — տահեցաւ հրաչքը :

«Նախ՝ Հաստինիլ ակնարկութիւն մը ըրաւ Տոնալտ Բոսսի այն խօսքին, թէ տասերեք եղած էր իրենց թիւը սըր Մոն — թախիլ Գորների հացկերոյթի եւ ինք ա — ուսջինը եղած էր սեղանէն հեռացող : Ես կը հետեւէի մտածումներուս ընթացքին եւ ոչ մէկ ուշադրութիւն կը դարձնէի բարեկամիս խօսքերուն, երբ յանկարծ պարպար մը ծնունդ առաւ մտքիս մէջ. — ճշգրտապահութեամբ խօսելով՝ Տոնալտ Բոսս բացարձակ եղելութիւնը չէր ըսած. կրնայ ըլլալ որ ինք առաջինը հեռացած ըլլայ սեղանէն ճաշի վերջաւորութիւնէն, բայց Լէյտի Էնփար կանխած է զինքը, քանի որ հեռացած է սեղանէն ճաշի ժա — մանակ, հեռաձայնէն կանչուած ըլլալով: Երբ այդ կնոջ մասին կը մտածէի, դի — մացս պարզուեցաւ հանելուկ մը, որ կ'ը — բեւակայէի թէ կատարելապէս կը պատ — շահէր իր մտայնութեան :

ԱԿԱՅԱՔԻՍԻ

(Շար.)

ՅԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Վիէն. — Հ. Յ. Գ. Անի կոմիտեն, Կ. Պաշտ իրենց խորին ցաւակցութիւնը կը յայտնեն Տէր և Տիկին ընկ. Յ. Կոչկա - կարեանի և ընտանեկան պարագաներուն իրենց հղբոր և մեծ հօր Յովսէփ Կոչկա - կարեանի մահուան առթիւ :

Հ. Յ. Գ.

ՓԱՐԻՉ. — Հ. Յ. Գ. Փոթորիկ խումբի ընկերական ժողովը այս Զորեքշաբթի, ժամը 20-30ին Մշակոյթի Տան մէջ :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Սամուէլ Մուրատեան վարժարանի քա - տերական ներկայացումը՝ ՄԱՐՏ 20ին

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

Կիրակի, Դեկտեմբեր 19ին ժամը 16ին : ՏՕՆԱԾԱՌ

Դպրոցատէրի զեղարուեստական հան - դէսը Մարտ 28ին, Կիրակի օր :

Հայ Արիներու Միութեան Փարիզի շրջանի տարեկան հանդէսը, Կիրակի Մարտ 6, կէսօրէ ետք ժամը 2-30, Սալ տը լա Շիմի :

Վիէն. — Մանուկներուն օրը Յունուար 9ին, Սէքըը կաթողիկ սրահին մէջ : Կապոյտ Պաշտի Վիէնի մասնաճիւղի պարահանդէսը Դեկտեմբեր 18ին, Սալ տէ Գէթի մէջ : Մանրամասնութիւնները յի - տադային :

ԴՊՐՈՅԱՒԵՐ ՏԻԿԱՆՑ ՎԱՐՃԱՐԱՆ

ՏՕՆԱԾԱՌԻ հանդէսը Դեկտեմբեր 19 - ին, Կիրակի կէսօրէ ետք ժամը 4ին վար - ժարանին մէջ :

ՏԱԽՈՒ ԵՆ

ՏէՍԻՆԻ մէջ, յարկարամիներ ԲՕ - փրօփրիէթէ Էֆ 3, Էֆ 4, Էֆ 5 : Դիմել Ս. ԱՌԱՔԷԼԵԱՆԻ առէն օր, 12 Րիւ տը Նանսէն : Հեռաձայն 49-50-82, ժամը 12-30էն 14 և 19էն 20-30 :

VILLAS neuves à MI-PLAINE Terrains dans lotissements à PUSIGNAN - MANISSIEUX et SAINT BONNET de MURE Terrains Industriels toutes superficies, environ LYON BRON - Immobilier 109 bis, Ave. Franklin-Roosevelt BRON (Rhône) Tél. : 70-88-68 et 70-88-69

IMPRIMERIE SPÉCIALE DU JOURNAL « HARATCH » 32, Rue de Trévisse, PARIS (9e)

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Դեկտ. 12, Կիրակի ժամը 21ին DANS ST. EUSTACHE ILLUMINÉE (12, Rue Dujour, Paris (1er) Métro : Halles

ՎԱՐԳԱՆԱՆՑ ԱՍՊԵՏՆԵՐՈՒ ԵՂԲԱՅՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ Կը ներկայացնէ (համաշխարհային առաջին ունկնդրութիւն) :

DU PROFOND DE L'ABIME (Oratorio) ԲՆԱԳԻՐ ԵՒ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ԱՐՇԱՄ ՃԻԶՄԷՃԵԱՆ

ԱՊՐԻԼԵԱՆ ՅԻՄՆԱՄԵԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Կը մասնակցին՝ Christiane Eda-Pierre (Soprano) de l'Opéra, Paul-Emile Deiber (récitant) sociétaire de la Comédie-Française, Raffi Ourgandjian (au grand orgue).

LES CHANTEURS DE ST. EUSTACHE (Président-Fondateur R. P. Emile Martin)

ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ

ԱՐՇԱՄ ՃԻԶՄԷՃԵԱՆԻ ՅԱՅՏԱԳԻՐ. — ԿՈՄԻՏԵԱՍ, ՀԱՅՐ ՄԱՐԹԷՆ, ՎԻՔՈՐԻԱ ՄՈՍԹԵ - ՎԵՐՏԻ, ՈՒՐԿԱՆՃԵԱՆ :

Տոմսերու գին՝ 5էն 25 ֆրանկ Դիմել՝ Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցի, 15 Րիւ ժան Կուսօն, Սէնթ-Էստ-բաշ (Հայ), Տիրան (4, Փլաս տը լա Մատրլէն), Բալուեան դրասուն, (43 Րիւ Ռիշէ) :

ԱՆՆԱԵԸՆԹԱՑ

ՀԱՅՎԱԿԱՆ ՈՍԿԻ ՇՔԱՆՇԱՆ Modèle Déposé Թանկագին ու Մնայուն Ամէնէն Սիրուն Խուրը



Պարզ ձև՝ 200 ֆ. Երջանակով 300 ֆ. Գնելու համար զիմել՝ EDOUARD KHEDERIAN 66, Rue Lafayette, PARIS (9e) Tél. : PRO. 11-63 Expédition contre-remboursement

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՏԻԿԱՆՑ ՄԱՍՆԱԽՈՒՄԲ

Կը կազմակերպէ իր տարեկան ԲԱՐԵՆՊԱՏԱԿ ՎԱՃԱՌԻԸ 11, 12, 13 Դեկտեմբեր, Ազգային Տան մէջ 32, RUE DE TREVISE (Rez-de-chaussée) Հոն պիտի գտնէք հարմար պէտքերու քիւն մը զանազան ապրանքներու, տոնա - կան օրերու ձեր նուէրներուն համար :

ՀՐԱՊԱՐԱԿ ԵՂԱԻ

ԱՐԱ ՊԱՐԹԵԻՅԱՆԻ «ՀԱՅ ՍԷՆՖՈՆԻԻ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ» նոր երգապնակը Mc 20176, Vogue — Série Artistique

« OEUVRES SYMPHONIQUES » d'ARA BARTEVIAN

Par le célèbre orchestre DES CONCERTS COLONNE

- 1. — Rhapsodie Caucasienne (Կովկասեան Համախումբ)
2. — Dans une Forêt en Novembre (Անտառին մէջ՝ Նոյեմբերին)
3. — Bergers à la Montagne (Հովիտները լեռան վրայ)
4. — Fête Villageoise (Գեղջկական տոն)

Ստանալու համար դիմել հեղինակին Ա. ՊԱՐԹԵԻՅԱՆ — 14, Rue Petit, Paris (19e), Tél. BOT 99-22 15, Rue Jean Goujon, Paris (8e) Գին՝ 30 ֆր.

Microsilon 33 tours, 30 cm. 45 վայրկեան ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԳՈՒՆԱՌՈՐ ԿՈՂՔ

ՆԱԵԿԻՆ ԵՐԳԱՊԵՆԵՐԸ Եկեղեցական պատարագ N° 20114 — Կամիտասեան պատարագ 20150 Գանձարան Հայ-Եկեղեցական երգերու N° 20169 և 20175 Ժողովրդական երաժշտութիւն 20103 (Հայ Կովկասեան երգեր) 20136 (Arménie) 20157 Reflets d'Arménie, 20162 (Arménie Imortelle), 20169 (Promenade en Arménie) 20172 (Soirée Arménienne) — 10016 երգեր՝ իրիս Պիլպիլեանէ Գաւառներու առաքում contre remboursement խնամուած ծրարով

ՅՈՒՇԱՏԵՏՐ ԿԸ ՓՆՏՈՒԻՆ

ԿԱՊ. ՍԱՉԻ Վարանի մասնաճիւղի ընդհ. անդամական ժողովը այս Երկու - շաբթի կէսօրէ ետք ժամը 3ին, Տիկին Կոչկարեանի բնակարանը : Սխառ կա - ընտր օրակարգը, կը խնդրուի ընկերու - հիներէն ներկայ ըլլալ այս կարեւոր ժո - ղովին :

ՇԱԽԻԼԻ Ս. ԳՐ. ԼՈՒՍԱԽՈՐԻՉ

Եկեղեցւոյ վերաշինութեան և օժման Տրէ տարեգարձը կը սօնուի Դեկտեմբեր 19ին, Կիրակի օր :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԼիՌՆ. — «Մանուկներու Օր»ը Յուն - ուար 16ին Ազգային Տան սրահը :



ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱՆՈՎ

ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Արմենիա Հիւրանոցի մէջ որ կը պատկանի Առաջին դասակարգի : Տեղի պիտի ունենան մեծ անահնկաներ :

Այս ճամբորդութիւնը տեղի կ'ունենայ ձմրան եղանակի դիմով, միայն 1900 ֆր. Մեկնում Փարիզէն Դեկտ. 27ին, վերադարձ 9 Յունուար 1966 Երթ ու վարձ օդանաւով

Տեղերը սահմանափակ ըլլալով կը խնդրուի այժմէն զիմել և արձանագրուիլ :

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱՆՈՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱՌՔԵՐՈՎ ՄԵԿՆՈՒՄ

Փարիզէն Երեւան երթուղարձ խումբով : Այժմէն զիմել պատրաստելու համար ձեւակերպութիւնները : Ինչպէս ամէն տարի, նոյնպէս մեկնում օդանաւով, Օգոստոսը անցընելու հա - մար Երեւան :

Բոլորը կազմակերպուած Հ. Մ. Ը. Մ. կողմէ

ԴԻՄԵԼ ԼԵՒՈՆ ԱՆՏՈՆԵԱՆԻ 17, Ave. des Acacias, 92 CLAMART — Tél. : MIChelet 58-39 Հարաւի համար զիմել՝ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ, հեռաձայն 20-68-43 :

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԱՌԹԻԻ

ՄԻ ՈՒՇԱՆԱՔ ՆՈՒԷՐՆԵՐԸ ՂՐԿԵԼՈՒ ԶԵՐ ՍԻՐԵԼԻՆԵՐՈՒՆ ԽՈՐՀ. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՋ Արտօնուած VNECHPOSYLTORGի կողմէ, Մոսկուա

SICOMEX, 20, Rue Royale, PARIS (8e)

Մեր քով պիտի գտնէք լաւագոյն գիներով ապրանքներու ճիշտ միջոց մը ՍՍՏՈՂՆԵՐԸ ՈՉԻՆՉՈՒՆԻՆ ՎՃԱՐԵԼԻՔ

Մեղմէ գնուած ապրանքներու առաքման համար, մինչեւ 20 քիլօ, կը վը - ճարէք միայն 30 ֆրանք :

Փնտռեցէք մեր պատկերազարդ ցուցակները, ճիշտ Կ'ապահովենք նաև մեր յաճախորդներուն բերած նոր ապրանքներու առաքումը :

ՅԱՐԱՇ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN
RÉDACTION - ADMINISTRATION : 32, RUE DE TRÉVISE - PARIS (9^e)

Fondé en 1925 Tél. : PROvence 86-60
R. C. Seine 57 A 2731 C.C.P. Paris 15069-82

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա՝ Տար. 60 Ֆ. Վեցամսեայ՝ 35 Ֆ.
Արտասահման՝ Տար. 80 Ֆ. Հատը 0,30 Ֆ.

ԵՐԵՎԱՆԻ
7
ԴԵԿՏԵՄԲԵՐ
MARDI
7 DECEMBRE
1965
LE NUMÉRO : 0,30 FR.

4197 ՏԱՐԻ — ԹԻԻ 10478

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

41e ANNÉE — N° 10.478

ԼՈՒՐՋԸ ԵՒ ԽԱՌՈՒՄԻԿԸ ՖՐԱՆՍԱ ՉԿՐՑԱԻ ԸՆՏՐԵԼ ԻՐ ՆԱԽԱԳԱՀԸ

ՏԸ ԿՈՒ ԵՒ ՄԻԹՐԱՆ ՑԱՆԿԻՆ ԳԼՈՒԻՆ

ՎԵՐՋԻՆ ԽՕՄՔՐ՝ ԴԵԿՏԵՄԲԵՐ 19ԻՆ

Լուրջը, որ կը մտի հիմնական եւ արժանապատիւ փոփոխութիւններ մտցնել անհատներու եւ ընկերութեան կեանքին մէջ, սրահաւոր քիչերէ փնտռուած ցանկալին է :

Մարդիկ դժբախտաբար պահանջուած չափով չեն գնահատեր զայն :

Մակերեսայինը, թեթեւաօլիկը, խորք պակաս, ձեւականը, մերթ աւելի կը փնտռուի զանցուածներէ, որոնց կը պակասի ճաշակն ու հասկացողութիւնը հիմնականին :

Եւ ասիկա գործունէութեան բոլոր մարզերուն վրայ :

Կապիկուածը, կշիռէ զուրկ մակերեսայինը, աստիկ բազմութիւններու հոգիին խօսող ցանկալին է, մինչ իրական արժեքաւորը եւ լուրջը, պատրաստուած անձերէ փնտռուածը :

Երեւոյթը կը մնայ սովորական, օրուան բոլոր ժամերուն եւ աշխարհի գրեթէ ամէն կողմի համար :

Գարձուցէք կոճակը ձեր ձայնասփիւռին ու տասնի վրայ ինը կայանէ ձեր լրտեսածը թանկո կամ Փոլըրը անունին ներքեւ միջակ երաժշտութիւն մը պիտի ըլլալ :

Եւ եթէ հնարաւորութիւն ըլլար ստուգում մը կատարել, պիտի տեսնուէր թէ տասնի վրայ ինը կայաններու ունկնդիրները կը մնան բազմութիւններու ինը տասնորոգը դարձեալ :

Անպատասխանատու եւ անկշիւ կարգիներու համակիրներ այսօր աւելի շատ են, քան հեղինակաւոր դէմքերու տեսակներուն անասողները :

Տակիւն քան տարի առաջ, իր խօսքով ծանր կուտ մամուլը շատ տեղեր կը զգուշանար իր առաջին էջերուն վրայ տալ անունները Փոթալի մըցումի մը մէջ առաջնութիւնը շահող մըցակիցներու, այսօր նոյն լուրեր ոչ միայն պատուով տեղը կը զբաւեն այդ թերթերուն, այլ կողերու եւ շունչերու պատկերներն անկամ դարձած են առարկայ հետաքրքրութեան :

« Գործի » մարդոց, համար ասիկա ժամանակի ոգին հետ քալել կը նշանակէ, ընկերային բարքերը ուսումնասիրողներու համար, անկում՝ ճաշակի եւ բարքերու :

Էր երբեմն, որ հեղինակաւոր դէմք մը նոյնքան հեղինակաւոր ուրիշի մը կողմէ կը ներկայացուէր հանրութեան, ներկայիս, անփորձ աղբիւրներու եւ տղոց յանձնուած են նման դերեր :

Մտէք քաղաքական, գրական, կրթական եւ այլ մարզերէ ներս, ու պիտի հաստատուէր նոյն երեւոյթը :

Պատասխանատու եւ մասնագիտական հարցերու մասին խօսելու կը հրաւիրուին նիւթին հետ կապ չունեցող անձեր, ու ձեռք կը տրուի լսել այս առթիւ ճիշդ գիտելու նոյնքան անպատասխանատու ուրիշներու, հիւսուած այս անկամ հասցէին արարող միջակութեանց :

Ճաշակներու խաթարումը տեղի կ'ուներայ թաւալոր :

Շարժապատկերի, ձայնասփիւռի, հեռուստատիւի, թատրոններու անորէններ ինքնական հաշիւներով մեծաշփոխ ոչընտեսներ կը կատարեն, իրր տաղանդաւոր, իրենց բեմերէն ներկայացնելով «արժէքներ», որոնց լուսանկարը, կենսագրականը եւ այլ տեսակի ելոյթները կը տըրուին հանրութեան, ապահովելու համար մեծամեծ շահեր :

Բարքերու անկումը այսպէս կը շարունակուի եւ կ'ազդէ իր հերթին ժողովուրդին եւ կենցաղին վրայ եկուոր տարբերութեան, որոնց համար նորութիւն եւ սրտնեղիչ երեւոյթ կը մնան այս բոլորը :

Լրջութեան պակաս ցոյց տուող երբեւոյթը, վարակիչ դառնով սկսած է ալ ու

Պատմական օր մը, Ֆրանսայի քաղաքական եւ ազգային կեանքին մէջ : Դեկտեմբեր 5ին Ֆրանսայի ժողովուրդը առաջին անգամ ըլլալով կ'ընտրէր իր Հանրապետութեան նախագահը : Նախագահ տը Կոլ իր դէմ ունէր հինգ թեկնածուներ, որոնց հասարակաց զլխաւոր դիմն էր տը Կոլի դէմ ըլլալ : Կիրակի օրուան ընտրութեանց արդիւնքը ցոյց կուտայ թէ ժողովուրդին վրայ բաւական ազդեցութիւն ըրած են ընդդիմութեան թեկնածուներուն խօսքերը եւ եթէ նոյնիսկ կասկածէ դուրս է որ տը Կոլ ընտրուի Դեկտեմբեր 19ին, պէտք է անտեսել նաեւ թէ համեմատական մնայը ծանր հարուած մըն է իր ազգային եւ մանաւանդ միջազգային վարկին համար :

Երկուշաբթի առաւօտ ժամը 3.45ին Ներքին նախարարութիւնը կը հաղորդէր վերջնական հետեւեալ արդիւնքները : Այդ արդիւնքներէն կը պակասի միայն 450 հազար քուէներ, որոնք անդրծովեան հողամասերու կը վերաբերին եւ այդ պատճառաւ յապաղումով կը տրուին : Արձանագրուած քուէարկող — 28 միլիոն 402.084 :

Տրուած քուէներ — 24.140.259 :
Ի գորու քուէներ — 23.891.391 :
Այլուրեւեան կարգով, թեկնածուներ ստացած են հետեւեալ քուէները —
Մարսէլ Պարպիւ — 278.420 :
Շարլ տը Կոլ — 10.504.007 :
Փան Լաբանի — 3.767.765 :
Փիլիպ Մարսիլիասի — 414.550 :
Թրանսուա Միքրամ — 7.655.042 :
Թիքսիէ — Վիմեաֆու — 1.269.095 :
Այս քուէներով, թեկնածուները ստացած են ձայներու հետեւեալ համեմատութիւնը :
Տը Կոլ՝ 43.96 առ հարիւր, Միթրան՝ 32,04, Լըքանիէ՝ 15,78, Թիքսիէ — Վիմեանքուա՝ 5,31, Մարսիլիասի՝ 1,74 եւ Պարպիւ՝ 1,17 :

Կասթոն Փալեյսիլի, որ իրը նախագահը Մասմանդրական Խորհուրդին տուած է այս արդիւնքները ճշգրտէ է սակայն թէ անոնք առժամային բնոյթ ունին եւ թէ խորհուրդը բուն թիւերը կը հրատարակէ երեքշաբթի ժամը 20ին առաջ, նկատի առնել ետք հաւանական առարկութիւններն ու ճշգրտմանը : Ձեռնպահներու համեմատութիւնը եղած է շատ փոքր 15.01 առ հարիւր : Քուէարկութեան մասնակցած են ընտրողական մարմինի 84.94 առ հարիւրը :

72 Աստանդներու մէջ, տը Կոլ ստացած է առաւելագոյն ձայները, քան նա հանդիսու մէջ, Ֆ. Միթրանն է որ ցանկանի զլուրը կը դառնայ : Տը Կոլ առաւելագոյն համեմատութիւնը ստացած է Ստորին — Հանտոսի մէջ եւ նուազագոյնը՝ Ժերի մէջ :

Իրաց այս կացութեան մէջ, տը Կոլի կողմնակիցները վստահ կը մնան որ տը Կոլ պիտի մնայ երկրորդ շրջանի քուէարկութեան համար, հակառակ այն վարկածին ըստ որուն կրնար քաշուիլ տրուած ըլլալով որ Կոլը ընտրուիլ առաջին անգամէն : Կը մնայ զիտան թէ Ե՛նչ զիբը պիտի բռնեն ընդդիմութեան թեկնածուները : Առաջին շրջանին համայնալարները քուէարկած են Միթրանի համար, որ իր եթէր միլիոնէ աւելի ձայներու հուկէս միլիոնը համայնալարներուն կը պարտի : Անհաւանական չէ որ երկրորդ շրջանին համայնալարները քուէարկեն տը Կոլի համար որու արտաքին քաղաքականութեան նէն գոհ է Ֆրանսայի համայնալար կուսակցութիւնը : Տը Կոլ կրնայ օգտուիլ նաեւ ժան Լըքանիէի երեք միլիոն ձայներէն թէեւ կեղծոնի թեկնածուն ընտրութեանն առաջ յայտարարած էր թէ չի քաշուի ի նպատակ տը Կոլի : Ժան — Լուի Թիքսիէ Վիմեանքուա յայտարարեց իր կուշարթի առաւօտ թէ իրեն քուէ տուողներուն կը հրահանգէ քուէարկել Միթրանի համար :

Երկուշաբթի առաւօտ տեղական մամուլը չունենալով վերջնական արդիւնքները չէր կրցած արտայայտուիլ վերջնական ձեւով, բայց կէս զիշերին արդէն պարզ էր որ տը Կոլ համեմատականի կը մնայ : Իտեա այս կացութեան «Յիկառոյի» մէջ Լուի Կապրիէլ — Ռուպիէն կը խորհի թէ տը Կոլ դաս մը պէտք է քաղէ այս երեւոյթէն եւ չանտեսէ այն լուրջ ազդարարութիւնը որ տրուեցաւ իրեն : «Օտոտ» կը գտնէ որ Լըքանիէի քուտացած ձայները կը փաստեն որ անհրաժեշտ ու կարելի է դեմոկրատիկ կուսակցութիւն մը ստեղծել Ֆրանսայի մէջ : «Քոմյա»-ի համար, Դեկտեմբեր 5ը ցոյց կուտայ որ Ֆրանսա քաղաքական գեանի վրայ արթնցաւ եւ կոլից մի նկատմամբ անվստահութիւն ունի : «Իմանիթէ» շատ խիտն հարուած մը կը նկատէ ինչ որ պատահեցաւ Կիրակի :

Արտասահմանի մէջ, անսկիւղ եւ որոշ չափով ալ գոհունակութիւն : Ամերիկա — ցիբ անշուշտ զգոհ չեն որ տը Կոլ համեմատականի մնացած ըլլալ : «Նիւ Եորք Թայմզ» «Ահաւոր Պարտութիւն» խորագրին տակ կը գրէ թէ ընտրութեանց արդիւնքը ցոյց տուաւ թէ տը Կոլ ոչ կարծածին չափ անպարտելի է ոչ ալ անհրաժեշտ :

Լոնտոնի «Թեյլեկրաֆ»-ին համար բարոյական մեծ պարտութիւն մըն է զոր կը կրէ տը Կոլ : Պեկիտի մէջ, կրտուի թէ եւրոպական հարցերու նկատմամբ բռնած դերքն է որ պարտութեան մասնեց նախագահ տը Կոլ : Նոյն կարծիքն ունին

Գերմանացիք : Մոսկուա զարմացած է կրածին :

Ֆրանսայի մէջ, կարգ մը անձնաւորութիւններ յայտնած են իրենց կարծիքը, մասնակի արդիւնքին առեւ իսկ : Այսպէս Կի Մոյէ կ'ըսէ թէ արդիւնքները հասոյք պատճառաւ են, կը փաստեն թէ, ինչպէս նախատեսած էր, տը Կոլի համեմատականի մնայը կարելի էր : Յստակ է, ամէն պարագայի մէջ, թէ եթէր տարուան քաղաքականութիւնը շատ խիտ կերպով դատապարտուեցաւ :

Ֆ. Միթրան յայտնած է թէ ամէն բան պիտի ընէ որպէսզի տը Կոլ պարտուի երկրորդ շրջանին : Թիքսիէի համար, այս քուէարկութիւնը մեծ դաս մըն է : Նոյն իսկ եթէ տը Կոլ ներկայանայ երկրորդ շրջանին, իր վարկը վերջնականապէս խնդրոյ առարկայ եղած է :

Ֆիլիպիէի համար պարզ է որ Ֆրանսացիք կ'ուզեն փրկել Եւրոպան եւ Առլանտեան Ռէստը :

Պայքարը կը մնայ այլեւս տը Կոլի եւ Միթրանի միջեւ :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՏՃԵՆԻ մէջ մահափորձ մը կատարուած է բրիտանացի դրամատան տիրոջ մը դէմ : ՔՈՒԷՅԹԻ նոր կառավարութիւնը կազմուած է : Նախկին բոլոր անդամները մաս կը կազմեն նոր դասիւնին :

ԹՈՒՐԿԻՅԱՅ ՄԵՋ 63 քուէարկութեան ետք միայն կարելի եղած է ընտրել Ծեբակոյի նախագահը : Ի վերջոյ ընտրուած է Առալէքի անդամ՝ Իպրահիմ Աթաթուրքը 62ի դէմ 93 ձայնով : Քուէարկութիւնը կը տեւէր ամէս մըն է : Նոր նախագահը 66 տարեկան է եւ հանգստեան կոչուած ընդհանուր բժիշկ : Ներկայիս երկրին երկրորդ անձնաւորութիւնը կը դառնայ Կիրակիէն յետոյ :

ԱՆԳՈՒՅՑ վարչապետը ցարդ չէ լուծած իր գոնաւորութիւնները Ռոտեղիոյ ինքնազուլի իշխանութեան հետ : Ուսուցչութեան նոր կոչուր ըրած է Իան Սիթի : Սուրբիէի մէջ ալ մտահոգութիւն կը տարէ, անտեսակալ կազմութիւնը օրէ փաթարանալուն պատճառաւ :

ԱՄԵՐԻԿԱՅԻՒՅ նոր արբանեակի մը արձակեցին երկուտրեակ է (ձեմիւնի՝ 7), երկու տիեզերագնացներով : Ռուսերն ալ Լուկա Ը. արբանեակը արձակած են որ յաջողութեամբ կը շարունակէ իր թռիչքը դէպի լուսին :

ՍՊԱՆԻԱ «Կարմիր դերք» մը հրատարակեց ձեռագրութիւնը վրայ : Անգամ մը եւս կը հաստատուէ սպանական դերիշխանութիւնը ձեռագրութիւնը վրայ եւ բանակցութեան կը հրաւիրէ Անգլիան :

ԻՍՐԱԵՅԻԼ շատ մտահոգ է արաբական երկրներու ծախուած դէպքերու քանակութեանն : Էջըլ յոյս յայտնած է թէ արեւմտեան Գերմանիա պիտի յարգէ Իսրայէլի օդակազմը իր բերանացի եւ դրաւոր խոստումները :

ՄՈՍԿՈՒՅԻ մէջ իր ունեցած խօսակցութիւններէ ետք, Անգլիոյ արտաքին նախարար Սթիւարթը յայտարարեց թէ խորհրդային զիբերը չեն փոխուած :

ՎԱՐՇԱՅԱՆ առաջին անգամ ըլլալով բաց ի բաց կը յարձակի Չինաստանի վրայ Վիէթնամի առեւտրութեամբ : Թրիպլիտա կը քննադատէ Փեքինի կուսակցութեան զիբերը :

ՍԱԵԿՈՒՅԻ մէջ անտարեկցական նոր արարք մը գործուած է, որու հետեւանքով 11 մեռաւ եւ 170 վիրաւոր կայ :

ՊՈՒՍՏ Տիբերական Պատրիարքութիւնը հաղորդեց որ անաթեման պիտի վերանայ կաթողիկէ եւ օրթոտոքս եկեղեցիներու միջեւ : Հաստատուած էր 1054ին : Այս որոշումը պիտի դործնական դառնայ Գեկու 7ին եւ անկէ ետք Աթեմակորսա պատրիարք պիտի կարենայ Հռոմ գալ նորոգելու համար Երուսաղէմի հանդիպումին եղբայրական ոգին :

ԱՐՄԵՆԻԱ

ՍՈՒՏԻՅ ԶՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ 2Ի ՍՍԱՅՈՒԻ

Բ.

Ս. Կարապետեանը գրում է. «Թուրք-փայի առջ շարժուելը հնարաւոր չէր առանց արեւմտեան իմպերիալիստների բողոքաւորութեան եւ ռեալ օժանդակութեան : Աւելին, Թուրքերը, եթէ համագործակցութիւն չէին ունենում, որ դաշակիցները չա-յատանին ռազմական օգնութիւն ցոյց չեն տայ, հազար քէ յարձակուելին չա-յատանի վրայ» (էջ 34) :

Շատ ճիշդ է : Իհարկէ, Թուրքերը չէին յարձակուել Հայաստանի վրայ, եթէ իմանային, որ Գաշակիցները պիտի սպառնան Հայաստանը : Բայց եւ սարքնում եմ Կարապետեանին. եթէ Թուրքերը իմանային, որ Պորսրդային Ռուսաստանը պիտի «չթողարտէ» եւ պիտի « սպառնան » Հայաստանը, կը յարձակուէին Հայաստանի վրայ : Այն ժամանակուայ սպաններում բաւական չէր Պորս. Ռուսաստանի վճռական մէկ նախազուշացումը, որպէսզի Թուրքերը չհամարձակուէին յարձակուելու Հայաստանի վրայ :

Բայց այդպիսի նախազուշացում չե-ղաւ : Եղաւ հակառակը, Պորս. Ռուսաստանը ռազմական, դրամական, քաղաքական եւ դիւանադիտական դործօն ա-ջակցութիւն ցոյց տուեց Թուրքերին Հայաստանի եւ Հայերի դէմ : Եւ այն ժամանակ, երբ Հայաստանը արդէն սուլե-տական էր, Կարսի բանակի եւ դիւանադէտների աջերի առջեւ Թուրքերը թա-րանում, ջարդում եւ կոտորում էին սո-վետական հպարտակ Հայերին : Թող Կարապետեանը ինքը վկայէ .

« ... Սկզբից եւ եթ պէտք է նշել, որ Թուրքերն սուլեներով դիմաւորեց Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը եւ բոլոր միջոցները ձեռք առաւ՝ այն շուտափոյթ տապալելու համար : Թուրքերն ամենեւին չթաղցրեց իր շնամական վերաբերմունքը դէպի Պորս. Հայաստանը : Նա բացարձակ կերպով յայտարարեց, որ չնայած խորհրդային կարգերի յայթանայութեան Հայաստանում ի-րենց համար անսպասելի էր, բայց այն բոլորովին չի քանդում իր պլանները : Հայաստանի եւ Պորսրդային Ռուսաստանի կառավարութիւնները վճռականօրէն մերկացնում էին քեմալականների հակա-խորհրդային քաղաքականութիւնը : 1921 թուականի Յունուարի 7ի նոտարով Պորսրդային Հայաստանի կառավարութիւնը մատնանշում էր Թուրքերին կառավար-րութեանը այն բարբարոսական քաղաքականութեան մասին, որ տարւում էր Թուրքական բանակի եւ վարչակարգի կողմից Հայաստանի օկուպացումը չըր-ջաններում : Նոտարում, որպէս փաստ,

նշում էր 1920 թուականի Գեղեմեանի 26ին Գաղթալի (այժմ՝ Փանիկ) զբաղում ինը երիտասարդ կոմունիստների եւ քա-ղաքում ռեւոլյուցիոնար միջոցներով զնդակահարութիւնը : Այդքանը զբաղուելու 1921 թուականի Յունուարի 25ի յայտարարութեան համաձայն, Ալեքսանդրապոլից եւ գաւառից Թուրքերն էր ու-ղարկուած 15.000 մարդ, եւ հինգ հազար մարդ զնդակահարուել կամ անհետ կորել են : Կարս քաղաքում Թուրքերը զնդակահարել էին 12.000 մարդ : Բայց ամենա-սոսկալին Համալուրի շրջանում տեղի ու-նեցածն էր : Ըստ Պորս. Հայաստանի կառավարական յանձնաժողովի 1921 թուա-կանի Մայիսի 11ի արձանագրութեան, Թուրք ջարդարները Ալեքսապոլի շրջանում սպանել էին 1186 մարդ, Ղալթախի շրջանում՝ 2100, Ղարաբոյախում՝ 11000 մարդ : Հո-ղափոսերում գտնուել էր 11886 դիակ, ո-րոնց ութսուն տոկոսը կանայք եւ երե-խանք էին :

« Նայն ցարդերի մասին է գրում Հայաստանի ռեւոլյուցիոնար տեղակալ Ա. Մուսեանը Ս. Օրջոնիկիձէին ուղարկած իր գեղեցագրում : Այստեղ ասուած է, որ Թուրքերը վերջնականապէս լիտի-ցել են, քանզի եւն կիսաբազմ երկրի վերջին հիւքերը : Երկիրը դատապարտուած է սովամահութեան : Տեղի են ու-նենում սոսկալի գազանութիւններ : Պարզ է մի տեսիլեց. կոտորել ամբողջ ազգա-բնակչութեանը :

« Խորհրդային Հայաստանի կառավար-րութիւնը 1921 թուականի Յունուարի 18ին թուրքական կառավարութեանն ուղղած նոտարում ասանձնապէս նշում էր այն սակալի վիճակը, որ ստեղծել էին Թուրքերը օկուպացումը շրջանների աշ-խատարութեան համար : Այնտեղ մատ-նաւորապէս ասուած էր, որ օկուպացումը իշխանութիւնները հաւաքում են 18ից մինչեւ 50 տարեկան հասակ ունեցող տղա-ղամարդկանց, խլում են նրանց հագի շո-րերը, հագցնում պարկեր եւ ստանալիքի պայմաններում ուղարկում աշխատանքի :

« Թուրքերի կողմից Հայաստանի օկու-պացումը շրջաններում հայ ժողովրդի քայքայելու եւ կոտորածների մասին վ. Ի. Լեւինին ուղարկած իրենց նամակում գր-ում են վաղախաղաքի հայերին վե-րաբարձող հայ գաղթականները : Այդ փաստաթղթում կարդում ենք. «Մենք՝ փախստական Հայերս խոր ուրախութեան զգացումով ողորնեցինք խորհրդային իշխանութեան հաստատումը Հայաստա-նում : Մենք հաւատում էինք, որ հասել է ժամանակը, երբ իր բոլոր ներքին բը-նաւիներին յարգած Ռուսաստանը իր հզօր ձեռքը կը մեկնի օգնելու տանց հայ աշխատար ժողովրդին, որը ներգրաւուել է պատերազմի մէջ Գեղար-դէի եւ ուստապալա է լինում անհատար պայքարում ... : Գեղարդ ուժեղ տեմպե-րով աւերում է խորհրդային Հայաստա-նը, քայքայում է աշխատար գիւղացի-ները վերջին ունեցումները, վիթխարի

կոտորիքուցիաներ է դնում, ամբողջ աշ-խատանքի, իսկ Հայաստանի խորհրդային հիմնարկներին բոլորովին հաշուի չի ա-նում եւ արհամարհում է նրանց : Իրերի նման դրուքիւնը այլեւս շարունակել չի կարող, քանզի որ սպառնում է վերջնակա-նապէս փայլայել եւ կործանել խորհրդ-ային Հայաստանը : Այժմ, ինչպէս միշտ, Հայերի բոլոր հայեցակներն ուղ-ղուած են Ռուսաստանին ... Մեծ յայտն-վայում եմք Ռուսաստանի բանուորա-գիւղացիական կառավարութեանը եւ ըս-պասում նրա հզօր ու վնասական փայլին, որ կարող է խելիքի բերել Գեղարդի եւ վերջին խորհրդային Հայաստանը յետա-գայ աւերումներից » (էջ 47-49) :

Վրաստանի կողմից հայ գաղթականներն էլ ուրիշ շատերի պէս միամիտ մարդիկ էին, նրանք բոլշեւիկներից իրենց էու-թեանը անհարգաւոր բանք էին սպա-սում : Ընդհանրապէս, բոլշեւիկներն Ռու-սաստանի կուլթեան հարգում էր Թուրքա-կան կուլթեանը : Նրանք 1921 թ. Մարտ 16ին Մոսկուայում քեմալական Թուր-քիայի հետ կնքեցին մի գաշակուցի, որ ամբողջապէս հաստատում էր «գալթիչ» Թուրքիայի քաղաքականութիւնը Հայաս-տանի վերաբերմամբ : Եւ 1921 թ. Հոկ-տեմբերին պարտադրեցին Պորս. Հայաս-տանի վարիչներին, որ ստորագրեն Կար-սի գաշակուցի Թուրքերի հետ, որ Թուր-քերին զիջում է Կարսը, Արտասանը, Սուրմալուն եւ այլն : Այս մասին ի՞նչ է Ս. Կարապետեանի կարծիքը :

Վերջապէս մի հատուած եւս Ս. Կարապետեանի գրքոյից. « Սովետական Հայաստանի եւ Սովետական Ռուսաստա-նի ռազմա-ֆաղափական եւ տնտեսական համագործակցութեանը իրականացի-ւանագիտական քննյթ տարու նպատակով, 1920 թուականի Գեղարդի 2ին երե-ւանում համաձայնագիր է կնքուել երկու իրաւագօր կառավարութիւնների միջեւ : Պատմական այս ակտով սովետական տէ-րութիւնը պարտաւորում է ամէն տեսա-կի օժանդակութիւն ցոյց տալ երիտա-սարդ Սովետական Հայաստանին : Այ-սուհետեւ հայ ժողովուրդը առյաւէտ իր բախտը կապում է սոցիալիստական ռուս ժողովրդի հետ, երբայրական դաշինք կնքելով սովետական մեծ տէրութեան հետ, ստանալով իրանից բարոյական, տնտեսական, ֆաղափական եւ ռազմա-կան օգնութիւն : Նայն օրը, 1920 թուա-կանի Գեղարդի 2ին, ազգուրաց դաշ-նակները, որոնց կառավարութիւնն ար-դէն տապալուած էր ու դուրս շարտուած երկրից, Թուրքիայի ներկայացուցիչների հետ Ալեքսանդրապոլում, առանց սովե-տական Ռուսաստանի եւ Սովետական Հայաստանի ներկայացուցիչների մաս-նակցութեան, ստորագրում են հաշտու-թեան պայմանագիր, որը դաշնակների սզգակարծան ֆաղափականութեան եւ հայ ազգին դաւաճանելու բարձրագոյն աստի-նանք էր » (էջ 42) :

Ըստ երեւոյթի, Ս. Կարապետեանը

անձանօթ չէ Հայաստանի վիճակին 1920 թ. Գեղարդի 2ին, բայց այն, ինչ որ նա գրում է, բացարձակ անճշտութիւն է, չափաւ համար սուտ : 1920 թ. Գեղ-տեմբեր 2ին Հայաստանը դեռ Պորսրդա-յին իշխանութեան ձեռքը չէր, մինչեւ Գեղարդի 2ի գիւղերը Հայաստանի էլ-խանութիւնը գտնուած էր «գաշակներ» ձեռքը : Գեղարդի երկուսից սկսած մին-չեւ Գեղարդի 4-5ը Հայաստանի իշխա-նութիւնը գտնուած էր Գրոյի ձեռքը, ո-րին «գաշակ» կառավարութիւնը նշանա-կել էր, իրրեւ տեղեկութիւնը բոլշեւիկ Սի-լինի օգնականութեամբ : Հայաստանի Յեղիումը Ազգային ժողովից երեւան հասու միայն Գեղարդի 5ին :

Արդ, ուրեմն, երբ Ալեքսանդրապոլի գաշակներ ստորագրուեց Գեղարդի 2ի գիւղերը, դեռ Հայաստանում խորհրդային իշխանութիւնը գոյութիւն չուներ : Դաշ-նակները ստորագրուեց Գրոյի եւ բոլշեւիկ Սիլինի դիտութեամբ եւ ասել է նաեւ հա-ւանութեամբ : Իսկ թէ ինչո՞ւ խորհրդա-յին իշխանութիւնը չէ մասնակցել Ալեք-սանդրապոլի բանակցութիւններին, այդ Ս. Կարապետեանը պէտք է վիտենայ. Ռուսաստանը ուղեց մասնակցել եւ իր կողմից Սիլինին ներկայացուցել ու-ղարկեց Ալեքսանդրապոլ, Հայաստանի կառավարութեան հաւանութեամբ, բայց Թուրքերը մերժեցին նրան ընդունել եւ խորհրդային իշխանութիւնը մարտից ի-րեն հասցուած անարգանքը : Ս. Կարապետեանը ասում է, թէ Գեղարդի 2ին, երեւանում, Հայաստանի խորհ-րդային իշխանութիւնը մարտից ի-րեն հասցուած անարգանքը : Ս. Կարապետեանը ասում է, թէ Գեղարդի 2ին, երեւանում, Հայաստանի խորհ-րդային իշխանութիւնը միջեւ կնքուել է « ռազմա-քաղաքական համաձայնութիւն » : Մեզ համար բոլորը - վին նորութիւն է նման համաձայնու-թեան գոյութիւնը : Գեղարդի 2ին, ինչպէս վերը ասինք, Հայաստանը դեռ խորհրդային չէր, երեւանում դեռ խոր-հրդային իշխանութիւն չկար, ուրեմն, ի՞նչպէս կարելի է խօսել խորհրդային եւ խորհրդաուս համաձայնութիւնների մա-սին : Այդ համաձայնութիւնը հնարաւոր է եւ գոյութիւն ունի միայն Ս. Կարա-պետեանի մտքի մէջ :

Հետաքրքրական է արցնել Ս. Կարապետեանին. եթէ « ռազմա-քաղաքա-կան համաձայնութիւն » գոյութիւն ունէր 1920 թ. Գեղարդի 2ին, ինչո՞ւ մինչեւ այժմ Պորսրդահայերի դիւանադիտական այդ նշանաւոր քայլը դադարել կը պահ-ուէր :

Ս. Կարապետեանի գրքոյում կա-րելի է գտնել մի կարգ ուրիշ հետաքրք-րական նորութիւններ, որոնք այլապէս կարելու են եւ հետաքրքրական, բայց այսքանն էլ բաւական է հասկանալու հա-մար նրա միտումները : Մենք այսքանը կարող ենք ասել, որ սուտից ճշմարտու-թիւն չի ստացուի :

Ս. ՎՐԱՅԵԱՆ

23 Նոյեմբեր, 1965

ՌՈՒՍ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐԸ ՊԵՏԻ ԳՐԱԽԷԻՆ ԱՆԱՏՈՒՈՒՆ

(Ինքնօր կը Գրեն)

ԹՐԲԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ

Այս տեսակցութեան ընթացքին, Պէ-քեր Մամի Պէյ իր խօսքը միշտ ալ կը մասնաւորէր կատարելի օժանդակութեան եւ կը շնորհակալ յայդ օժանդակութեան ներ-կայացուցած կենսական կարեւորութեան մասին : Այս առիթով, ան յատկապէս կը խօսէր դէպի Թուրքիա բացուող միակ դրան՝ Նախիջևան - Շախրազ երկաթու-ղիին մասին, եւ կը պանդասէր այդ դժին Հայերու կողմէ գրաւուելուն դէմ :

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԻ ՎՐԱՍՏԱՆԸ ՃԱՄԲՈՒ ՊԵՏԻ ԲԵՐԵՆՔ ... » ԿՐՍԷ ԼԵՆԻՆ

Լենին պատասխանելով Պէքեր Մամի Պէյի կրակ, թէ « այս խնդրին մէջ անի-րաւութիւն մը գործուած է եւ թէ պիտի դարձանուի այդ անիրաւութիւնը առաջին

առթիւ » : Ապա, այս խոստումը կատա-րելէ ետք կը շարունակէ նաեւ ըսելով, թէ « խիստ կարճ միջոց մը ետք, Հայաս-տանն ու Վրաստանը փափաքում են միմե-սին պիտի դրախին », այսինքն՝ պիտի հա-մայնաւարացուէին :

Բանակցութիւնները երբ այսպէսով կը ձգձգուէին շարունակ, Պէքեր Մամի Պէյ 1920 Օգոստոս 20 թուականին տեղեկա-ղիք մը կը յղէ Անդարայի Ազգային Մեծ Ժողովին, որ ստեղծուած կացութեան համեմատ, նոր հրահանգներ կ'ուղարկէ Մոսկուայի Թրքական պատուիրակու-թեան :

Այս հրահանգին մէջ, ուր այնքան բա-ցորոշ կերպով կը նշուէին Ռուսիոյ թա-քուն նպատակները Թուրքիոյ մասին, որ-պէս կառավարութեան պէտ՝ իսկական լուսարձակի մը պարտականութիւնը կը կատարէր իրողութիւնները լուսաւորելու անակէտով՝ Մուսթաֆա Գեմալի խորա-թափանց եւ ամենատես միտքը :

Այս հրահանգը ստորեւ կը ներկայացը-նենք նոյնութեամբ, իր կարեւորութեան համար :

ԱՆԳԱՐԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳԱՂՏԻ ԸՐԱՀԱՆԳԸ ՄՈՍԿՈՒՅԻ ԹՐԲԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱՎՈՒԹԵԱՆ

« Մոսկուայի մեր պատուիրակութեանն Վերջին հասած 1920 Օգոստոս 29 թուա-

կիւր տեղեկագրերէն եւ ընդհանուր կա-ցութենէն կը տեղեկանանք եւ կը նկա-տենք, թէ բոլշեւիկ Ռուսիան տակաւին իր սրտին մէջ կը պահէ կորսնցուցածները վերագրաւելու ցանկութիւնը, ինչպէս նա-եւ Իսլամական եւ Թուրք երկիրներու վը-րայ իշխելու փափաքները ... :

ԹՈՒՐԿԻՈՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԻՍԼԱՄԱՎԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՀԵՏ

« Բոլշեւիկ Ռուսիա կը խուսափի Թուր-քիոյ ազատագրման օգնելէ եւ յատկապէս չի ցանկար, որ այս երկիրը աշխարհա-դրական եւ քաղաքական կապեր ու յա-րաբերութիւններ հաստատէ իսլամական երկիրներու հետ :

Երկրորդ, պատերազմական եւ դիտա-կան գործիքներու տեսակէտով չափա-դանց աղքատացած է եւ չի կրնար դիմա-դրուել այն բոլոր կարիքները, զոր կը ներկայացնեն իրեն աշխարհի վրայ բազ-մաթիւ երկիրներ, մեծ մասամբ իսլամա-կան պետութիւններ : Եւ սակայն, ներքին կառուցուածքի տեսակէտով, ինքզինք ձեւով մըն ալ հարկադրուած կը տեսնէ իր օգնութիւնը նախընտրաբար մահմետական երկիրներու յատկացնելու : Այսուհան-դերձ, կարենալ իր ուժի հաւասարակը - ուրութիւնը պահելու համար արեւմտեան

գորաւոր պետութիւններու հետ, պար-տաւոր է միւս կողմէ գրգռութիւններ յա-ռաւ բերել մահմետական աշխարհի մէջ եւ նաեւ որոշ համաձայնութիւններու ալ յանդիլ արեւմտեաններուն հետ :

Նման այլապան պատճառներու բերու-մով, անոնք կ'ուզեն սոցիալիստիկ դիրք մը որդեգրել Թուրքիոյ հանդէպ, որ թէ տը-պաւորէ իսլամական աշխարհը եւ թէ յո-ռի գաղափարներն ու կառուցմանը փա-րատէ անոնց մտքերէն, ու մասնաւոր ցոյց տալ Անգլիոյ, որ ի վիճակի է աղ-ղելու Թուրքիոյ ճակատագրին վրայ : Ա-հա այս պատճառով է միայն, որ ան կ'ուզէ քաջալերութիւն ցոյց տալ Թուր-քիոյ մղած Անկախութեան Պայքարին : Հետեւաբար, ճիշդ այս նկատումներով յանձն առած է նաեւ տալ այնպիսի զէն-քեր ու զինամթերք, զորս ինքն ալ չունի, բայց այնպէս կ'ուզէ ցոյց տալ, թէ կ'օգ-նէ Թուրքիոյ իր այդ դեռ չտուած զէն-քերով, անոնց յանձնումը միշտ ալ ձգ-ձգելով պարզապէս, տեսականօրէն :

(15 Շար.)

Հ. Յ. Գ. ԴԻԻԱՆ-ԹԱՆԳԱՐԱՆ
Պէջուած է ընկ. Գ. Պատուեան 50 Փր.
կը նուիրէ թանգարան ապելու թեան առ-
թիւ :

ՅԱԻԱԿՑՈՒԹԻՒՆ
Իսի կապ. Սաչի մասնաճիւղը իր ցա-
ւակցութիւնները կը յայտնէ Սրապեան,
Ֆէրմանեան եւ Մանուկեան ընտանիք-
ներուն եւ իրենց պարագաներուն ՅԱԿՈՒԲ
Ֆէրմանեանի մահուան առթիւ :

ՓՈՒԱՆ ԾԱՂԿԵՊԱԱԿԻ
Կապ. Սաչի Պանեկո - Գաչանի մաս -
նաճիւղը շնորհակալութեամբ ստացած է
Տէր եւ Տիկին Է. Պատմաճեանէ 50 Փր.
փոխան ծաղկեպատի Յովհ. Թէրլէմէզ -
եանի յուղարկութեան առթիւ :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ
Տէրին. — Կապ. Սաչի Տէրինի վարչու-
թիւնը շնորհակալութեամբ ստացած է
հետեւեալ զբաժանան նուէրները զպրո-
ցին ի նպատ : Այլի Տիկին Հ. Գասպար-
եան յիսուն Փր., Պ. Յ. Հապէշեան 30,
հանդուցեալ Յարութիւն Պարտեանի
(Տարօնցի) մահուան առթիւ, փոխան
ծաղկեպատի Պ. Պ. Ղ. Պողոսեան 100,
Յ. Տէրոյեան երեսուն, Յ. Ղազարեան
քսան Փրանք :

Դերասան Թրաօզ իր շնորհակալութիւ-
նը կը յայտնէ ամէն անոնց, որոնք նա -
մակով կամ անձամբ շնորհաւորած են
զինքը, իր զբաժ «Ռուսան» թատերգու -
թեան մրցանակի ու պարգևի արժանա -
ցած ըլլալուն առթիւ :
Կը յայտնէ իր երախտագիտութիւնը
նաեւ Հ. Բ. Ը. Միութեան Տիկնանց
Յանձնախումբին ու ըննիչ յանձնախումբ -
բին՝ Ժիւրիի պատուարժան անդամնե -
րուն, որոնք զնահատած են իր երկը ու
պարգևի արժանացուց :

ՍԱՍՈՒԷԼ ՍՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ
ԿԻՐԱԿԻ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 19ԻՆ
Ժամը 16ին :
ՏՕՆԱԾԱՌ

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ
ՎԱՐՃԱՐԱՆ
ՏՕՆԱԾԱՌԻ Հանգէսը Դեկտեմբեր 19 -
ին, Կիրակի կէսօրէ ետք ժամը 4ին վար-
ժարանին մէջ :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ
Մարտ - Ռափայէլեան Նախիկին Աշա-
կերտաց Միութեան
ՊԱՐԱՀԱՆԳՍԸ
ՓԵՏՐՈՒԱՐ ԵՆՆ
Մամուլ Մարտեան վարժարանի քա-
տերական ներկայացուցը՝
ՄԱՐՏ 20ԻՆ

Դպրոցատէրի զեղարուստական հան -
դէսը Մարտ 28ին, Կիրակի օր :
Հայ Արիներու Միութեան Փարիզի
շրջանի տարեկան հանգէսը, Կիրակի
Մարտ 6, կէսօրէ ետք ժամը 2:30, Սալ
ուր լա Շիմի :

Վիէն. — Մանուկներուն օրը Յունուար
9ին, Աերըը Կաթողիկ սրահին մէջ :
Կապոյտ Սաչի Վիէնի մասնաճիւղի
պարահանգէսը Դեկտեմբեր 18ին, Սալ
տէ Գէրի մէջ : Մանրամասնութիւնները յե -
տագային :

ՃՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ Կ'ԵՐԳԵՆ
ՄԱՐՏ 13ԻՆ
ՍՈՐՊՈՆԻ ՄԵԾ ԱՄՓԻԹԱՏՐՈՆԻՆ ՄԷՁ

ՏԱՌՈՒ ԵՆ
Տէրինի մէջ, յարկարժեքները fo -
փրոպիէթէ Էֆ 3, Էֆ 4, Էֆ 5: Դիմել
Ս. ԱՌԱՔԷԼԵԱՆԻ ամէն օր, 12 Րիւ տը
Նանսէն : Հեռաձայն 49-50-82, ժամը
12-30էն 14 եւ 19էն 20-30 :

IMPRIMERIE SPÉCIALE
DU JOURNAL « HARATCH »
32, Rue de Trévis, PARIS (9e)

ԳԱԻԱՌԻ
ՄԵՐ ԲԱՃԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ
ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ
Գաւառի մեր բաժանորդներէն կը խնդ-
րուի իրենց առկա հաշիւները կարգա -
դրել ուղղակի թերթին վարչութեան հետ :
«Յառաջ»ի վարչութեան հաշուապա -
հութեան զիւրութեան համար ջնջուած են
ՎԱԼԱՆՍԻ, ՎԻԷՆԻ եւ ՏէՍԻՆԻ զորժակա -
լութիւնները : Մեր բաժանորդներէն կը
խնդրենք իրենց վճարումները կատարել
«Յառաջ»ի ԵԷԲ - Փոսքալի թիւին. —
15069 - 82 Փարիզ
Շնորհակալութիւն
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՅԱՌԱՋ»Ի

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԱՇՏՈՒԹԻՒՆ
Դեկտ. 12, Կիրակի ժամը 21ին
DANS ST. EUSTACHE ILLUMINÉE
(12, Rue Dujour, Paris (1er)
Métro : Halles

ՎԱՐԳԱՆԱՆՑ ԱՍՊԵՏՆԵՐՈՒ
ԵՂԱՅՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ
Կը ներկայացնէ (համաշխարհային
առաջին ունկնդրութիւն) :
DU PROFOND DE L'ABIME
(Oratorio)
ԲՆԱԳԻՐ ԵՒ ԻՐԱԳՐՈՒԹՈՒՄ
ԱՐՇԱՄ ՃԻՋՄԷՃԵԱՆ
ԱՊՐԻԷՆԱՆ ՅԻՄՆԱՄԵԱԿԻ
ՅԻՇԱՏԱԿԻՆ

Կը մասնակցին՝
Christiane Eda-Pierre (Soprano) de
l'Opéra, Paul-Emile Deiber (récitant)
sociétaire de la Comédie-Française,
Raffi Ourgandjian (au grand orgue).
LES CHANTEURS
DE ST. EUSTACHE
(Président-Fondateur
R. P. Emile Martin)

ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՐԲ
ԱՐՇԱՄ ՃԻՋՄԷՃԵԱՆԻ
ՅԱՅՏԱԳԻՐ. — ԿՈՍԻՏԱՍ, ՀԱՅՐ
ՄԱՐԹԷՆ, ՎԻՔՈՒՐԻԱ ՄՈՍԹԵ -
ՎԵՐՏԻ, ՈՒՐԿԱՆՃԵԱՆ :
Տոմսերու գին՝ 5էն 25 ֆրանկ
Դիմել՝ Ս. Յովհ. Մկրտիչ Կեղեկե-
ցի, 15 Րիւ ժան Կուժօն, Սէնք-Էօս-
քաշ (Հալ), Տիւրան (4, Փլաս տը
լա Մատրլէն), Բալուեան զբառուն,
(43 Րիւ Ռիշէ) :

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Է
ԳՈՅԱՄԱՐՏ
ՕՐԱՅՈՅՑ 1966
Հրատարակուիւն Հ. Յ. Գ. Նար Աե-
րունցի Մարտիլի շրջանի :
Ապագանըներու համար զիմել՝
O. DJARAYAN
2, Place de la Corderie
13 MARSEILLE (7e)

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԱՌԹԻՒ
ՆՈՒԻՐԵՑԷՔ
CONTES ET LEGENDES
ARMÉNIENS
Ֆրանսերէնով պատրաստուած՝
Շ. Տէր - Միլիանեանի կողմէ
Գունաւոր կողմ, մաքուր տպագր -
ութիւն, պատկերազարդ :
Գին՝ 5 ֆրանկ
Առաքման ծախսերով 6-50
Ստանալու համար զիմել Հ. Սա -
մուէլեան զբառունը, եւ կամ՝
Mme C. DER-MELKONIAN
11, Rue Gabriel Péri
CHATILLON s/BAGNEUX (Seine
C. C. P. PARIS 19668-59
Կարելի է նաեւ անձամբ զիմել Յա -
նաջի խմբագրութեան :

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՏԻԿՆԱՆՑ ՄԱՍՆԱՌՈՒՄԲԸ
Կը կազմակերպէ իր տարեկան
ԲԱՐԵՆՊԱՏԱԿ ՎԱՃԱՌՔԸ
11, 12, 13 Դեկտեմբեր, Ազգային Տան մէջ
32, RUE DE TRÉVISE (Rez-de-chaussée)
Հոն պիտի գտնէք հարմար պէտքերու քիւն մը զանազան ապրանքներու, տոնա -
կան օրերու մեր նուէրներուն համար :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ
ԼԻՈՆ. — «Մանուկներու Օր»ը Յուն -
ուար 16ին Ազգային Տան սրահը :

Մանուկներու Օրը կը տօնուի Տէրինի
մէջ Յունուար 9ին Շարաթ երեկոյեան,
Հ. Յ. Գ. Տան մէջ :

Ս. Սաչ Ընկերակցութեան տարեկան
պարահանգէսը Փետրուար 27ին :

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ
ՄԱՐՄԻՆ (Փարիզահայ Տիկնանց Միութե -
ան) ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԿՈՅԹ ՊԱՐՍ. -
ՀԱՆԴԷՍԸ 23 Յունուար, Ամպաստէօրի
սրահին մէջ :

ՊԱՇՏՏԵԱՆ ԿՈՒՉՈՒԻ
Աղքատախնամ ընկերակցութիւնը իր
Հանգստեան Տուններուն համար կը փնտը -
ռէ. — Ա) Տնօրէն, օժտուած վարչական
կարողութիւններով եւ տեղեակ հաշուա -
կալութեան :
Բ) Հիւանդապահուիչներ, վկայեալ
Փարիզի կամ այլուր :

Գ) Կառավար (շօֆէօր) :
Թեկնածութիւնները ներկայացնել զը -
բաւոր Աղքատախնամի զբառնակը՝
Association Arménienne d'Aide Sociale
32, Rue de Trévis, Paris (9e)

ԿԸ ՓՆՏՈՒԻՆ
Երիտասարդ օրիորդ մը կը փնտը մէկ
կամ երկու ընկերուհիներ բաժնեւոր հա -
մար Պուրտնիլի իր բնակարանը : Ամէն
յարմարութիւն, հեռաձայն, մեթրոյին
մօտ : Ամիսը՝ 225 կամ 150 Փրանք : Հե -
ռաձայնի զբառնակի ժամերուն (9էն
12 եւ 14էն 16) : 553-76-59 :

Table with 4 columns: Item name, Price, and other details. Includes items like ՄԱՀԱՉԳ, ՀՈԳԵՃԱՆԳԻՍ, ՅԱԻԱԿՑՈՒԹԻՒՆ, etc.

Advertisement for Bosphore chocolate. Features the text 'ԵՐՐՈՊԱՅԻ' and 'CHOC-ALVA • CHOCO-LOC'. Includes a logo with a figure and the text 'LE BOSPHORE MARQUE DÉPOSÉE'.

ՅԱՐԱՇ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN
RÉDACTION - ADMINISTRATION : 32, RUE DE TRÉVISE - PARIS (9^e)

Fondé en 1925 T.él. : PROvence 86-60
R. C. Seine 57 A 2731 C.C.P. Paris 15069-82

Ֆրանսա՝ Տար. 60 ֆ. Վեցամսեայ՝ 35 ֆ.
Արտասահման՝ Տար. 80 ֆ. Հատը 0,30 ֆ.

ԶՈՐԵՔՄԱԹԻ 8
ԴԵԿՏԵՄԲԵՐ
MERCREDI
8 DECEMBRE
1965
LE NUMÉRO : 0,30 FR.

11 ԳՊՏՍՐԻ — ԹԻԻ 10479

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

41e ANNÉE — N° 10.479

ՕՐՈՒԱՆ ԵՕՍԻՔ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԻՄԱՍՏԸ

Եթե տարուան մէջ առաջին անգամ ըլլալով, նախագահ տը Կոլ հարուած մը ստացաւ, որու տարողութիւնը հաւանաբար, ոչ ոք զգայ այնքան որքան ինք : Այսօր նոյնիսկ իր համախոհներն ու կողմնակիցները բացի իրէն ինչ ինչ հաւատարիմ կուսակիցներէն, կը խորհին թէ, տը Կոլ պարտի ալլելու դաս մը քաղել եւ յետագային նկատի առնել ընդդիմութեան որոշ քննադատութիւններն ու տեսակէտները :

Եթէ ճիշդ է որ զանգուածը յաճախ առանց հարցերը խորացնելու կը հետեւի մարդու մը, մանաւանդ երբ այդ մարդը պատկանելի վարկ մը ստեղծած է զէպերու բերմամբ, կը տեսնուի նաեւ թէ կարելի է միշտ յոյս դնել միայն վարկին վրայ եւ երբ այդ նոյն ժողովուրդը ստիպւի կ'ունենայ լսելու նաեւ ընդդիմադիրները, յանկարծ կ'արթննայ : Ժողովուրդը սպեկուստ է :

Ճիշդ է որ եթե տարիներու ընթացքին, Ֆրանսայի ժողովուրդը առիթ չէր ունեցած լսելու ընդդիմութիւնը, այսօրն յաճախ եւ այսքան բանուկ գործիքի մը միջոցաւ : Հաւանաբար ցարդ նախագահ տը Կոլ այսքան փաստացի ձեւով չէր ներկայ տուած հետաետիւնը գործած աւելները, երբ ան կը արամադրուի ու ընկերուն :

Դիւրին է անշուշտ քննադատել ընդդիմութիւնը, որ պատկառուած երեւոյթ մը ցոյց կուտայ իր բազմաթիւ թեկնածուներով, բայց եւ այնպէս կարծիքներու տեսակէտներու այդ զանազանութիւնն իսկ մէկ յատկանշական դիմն է Ֆրանսական մտքին, որ ըլլալով հանդերձ Քարթիզան, չի կրնար պարփակուիլ միայն մէկ կամ երկու գաղափարականներու մէջ :

Յարգ տը Կոլ պաշտօնապէս չէ յայտնած թէ պիտի մասնակցի՞ Երկրորդ շրջանին : Տիրող կարծիքն այն է թէ կասկած չկայ այդ մասին եւ իբրեւ համոզիչ փաստ կը յիշուի թէ Կիրակի դիշեր Զօր. վարկը հեռանալով փոխել տուած է մէկ քան վարչապետ Փոմպիդուի հրատարակած լեզուի վերջին մէջ : Մինչ վարչապետ արանը կ'ըսէ թէ ընդդիմութեան թեկնածուները «արգելք հանդիսացան» որ երկիրը իր միութիւնը արտայայտէ նախագահ տը Կոլ շուրջ, տը Կոլ «յետաձգեցին» ըսել կուտար, այս ձեւով լսելու այն հասկացնելով թէ պիտի մասնակցի Բ. շրջանին :

Դեկտեմբեր 19ին համար, մինչ Միթրան նոր կոչելով կ'ուզէ բոլոր հանրապետականները համախմբել իր անունին շուրջ, հետաքրքրական է Լըբանիւէի բանաբանը :

Որո՞ւ պիտի երթան Լըբանիւէի ձայնները : Ատոր անմիջական պատասխանն է. — մը Կոլին : Արդարեւ կոյիտաները սկսած են արգէն սահմանափակել ընտրութիւնը : տը Կոլին եւ ժողովրդական ձայնակիրները : Մինչ թիքսիէ պաշտօնական համարողութեամբ մը կը թելադրէ իրենք բուհարկողներուն, քուէարկել Միթրանի համար, Լըբանիւէ ոչ մէկ թելադրութիւն կ'ընէ, կը զբաղի զլիսաւորարար զեմով րատ կուսակցութիւն մը ստեղծելու : Յատկանշական է նաեւ իրէն ինչ ինչ երեսփոխան Տիրպիլի յօդուածը «Ժուրնալ տը Սանթրի» մէջ ուր ան չի քաշուի զրեյի «Պէտք է մեկնիլ, պարտն նախագահ, զանազան ալլելու ձեւեր կ'ընեն քաղաքական ճշմարտութիւնը չէք : Ֆրանսացիք ալ ունեն իրենց ճշմարտութիւնը, որու շատ նախաձեռնողիք են : Պէտք է ապրել իրենց ճշմարտութիւնը, զոր գիտեն միշտ վճարել եւ շատ սուղ...» : Բաւական անպատասխան էլ լսելով մը, որ կարծել կուտայ

ՕՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐԸ ԵՐԿՐԷ ԵՐԿԻՐ

Մինչ անդրժողովան հողամասերու արդիւնքները որոշ չափով կը բարձրացնէին տը Կոլի ստացած ձայներու համեմատութիւնը (վերջնական՝ 44,61 առ հարիւր) : Ֆրանսայի թէ արտասահմանի մէջ կը մեկնարանէին ստեղծուած կացութիւնը : Ներքին նախարար Ֆրէ նոսի գոհունակութիւն կը ցոյց տայ թէ ընտրողական մարմինն 85 առ հարիւրը մասնակցած է ընտրութեան : Կ'ըսէ թէ ընդդիմութեան թեկնածու Միթրան չէր կրցած հաւաքել համայնապար, ընկերակազմական եւ արմատական բոլոր ձայները, ձայներ որոնք շատ բաժնուած են արգէն ինչ կը վերաբերի արտաքին քաղաքականութեան, «այս նկատողութիւնը կը վերաբերի ի մասնաւորի Ժան Լըբանիւէի, որու ձայններու ամբողջութիւնը, համեմատութեամբ, նուազ է քան 1962ի երեսփոխանական ընտրութեանց, իր ներկայացուցած կուսակցութիւններու ստացած ձայները» : Իր ելոյթից արտաքին մէջ ներքին նախարարը կը գտնէ թէ «Զօր. տը Կոլ եւ իր մարմնաւորած գաղափարները լայնօրէն կը արժանանան Կիրակի օրուան քուէարկութեան» :

Արտասահմանի մէջ, կը թուի թէ ոչ մէկը կը սպասէր այս արդիւնքին : Եւրոպական մայրաքաղաքները ընդհանուր ձեւով գոհ են եւ կը խորհին թէ ստեղծուած կացութիւնը այլեւս կը ստիպէ ար Կոլին որ նուազ անցիկ ըլլայ բանակցութիւններու մէջ :

Արեւմտեան Քերմանիոյ մէջ, նախկին վարչապետ Քոնրատ Ատրնուրը կը մտադրէ տը Կոլի յաղթանակը Իեկա. 19ին, տուած ըլլալով որ անկէ գուր միայն ժողովրդական ձայնաւոր մը կրնայ ստեղծուիլ որ վնասակար կացութիւն մը կը ստեղծէ Գերմանիոյ համար : Պերլինի դեմոկրատ քրիստոնեայ Տէր Բուրիէն թերթը կը գրէ թէ տը Կոլ պէտք է գուրս ելլէ իր կողմնակցութեան «իր հպարտ նկարագիրը, կը գրէ թերթը, թոյլ պիտի չտայ որ մէկ օրէն միւսը փոխուի, բայց ժամանակի ընթացքին, այն ազդարարութիւնը զոր ընտրողները տուին Պետութեան զեկալարին կրնայ լաւ արդիւնքներ տալ» :

Անգլիոյ մէջ, պատական կուարտիրն կը գրէ թէ տը Կոլ այլեւս Ֆրանսայի անմիջական պետը չէ : Պէտք է ընդունի որ 75 տարեկանին, իր երկրին միակ ընդունելի զեկալարը չէ :

Չուիտերիոյ մէջ, Ժուռնալ տը Ժրնեթը կը գրէ թէ ընտրութիւնը, որ մեծ յուսալարութիւն ստեղծած է կոյիտ շրջանակներու մէջ, ցոյց կուտայ թէ քան մը կայ փոխուած Ֆրանսայի մէջ : Ֆրանսայի ժողովուրդը չպատասխանեց Զօր. տը Կոլի կոչին :

Իտալացիք ալ զարմացած են : Աջ - պատական թերթը կը գրէ թէ Կիրակի օրուան ընտրութիւնը ցոյց տուաւ թէ Ֆրանսա իր հին սովորութիւններուն վերադարձած է, բաժնուելով գրեթէ դասական հոսանքներու միջեւ : Համայնապար Ունիթան նոր հետանկարներ կը գտնէ

Նաեւ թէ ամէն ինչ պարզ ու յստակ չէ իրէն ինչ շարքերուն մէջ :

Իրաց այս կացութեան մէջ, Դեկտեմբեր 19ին, ժողովուրդը պիտի ըսէ վերջին խօսքը եւ ընտրէ երկու հոգիի միջեւ միայն ան որու կ'ուզէ յանձնել իր ապագան :

ՅԱՌԱՋ

Չարսի համար, մինչ Միթրանի անկախ ֆոնիտէ Տեյլա Սեռաի կը չէլտէ. — «Յաճախ ժողովուրդները աւելի իմաստուն են քան իրենց զեկալարները : Եթէ, եթե տարի առաջ, Ֆրանսացի ժողովուրդը ուղեց որ տը Կոլ վերականգնէ Հանրապետութիւնը... Այսօր զայն կը նետէ բարոյապէս եւ քաղաքականութիւն : Ինչո՞ւ : Վասնի վերականգնելէ ետք հանրապետութիւնը, Արթերիոյ խաղաղութիւնը հաստատելէ ետք, տնտեսական եւ ընկերային յանգիծութիւնով զբաղելէ ետք, տը Կոլ իր պարտականութեանն անդին անցաւ եւ նոր - պոստփարթիք մը ստեղծեց մեծութեան եւ իշխանութեան հովանիին ներքեւ» :

Մեքսիկացիք բաւական խիստ են, ճիշդ է որ որոշ չափով առիթ մըն է «գրեթէ» լուծելու : Նիւ Եորք Քայմը կը գրէ թէ Ֆրանսացիք նախագահ մը կ'ուզեն ոչ մեծապէս մը եւ Ֆրանսա Կիրակի օր քուէարկեց աւելի երիտասարդ, աւելի ազատ, տարբեր Ֆրանսայի մը համար :

Ազգայնական Շիքաի Քրիպիւն կը խորհէ թէ տը Կոլ Եւրոպայի ամէնէն ազդու ազգային է համայնապարտութեան դէմ : Նիւ Եորք շերտը Քրիպիւն չի խորհիր թէ տը Կոլ քան մը փոխէ իր քաղաքականութեան մէջ, դժուար ընտրուելէն ետք : «Կասկածելի է, կը գրէ հանրապետական թերթը, որ տկարացած նկատէ իրեն տուած լիազօրագիրը : Որովհետեւ տը Կոլ աւելի վստահութիւն ունի իր ժողովուրդէն քան ժողովուրդին հաստատութեան» :

Իսրայէլի անկախ Մաարիվ թերթը կը գրէ թէ Ֆրանսացի համայնապարները անկախութեան քուէ մը տուին Մոսկուայի նկատմամբ. — «Զօր. տը Կոլի եւրոպական քաղաքականութեան թեթեւ արդիւնքները մեծ մասամբ պատասխանատու են իր համեմատական ձայնողութեան : Ուրիշ պատճառ մըն ալ պէտք է փնտրուի Ֆրանսացի համայնապարներու դիրքին մէջ, որոնք տը Կոլի դէմ քուէարկեցին զիտնալով հանդերձ թէ Մոսկուայի թեկնածուն էր : Վստահ ենք որ տը Կոլ պիտի ներկայանայ երկրորդ շրջանին եւ ընտրուի» :

Մոսկուա վերապահ է, «չուղելով միջաբուր ըլլալ ուրիշ երկրի մը ներքին գործերուն» : Բայց անակնկալ մեծ է տուած ըլլալով որ հինէն ի վեր տը Կոլ մեծ վարկ կը վայելէ Մոսկ. Միութեան մէջ :

Բովանդակ Ափրիկէն դժգոհ է եղածէն : Գահիրէի մէջ այն կարծիքը կայ որ այս քուէարկութեամբ Ֆրանսա կորսնցուց իր վարկը արաբական երկիրներուն մէջ :

ԲԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԳԵՐՄԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ կ'ընդունին շարունակել քաղաքական գործը ինչ կրկին հետ, բայց շատ խոհեմ են ինչ կը վերաբերի Օտէն - Նայս սահմանային հարցին :

ՍՈՒՐԵՆՈ սպանական լեզու գործածեց ժողովրդական ինքնապաշտպանութեան Ժողովին. — «Եթէ համաձայն չէք վարած քաղաքականութեանս հետ, կրնաք զիս ձամբել կամ պարզապէս ըսել ինձի եւ կը հրաժարիմ : Բայց պատրաստ եմ Աստուծոյ հաշիւ տալու» : Անդրադատուելով հակահամայնապար պայքարին, նախագահ Մոքարիո չէլտած է. — «Պէտք չէ այրել մեր տունը փորձելով ազատի ստեղծելու ինչ որ մեր փորձած են անոր հիմերը կրծել» :

ՅՈՅՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ տաղանապար կը շարունակուի : Պետութիւնը կէտ մը նշանակած է այս պայքարին մէջ արդիւնքով նոր ելակողպաններուն որ մասնակցին իրաւունքն արեւելահողովուրդի յաղաքողութեան : Այս առթիւ ելակողպաններու բաները յայտարարած է «պետութիւնը, զիտուած է իր ուժը գործածեց պատժելու համար եկեղեցին» :

ԱՐՇԱՄ ԵՈՒՆԻԿԱՐԵԱՆԻ ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

— * —

Շարսի օր Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին լեցուած էր ընտիր բազմութեամբ մը, որ եկած էր իր յարգանքի վերջին տուրքը տալու հայ տիպար մտաւորական՝ Արշամ Սոնդկարեանի :

Արարողութեանէն ետք, Սերոյբէ Արք. Մանուկեան յուզիչ բառերով վեր առաւ հանդուցեալին մտաւորական եւ ազգային արժէքը : Շեշտեց թէ ողբացեալին կորուստը աւելի մեծ է նկատի առնելով անոր ազգայութեւն եւ հանրային գործունէութիւնը :

Յիշեց թէ Արշամ Սոնդկարեան չէր կրնար աւելի լաւ միջավայրի մէջ առնել իր ուսումը քան էջմիածնայ Գէորգեան ճեմարանի մէջ, բայց յետագային զբոսաւորական արթնալով, Բայց արտասահմանի մէջ ալ, Ա. Սոնդկարեան չարտապահ ծառայել հայ մշակութիւնը :

Պ. Ա. Քարեան ողկոչեց ողբացեալին ուղիղ եւ անհասանելի նկարագիրը : Յիշեց թէ ինչ խանդալատութեամբ վերադարձաւ հայրենիքէն, անցեալ ամառ : Ընկեր ժիրայր Փալամուտեան յուզումով յիշեց ողբացեալը, որ ըլլալով հանդերձ ընդդիմադիր միշտ յարգանք ու սէր պարտադրած էր բոլորին, արուած ըլլալով իր քննադատական անողի եւ անհասանելի որդին : Ունէր տեսակէտներ, բայց կը լսէր նաեւ իրեն հետ գաղափարական տարակարծութիւններ ունեցողներուն կարծիքը ու կը յարգէր զանոնք : Յիշեց թէ ինչ օրտակար եղած է երբ տասարդներուն շարք մը դասախօսութիւններով եւ եղբակացուց շեշտելով այն բայց, զոր կը թողուն Սոնդկարեաններ իրենց մասով :

Արշամ Սոնդկարեանի մարմինը, ապա, ամփոփուեցաւ Պանէէօ - Փարիզիէն հայ մտաւորականներու դամբարանը : Գնահատելի գործ մըն է, զոր տեսած է Բարեկործականը եւ մանաւանդ Պ. Պ. Վա. հան Խամբեան եւ յետագային Վահէ Ֆրանկեան որոնք գաղափարն ունեցած են այս դամբարանին եւ որուն շնորհիւ հայ մտքի անխոնջ աշխատանքները շիրիմ մը ունին, այսօր :

ԼԵՉ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ համադրամարէնէն ետք, ձայն - պատկերասփիւռի անօրէնք՝ Սոքրակի կոչ մը ըրած է զրոյներուն, չէլտելով «փորձեցէք որեւէ բանում չունենալ համայնապար կուսակցութեան զեկալարութեան հետ» : Գրողներու մեծ թիւ մը գրաքննութեան բարեփոխում կը պահանջէ :

ՆԻԻ ԵՈՐՔԻ երկրին մէջ բախում մը պատահած է երկու օդանավներու միջեւ : Երեք մեռելու եւ 51 վիրաւոր կայ :

ԲԱՍՊՐՈ համաձայնած է որ ուսուիքի եւ զեկալարի փոխարէն քաղաքական բանտարկեալներ արձակէ :

ՍԷՈՒՏԱԿԱՆ Արարիոյ Ֆայտալ թաղաւորը Թեհրան հասած է վեց օրուան պաշտօնական այցելութեան համար :

ՓԵՔԻՆԻ մէջ շրջան կ'ընեն կարգ մը գրոյցներ բառ որոնց գաղափար խոսակցութիւններ եղած են Փեքինի մէջ 20 Շի Մինչի եւ Մաօ Յէ Թունիի միջեւ :

ԱՐԵՒՄՏԵԱՆ Գերմանիոյ մէջ լուծուած է Տօյըր - Ռայխս - Փարթայը (ժայռալեզ ալ) : Քսան տարի է գոյութիւն ունէր եւ իր շուրս հազար անգամները արձանագրուեցան նազիստ Տեմոքրատիկ կուսակցութեան :

ՄԱՐՈՔԻ կառավարութիւնը արդիւնք Ֆրանսական բոլոր թերթերու մուտքը, Պեն Պարբայի հարցին առթիւ, իբրեւ բողոք Փարիզի բնած զիրքին :

ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ

Ա.

Ցեղային բաղկացություններն հետ հայ ժողովուրդի ճակատագրին վրայ իր ազդեցությունն ունեցած է ընկերային կազմությունը, որ նախապես կազմված է:

Պատմաբան Մորէ կը գրէ — « Արեւմուտքէն դէպի Արեւելք արշաւու ճակատագրականները ընտանեկան կազմակերպությունն մը ունէին նահապետի մը բովանակող իշխանութեան տակ »:

Ընտանեկան այս տիպարը պիտի տեսնէք անհատներու դարերը: « Ընտանեկաններ կը բաղկանան բազմաթիւ անդամներէ: Հասակուն 85 առ հարիւրը երկրագործ են եւ նահապետական ընտանեկաններ կը կազմեն »: (« Քուրտի մոնտ », 1906, էջ 484, 1907, էջ 256):

Նահապետական ընտանեկան մէջ անհատը կը կորսնցնէ իր ինքնութիւնը, կը հրապարակաբար ընտանեկան նահապետին իշխանութեան, պիտի մնայ աւատապետական իշխանութեան տակ, կամք ու միտք պիտի մնան կաշկանդուած:

« Անհատը կաշկանդուած է ոտից ցլուխ համայնքի շահերով: Համայնքը թոյլտու չէ որ ընտանեկան անդամ մը կարողանայ զարգացնել իր տաղանդը: Չտեսնուած բան կը լինի, եթէ հայ գիւղացին ձեռնարկէ ինքնին մի գործի, դա յանդուդն քայլ է, առիթ կը դառնայ պառակտումներ: Ամէն ժամանակ, ամէն մի գործում, ամէն մի քայլում հայ ընտանեկանը պարտաւոր է իր մեծի, իր նախնորդի հրամանով շարժուի »: (Միւնստեր, « Ընտանեկան Բնագիտութիւն », Անկախ Մամուլ, 1908, թիւ 7):

Նոյն պատկերը կը ներկայացնէ իմազիկ Սամուէլեան ընդարձակ ուսումնասիրութեամբ մը նահապետական գերդաստանի մասին: (« Արարատ », 1908):

Նահապետական գերդաստանի մէջ անհատը սեփականութիւն չունի, անձնաւորութիւնը կ'ընտանեկան հաւաքականութեան մէջ, կը վարձուի հաւաքականութեանը, ընտանեկան կը սպասուի ամէն բան, ընտանեկանը դուրս կ'ամառուի արարած մըն է, որովհետեւ դաստիարակուած չէ ինքնիւր վրայ յենու, պատրաստուած չէ անկախ գործունէութեան:

Նահապետական գերդաստանը անդրանկութեան իրաւունք ունէր: Նահապետին կը յաջորդէր անդրանիկ որդին, միւսները կը մնային անժառանգ, կամ նուազագոյն բաժին մը կը ստանային կամ դուրս կը ձգուէին: Ազգային Լալայեան վարանդայի մէջ կը գտնէ նահապետական գերդաստաններ, ուր կայ անդրանկութեան իրաւունք: Կրտսեր երիտասարդը կը մեկնի քաղաք, կը թողու ճահիլ կինը, ամուսինը նոր կինը կը գտնէ, կինն ալ թակարդը կ'իջնայ: (Վարանդա, էջեր 153, 164 - 5):

Այս հարուստ երկրին մէջ հողատէրեր -

բու թիւը քիչ էր, մեծամասնութիւնը կը մնար հողագործի, կը մնար աղքատ: Կը զաղթէր տունէն հեռացուածը, կը խղճէր կապը գերդաստանին հետ, կը յարմարէր նոր միջավայրին, կը փոխէր կենցաղը, կը մոռնար լեզուն, եթէ ունէր թաքուն յատկութիւն՝ կը բարձրանայ: Կը մտերմանար ընդհանրուն հետ, որովհետեւ վարժուած էր հաւաքական կեանքի, կը խորշէր առանձնական կեանքին: Նպաստաւոր միջավայրի մը մէջ անհատական նուիրելը կը յայտնուի, ընկերային աստիճաններէն վեր կ'ելլէ:

Իմացականապէս բարձր անհատներ, ուժեղ անհատականութեան տէր դէմքեր ժառանգական օրէնքներու համաձայն կրնան դուրս գալ գերդաստանին մէջ, անդամները չեն հանդուրժեր մէկուս առաւելութիւնը, մանաւանդ երբ նահապետին փոխանորդող անդրանիկը դուրս է հեղինակութենէ:

Ուշիմը, ճարպիկը, անհատականութեան տէր երիտասարդը դուրս պիտի դան գերդաստանէն, պիտի դիմեն դալթիանութեան, օտար երկրի մէջ պիտի փնտեն իրենց բախտը, երբեմն ձախտ դուրս պիտի մատնուին, երբեմն պիտի բարձրանան: Յաճախ պիտի ունենան հաւաքական կեանք, իրերդուութեան մարմիններ կազմելով, հաւաքական ընտանեկան դուրս եկան, հաւաքական կեանք կը փնտեն, պիտի հիմնեն կորիզներ բնականական կայսրութեան մէջ, յամառօրէն պիտի կառնին իրենց դաւանանքին, պիտի պայքարին յոյն համայնքներու դէմ, յոյն եւ հայ համայնքներ պիտի մնան հակամարտ: Մեծերը մեծ դիրքերու պիտի հասնին, համեալ դասակարգի պատկանողները պիտի դին ուրազուին, պիտի մասնակցին կայսրութեան ներքին պայքարներուն:

Գերդաստանին անդամները քոյրեր եւ եղբայրներ են, երիտասարդը տարբեր գերդաստանէ մը պիտի առնէ իր կենսակիցը: Օտար մը կը մտնէ ընտանեկան մէջ, բամբասանքը կը սկսի, նախամեր կը կիծէ միւսներուն սիրտը, անհամբարձ իրութիւնը կը խանդաւրէ ընտանեկան խաղաղութիւնը: Ամուսնութիւնը կը կատարուի առեւանդումով կամ գնումով: Գերդաստանները կը դառնան հակառակորդ, նոյն իսկ սերունդէ սերունդ:

Գերդաստաններն ունին հաւաքական պատասխանատուութիւն: Երբ անդամ մը տարբեր գերդաստանի մը անդամ սպաննէ, ամբողջ գերդաստանը պարտաւոր է վրէժ լուծելու ոճրագործին դէմ: Գերդաստանէն: Արեւելքը կը տեսնեն քրտնուէ սերունդ, գերդաստան գերդաստանի դէմ, գիւղակի գիւղակի դէմ: Դարեր ամբողջ մնացեր է նախնական սովորով, առանց ընկերային հարվոյթի, անհատական պատասխանատուութիւնը դոյութիւն չունի: Անկուրթիւնը կը շարունակուի, գերդաստանները կարող չեն համբարձուցիւն հաստատելու: ԽՈՐԷՆ ԳԱՅԻԿԵԱՆ

ՅՐԱՆՍԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ

Գ.

ՓՕԼ ՏԵՃԱՆԷԼ, (1920 Փետր. 17. — Սեպտ. 21. — Լրագրող: Ընտրուած 65 տարեկանին: Խորհրդարանը, կապուած խորհրդարան ըստած, որովհետեւ իր 360 երեսփոխաններու մեծ մասը նախկին ռուսներն են, երբ ամիս է ընտրուած է: Իր նախագահը (որ երբեք նախարար չէ եղած) Հանրապետութեան նախագահ կ'ընտրուի Քլէմանտոյի դէմ, որուն խիստ նկարագրի կը վախնէ երեսփոխանները:

Երկու սեռէ աշխատակողներուն համար կը հաստատուի օրական ութ ժամուան աշխատանքը: Հոսմի մէջ ժանտիքը կը սրբացուի: Նախարարաց Խորհուրդի նախկին նախագահ Ժօզէֆ Գայօ, իրբեւ դաւաճան երեք տարուան բանտարկութեան կը դատապարտուի: Տէշանէլ, զորս մտային խանդարումներու, դէպի Պրիստին պաշտօնական ճամբորդութեան մը ընթացքին չողկառնէ կ'իջնայ: Պաշտօնեայ մը զայն կը ճանչնայ. « որովհետեւ մաքուր ոտքեր ունէր »: Առողջական պատճառներով կը ստիպուի հրաժարի:

ԱԼԵԿՍԱՆԸՍՐ ՄԻԼՐԱՆ, (1920 - 1924). — Փաստաբան: Տէշանէլի օրով վարչապետ էր: Ազգերու դաշնակցութիւնը իր առաջին ժողովը կը դուրսբերէ: Յանրապետական կամարին տակ կը թաղուի անձանօթ զինուորը: Իտալիոյ մէջ, Մուսոլինի իշխանութիւնը ձեռք կը բերէ: Սահարկութիւն Ֆրանսայի տրուելիք վերահսակ հատուցման, Ֆրանսա կը պահանջէ 210 միլիար մարք, Գերմանիա կ'առաջարկէ քսան միլիար: Բանակը կը դրաւ Ռուրը: Խլրտուած Գերմանիոյ մէջ: ԱտոյՖ չիթէր Լուսէնտորֆ զորավարին հետ կը փորձէ Միւնիխի մէջ պետական հարուած մը, բայց չի յաջողիր: Ընտրութիւններ Ֆրանսայի մէջ: Չախակողմեան Խմբակցութիւնը կը յաղթէ եւ կը ստիպէ Միլրանին որ հրաժարի:

ԿԱՍԹՈՆ ՏՈՒՄԷԻԿ, (1924 - 1931). — Ատենակալ: Ընտրուած վաթսուն տարեկանին: Նախագահ Ֆերաիոյտի, Իր տեսական ժողովը զինքը պիտի դարձնէ ժողովրդական: Բայց յուսահատական կացութիւն մը կը ներկայացնէ պետական գանձը: Փուանքաբէ, վարչապետ, կը փրկէ Ֆրանքը՝ զայն արժեզրկելով: Մահ Ծօշի եւ Քլէմանտոյի: Ֆրանսա համաձայն կ'ըլլայ որ Գերմանիա մաս կաղմէ Ազգերու Դաշնակցութեան, Լոքարնոյի դաշինք: Ֆրանսական զօրքերը կը քաշուին Ռէնանիէն: Խորհ. Միութեան մէջ Լենին կը մեռնի եւ իրեն կը յաջորդէ Ժօզէֆ Սթալին: Լինտուէրի, միմիակ, օգնականով կը կտրէ Ատլանտեանը: Շարժապատկերը կը դառնայ խօստուն: Մոնուզ գերիրապաշտութեան:

ՓՕԼ ՏՈՒՄԷԻԿ, (1931 - 1932). — Դասախօս: Ընտրուած 74 տարեկանին: « Մարդ իր գործարաններուն կը հրամայէ, գիտէ՞ք հրամայել ձեր գործարաններուն », այս բառերով է որ նոր նախագահը, Ֆրանսա մենակաց, որուն չորս պատկերներ մեռած են Ֆրանսայի համար 1914 - 18ին, իր գործակիցներուն կը բացատրէ թէ ինչու առաւօտէն մինչեւ կէս գիշեր կ'աշխատէր: Գերմանիոյ մէջ էր թաղու աւելի կը բարձրանայ ԱտոյՖ չիթէրի աստղը: Սպանիոյ մէջ կը հաստատուի հանրապետութիւն: Մայրապետ Գոյն Արեւելքի մէջ ձափոն իր իշխանութեան կ'ենթարկէ Մանչեսթրին: Աշխարհի մէջ ամէն կողմ կը բարձրանան կատաղութեան աղիքներ: 1932 Մայիս 6ին, զալթիան ուս մը, Կորկուլոֆ, ատրճառակի հինգ հարուածներ կը կրակէ նախագահին վրայ, որ ծանր վիրաւոր, կը մեռնի յաջորդ օրն իսկ:

ԱԼՊԷՐ ԼԸՊԵՆՅԵՆ, (1932 - 1940). — Ճարտարագէտ: Ընտրուած վաթսուն տարեկանին եւ վերընտրուած 67ին: Գծուարին սկիզբ մը, Սթալինի դաշնակցութիւնը հետեւեցրով: Բախումներ Քոնքորտի հրապարակին վրայ (1934 Փետրուար 6): Մարտի մէջ կը սպաննուին Եւրոպայի Ազգայնորդ թաղաւորն ու նախարար Պարթու: Կազմութիւն ժողովրդական ճակատին (1936 Ապրիլ), ամբողջ Ֆրանսայի մէջ շարունակական գործադուլներ եւ քաղաքական տագնապներ: Իտալիա կը յարձակի Հապէշտանի վրայ: Սպանիոյ մէջ յեղափոխութիւն: Գերմանիոյ մէջ չիթէր, որ իշխանութիւնը ձեռք բերած է 1933ին, կը վերագրակէ Ռէնանին (1936), կը դրակ Աւրստրիան (1938), Չեխոսլովակիան (1939), եւ կը յարձակի Լեհաստանի վրայ: Պատերազմ քայքայում, գինադար. Մարտի 15-էն Փէթէն իշխանութեան գլուխ կուգայ (1940 Յուլիս 11): Զօրաւ Կոլ Լոնտոն կը հաստատուի: (Շար.)

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՄԲԵՐ

Լուս կիները, միշտ, շատ աւելի լուս են քան լուսագոյն այրերը:

ՆԱՓՈՒԷՄ

×

Իրական արժէքը խորունկ գետին պէտէ ուրբան որ խոր ըլլայ, ա՛յնքան աւելի քիչ ազդու կը հանէ:

ԼՈՐՏ ՀԱՔՍԼԵ

×

Ամօքը մոռցողը՝ նշմարութիւնն ալ կը մոռնայ

ՇԷՅՄՓԻՐ

ՌՈՒՍ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐԸ ՊԻՏԻ ԳՐԱԿԵՒՆ

ԱՆԱՏՈՒՆ

(Ինքնօր կը ԳՐԵՆ)

ԹՐԲԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ

Անոնք կը հետապնդեն նաեւ այն քաղաքականութիւնը որ կը ձգտի, Արեւմտեան պետութիւններու հետ որոշ համաձայնութիւններ գոյացնելու գնով, որ եւ է դրական կտոր ու չօգտփոխի երաշխիք տալ թուրքիոյ, ջանալ զայն միշտ ալ պահել տկար, չանկալուն ու նիւն վիճակի մը մէջ, որպէսզի ան չկարողանայ յարարել միւս խլամական երկրներէն: Բուսիա կը մտածէ նման առաւելութիւններ ձեռք ձգել արեւմտեաններու հետ համաձայնարար, թուրքիան զոհելու իսկ գնով:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՎ ԱՐԵՒՄՈՒՏԻՐԸ

ԹՇՆԱՄԻ ԸՆԵԼ ԹՈՒՐԻՔԵՐՈՒՆ

Ռուսերը, միւս կողմէ, կը դուրսանան զրգուել այն յոռի տրամադրութիւնները, որոնք հիմնաւորուած են արեւմտեան քրիստոնեայ աշխարհի մէջ հայկական հարցին պատճառաւ, թուրքիոյ եւ թուրքերու հանդէպ:

Համայնապարտութիւնը կատարուած իրողութիւն մը ներկայացնել յանկարծ թուրքիոյ մէջ եւ հոն բոլշեւիզմին հաստատումով, երկիրը մտանել այնպիսի կացութեան մը, որ անգոր ու անկարող ըլլայ անկախարար որեւէ ձեռնարկ կատարելու եւ անկաշկանգ քաղաքականութիւն մը հետապնդելու՝ թէ իրենց եւ թէ արեւմտեան միւս պետութեանց առջեւ:

« Ռուսերը կը մտածեն թուրքիոյ դեկաւարները հաշուեյարդարի ենթարկելով, երկրին ուժերը կապել Մոսկուայի եւ զանոնք դնել անոր տրամադրութեան ներքեւ:

Բոլշեւիզմը կը մտածեն, որ եթէ թուրքերը, Ատրպէյճանցիները եւ Հիւսիս-Կովկասի բնակիչները յարարելութիւն հաստատեն իրարու հետ, միասնաբար զօրաւոր ամբողջութիւն մը կը կազմեն եւ կարեւոր ուժ մը կը ներկայացնեն թէ բոլշեւիզմ Ռուսիոյ եւ թէ արեւմտեան պե-

տութիւններուն դիմաց:

Այս կացութեան առջեւ ալ, թուրքիա ինքզինք կը գտնէ առիթի մը ու պատեհութեան մը առջեւ, իրեն համար ամենանպաստաւոր պայմանները նկատի ունենալով, այս երկու կողմերէն մէկուն յարելու համար:

Իսկ թուրքիոյ շահերուն մեծամասնութիւնը կը կայանայ Արեւմուտքին մօտեւորուն մէջ, այսինքն՝ Եւրոպայի յարեւուն, եւ թուրքիոյ գործօն ուժերը կը գտնուին այս վերջնայն ազդեցութեան ներքեւ:

Ահա այս ծրագիրն է, զոր մշակած են ու կը հետապնդեն բոլշեւիզմները, որոնք իրենց որդեգրած այս քաղաքականութեան հիմամբ՝ իրենք զիրենք տէրն ու պաշտպանը ցոյց կուտան թուրքիոյ, որուն համար իրականութեան մէջ ոչ մէկ զրահութիւն կատարած են, ոչ մէկ շահի զոհումներ չեն ըրած:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԱՆԳԱՄ ՄԸ ԵՒՍ

ՇԱՀԱԳՈՐԾԵՑԻՆ

Եւ անոնք իրենց այս քարոզչութիւնը ամէն առիթի ալ շահագործած են՝ Անդրիոյ հետ բանակցելու ժամանակ, զայն օգտագործելով իրբեւ տեսակ մը փոխանակելի ազդանք: Եւ, առանց իսկ տաս-

նոց մը վճարած ըլլալու թուրքերուն, գանոնք խաղցուցած են անվերջ եւ անժամանակ ձգձգումներով: Ատրպէյճանը զրաւած են ամենայն դիւրութեամբ եւ զայն շահագործած: Թուրքիոյ այլ մահմադական ժողովուրդներուն հետ հարգութեամբ կը զրկուէր իրենց արդիւնքը, իրենք պէտէ ի վիճակի Հայկական Հարցը Հայրենի ի նպաստի կարենալ լուծելու, այդ պիտով թէ Հայկերու համակրանքը շահելու եւ թէ Արեւմտեան աշխարհը կարենալ սպաւորելու համար:

Այս ժամանակամիջոցին, Լեհական արշաւանքն ալ եթէ իրենց անկախ ձեռով վերջ գտնէ եւ կարողանան զօրաւոր հարկադրութեամբ մը Չրանիշեան ուժերը ներս ալ այսպէսով բառնալ մէջտեղէն, այն ատեն կրնան, առանց որեւէ յանձնառութեան կամ զիջումի, բանակցութեան նստիլ Արեւմտեան աշխարհին հետ եւ անկէ պահանջել ընդհանուր սակարկութիւն մը, թուրքիոյ եւ անոր աւերակներուն ու մնացորդին վրայ սակարկելու համար:

(16 Շար.)

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

75-ԱՄԵԱԿԸ

ԻՍԻԻ ՄԷՋ

—*—

Կիրակի, Նոյեմբեր 28ին, «Պրիման» ...

Սեղաններու շուրջ բոլորուած ներկա ...

Սեղանապետ Ընկ. Ծիրյանեան խօսքը ...

Բանխօսք իր խօսքը եզրակացուց ըսե- ...

Սերը երիտասարդ ընկերներէն Սերոբ ...

Մէջ ընդ մէջ եղան երգեր, խմբերգներ, ...

Ներկաները դժուարութեամբ բաժնուե- ...

ԹՂԱԿԻՅ

ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

ՀԱՄԱՍՏԵՂԻ Ծննդեան 70ամեակին ...

Նախածնունդի մտաւորականները մտ- ...

Համաստեղ, բուն անունով Համբար - ...

Առաջին Աշխարհամարտի նախօրեակին ...

Հրատարակած է եօթը հատորներ : ...

ՓԱՍՏՏԵՆԱՅԻ Սիթի դոկէճի նախագահ ...

ՈՒԱԹԸՐԹԱՌՆԻ մէջ մեռաւ Բիւզանդ ...

ՄՈՆԹԷՎԻՏԷՆՅԻ մէջ օծումը կատար- ...

Ներկայ եղած են նաեւ պետական բար- ...

ՀԱՅԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ՊԵԼՅԱՆՑ ԹԱԳՈՒՀԻՒՆ

—*—

Պելժիոյ Հայերը յատուկ պատուիրա - ...

Յուզարկատրոթեանն առաջ, պատ - ...

Նոյեմբեր 20ին Սերովբէ Արք. եւ Տա- ...

Պ. Պ. Մուրադեան եւ Մխիթարեան ...

ԱՆՋՐՊԵՏԻՆ ՄԷՋ...

1957 Հոկտեմբեր չորսին, աշխարհ ...

Անկէ ի վեր, արբանեակներու արձա - ...

Անշուշտ, ըսելու ձեւ մըն է ասիկա, ...

Պաշտօնապէս, մինչեւ հիմա, ղէպի ...

Սակայն, այնպէս կը թուի, թէ իրա - ...

Այդ արբանեակներէն ոմանք երկրի ձը - ...

Կան ուրիշներ ալ, որոնք երկրի շըր - ...

Մինչեւ հիմա, երկրի շուրջ կը դառ - ...

Մէջ հատը դանառական, մէկը՝ իտա - ...

Կարգ մը ուրիշ արուեստական արբան - ...

Անշուշտ, այս արուեստական գիտաւոր - ...

Արուեստական շատ մը արբանեակներ ...

Մինչեւ հիմա, երկրի շուրջ կը դառ - ...

Մինչեւ հիմա, երկրի շուրջ կը դառ - ...

Մինչեւ հիմա, երկրի շուրջ կը դառ - ...

Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն

ՉԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՀԱՅ ԿԱՏԱՐԱՐՈՒՄԸ ԵՐ - ...

ԵՐԵՒԱՆԻ մէջ ներկայացուցեալ Ար - ...

ԳՍՈՒՆԻ մէջ կատարուած պեղումնե - ...

Վերջապէս, եթէ հաշուենք 1959ին եւ ...

Սեպտեմբեր 28 արբանեակներ կան :

Կան ուրիշներ ալ, որոնք երկրի շըր - ...

Մինչեւ հիմա, երկրի շուրջ կը դառ - ...

Մէջ հատը դանառական, մէկը՝ իտա - ...

Կարգ մը ուրիշ արուեստական արբան - ...

Անշուշտ, այս արուեստական գիտաւոր - ...

Արուեստական շատ մը արբանեակներ ...

Մինչեւ հիմա, երկրի շուրջ կը դառ - ...

«ՅԱՌԱՋ» ԹԵՐԹՈՆԸ



Նախ քան Բէճէնթ Գաթ երթա- ...

ասարկուին խօսքն է որ կշիւքի պիտի դըր- ...

« Կը հեռանայ տունէն, կը վերադառ - ...

Ատեն ատեն ակնարկ մը կը նետէ իր ...

« Անկեանք իր առաջին մտածումը ե - ...

բաստանուիլ ուրիշ մէկը, քանի որ իր ա - ...

« Ժամագրութեան պահը կը հասնի : ...

Ուստի երկու արուեստագիտահիները ...

« Ժան Վիլքենսոն կը շնորհաւորէ իր ...

շատ յողմած : Կը փորձէ հեռանային լր - ...

« Այժմ գանք երրորդ հարցին . . . Գը - ...

« Իր դիմացը կը գտնուի երիտասարդ ...

ԱԿԱՌԱՋ ԳՐԻՍԻ

ՆՈՒԷՐ

Պ. Տիգրան Ներկեղեան (Լիոնէն) խմբադրատուն իր այցելութեան առթիւ կը նուիրէ «Յատաջ»-ի 50 Քր., «Հայ-Բոյժ»-ի հարիւր Քրանք :

ՆՈՒԷՐՆԵՐ

Այլրի Տիգրան Նշանուհի Աշեան եւ զաւակները իրենց ամուսնոյն եւ հօր երուանդ Աշեանի մահուան Բ. տարելիցին առթիւ փոխան հոգեհանգիստի 30 Քր. կը նուիրեն Փարիզի եկեղեցոյ զմբէթի նորոգութեան, հինգ Քր «Հայ-Բոյժ»-ին, հինգ Քր. Մշակոյթի Տան, տասը Քր. Հայկ. Հայոց ծերանոցին համար : (Ստանալ «Յատաջ»-էն) :

×

Պ. Ս. Պօղոսեան (Ամերիկայէն) 25 Քր. կը նուիրէ Կապ. Սաչին : (Ստանալ «Յատաջ»-էն) :

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Ֆ. Կապ. Սաչի Երջ. վարչութիւնը, Փարիզի մասնաճիւղի վարչութիւնը եւ բոլոր ընկերուհիները իրենց խոր վըշտակցութիւնը կը յայտնեն ընկերուհի Հ. Սոնդարեանին իր ամուսնոյն Արշաւ Խոնդկարեանի կազմալի մահուան առթիւ :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Շաբաթի եկեղեցոյ հազարաբճութիւնը շնորհակալութեամբ ստացած է, Տէր եւ Տիգրան Պետրոս Նորատեանէ (Վիսօֆէ) 30 Քրանք ցանկապատի ծախքերուն իրեն մասնակցութիւն՝ իրենց սիրեցեալ ջրով Տիգրան Սօզիկ Բօջեան - Նորատեանի մահուան քատասունքին առթիւ :

ՀԱՅ ԿԱՐՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

10 bis, Rue Thouin, PARIS

Այս Կիրակի, ժամը 10-30ին, Հայրապետական ձայնաւոր պատարագ ի ներկայութեան Սէն Լազարի Ասպետներուն : Պատի պատարագէ եւ քարոզչ ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿ. ԱՄԱՏՈՒՆԻ

ԹԷՅԱՍԵՂԱՆ

Ձրանասահայ Գրողներու Ընկերակցութիւնը, 1964ի «Աստուածատուր Հարեանց» գրական պարզեւատուութեան առթիւ, եւ ի պատիւ Ա. Սոփոկեանին, այս Կիրակի ժամը 14-30էն մինչեւ 18, կազմակերպած է թէյստեղան մը, Գ. Աճէմեանի ձայնարանին մէջ, 12 Բիւ Բատէ (Փարիզ) սեղանապետութեամբ Հր. Բալուեանի : Կը հրաւիրուին համակրները :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մուրատ - Ռաֆայէլեան Նախկին Աշակերտաց Միութեան ՊԱՐԱՀԱՆԴՍԸ ՓԵՏՐՈՒԱՐ ԳԻՆ

×

Սամուէլ Մուրատեան վարժարանի քատեղական ներկայացուցիչ ՄԱՐՏ 20ԻՆ

×

Դպրոցատէրի գեղարուեստական հանդէսը Մարտ 28ին, Կիրակի օր :

×

Հայ Արիներու Միութեան Փարիզի շրջանի տարեկան հանդէսը, Կիրակի Մարտ 6, կէսօրէ ետք ժամը 2-30, Սալտր լա Շիմի :

×

Վիէն. — Մանուկներուն օրը Յունուար 9ին, Սէրբը Կաթուղի սրահին մէջ : Կապույտ Սաչի Վիէնի մասնաճիւղի պարահանդէսը Դեկտեմբեր 18ին, Սալտէթի մէջ : Մանրամասնութիւնները յետագային :

×

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ Կ'ԵՐԳԵՆ ՄԱՐՏ 13ԻՆ ՍՈՐՊՈՆԻ ՄԵՐ ԱՄՓԻԹԱՏՐՈՆԻՆ ՄԷՋ

ԳԱՒԱՌԻ ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Գաւառի մեր բաժանորդներէն կը խնդրուի իրենց առկա հաշիւները կարգադրել ուղղակի թերթին վարչութեան հետ : «Յատաջ»-ի վարչութեան հաշուապահ-հաշիւները գերութեան համար ջնջուած են ՎԱԼԱՆՍԻ, ՎԻԷՆԻ եւ ՏԷՍԻՆԻ գործակալութիւնները : Մեր բաժանորդներէն կը խնդրենք իրենց վճարումները կատարել «Յատաջ»-ի ԵՒՔ - Փոստալի Թիւին. — 15069 - 82 Փարիզ

Շնորհակալութիւն

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ «ՅԱՌԱՋ»-Ի

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Դեկտ. 12, Կիրակի ժամը 21ին DANS ST. EUSTACHE ILLUMINÉE (12, Rue Dujour, Paris (1er) Métro : Halles

ՎԱՐԴԱՆԱՆՑ ԱՍՊԵՏՆԵՐՈՒ ԵՂՔԱՅՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Կը ներկայացնէ (համաշխարհային առաջին ունկնդրութիւն) :

DU PROFOND DE L'ABIME (Oratorio)

ԲՆԱԳԻՐ ԵՒ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

ԱՐՇԱՄ ՃԻԶՄԷՃԵԱՆ

Բարձր հովանաւորութեամբ բրդատարութեան նախարար՝ ՄԱՐԷԹԻ ԱՊՐԻԼԵԱՆ ՅԻՄՆԱՄԵԱԿԻ ՅԻՇԱՍԱԿԻՆ Կը մասնակցին Christiane Eda-Pierre (Soprano) de l'Opéra, Paul-Emile Deiber (récitant) sociétaire de la Comédie-Française, Raffi Ourgandjian (au grand orgue).

LES CHANTEURS DE ST. EUSTACHE (Président-Fondateur R. P. Emile Martin) ԳԵՅԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ

ԱՐՇԱՄ ՃԻԶՄԷՃԵԱՆԻ ՅԱՅՏԱԳԻՐ. — ԿՈՄԻՏԵԱՍ, ՀԱՅՐ ՄԱՐԹԷՆ, ՎԻՔՈՐՈՒՄ ՄՈՍԹԵ - ՎԵՐՏԻ, ՈՒՐԿԱՆՃԵԱՆ :

Տոմսերու գին՝ 5ԵԳ 25 Քրամֆ Դիմել՝ Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցի, 15 Բիւ Ժան Կուժօն, Սէն-Էստրաշ (Հայ), Տիրամ (4, Փլաս տր լա Մատրլէն), Բալուեան գրատուն, (43 Բիւ Ռիշէ) :

ԿՈՉ ԲԱՐԵՊԱՇՏ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Ալֆրեդիլի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյ Հոգարարութիւնը կը ծանուցանէ տեղւոյ հասարակութեան թէ՛ եկեղեցւոյ տանիքին նորոգութիւնը, երկտրական թեւերուն զետեղումն ու կանոնաւորումը, մեծ ջանքերու մարքութիւնը աւարտած ըլլալով՝ ձեռնարկած է եկեղեցւոյ ներքին մասը ամբողջութեամբ կրածեփելու եւ իւզաներկելու գործին, որմէ յետոյ՝ պիտի զբաղի խորանին յարմարագոյն ձև մը տալու գործով :

Այս Սուրբ Հաստատութեան ներքին ու արտաքին յարգարանքը աւարտելու մը տահոյութեամբ՝ Ալֆրեդիլի Հոգարար-ձուլիւնը տեղագոյն աշխատանքի լծուած է : Ուստի՝ վստահ ըլլալով զազոյթիս առաքինութեան եւ եկեղեցոյ հանդէսը բարի տրամադրութեան, Հոգարարութիւնս պիտի համարձակի գիմելու բարեպաշտ ազգայիններուն, որպէսզի բարեհաճին իրենց նուիրատուութիւններով մասնակից հանդիսանալ սկսուած այս մեծ աշխատանքին :

Եկեղեցւոյս նմանակալ Մարմինը սիրով եւ շնորհակալութեամբ պիտի ընդունի բոլորին ալ զոչնորթութեան բարեհաճ փափաքը եւ պարտքը կը համարի յետագային հայ հասարակութեան ցոյց տալու վերադրելու գործողութեանց հաշուառուութիւնը իր մանրամասնութիւններով :

ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ

Ալֆրեդիլի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյ

IMPRIMERIE SPÉCIALE DU JOURNAL « HARATCH » 32, Rue de Trévisse, PARIS (9^e)

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

ԿԻՐԱԿԻ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 19ԻՆ

Ժամը 16ին :

ՏՕՆԱԾԱՌ

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐՃԱՐԱՆ

ՏՕՆԱԾԱՌԻ հանդէսը Դեկտեմբեր 19-ին, Կիրակի կէսօրէ ետք ժամը 4ին վարժարանին մէջ :

ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼՄԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Հովանաւորութեամբ Ազգային Միութեան, նախաձեռնութեամբ Հայ Կրթ. մարմնոյ :

Ի նպատակ «Հայկազեան» վարժարանի Կրթական գործին :

Այս երկուշաբթի ժամը 20-30ին, Սիւե Արքի մէջ, 257 Բիւ Պուալո (Եկեղեցւոյ մօտ), Բիւ Փօլ Պէրի անկիւնը :

Պիտի ցուցադրուին ԼԵՈՆԱՅԻՆ ԼԻՃԻ ԳԱՂՏԻԻԲԸ եւ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ Գունաւոր եւ հայախօս ժապաւէններ :

Ճ Ա Շ

Սերասիոյ Նահանգային Մուրատ Ուսումնասիրացի կեդր. վարչութիւնը կը հրաւիրէ Իսիլ եւ շրջանի բոլոր Հայերը անխափ իր տանեւէն դաժնակի առթիւ կազմակերպած ճաշասեղանին :

Այս Կիրակի ժամը 5ին Իսիլ Սրբեանի զպրօցի սրահին մէջ :

Նախազանութեամբ ԲԺ. Ա. ՊՕՂՈՍԵԱՆԻ

Գեղարուեստական ճոխ բաժին, Երզրատասնութիւն, նուազ եւ շատ մը անակնկալներ, մասնաւորապէս սիրայօժար իրենց մասնակցութիւնը պիտի բերեն հայրենակիցներ, Միքիման Շիրվանեան, Շաւուռ Պալեան, իրենց նուազով եւ Երկու քոյրեր Թադէւսեան :

Ճաշագին 10 Քրանք անձ զուլիս :

ՊԱՇՏՕՆԵԱՑ Կ'ՈՒՂՈՒԻ

Ալքատախնամ ընկերակցութիւնը իր Հանդատեան Տուններուն համար կը փնտրուէ. — Ա) Տնօրէն, օժտուած վարչական կարողութիւններով եւ տեղեակ հաշուակալութեան :

Բ) Հիւանդապահուհիներ, վկայեալ Փարիզին կամ այլուր :

Գ) Կառավար (20ֆէօր) :

Թեկնածութիւնները ներկայացնել զըբաւոր Ալքատախնամի գրասենեակը՝ Association Arménienne d'Aide Sociale 32, Rue de Trévisse, Paris (9^e)

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ԼԻՈՆ. — «Մանուկներու Օրը» Յունուար 16ին Ազգային Տան սրահը :

×

Մանուկներու Օրը կը սօսուի Տէսինի մէջ Յունուար 9ին Շարաթ Երկկոյան, Հ. Յ. Գ. Տան մէջ :

×

Ս. Սաչ Ընկերակցութեան տարեկան պարահանդէսը Փետրուար 27ին :

×

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆ (Փարիզահայ Տիգրանի Միութիւն) ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԿՈՅԹ ՊԱՐԱ. — ՀԱՆԴԵՍԸ 23 Յունուար, Ամպաստաճօրի սրահին մէջ :

ԸՆԹԱՅԻԿ ԱԶԴԵՐՈՒ ՍԱԿԱԳԻՆ

ՄԷԿ ԱՆԳԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԴ	45 Ֆ.	միջիւ 1/4 սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	25 Ֆ.	միջիւ 1/8 սիւնակ
ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ	10 Ֆ.	» » »
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	20 Ֆ.	» » »
ՀԱՐՍԱՆԻԲ. ՆՇԱՆՏՈՒԲ	25 Ֆ.	» » »
ԾՆՈՒՆԻ	25 Ֆ.	» » »
«ՓՈՒՍԱՆ ԾԱՂԿԵՊԱՍԿԻ»	10 Ֆ.	» » »
«ԿԸ ՓՆՏՈՒԹԻ»	10 Ֆ.	» » »
ԾԱՆՈՒԷ	25 Ֆ.	» » »

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ ձեռնարկուած ծաւալով ազգերու համար են, չարքոյ էջը :

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է :

Առևտրական կամ այլ ազգերու մասնաւոր պայմաններուն համար գիմել վարչութեամբ :

Հ. Յ. Գ.

ՓԱՐԻՋ. — Հ. Յ. Գ. Փոթորիկ խումբի ընկերական ժողովը այս Չորեքշաբթի, ժամը 20-30ին Մշակոյթի Տան մէջ :

ՓԱՐԻՋ. — Հ. Յ. Գ. «Րաֆֆի» խումբի ընկերական ժողովը այս Ուրբաթ, ժամը 20ին, Մշակոյթի Տան մէջ : Պարտաւորել ներկայութիւն : Որտա կարեւոր օրակարգ :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՏէՍԻՆ. — Կապ. Սաչի մասնաճիւղի ժողովը այս Ուրբաթ, ժամը 21ին Հ. Յ. Գ. Տան մէջ :

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Է

Համախարքերը գլխաւոր Միութեան Յըբանայի շրջանի 1966ի օրացոյցը : Գին 2-50 Քրանք, դիմել մասնաճիւղերու վարչութեանց :

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԳՈՅԱՄԱՐՏ ՕՐԱՑՈՅՑ 1966

Հրատարակութիւն Հ. Յ. Գ. Նոր Սերունդի Մարտիլի շրջանի :

Ազգայրանքներու համար դիմել՝ O. DJARAYAN 2, Place de la Corderie 13 MARSEILLE (7e)

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍԵԼ

ՄԱՏԵՆԱՇԱՐ ՆԱՐԿԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

Թիւ 1

ԼՈՒՍԱՄԱՏԵԱՆ

(ՀԷՔԵԱԹ ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹԻՒՆ)

Շ. ՆԱՐԿՈՒՆԻ

Ազգայրանքներու համար դիմել հեղինակին ՑԱՌԱՋԻ խմբադրութեան հասցեով : Գինը 10 Քրանք, փոստով՝ 12 Քրանք : Գումարները զրկել միայն մանտա - ֆառքով :

Travaux de Peinture et de Décoration de tous Styles

ԲԱԲԳԷՆ ՊՈՏՈՍԵԱՆ

22, Rue Stendhal, PARIS (20^e) MEN. 64-88

Մաքուր աշխատանք, ընտիր ապրանքներով :

ՉՄԵՆԱՅԻՆ ԳԻՐԱՄԱՍՏԵԼԻ ԳԻՆԵՐ

ՅԱՐԱՏԻ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN
RÉDACTION - ADMINISTRATION : 32, RUE DE TRÉVISE - PARIS (9^e)

Fondé en 1925 T.él. : PROvence 86-60
R. C. Seine 57 A 2731 C.C.P. Paris 15069-82

ՔԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա՝ Տար. 60 ֆ. Վեցամսեայ՝ 35 ֆ.
Արտասահման՝ Տար. 80 ֆ. Հատը 0,30 ֆ.

Հինգշաբթի

9

ԴԵՎՏԵՄԲԵՐ

JEUDI

9 DECEMBRE

1965

LE NUMÉRO : 0,30 FR.

Օ Ր Ա Թ Ե Ր Թ

Հիմնադիր՝ ՇԱԽԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ

ՀԱՐՉ. ՏԱՐԻ — ԹԻՒ 10480

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

41e ANNÉE — N° 10.480

ՕՐՈՒԱՆ ԽՕՍԻՔԸ

ԿԻՆ ՄԸ

ԵՒ ԻՐ ՎԱՍՏԱԿԸ

(ՏԻՐՈՒՀԻ ՄԻՍԱԿԵԱՆԻ ՅԻՇՆԱՍԱԿԻՆ)

Դու դեռ չես մեռել իմ հիւանդ սրտում .

Դու դեռ ապրում ես երազի նման :
Վ. ՏԷՐԵԱՆ

Օրերն ու ժամերը, որ կ'անցնին սուս — կում պատճառող արագութեամբ, կը ջանան հեռացնել մահերը : Կը մնան սա — կան բացակայութիւնները :

Սովորական խօսք մը պիտի ըլլար այլ — կա կրկնել թէ արդէն տարի մը ետեւ, որ Տիրուհի Միսաքեան, երկար ամիս — ներու տառապանքէ մը ետք, առ յաւիտ կը բաժնուէր աշխարհէն :

Տարի մը : Իր բացակայութիւնը սակայն սկսած էր մահէն առաջ, տարիներ առաջ՝ երբ կը կորսնցնէր յաւազոյնի եւ վառարան — զոյնի իր ընկերը՝ անզուգական Շաւարշ Միսաքեանը :

Տիրուհի Միսաքեան, քայքայուած աս — սողնութեամբ չկրցաւ հաշտուիլ այս մահուան հետ : Չփորձեց քաջ ըլլալ, ընդհակառակն կրաւորական դարձաւ այս կինը, որ իր յաւազոյն տարիները նուիրած էր հանրային կեանքի :

Կայսերան վարժարանի իր աշակերտու — իններէն մինչեւ Կապոյտ Սաչի իր ընկե — բուհները ծանօթ էին իր նկարագրին : Կը սիրէր ճշմարտութիւններ ըսել չունե — նալով երբեք «մարդու հետ դէշ մարդ ըլլալու» վատ սովորութիւնը, որ յաճախ աւերներ կը գործէ հանրային կեանքի մէջ : Այս ուղիղ նկարագիրը պատճառ էր, որ գնահատուէր շատերէ, չսիրուէր քի — չերէ, բայց յարգանք պարտադրէր բո — յորին :

Ճաշակելէ ետք արքայի դստն բաժա — կը, բախտն ունեցած էր մանկու « ճա — կատամարտ », ուր պիտի ծանօթանար եւ լիտուալիան ամուսնանար մեր խմբադաս — պետին հետ : Ապրած է միշտ անոր շու — բին ներքեւ, չըլլալով երբեք մտաւորա — կան պաշար ունեցող այն կիններէն, որ կը սիրեն իշխել : Իր կարեւորութեանց սահ — մանին մէջ, փորձած է միայն օգտակար ըլլալ Անոր, որ աւելի քան ամուսին մը, կարծէր Տիրուհի Միսաքեանին համար, չգոր ու պայծառ նկարագրի տէր Հայ մը, որով ինք ալ պիտի սորվէր օգտակար ըլ — լալ ցիրուցան ժողովուրդի մը : Այս օրի — նակով է, որ ան մտաւ, առաջին օրերէն իսկ, Կապոյտ Սաչի մէջ, ուր տասնեակ տարիներ պիտի տանէր աշխատանք մը, որ վեր է ամէն գնահատանքէ :

Մեծ է այն բաժինը զոր ունեցաւ « Մա — նուկներու Օրուան » եւ Կապոյտ Սաչի օգտափոխութեան կայանի նախաձեռնու — թեան ու կազմակերպութեան մէջ : Լուսա — ղոյն ձեւով ներկայացուցած է այն կազ — մակերպութիւնը, որու կը պատկանէր, որով մեծ — միութեանական կամ այլ ընկերու — թեանց ժողովներու մէջ : Ունենալով հանդերձ ուժեղ անհատականութիւն մը, կարծէր միշտ հաւաքական աշխատանքի նախընտրելի մը :

Շաւարշ Միսաքեանի թերազրութեամբ էր նաեւ որ Բ. Աշխարհամարտէն ետք, սկսաւ Սոսի ծածկանունով ստորագրել « Օրը Օրին » ներ « Յատույն » մէջ : Սմբա — ղապակերտ մահէն ետք, այս անդամ — ղան ծածկանունով, զրեց քանի մը հատ ալ, բայց արամազրութիւն չունէր շա — րուանակերու եւ կամովին ոչ մէկ ճիշտ — փեց յարթահարկու համար այն անհուն տիրութեան որ ծնած էր իր մէջ, Յուն —



ՏԻՐՈՒՀԻ ՄԻՍԱԿԵԱՆ

(1891 ՕԳՈՍՏ. 25 — 1964 ԳԵՍՏ. 9)

Որու յիշատակին հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի այս կիրակի առա — լուս Փարիզի Ս. Յովի. Մկրտիչ եկեղե — ցին :

Տիրուհի Միսաքեանի տաքելիցին առ —

ՇԱԽԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ ՄՐՅԱՆԱԿ

Այնճարի (Լիբանան) Ազգ. բարձրա — գոյն վարժարանը, որ Յառաջ անունը կը

ուարի ցուրտ առաւուս մը :

Իր բացակայութիւնը արդէն զգալի դարձաւ, մահէն տարի մը առաջ երբ ար — կած մը զինքը պիտի գամէր անկողնին : Աւելի կը տառապէր երբ լրիւ գիտակցու — թիւնն ունէր իր վիճակին, վասնզի մեծ է տառապանքը անոր որ կը տեսնէ կեանքին հեռացումը, օրէ օր, ժամէ ժամ : Անտա — նելի կեանքի մը կը վերածէ մահ : Մեծ ողբերգութիւն է սպրիլ իր մահը եւ այդ ողբերգութիւնն ունեցաւ Տիրուհի Մի — սաքեան :

Դեկտեմբերեան ցուրտ իրիկուն մը ըն — տրեց վերջնապէս բացակայելու համար, Ինչպէս ապրած էր այնպէս մեռաւ, ա — ռանց ազմուկի, առանց նեղելու, համա — ռանց ազմուկի, առանց նեղելու, համա — ռայ, մարեցաւ կամայ կամայ ինչպէս մտք մը, կը սպառուի, ամէն օր, ամէն ժամ : Եւ սակայն

« Դու դեռ չես մեռել ... » :

ՅԱՌԱՋ

ՕՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ՄԹՆՈՒՆՈՐՏԸ ԼԱՐՈՒԱԾ Է

ՄՈՍԿՈՒԱ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱԽԻՔԵՐԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՅՆԷ

Մոսկուայէն հասած վերջին տեղեկու — թիւները ցոյց կուտան թէ միջազգային միջուկը լարուած է եւ պազ պատե — ըրածը կը սաստկանայ :

Նիւ Եորք Թայմզի թղթակցին իր տը — ւած տեսակցութեան մէջ, վարչապետ Կոսիգին այն տպւորութիւնը կը թողու որ յարաբերութիւնները շատ մեղմ չեն երկու հսկաներուն միջեւ :

Յատկանշական կարգ մը յայտարար — ութեանց կարգին, Կոսիգին յայտարար — րած է. — Կարելի չէ խորհիլ թէ Միաց — եայ Նահանգներն ու Սոր — Միութիւնը ի — բնեց կամքը պարտադրեն միւս ազգե — բուն : Ատիկա Փաշչեփ կ'ըլլայ : Եթէ եր — կար հեռանկարի մը առջեւ գտնուինք, կենսական տեսակէտն է մեր ուժերը հա — մազրել ընդդիմանալու համար պատե — ըրածին : Ներկայիս հարցը խաղաղու — թիւն հաստատել է : Այս միջոցին Միաց — եայ Նահանգները դէմ են ասոր : Եւրո — պայի մէջ կը փորձեն միջուկը լարել :

Կոսիգին կը յայտնէ նաեւ թէ ցորձափ վիճիթեամբ պատերազմը տիրէ, ձոնսընի հետ հանդիպում մը կարելի չէ նկատի իսկ առնել :

Միւս կողմէ Մոսկուա 1966ի համար հարիւրին հինգ յաւելում մը կ'ընէ իր զինուորական ծախքերուն վրայ : Ասոնք պիտի հասնին 13,4 միլիարդ ամերիկի : Այս որոշումը կը տրուի տրուած ըլլալով որ վերջին ամիսներուն «աշխարհակալ պետութիւնները անող գործունէութիւն մը ցոյց կուտան եւ յարատեւօրէն պա — տերազմի նոր օճախներ կը ստեղծեն » :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Վիժիթիսի պատերազմը օրէ օր կը սաստկանայ : Կոսիգինը կը մօտենան Սաչինին :

ԱՎՃԻԻ Է՛լ Մուսախիտ թերթը կը քնն — նադատէ երկրին մէջ օրէ օր զարգացող բարքերու վատթարացումը : Կը շեշտէ թէ արեւմուտքէն միայն խեղ ու տար — փայլին զղայնութիւն մը ստրված են փո — խանակ իւրացնելու միտքը եւ մեծ հեռա — նկարներ :

ՊԱՊԸ եւ Պոլսոյ տեղեկրական պատ — ըրարը միացեալ յայտարարութիւն մը բերին որով վերջնապէս կը ջնջեն բանադ — րանքը զոր երկու եկեղեցիները հռչակած էին մէկը միւսին դէմ 1054ին : Մեծ քայլ մը կը նկատուի դէպի քրիստոնեաներու միութիւնը :

ՏԻՐԱՆՍԻՒ Սահմանադրական Սոր — հուրին նախագահը՝ Կասթոն Փալեփսի յայտարարեց Գեկու. 5ի քուէարկութեան վերջնական արգիւնքները : Մարտէլ Պար — պիւ ստացած է ձայներու 1,15 առ հա — բիւր, Շառլ ար Կոլ՝ 44,63, Ժան Լըքա — նիւ՝ 15,56, Փիէր Մարսիլասի՝ 1,71, Ֆրանսուա Միթրան 31,71 եւ Թիբիլէ — վիլեանքու 5,19 : Տը Կոլ Չարեքչարթի նախարարաց Սորհուրդին կը յայտնէր թէ թեկնածու կը մնայ : Կը նախատես — ուի թէ ձայներու 60 առ հարիւր ստա — նայ եւ Միթրան՝ 40 առ հարիւր : Ի՞նչ է՞ն պիտի տանի տը Կոլի ընտրապայքա — րը, բայց կ'ըսուի թէ այս ուղղութեամբ, որ Կոլ կար մը թեկադութիւնները բրած է : Չուրիք որ Միթրանը ներկայացուի իրրեւ ժողովրդական ձախառի մը թեկ — նածուն, այդ պարագային ինք կ'ըլլայ ա — ջին թեկնածուն : Փոնիխուէն սկսեալ, բոլոր նախարարները սկսած են քարոզ — շական հաւաքոյթիներ կազմակերպել :

ՏԻՐՈՒՀԻՆ ՏԷՕՐԹ-ԵՈՂԻ ՄԷՉ

(ՄԱՀՈՒԱՆ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻԻ)

Տարի մը առաջ այս օրերուն, Փարիսի մէջ հողին յանձնուեցաւ Տիւրի Տիւրուհի Ազարեան - Միսաքեան, կեանքի եւ աշխատանքի անխոնջ գործակիցը Հայոց մեծ խմբադրացեալ Շաւարշ Միսաքեանի :

Օրին դրուեցաւ այս անդուական Հայուհի ունեցած հանրային բեղուն գործունէութեան շուրջ Պոլսոյ թէ Փրանսայի մէջ, բայց ոչ ոք անդրադարձաւ անոր միամեայ ուսուցչական կեանքին, որ 1914ին ունեցաւ Կիլիկիոյ ամէնէն հայաշատ քաղաքին՝ Տէօրթ - Եոլի մէջ :

Հին ժամանակներէ ի վեր Տէօրթ Եոլի մասնաւոր հողածուծիւն ցոյց տուած է իր դպրոցներուն հանդէպ : Ենթոյն իր պատարճարական դիրքին եւ անխառն բնակչութեան (Տէօրթ Եոլի զուտ հայաբնակ քաղաք մըն էր եւ 1914ին ունէր աւելի քան քսան հազար բնակչութիւն) ունեցած է ազգային բարձրագոյն վարժարաններ եւ ստուարաթիւ ուսանողութիւն : Օսմանեան բռնապետութեան ամենադաժան օրերուն իսկ Տէօրթ Եոլի դպրոցներուն մէջ ազատօրէն դասուանդուած է հայերէն լեզուն եւ Հայոց պատմութիւնը :

Մասնաւորաբար վերջին շրջանին, Սահմանադրութենէն ետք, բացառիկ հողածուծեան արժանացան Տէօրթ Եոլի վերի եւ վարի թաղերու երկու կեղրոնական վարժարանները եւ օժտուեցան պատրաստուած տեսուչներով եւ ուսուցչներով : Յիշատակութեան արժանի են երկու դպրոցական դաստիարակներ՝ Արմենակ Մազուտեան եւ Պաշիկ Քարուկեան, որոնք իրենց երկարամեայ ուսուցչութեան ընթացքին պատրաստեցին դպրոցական երիտասարդութիւն մը :

1910էն վերջ, իրական սեռի դաստիարակութեան գործին ալ կարեւորութիւն տրուեցաւ : Արտասահմանէն կարող եւ նուիրուած ուսուցչուհիներ բերուեցան : Օր. Տալիթա Մաղճեանի տեսչութեան շրջանին սկսաւ վերելքը : Տէօրթ Եոլի ազգային իշխանութիւնը աղջկանց դաստիարակութիւնը աւելի արդիականացնելու մտահոգութեամբ, պաշտօն տուաւ երկու ծանօթ ազգայիններու, որպէսզի Պոլիս երթան եւ Պատրիարքարանի օժանդակութեամբ ապահովեն կարող ուսուցչուհիներ : Ենթոյն ալ կարգադրուեցան, 1914ին Տէօրթ Եոլի հասան երկու ծանօթ ուսուցչուհիներ՝ Տիւրուհի Ազարեան

եան եւ Չարուհի Փէլոսիմայճեան, երկուքն ալ շրջանաւարտ էստան վարժարանէն :

Արտակարգ խանդավառութիւն կար Տէօրթ Եոլի մէջ : Ծնողքներ թէ աշակերտուհիներ ցնծութեան մէջ էին : Նոր դարձակէտի մը առջեւ էր իրական սեռի դաստիարակութեան գործը : Առաջին օրէն իսկ կրկնապատկուած էր աշակերտուհիներու թիւը : Հին վարժարանի դասարանները անբաւարար էին : Հարկ կ'ըլլար նոր շէնք մը վարձել եւ վարժարանի վերածել : Առաջին անգամ ըլլալով արդիական մեթոտներ կը կիրարկուէին, դպրոցական հանդէսները արտակարգ փայլ կը ստանային եւ հաւատքն ու համակրանքը, օրէ օր կը շատնար Տիւրուհի եւ Չարուհիի հանդէպ : Կը պատրաստուէին ազգային արժանապատուութեան դիտակից հաւատարմը Հայուհիներ :

Տիւրուհի ու Չարուհի իր գորաւոր անհատականութեան եւ անվերապահ նուիրումին ողին դարձած էր վարժարանին, արժանացաւ բոլորի վստահութեան եւ սիրուեցաւ բոլորէն : Աշակերտուհիներ թէ ծնողքներ, հողարձուծութեան անդամներ թէ երեւելիներ շուտով համակրանքով սկսան արտայայտուիլ այդ երիտասարդ, բարձրահասակ, գործունեայ ուսուցչուհի մասին, որ նոր ողի, նոր խանդ ստեղծած ամենուրեք :

Մարտը եւ հաղորդական նկարագիր ունէր Տիւրուհի : Տէօրթ Եոլի ընտանիքներ հարգատար աղջկան պէս կը հիւրասիրէին զինք եւ մասնակից կը դարձնէին իրենց ուրախութիւններուն :

Դժբախտաբար կարճատեւ եղաւ Տիւրուհիի պաշտօնավարութեան շրջանը Տէօրթ Եոլի մէջ : Համաշխարհային պատերազմը տակն ու վրայ բրաւ ամէն յոյս եւ ամէն ծրագիր եւ Տիւրուհի ալ երթար կուեցաւ իր ցեղի ճակատագրին :

Այդ կարճատեւ առաքելութիւնն իսկ կարեւոր եւ փրկարար դեր մը ունեցաւ : Տիւրուհիի աշակերտուհիները ոչ միայն լաւ մայրեր եւ հաւատարմը Հայուհիներ եղան, այլեւ հանրային կեանքի մէջ ալ օգտակար դարձան, յետագային նուիրուելով Կարմիր Պաշի աշխատանքներուն, կամ ղեկավար դերերը դրուելով այդ մարզապիտան մեծ կազմակերպութեան մէջ :

Չինադադարին Տէօրթ Եոլի ինքնապաշտպանութեան կոչուները ընթացքին, Տիւրուհիի աշակերտուհիներէն շատեր, ռազմածակարտի ետին գիւղութեան քոյրերու շարքերը խտացուցին եւ իրենց վերաբերու եղբայրներուն վերջերը կայեցին :

Վերապրեալ Տէօրթ Եոլիները, մանաւանդ իր աշակերտուհիները, մինչեւ այսօր երախտագիտութեամբ կը յիշեն Տիւրուհի անունը :

ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ

Բ.

Գերդաստանին ծախքերը հաւաքական են, նահապետ կ'առնէ տղուն վաստակը : Երիտասարդը կ'ուզէ պահել շահածը : Չի փափարի աշխատիլ, աւելցնել շահը, մանաւանդ երբ ինք դաւակ չունի, եղբայրը շատ տղայ ունի : Անդամները նոյն բնորոշութիւնը չունին, նոյն աշխատութիւնը չեն կրնար արտադրել, բայց իւրաքանչիւրը կը սպասէ հաւաքականութենէն իր ապրուստը, աւելի լաւն կեանքի մը վայելքը :

Հաւաքական կեանքի վարժուած, հաւաքական, ընկերային կեանք կը փնտռէ երիտասարդը : Ընկերութեան մէջ կ'ուզէ երեւնալ, չի հանդուրժեր ուրիշին առաւելութեան, նախանձը, իրմէ վեր արժէք մը չտեսնելու տկարութիւնը կ'արդիւնէ ուրիշները գնահատելու, արժանիքներ ճանչնալու կարողութիւնը : Որեւէ կազմաւորուածութեան մէջ չի կրնար ճանչնալ չեղինակութիւն, հակառակ որ երթալից էր նահապետին իշխանութեան, երբեմն մեղմ, երբեմն բիրտ :

Նահապետական դաստիարակութեան հետեւանքները պիտի մնան ընկերութեան մէջ :

Նահապետական ընտանիքէն դուրս ձրգուած անհատները կը մտնեն վանք, ուր կարճալ հաւաքական կեանք կայ, վանական սեփականութիւն չունի, ինչպէս ընտանիքին մէջ, առաւելութեան ունի բարեպաշտներու նուէրներն ստանալու : Կ'աւելնայ վանքերու թիւը, կը բազմանան վանականները, նահապետական գերդաստանները պիտի հողան վանականներու պէտքերը : Վանքերը կը հարստանան, վանականները կը ծուլանան, արտադրող տարրը կը նուազի : Գաղթող յանդուգն անձեր, վանքերու մէջ առանձնացած վանականներ, կը դադրին սերընդագործելէ, կը նպաստեն ժողովուրդին երկու խաւերուն նուազումին :

Գիւտ Կաթողիկոսի շինել տուած Գիւտ վանքը ընդարձակ հողեր ունէր, հազար արջառ, 12 հազար ոչխար, 700 ուզառ, չորս հարիւր էջ, 170 աղբկործներ կը մշակէին աղիները, կը խնամէին պղտ գատու ծառերը : (Օրբիլեան, էջ 85-86) : Տաթևի հոշակարար վանքը 260 գիւղերէն կը պահէր տարեկան 120 հազար Փրանք եւ աւելի հարկ : (Արիւն, Սիսական, էջ 242-43) :

Հայաստանի 620 դաւաններու մէջ թեմակալներէ դատ կային քորպիսկոպոսներ, հոծ թիւով քահանաներ, բազմաթիւ եկեղեցիներ եւ վանքեր ընդարձակ կալուածներով : Երբեմն Լոստանի մէջ Անկիւքան Եկեղեցիի պետին կ'ըսէր. « Հայաստանի վանքերուն կալուածներուն տարածութիւնը հաւասար է Անկիւքան տարածութեան » :

ՌՈՒՍ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐԸ ՊԵՏԻ ԳՐԱԽԷԻՆ ԱՆԱՏՈՂՈՒՆ

(ԻՆՁԵՐ ԿԸ ԳՐԵՆ
ԹՐԳԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ)

ՌՈՒՍԵՐԸ ԿՈՒՉԵՆ ՀԱՅԵՐՈՒՆ

Բոլշևիկները, իրենց այս ծրագրին գործադրութեան համար, թէեւ յաջողած էին առաւել կամ նուազ չափով մեզ իրենցմէ կախեալ դարձնել, բայց տակաւին կացութիւնը չէ հասած այնպիսի վիճակի մը, որ մեր երկիրը օդապարծելի դառնայ Ռուսերուն համար :

պարագաներուն, Թուրքիան համայնապարացնելու կոչուած կազմակերպութիւնն ալ պատրաստ ըլլալով հանդերձ, տակաւին չէին կրցած մեր երկիրը ձեռք անցընել, բոլշևիկեան յեղաշրջումի մը շնորհիւ :

Ընդհակառակն, լեհական յարձակողականի մասին հասած լուրերը մտահոգիչ սկսած էին դառնալ իրենց համար, իսկ Վրանկէլեան յարձակումին անդադարձները Մահմետականութեան օտո ժխտական ազդեցութիւն մը պիտի գործէին անկասկած եւ այս բոլորը անշուշտ նոր դործուն մը եւ աղբակ մը պիտի հանդիսանային, նոր վիճակներու եւ պայմաններու ստեղծման մէջ :

Վրանկէլեան ուժերը ցամաքահաստ կատարած էին Անափայի շրջանին մէջ : Ասանք ծանօթ էին յատկապէս իրենց թըշնամութեամբ Գուպանի Ազգայիններուն եւ բոլշևիկներուն, իսկ ընդհակառակն, շատ սիրալիք յարաբերութիւններ ունէին Հիւսիսային Կովկասի Մահմետական ժողովուրդներուն հետ, որոնք խարուած էին Գիւնիկիին եւ Բոլշևիկներուն կողմէ :

Եթէ Վրանկէլեան բանակին յատկապէս շարունակուէր եւ դրաւուէր Կովկասի երկաթուղին անոնց կողմէ, պիտի ստեղծուէր շատ վտանգաւոր ու ճակատակարար կացութիւն մը, քանի որ նախ Մոսկուայի շրջանը պիտի գրկուէր այնքան թանկագին Պարուի քարիւղէն, որ

կենսական կարեւորութիւն մը կը ներկայացնէր Բոլշևիկներուն համար, իսկ միւս կողմէ կարելիութիւնը պիտի ստեղծուէր Մահմետականներուն գործակցութեանը Վրանկէլի հետ, ինչ որ տակնուվրայ պիտի ընէր ու հիմնովին քանդէր նոր Ռուսիոյ քաղաքականութեան յատկապէս այն մասը, որ կը վերաբերէր ասիական շրջանին :

Արդէն, Ասիոյ Մահմետական ժողովուրդներն ալ այժմ չունէին այն հակումներն ու համակրանքը համայնապարտութեան հանդէպ, ինչ որ ունէին տակաւին տարի մը առաջ, քանի որ վերջին ամիսներու ընթացքին պատահած միջազգայնըն ու կատարուած զեղծումները խրաչեցուցեր էին զանոնք եւ մեծ վնասներու ալ ենթարկած ըլլալով, շատ դժուար կարելի էր գանտքը այլևս առարկայ դարձնել հակարուշևիկեան գրգռութեանց եւ օգտուիլ այս սարքերէն, այս ուղղութեամբ :

ԴԻՄԱԳՐԵԼ ԱՐԵՒԵԼՔԷՆ ԳԱԼԻԲ

Բոլոր այս հաւանականութիւնները աչքի առջեւ ունենալով, Բոլշևիկները Թուրքիոյ մէջ համայնապարական յեղաշրջումի մը իրագործումը անմիջական եւ կենսականօրէն գործադրելի ծրագիր մը

Եկեղեցականութիւնը չի շահագործել վանքերուն կալուածները, ձրի կամ վարձկան մշակներ են աշխատողները, եկեղեցականը վստահ է, թէ հաւատարմաբար պիտի բերէ իր նուէրը տօներու տոթով եկեղեցին եւ վանքը պայծառացնելու, եկեղեցականն ապրեցնելու համար, եկեղեցականը կը պահէ համայնքային մասնաւորութիւնը : Այսպէս կը կորսնցնէ բարոյական հեղինակութիւնը, անկախութիւնը, ենթակայ է նախարարին, մեծերուն ազդեցութեան :

Եպիսկոպոսը տեղական նախարարին մարդն է, կաթողիկոսը ենթակայ է հօգը նախարարին, որուն քուէն աւելի արժէք ունի քան միւսներունը, հօգը հլու կաթողիկոս մը կ'ուզէ քան կամքի կորովի, մտքի ու սրտի տէր եկեղեցական մը, որ ունի վանականներու բանակ մը, հողագործին պաղինքով ապրող : « Բազմաթիւ վանքերու մէջ փակուած ժողովուրդին բարքերը մեղմացնելու տեղ, մտքերը կը թրկու տեղ, կ'աղքատացնէին ժողովուրդը » : (Լօրան) :

Պատմարաններէն սմանք նախարարութիւնը կը նկատեն նահապետական ընտանիքին ընդլայնումը, գերդաստաններու խնամիւթեամբ հողային ընդարձակումը, որուն միահեծան տէրը կը դառնար աւազ անդամ մը :

Նախարարները նահապետական ընտանիքի նման անդրանկութեան իրաւունք ունէին, բացարձակ տէրերն էին հողաւորներն եւ բնակիչներուն : Գերդաստաններու նման նախարարներն ալ տոճմայի վրիժառութեան սովորոյթն ունէին, նախարար նախարարի դէմ առաւելութեամբ լեցուած : « Հայաստան կը բաժնուէր բազմաթիւ մեծ ու փոքր այլապէս նահանգներու եւ դաւառներու, որոնց զուտը կեցած էին հիւնէն ի վեր բնիկ ընդարձակածաւալ ստացուածքներով հօգը մասնաւորական իշխաններ եւ նախարարին, որոնք իրենց սահմաններուն մէջ գրեթէ անկասկ, նոյն իսկ բացարձակ կ'իշխէին իրենց սերունդներուն եւ հպատակներուն վրայ : Այս տոճմայի կազմութենէն կը մեկնուէր, թէ ինչու Հայաստան տկար էր եւ մատնուած ներքին խռովութեանց, որոնցմով այնքան հարուստ է այս երկրին պատմութիւնը : Պլինիոս կը գրէ. « 120 կուսակալութիւններ » այսինքն նախարարներ » (Գիւտեր - Բոլ, Հնամեակն Հայաստան, Վիէննա, 1914, էջ 10 - 11) :

Յովհաննէս Պատմարան կաթողիկոսը դառնօրէն կը դանդաղի նախարարներէն, որոնք հաւաքական պաշտպանութեան դիտակցութիւնը չունին, մինչդեռ արաբ սատրականները կը կեղեքեն, կը կոտորեն ժողովուրդը, նախարարները կը դաւան իրարու : « Ի տանէ առաւել քան յոսուրաց բուսած մարտ դառնութեան » : կը հետեւի սով, երկիրը գրեթէ աւերակ է, ժողովուրդը լքուած, կը մաքառին լըխաններ իրարու դէմ : Կաթողիկոսը կ'որբայ « դառնութիւն տարբերաց, սովոյ եւ

պիտի նկատեն, բայց այդ ծրագրին մէջ չկարենալով յաջողիլ, այսինքն թուրք ազգը մեր ձեռքէն խել չկարողանալով հանդերձ, մեր փափաքներով բաւականացած եւ իսկական յինակցութեան մը հիմներն ու պայմանները քննելու պիտի հնամտին :

Այս մտածումներէն մեկնելով է, որ պէտք է աչքի առջեւ գտնուին Թուրքիոյ վերջը ու վերաբերումը Պոլշևիկ Ռուսիոյ նկատմամբ :

Նախ, պէտք է դիմադրել արեւելեան սահմաններէն եւ այլապէս շրջաններէ գաղտնի կազմակերպութեամբ Թուրքիա թափանցող կամ թափանցելու աշխատող համայնապար գրգռիչներուն եւ ճախարկողական հոսանքին : Կառավարութիւնը պէտք է որ շարունար եւ ուշադիր ըլլայ մանաւանդ բոլշևիկ գաղտնի կազմակերպութեան պատակաւորներուն բանակային շարքերէն ներս մուտքին դէմ :

Երկրորդ, Բոլշևիկներուն պէտք է տեղեկացնել, թէ ինչիւրը հաղորդած ենք Պէտք է անոնք գիտնան, որ հարց տրուած է մեզի, թէ ինչ կրնայ ըլլալ մեր դէմքը հակարուշևիկեան հոսանքներու նըմանաւոր, Հիւսիսային Կովկասի, Արաբիկայէն, Արարական եւ Հնդկական շրջաններու մէջ եւ անոնց թեր կամ դէմ մեր որդեգրելիք դերքը, իրենց յինակցի բոլշևիկեան կառավարութեան : (17 Տար.)

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

ՊԱՐԶ ՄԱՐԳՈՒ ՄԸ ԿԵԱՆՔԸ

ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Եթէ պարզ մարդ մըն էք, կամ կին մը, 24 ժամուան մէջ՝

Ձեր սիրար կը բարախէ 103-680 ան -

գամ :

Կը շնչէք 23-040 անգամ :

Կ'արտասանէք 4-800 բառ :

Կ'ուտէք երեք լիւրրա ուտելիք :

Կը խմէք 1ուկէս լիթր հեղուկ :

Կը դործածէք եօթը միլիոն ուղեղային

բջջէ :

Կը շարժէք 750 դիւտար մկան :

Ձեր բունին մէջ կը դառնար 25էն 35

անգամ :

Ձեր մաղերը 0,171 ինչ կը մեծնան :

Ձեր եղունգները 0-000-46 ինչ կ'եր -

կարին :

Ձեր ամբողջ կեանքի ընթացքին կը

ընտնար քսանէն 24 տարի եւ սուրբարար

կաշխատիք 14 տարի : Երեք տարի ալ

կ'անցընէք պարզապէս պոչի սպասելով

ինքնաշարժներու կայանները, վաճառ -

տունները, բուժարանները եւն. :

Բնները Անդլիոյ մէջ, փողոցի պարզ

մարդը եւ իր կինը :

Մտաւորապէս 70 քեր կը կռուէ եւ եր -

անգամ անգամ կը կատարուին ելեկտրա -

կանցներու համար նաեւ Մասիսէն Լե -

նինական երկարող բաժինը : Վերջնա -

լու վրայ են նոյնպէս Հոկտեմբերեան - Ա -

րաքս գիծին ելեկտրականացման աշխա -

տանքները : Առնթներ շինուած են նոր

կայարաններ, շէնքեր, մեքենականաց -

ուած են վակուումներու բեռնաթափման եւ

բարձման, շարժական մասին եւ նորոգ -

ման բաժիններուն աշխատանքները :

Յատաշիկայ տարիներուն Հայաստանի

երկաթուղային ցանցը աւելի պիտի զար -

գանայ : Կը նախատեսուի հաստատել գիծ

մը Սեւան - Շուրճաշի միջեւ : Այս գիծը

պիտի անցնի Սեւանայ լիճին հիւսիս -

արեւելեան ափերէն, ուր կ'իջան բարե -

նպաստ է : Մտածուած է նոյնպէս շինել

գիծ մը Հրազդանէն մինչեւ Հանքաւան

(Միոխանայ) / եւ գիծ մըն ալ Աղստաֆէն

իջեան :

Վերջերս Ղափանի մէջ գումարուած

համագումարի մը ընթացքին որոշուած է

կառուցանել երկաթուղագիծ մը՝ Ղա -

փան - Քաշարան - Ազարակ եւ Մուսս -

լամ - Դաստակերտ :

Ինչ վերջապէս չեն որոշուած՝ Երևան -

Աղստաֆա երկաթուղագիծին շինութեան

մանրամասնութիւնները : Մեծ օգտակա -

րութիւն պիտի ունենան նոյնպէս Սեւան -

կամօ - Մարտունի, Արփա - Սեւան եւ

Կիրովական - Ստեփանուան - Կալինինօ

երկաթուղիները : Ժամանակն է, որ այս

ուղղութեամբ ծրագիրներ մշակուին :

Ս. ՍԱՀՐԱՏԵԱՆ

« Սով. Հայաստան »

կու տղայ ունի : Միջին հաշուով՝ շարա -

թը 44 ժամ կ'աշխատի եւ ընդամէնը 18

թղթոսկի եկամուտ ունի :

Կլիսարկը - եթէ կը դործածէ - 7 թիւ

է : Կօշիկը՝ ութ : Երեք զղեստ ունի 36

ինչ կուրծքով եւ 32 ինչ՝ մէջքով : Եր -

կու տարին մէկ ձեռք զղեստ կը գնէ եւ

1,63 զոյգ կօշիկ (թիւ ութ), 2,6 շապիկ

եւ հինգ զոյգ դուլպայ :

Պ. պարզը դարձեալ մնայուն սպա -

ռի է : Տարին 51 կալուն կուլ կուտայ.

մինչդեռ, միայն չորս լիթր գինի կը խմէ

եւ երեք շիշ ալ՝ ուղեւից ըմպելի :

ԹԵՐԹ ԼԱՓՈՂ

Իր ընտանիքը՝ աշխարհի մէջ, թերթե -

րու ամէնէն մեծ ընթերցողն է : Հազար

մարդիկ կը գնեն 573 թերթ : Յետոյ կու

գայ Շուէտը՝ ուր հազար մարդիկ 462

թերթ կ'առնեն :

Պ. պարզը՝ շարժական մտաւորապէս

չորս լիւրրա հողիկի կ'ուտէ, երկու լիւր -

րա բանջարեղէն, մէկուկէս լիւրրա միս եւ

14 ունկիրա կարագ ու մարկարին : Իր շա -

հած ամէն մէկ թղթոսկիէն հինգ շիլին ու

վեց փենի կը ծախէ ուտելիքի համար :

Եթէ անդլիացի է, կ'ապրի 68 տարի ե -

թէ սկստացի է՝ 66 : Իր կնոջմէն վեց

անգամ աւելի հաւանականութիւն ունի

թոքերու քաղցրեղէն մեռնելու եւ աւելի

չափ հաւանականութիւն ունի՝ ինքնաս -

պան ըլլալու քան թէ թոքախտ մեռն -

լու : Բայց, կը շարունակէ տարին մօտ -

ւորապէս տասը լիւրրա ծխախոտ սպասել :

Իր սիրելի դրագումը՝ Եւրոպէ կէսօրէ

ետք Ֆուլթոյի մրցումի երթալը չէ, ինչ -

պէս կը կարծուի : 37 հողիկն միայն մէ -

կը կ'երթայ : Հասանաբար, գնումները

կը կրէ : Ծրարներով բեռնաւոր շատ չի

նայի արդար աղջիկներուն, Ամէն պա -

րագայի մէջ սակայն, դեղձան մարկովը

չեն իր նախընտրածները : Թուխերը եւ

կարմրամաղերը աւելի հրապուրելի կը

գանէ :

ԿԻՆԵՐԸ

Իր կինը հինգ օտք եւ երեք ինչ հա -

սակ ունի ու կը կռուէ 55 քեր : Կուրծքը

37 ինչ է, կոնքը 39 ու կ'ուզէ մէջքը 24

ինչ պահել : Երբ կ'իջող իրեն սպառնայ՝

ՅԻՐԱՆՍԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ

(Գ. Եւ վերջին մաս)

ՎԷՆՍԱՆ ՕՐԹՈՂ, (1947 - 1953). —

Փաստարան : Ընտրուած 62 տարեկանին :

Կը բանայ 4րդ Հանրապետութիւնը որ կը

յաջորդէ գրաւման չորս տարիներուն եւ

երեք տարուան ժամանակաւոր կառավա -

րութեան : Դրամական, անտեսական եւ

քաղաքական դժուարին կացութիւն : Ծա -

նըրը գործադուլներ 1947 Նոյեմբերին,

արժեզրկում 1948 Յունուարին : Սոսլու -

թիւն Մատակարարի մէջ, խլրտումներ

Հողկատարանի Փրանսական Քոնքրուարն -

րուն մէջ, 1946ին սկսած Հողկաշինի պա -

տերազմին տակաւ ծաւալում, մինչեւ որ

1953ին Տիէն - Պիէն - Ֆու կը դրուուի :

Ստորագրութիւն Հիւսիս - Ատլանտեան

ուխտին : Վաւերացում ամերիկեան

«Մարշալ» օժանդակութեան ծրագրին :

Ստեղծում եւրոպական պողպատ - ամուր

միութեան : Ռուսերը կը պաշարեն Պեր -

լինը : Մաօ Յէ Թունի կը գրաւէ Չինաս -

տանը : Քորէայի պատերազմը : Ռուսիոյ

մէջ կը մեռնի Ժօզէֆ Սթալին, իրեն կը

յաջորդէ Մալենքով :

ՌԸՆԷ ԲՈՒԹ, (1953 - 1959). — Փա -

տարան : Ընտրուած 71 տարեկանին : Ի -

լախուսութեան կուլայ ողբերգական օրե -

րու Տիէն - Պիէն - Ֆու, Հողկաշինի կոր -

սուած է : Վեց ամիս ետք, Այժերիոյ մէջ

կը պայթի ըմբուսութիւնը : Թունուց եւ

Մարք անկասութիւն կը ստանան :

Փարիզի մէջ քաղաքական կլիման կը

ճանրանայ : Տեղիպտոսի մէջ, Նաօր կ'աղ -

գայնացնէ Սուէզի ջրանցքը (1956), Քը -

րանսական եւ անգլիական բանակները

ցամաք կ'ելլեն Փորթ Սալիս, բայց յե -

տոյ ետ կը քաշուին : Ռուսական առաջին

արբանեակը (1957 Հոկտեմբեր 4) : Մոս -

կուայի մէջ, Սրուշչևե ձեռք կը բերէ իշ -

խանութիւնը (1958 Մարտ) : Այժերիոյ

պատերազմը կը սաստկանայ : 1958 Մա -

յիս 13ին, ամբողջ ձեռք կ'առնէ ընդ -

կառավարիչին չէնքը : Մայիս 30ին, Քոթի

կառավարութեան գլուխ կը կանչէ Զօր -

տու Կոլ : Իր շրջանը չի վերջացներ եւ կը

քաշուի սեղմ տարով տը Կոլի :

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍԻՔԵՐ

Կիր ստեղծուած է աւելի շատ սիրուե -

լու՝ քան թէ սիրելու համար : Այսինքն ,

ծաղիկներուն պէս, որ ոչինչ կը զգան ի -


րենց բոյրէն, մինչդեռ, ամբողջ աշխար -

հին քոյլ կուտան որ զայն հոտուտէ ու

վայելէ :

ԱՆՅՈՒՆՍ ՏՕՏԷ

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ



Գարլոթա Ատամս երիտասարդ կին մըն էր զարգացած եւ շատ խելացի : Երիտա -

սարդը կը զարմանայ, բացատրութիւն չի

մը երկիւղ զգայ կնոջ մը ներկայութենէն :

Կ'առաջնորդէ զայն ճաշասենեակ , ուր

կինը որեւէ պատմութիւն մը կը պատմէ

անոր : Թերեւս երիտասարդին վզին կը

փաթթուի : Երիտասարդը կը դատապար -

տուի յաւիտենական լուսեան » :

Փուարօ պահ մը լռեց : Ժար հարցուց .

— Ուրեմն դուք կ'ամբաստանէք այդ

կինը երեք ոճիւրներով :

Փուարօ դիտու նշանով մը վաւերացուց

ստիկանին կարծիքը :

— Ինչո՞ւ համար, քանի որ իր ամու -

սինը համաձայնած էր ամուսնալուծման :

— Որովհետեւ Մերթոնի դուքը թունդ

կաթոլիկ մըն է : Ան երեք պիտի չուզէ

ամուսնալուծ կնոջ մը հետ, որուն ամու -

սինը կենդանի պիտի ըլլայ :

Մինչդեռ եթէ կինը ալիքանար, ըս -

տող է որ պիտի դառնար դուքսին տի -

կինը : Անկասկած խօսած է ան դուքսին

Լորա Էմմալի հետ հաւանական ամուս -

նալըը դարձեալ համաձայնութիւն չէ

յայտնած :

— Ուրեմն ինչո՞ւ այդ կինը զրկած է

ձեզի Լորա Էմմալի մօտ :

— Փոչի ցանկութեամբ համար աչքերուս

մէջ : Որպէսզի իմ վկայութիւնս ըլլայ ի -

րեն ի նպաստ եւ հաստատեմ աշխարհի

սոջեւ, թէ այդ կինը որեւէ պատճառ

չունէր իր ամուսնին սպաննելու : Պէտք է

ըսեմ, որ յաջողեցաւ ան զիս խաբելու :

ինչ տարօրինակ ուղեղ ունի այդ կինը,

ուղեղ մը՝ միւլեւոյն ատեն թէ խորամանկ

եւ թէ տղայական : Բայց կատարեալ դե -

րաստունէի մըն է : Որպէսզի զարմանք ար -

տալայտեց, երբ յայտնեց իրեն, թէ իր

ամուսինը նամակ մը գրած էր իրեն : Բա -

ցարձակապէս անկեղծ չեղող մը ըսաւ ,

թէ նման նամակ չէր ստացած երբեք :

— Միթէ ձեզի չէի՞ զգուշացուցած, որ

սաղաթեղական խորամանկութիւն մը ունի

այդ կինը, զոչեց Պրիան Մարթէն : Կը

յուսած որ պիտի դատապարտուի :

Իր դէմքը բարեկ

ՆՈՒԷՐՆԵՐ

Յովհաննէս Թէրլէմէզեանի յիշատակին, իր աղջիկները՝ Ս. Լեւոնյանն եւ Ա. Սարգիսեան կը նուիրեն 150 Փրանք...

X

Վերոֆէլէն Տէր եւ Տիկին Սորէն Քոչ - եան իրենց թոռիկներն Սոպիկ Իսախանի (Ծն. Նորհաստեան) ցաւալի մահուան քա...

X

ՇՆՈՐՀԱՎԱԼԻՔ

Կապ. Սաչի Շաւրի մասնաճիւղը շնորհակալութեամբ ստացած է Տէր եւ Տիկին Հրանտ Մինասեանէ քան Փրանք...

X

Սոյն տխուր առթիւ Շաւրի Տէր եւ Տիկին Գալուստ Մինասեան կը նուիրեն քան Փր. «Յառաջ»-ի բարգաւաճման :

X

Կապույտ Սաչի Ալֆորվիլի վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է Տէր եւ Տիկին Հմայակ Բէօնէանէ 50 Փրանք...

Կապույտ Սաչի Ալֆորվիլի վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է Տէր եւ Տիկին Մարիամ Պիպերեանէ 50 Փրանք...

Կապույտ Սաչի Ալֆորվիլի վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է Տէր եւ Տիկին Մարիամ Պիպերեանէ 50 Փրանք...

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՔԱՐՈՁ ԱԷՆ ԼՈՒ Այս կիրակի Սէն - Լուի Հայոց եկեղեցին կը քարոզէ Թեմիս Առաջնորդ Արտաւազ Եպիսկոպոս Թրքաեան :

ՀԱՅՎԱԿԱՆ ՖԻԼՄԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԼԻՈՆԻ ՄԷՁ

Հովանաւորութեամբ Ազգային Միութեան, նախաձեռնութեամբ Հայ Կրթ. մարմնոյ :

Ի նպատ «Հայկազեան» վարժարանի կրթական գործին :

Այս երկուշաբթի ժամը 20-30ին, Սիգէ Արքի մէջ, 257 Րի Պուալօ (Եկեղեցւոյ մօտ), Րի ֓օլ Պէրի անկիւնը :

Պիտի ցուցադրուին ԼԵՆՆԱՑԻՆ ԼԻՃԻ ԳԱՂՏՆԻԲԸ Եւ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ Գունաւոր եւ հայախօս ժապաւէններ :

ՀԱՅՎԱԿԱՆ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ 10 bis, Rue Thouin, PARIS

Այս կիրակի, ժամը 10-30ին, Հայրապետական ճայնաւոր պատարագ ի ներկայութեան Ա՛ն Լազարի Ասպետներուն :

Պիտի պատարագէ եւ քարոզէ ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿ. ԱՄՍՏՈՒՆԻ

Ճ Ա Շ

Սերատիոյ Նահանգային Մուրատ Աստուծասիրացի կեդր. վարչութիւնը կը հրաւիրէ Իսիկ եւ շրջանի բոլոր Հայ - յերը անխտիր իր տաննէն հանգամանակ առթիւ կազմակերպած ճաշասեղանին :

Այս կիրակի ժամը 5ին Իսիկ Սրբեանի վարչոյ սրահին մէջ :

Նախագահութեամբ ԲՃ. Ա. ՊՈՂՈՍԵԱՆԻ

Գեղարուեստական ճոխ բաժին, Երզն. արտասանութիւն, նուազ եւ շատ մը անակակներ, մասնաւորապէս սիրայօ - ժար իրենց մասնակցութիւնը պիտի բերեն հայրենակիցներ, Միքիման Շիրվան - են, Շմաւոն Պալեան, իրենց նուազոյ եւ երկու քոյրեր Թաղեան :

Ճաշագին 10 Փրանք անձ գլուխ :

ՀՈԳԵՆԱՆԳԻՍ

Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ նախկին զորացեալ Պ. Պօղոս Գուլոմ - ֆեանի քառասունքին առթիւ, Եկեղեցւոյ հոգարարութեան եւ երկես զորաց դասու կողմէ՝ քառաձայն պատարագ եւ հոգեհանգիստ կը կատարուի այս կիրակի :

ՀՈԳԵՆՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Գեկտ. 12, Կիրակի ժամը 21ին DANS ST. EUSTACHE ILLUMINÉE (12, Rue Dujour, Paris (1er))

Métro : Halles ՎԱՐԳՆԱՆՆՅ ԱՍՊԵՏՆԵՐՈՒ ԵՂԱՅՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Կը ներկայացնէ (համաշխարհային ստաջին ունկնդրութիւն) : DU PROFOND DE L'ABIME (Oratorio)

ԲՆԱԳԻՐ ԵՒ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ԱՐՇԱՄ ՃԻԶՄԷՃԵԱՆ

Բարձր հովանաւորութեամբ քրդ-տարուքեան նախարար՝ ՄԱՐԻԹԻ ԱՊՐԻԼԵԱՆ ՅԻՄԵԱՄԵԱԿԻ ՅԻՇԱՍԱԿԻՆ

Կը մասնակցին՝ Christiane Eda-Pierre (Soprano) de l'Opéra, Paul-Emile Deiber (récitant) sociétaire de la Comédie-Française, Raffi Ourgandjian (au grand orgue).

LES CHANTEURS DE ST. EUSTACHE (Président-Fondateur R. P. Emile Martin)

Ղեկավարութեամբ ՎԵԿԱՎԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ԱՐՇԱՄ ՃԻԶՄԷՃԵԱՆԻ ՅԱՅՏԱԳԻՐ - ԿՈՄԻՏԵԱՍ, ՀԱՅՐ ՄԱՐԹԷՆ, ՎԻՔՈՐՈՒՄ ՄՈՍԹԵ - ՎԵՐՏԻ, ՈՒՐԿԱՆՃԵԱՆ :

Տոմսերու գին՝ 5Էն 25 ֆրանկ Գիմէլ՝ Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցի, 15 Րի ժան Կուժօն, Սէնթ-Էսթրաշ (Հայ), Տիւրան (4, Փլաւ տը լա Մաւրլէն), Բարուան դրատուն, (43 Րի Ռիշէ) :

ԹԵՅԱՍԵՂԱՆ Յրանաճայ Գրողներու Ընկերակցու - թիւնը, 1964ի «Աստուածատուր Հարենց» գրական պարզեւտուութեան առթիւ, եւ ի պատիւ Ա. Սոփոկլեանին, այս կիրակի ժամը 14-30էն մինչեւ 18, կազմակերպած է թէյասեղան մը, Գ. Աճէմեանի ճաշարանին մէջ, 12 Րի Գաւէ (Փարիզ) սեղանապետութեամբ Հր. Բարուանի :

Կը հրաւիրուին համակիրները :

ԿՈՉ ԲԱՐԵՊԵՏ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ Ալֆորվիլի Ս. Պօղոս Պետրոս Եկեղեցւոյ Հոգարարութիւնը կը ծանուցանէ տեղւոյ հասարակութեան թէ՛ Եկեղեցւոյ տանիքին նորոգութիւնը, եւ կարողանալու իրենց զեւոզումն ու կանոնաւորութեամբ, մեծ ջանքերու մաքրութիւնը աւարտած ըլլալով՝ ձեռնարկած է Եկեղեցւոյ ներքին մասը ամբողջութեամբ կրածեփելու եւ իւրաներկելու գործին, որմէ յետոյ՝ պիտի զբաղի խորանին յարմարագոյն ձեւ մը տալու գործով :

Այս Սուրբ Հաստատութեան ներքին ու արտաքին յարգարանքը աւարտելու մը տասնօրեակով Ալֆորվիլի Հոգարար - ձեռնարկը տեղադրին աշխատանքի լծուած է : Ուստի՝ վստահ ըլլալով զազոյթի առաքելութեան եւ Եկեղեցւոյ հանդէպ բարի տրամադրութեան, Հոգարար - ձեռնարկը պիտի համարձակի դիմելու բարեպաշտ ազգայիններուն, որպէսզի բարեհաճին իրենց նուիրատուութիւններով մասնակցի հանդիսանալ սկսուած այս մեծ աշխատանքին :

Եկեղեցւոյ նախաձեռնող Մարմինը սիրով եւ շնորհակալութեամբ պիտի ընդունի բոլորին այ զհոգութեան բարեհաճ փափաքը եւ պարագը կը համարի յետագային հայ հասարակութեան ցոյց տալու վերադրեալ գործողութեանց հաջողութու - թիւնը իր մանրամասնութիւններով :

ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ Ալֆորվիլի Ս. Պօղոս Պետրոս Եկեղեցւոյ

IMPRIMERIE SPÉCIALE DU JOURNAL « HARATCH » 32, Rue de Trévis, PARIS (9^e)

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

ԿԻՐԱԿԻ, ԳԵԿՏԵՄԲԵՐ 19ԻՆ Ժամը 16ին : ՏՕՆԱԾԱՌ

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐՃԱՐԱՆ

ՏՕՆԱԾԱՌԻ հանդէպ Դեկտեմբեր 19 - ին, Կիրակի կէսօրէ ետք ժամը 4ին վարժարանին մէջ :

ՍՏԻՊՈՂԱԲԱՐ ԾԱԽՈՒ Է

Սերանի բանակ պողոտայի վրայ ծախու է պատերով :

Ա) Նոյարավաճառի խանութ մը, նը - կուզ, կատարուն, բնակարան երեք սեն - եակ, գին 100.000 Փրանք :

Բ) Սրճարան, 9 մեթր ճակատ, մեծ լի - սանս, յարակից սրահ՝ հինգ մեթր բար - ձըր, 280 քառ. մեթր ամէն իրաւունք, թատրոն, սինեմա, պատ, խնջոյք եւն., սու - սոլ, 200 քա. մեթր (Երեք միա - սին) : 200.000 Փրանք :

Գ) Բնակելի սենեակներ՝ զանազան դի - ներով :

Վեարման դիրուքիւն : Հասցէ՝ 87 Ալբրի տը Լիլի, Սերան : Հեռաձայն 929 76 - 40

TRAVAIL A FAÇON

offre ENTREPRENEURS spécialisés CORSAGES non coupés, grosses séries, travail assuré toute l'année.

HALIOT 24, Bd. St. Denis - Paris (10e)

Հ. Յ. Գ. ԸՆԿԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ ՓԱՐԻՉ. - Հ. Յ. Գ. «Րաֆֆի» խումբի ընկերակաճ ժողովը այս Ուրբաթ ժամը 20ին, Մշակույթի Տան մէջ : Պարտաւոր է ներկայութիւն : Խիստ կարեւոր օրակարգ :

Ալֆորվիլ. - Հ. Յ. Գ. Ս. Մինասեան Ենթակոմիտէին ընկերակաճ ընդհ. ժողովը այս Ուրբաթ, սոփորական հաւաք - տեղին :

ՅՈՒՇԱՏԵՏՐ Տէմիս. - Կապ. Սաչի մասնաճիւղի ժողովը այս Ուրբաթ, ժամը 21ին Հ. Յ. Գ. Տան մէջ :

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ՅԵՐԵԿՈՅԹ ԵՒ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Soirée Dansante

Կազմակերպուած Հայ Կարմիր Խաչի Առուվիլի մասնաճիւղին կողմէ ԿԻՐԱԿԻ ԳԵԿՏ. 12 ԺԱՄԸ 16ԷՆ 24

Le Dimanche, 12 Décembre, de 16 à 24 h. Salle de l'Eglise Catholique Arménienne, 69, Rue Henri Barbusse à Arnouville

Orchestre Bernard Dédéjjan ENSEMBLE SAYAT-NOVA DANSES FOLKLORIQUES

ATTRACTIONS - BUFFET

ԸՆԹԱՑԻԿ ԱԶԳԵՐՈՒ ՍԱԿԱԳԻՆ

ՄԷԿ ԱՆԳԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

Table with 3 columns: Item name, Price, and Quantity/Notes. Includes items like ՄԱՀԱԶԳ, ՀՈԳԵՆԱՆԳԻՍ, ՅԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ, etc.

Այս գինքը մէկ անգամ հրատարակելի եւ Յշտակուած ծաւայով տղ - գերու համար են, չորրորդ էջը :

Կանխիկ վճարուը պարտաւորի է : Առուտրական կամ այլ ազգերու մասնաւոր պայմաններում համար գինը վարչութեամբ :

ԵՐՐՈՊԱՅԻ

Advertisement for Bosphore chocolate, featuring the brand name, 'LE BOSPHORE MARQUE DÉPOSÉE', and 'CHOC-ALVA • CHOCO-LOC'.

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ... CHOC-ALVA • CHOCO-LOC Sté le BOSPHORE SIÈGE SOCIAL 2, Rue Louis Astouin Marseille (2^{ème})

ՅԱՐԱՏ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN
RÉDACTION - ADMINISTRATION : 32, RUE DE TRÉVISE - PARIS (9^e)

Fondé en 1925 T.él. : PROvence 86-60
R. C. Seine 57 A 2731 C.C.P. Paris 15069-82

ՌԻՐԱԹ
10
ԴԵԿՏԵՄԲԵՐ
VENDREDI
10 DECEMBRE
1965
LE NUMÉRO : 0,30 FR.

Օ Ր Ա Թ Ե Ր Թ
Հիմնադիր՝ ՇԱՎԱՐՇ ՄԻՍԱԿԻԱՆ

ՔԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա՝ Sup. 60 ֆ. վեցամսեայ՝ 35 ֆ.
Արտասահման՝ Sup. 80 ֆ. Հատը 0,30 ֆ.

ՀՐԳ ՏԱՐԻ ԹԻԻ 10481 Fondateur : SCHAVARCH MISSAKIAN 41e ANNÉE — N° 10.481

ՄԵՐ ԹԵՐԻՆԵՐԸ

Մեր շատ մը առաքինութեանց զուգարհուն ունինք նաև կարգ մը խոտերի կողմերը :

Ասոնցմէ մէկն է սեփական կարծիքի պակասը :

Թերութիւն, որ իր սնունդը կը ստանայ երրորդ անձի մը յայտնած տեսակէտներէն :

Եթէ սեփական տեսակէտ ունենալը կը պահանջէ որոշ պատրաստութիւն, ինչ որ սխալ է, կ'ենթադրուի ուրեմն որ, ուրիշներու կարծիքին վրայ հասկանալի եղբայրացութիւններ հանելը ուղիղ է նմանապէս :

Լոկը այս պարագային կը դառնայ ուսուցիչ : Աւելին՝ բարիք անոնց համար, որ պիտի ուզէին հարց մը անձամբ քննելէ ետք միայն կարծիք յայտնել անոր մասին :

Հասկանալի յայտնուած կարծիքները հետո չինքնէ եւ օգտակար ըլլալէ, ընդհանրապէս մեր անձը փոքրացնող պարագաներ են :

Փիտակից ու խոհեմ ամէն մարդ պէտք է զգուշանայ տեսակէտ յայտնելէ հարցերու մասին զորս ուսումնասիրած է :

Բնկերային կեանքի մէջ բազմաթիւ թերութիւններ պիտի կանխուէին, եթէ անձամբ ու բազմակողմանիօրէն քննուէին որոշ հարցեր :

Յաճախ աննշան խնդիրներու մասին կը յայտնուին ենթադրական տեսակէտներ որոնք կ'իւրացուին սեփական տեսակէտ տունցող անձերու կողմէ, ու կը ստեղծուին աւելորդ ըսի - ըսանքեր ու թիւրօրէն մացութիւն :

Գրաւթ մը ջուրի մէջ փոթորիկ բացարձակութիւնը, կը վերաբերի նման հարցերու :

Պատճառ : Որովհետեւ մարդիկ կարծես աւելի կ'ախորժին, ախանառես ու ախանջալուր ըլլալ ցեխարձակութեանց ու վատարանութեանց :

Անոնց համար հաճոյք մը, հոգեկան վայելք մը չէ լսել իրենց շրջապատէն անձերու մասին զովեւոր ու զնահատուութեան խօսքեր : Եթէ լսեն իսկ, աւելի կը խնդրին քան կ'ուրախանան կարծես :

Ճիշդ անոնց պէս, որոնք փճակահաս տեսութեան տոմս գնած չեն, բայց փոխանակ ուրախանալու որ իրենց հարեւանը բախտաւորուած է, կը սրտնեղին, կը ցաւին այդ առթիւ :

Փոքրոզի անձ մը հաճոյք կը զգայ, երբ մարդիկ կը խօսին շուրջիներու կամ իրենց անսիրելի ղէմքերու կարծեցեալ թերութիւններու մասին :

Եկարգորի տէր մէկը պէտք է ընդունի թնամիտ ունեցած առաքինութիւնները, երբ կը թուէ անոր թերութիւնը :

Քննադատութեան մէջ միայն թերութիւնը ինչո՞ք մէկը հետո բարեխղճ անձ մը ըլլալէ, երեւան կը հանէ փոքրոզի նկարագիրը :

Եթէ մշակույթ եւ քաղաքակրթութիւն ամբողջական հարստութիւնն են դարերու ընթացքին կուտակուած մարդկային մտքի ստեղծագործութեանց, ընդունելիք, որ հսկանքներու վաստակին տունը - թեր գոյութիւն պէտք է ունեցած ըլլայ համեստ մտքի տէր անձերու դատանք մը : Քաղաքակրթութեան պատմութիւնը որովհետեւ հեղինակ մը, եթէ դիտէ անունները այս վերջիններուն, պէտք է մոռնայ յայտնաբերող գանձը :

Յետը ինչպէ՞ մարդարիտ մը կամ ազատանք մը չենք կոխկոտեր, ընդհակառակը կը ծոխնք, կը վերջնենք, կը մաքրենք ու կը պահենք :

Լայրող, զրոյ, ուսուցիչ պարտին այս լայնամտութեամբ մոտենալ հանրապետական ժողովրդի մէջ զէր կատարող անձերու աշխատանքին եւ սերունդի վաստակին :

ՕՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ՏԵ ԿՈԼ ԿԵ ՄՆԱՅ

ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐԸ ԿԸ ՄԿՍԻ

Տեղեկատուութեան նախարարը յայտարարեց Նախարարաց Խորհուրդին ետք թէ տը Կոլ տեղեկացուցած էր խորհուրդը որ «բնականաբար ներկայ կ'ըլլայ Դեկտեմբեր 19ի ընտրութեան» : Կը ճշդուի նաև թէ նախագահ տը Կոլ պիտի օգտագործէ այն երկու ժամերը զորս ունի ձայնասփիւռն եւ պատկերասփիւռն : Տակաւին թեկնածուներու խօսելու կարգը չէ որոշուած : Կ'ըսուի նաև թէ նախարարներ կրնան օգտագործել տը Կոլի

Միայն թերինքը չէ որ առարկայ պէտք է դառնան իրենց քննութեան, այլև առաւելութիւնները անոնց գործին : Կիրքը, անձնական հակառակութիւնն ու հաշիւներ, քէներ ու քաղաքէ քաղաք պտտացուցուած բրածոյ վարկածներ ծրարուած պէտք է նետուին դարակը, ի խնդիր շինարար նախաձեռնութեանց :

Նման լայնախոսութիւն կը սպասուի առաւելաբար մամուլով զբաղող անձերէ, որոնք երբեք պատառ կ'ըլլան, թէ կ'ուզեն ժողովուրդին շահերուն ծառայել : Մամուլը մասնաւորապէս պէտք է հետո մնայ անձնականութիւն բուրոզ քննադատական մարզանքներէ, երբ օգտակար ոչինչ կայ փորձուած քաջընտրներուն մէջ, որոնք տաղտուկ ու վրդովում միայն կը պատճառեն շրջապատին :

Դէմ չենք շինել քննադատութեան, բայց զէմ ենք ու կը գտնենք վնասակար բարձրասնքներն ու շողոմոզումները : Անոնք անցեալին ստեղծեցին մեր կեանքի մէջ անհանդուրժողական տրամադրութիւն ու ուղի, ու այսուհետեւ կոչուած են աւելի խորացնելու կիրքերն ու խրատականները, որոնցմէ ոչ մէկ շահ կը սպասուի գաղութ մը :

Մարդոց կարծեցեալ թերինքը չեն որ պէտք է ուղեւորեն մեզ, այլ ստաքինուութիւնները :

Ուղիղ չէ որ հեղինակի մը գործին մասին ինք ուրիշներու գնահատական խօսքերը մոռցած՝ տասներորդի մը աննպաստ կարծիքը պտտացնել սրճարանէ սրճարան, տուն տուն, իր փոխ - վրէժ մեզի անսիրելի այդ հեղինակին :

Օրինակ մը տուինք, հասկնալի դարձնելու համար մեր միտքը :

Մեր խօսակցին մտաւոր եւ բարոյական պատրաստութիւնէն աւելի մեզի հետաքրքրողը անոր աչքին շի կամ ոտքին կող ըլլալու պարագան է դժբախտաբար : Իր ասպարէզին մէջ վերստէ մըն է ուսուցիչ մը, որ աշակերտի մը շարագրութեան ցայտուն գիծերը ուրացած, խրատաւոր քննադատութեան կ'ենթարկէ անոր կետադրական կամ ուղղադրական մանր գանցառութիւնները :

Գնահատութեան զոյգ մը խօսքով տալու անոր կարելի է հրապարակ քաշել, փոխադարձ կծու չկամութիւններով ու հեղինակով սպաննել փթթումի եւ ընծիւղումի կարտ հոգիները :

Մեր թերինքը : Ժահրով շարժուած մեր լուսանքներուն մէջ պէտք է փնտնել գանձը, հանրային շինարար աշխատանքը խոցող, հասարակաց շահը հարուածող բարբարիկ շարժումներէն մէջ՝ պատճառ մեր ցաւերուն :

Գնահատելի գիտնալ, առաքինութիւն մըն է, զոր կ'անդիտանան սակայն անգամ մամուլի լծուած մարդիկ դժբախտաբար :

տրամադրուած ժամերուն մէկ մասը : Այս պարագային մէջ, անշուշտ ընդդէմ - մարդիկ թեկնածուն ալ կրնայ նոյնը ընել : Այս ուղղութեամբ, հակակշիռ Ազգ. յանձնախումբը զօրծի անցած է եւ կը պատրաստէ երկրորդ շրջանը : Հարց է թէ կառավարութեան անդամներ կրնան օգտագործել թեկնածու տը Կոլի ժամերը : 1962 Մարտ 14ի հրովարտակի 12րդ յօդուածը կ'ըսէ թէ թեկնածուները անձամբ պէտք է օգտագործեն իրենց տրամադրուած ժամանակը, սակայն «իւրաքանչիւր թեկնածու կրնայ ուղիղ որ կուտակցուած թերութիւնը կամ քաղաք. համարմունքները որոնց գործունէութիւնը կը տարածուի Ազգ. Ընդհ. հողամասին վրայ, եւ իր կողմէ նշանակուած մասնակցին իր միջամտութիւններուն, լիազօրուած ըլլալէ ետք Ազգ. Յանձնախումբին կողմէ, որ պիտի քննէ թէ այդ կուտակցութիւնները կամ համարմունքները կը համապատասխանեն նախատեսուած պահանջներուն» : Այս կը նշանակէ նաև որ թեկնածուն պէտք է ներկայ ըլլայ եւ չի կրնար պարզապէս իր ժամանակը ուրիշին տրամադրել : Ամէն պարագայի մէջ, եթէ տը Կոլ եւ Միթրան պիտի օգտագործեն իրենց չորս ժամը (երկու ժամ ձայնասփիւռ, երկու ժամ հեռատեսիլ) կը նշանակէ թէ օրական քսան վայրկեան պիտի խօսին :

× Ֆրանսուա Միթրան կը գրէ «Քոմ - պա Ռեփրիւլիքէն» մէջ թէ Դեկտ. 19ի ընտրութիւնը ձախին կտրին է Ալիս դէմ : Ժան Լըքանիւէ որոշած է կազմել իր «Ժողովրդավար Կեդրոնը» որ պիտի համարմէ նախկին ժողովրդական Շարժումը (ԽՄ ԽՈ Փէ), անկախներ եւ արմատականներու Մօրիս Ֆոն թեր :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՍՈՒՉՊՐԻԻԻ մէջ, ինքնակոչ իշխանութիւնը որոշեց երկու տարի բանտարկութեան դատապարտել ոեւէ Ռոտեղիացի որ հրապարակաւ մտիկ ընէ անգլիական ձայնասփիւռը :

ԻնթերՆԱԻԻ գրական մրցանակը ստացաւ Ալէն Պոսքէ իր «Մեքսիքական թուստովանութիւնը» վէպին համար :

ՎԻԵՆՆԱՄԻ կացութիւնը միշտ ծանր է : Համայնավարները առաջարկեցին 12 ժամուան դադար մը Մոնուդի դիշերուան համար :

ՆՊՊԵԼԻ գրական մրցանակաւորը՝ Միխայիլ Շոլոխով Սթոքհոլմ հասած է Մամուլի ասուլիս մը տունու է եւ յայտնած թէ Անտրէյ Միխայիլովիկի, պիտի դատուի որովհետեւ զազտնորէն արտասանած ձեռագիրներ անցուցած էր :

ՄՔ. ՃՈՐՃ ՊԸՆՏԻ, որ յատուկ խորհրդատուի պաշտօն ունէր Միացեալ Նահանգներու նախագահին մօտ, հրաժարեցաւ : Հաւանական կը նկատուի որ իր պաշտօնը ջնջուի :

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ քսան հազար հացազորաները գործադուլ ըրած ըլլալով հինգ օրուան համար, ոտակալները հացազործի վերածուած են, ժողովուրդին հացը սպասովիլու համար :

ՖՐԱՆՍԱՅԻ Արտաքին նախարարը՝ Քուլ տը Միւրվիլ սիրալիք տեսակցութիւն մը ունեցաւ, Հոսմի մէջ, Քոլումպոյի հետ, որ Հասարակաց Շուկայի խորհուրդին ներկայ նախագահն է : Կ'ըսուի թէ բաւական յառաջդիմութիւն կայ բայց ոչ մէկ եզրակացութիւն :

ՊԱՊԸ հոգեւոր ճառով մը փակեց վատիկան Բ. տիեզերական ժողովը : «Մեր ողջոյնը կ'ուղղենք անոնց որոնք մեզ կը ճանչնան, անոնց որոնք մեզ չեն ճանչնար, անոնց որոնք մեզ չեն հասկնար, անոնց որոնք մեզի դէմ կը պայքարին» :

ԹԱՇԿԵՆՏԻ հանդիպումը հնդիկ եւ փաբիստանցի դեկավարներուն միջեւ տեղի պիտի ունենայ Յունուար չորսին : ՄՍՏՐԻՏԻ Եւ կաթողիկէ օրաթերթը տեսակցութիւն մը հրատարակած է կարգինալ Օթթավիանիի հետ, ուր այս վեր-

ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐԿԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԻՋԵԻ Պէյրութի «Լ'Օրիան» թերթին համար - ձայն, Լիբանանի կառավարութիւնը հրապարակեց թերթական կառավարութեան, թուրքիոյ մէջ գտնուած Լիբանանեան կալուածներուն մասին տեսակցութեանց վերսկսելու համար :

Լիբանանի արտաքին նախարար Ժորժ Հաքիմ ներկայիս կը քննէ այս հարցը, որ նախ սկսաւ «տնտեսական» բնոյթով, որ սակայն այժմ յանդամ է «քաղաքական» ձեւի :

Արժանաւատ աղբիւրներու համար - ձայն, Լիբանանի արտաքին նախարար Ժորժ Հաքիմ, վերադառնալով Նիւ Եորքէն, իր նախարարութեան պատկան սպասարկութեանց հրահանգած էր հարկ եղած քննութիւնները կատարել թուրքիոյ մէջ գտնուած եւ Լիբանանեան հպատակներու պատկանող կալուածներու մասին եւ Լիբանանցիներու իրաւունքները պաշտպանելու նպատակաւ՝ շարժման անցած այդ ուղղութեամբ : Նոյն աղբիւրին համաձայն, Լիբանանի արտաքին նախարարը վերոյիշեալ խնդիրներու քննութեան համար Պէյրութ հրաւիրած է թրքական պատուիրակութիւն մը, որուն համար զիմում կատարած է թուրք կառավարութեան :

Լիբանանեան կառավարութիւնը, առ - ժամաբար յետաձգած է այս խնդրին համար Լա Հէյի Միջազգային Առեւտրի դիմելու իր որոշումը եւ զիմած է Անգլիայի՝ հրապարակած մը եւս քննելու եւ երկու երկիրներու միջեւ համաձայնութեան եզր մը գտնելու յոյսով :

ՔԱՆԻ ՄԸ ՕՐԷՆ

ՄԵՐ ՆՈՐ ԹԵՐԹՈՆԸ

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՎԷՊ ՄԸ
ՔԱՆԻ ՄԸ ՕՐԷՆ

Չինը կը յայտարարէ թէ «Սպանիա եկեղեցւոյ իսկական յոյսն ու իրականութիւնն է» :

ԵԳԻՊՏՈՍ Եւ քաշած է Եմէնի իր գործին մէկ մասը : Գահիրէ կը սպասէ Հաբատի ժողովին եզրակացութեան արագացնելու համար շարժումը : Ժողովը տեղ քայլ կ'ընէ վասնորի չէզոք մէկը կը փնտնուի, ոչ միապետական ոչ ալ հանրապետական որպէսզի նախագահէ առ - ժամեայ կառավարութեան :

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ մէջ պարենաւորման դժուարութիւնները կը շարունակուին : Ասկէ ետք մարդ գլուխ երկու քիւր բրինձ պիտի սրուի շարժքը եւ մէկ քիւր շաքար՝ ա - միսը :

ԿԻՆԵԻ նախագահը՝ Սեբու Թուրէ չընորհաւորական հեռագիր մը զրկած է Միթրանի, ուր կ'ըսէ ի մէջ այլոց - «Ձեր յաջողութիւնը դիտակցեց Ափրիկէի կողմէ, կը նկատուի գործակցութեան բաց ճամբայ մը Ֆրանսայի հետ, արժանապատուութեան եւ բարեկամութեան մէջ» :

ԺՈՐՃ ՊԻՏՕ, որ միշտ Պրազիլ կը գրտնուի, յայտարարած է տեղական մամուլին թէ «այժմար՝ ու Զօր. տը կոլ լսեցին զարմանքով թէ նախտարար իր գէմ ունէր Ֆրանսայի մեծամասնութիւնը : Ծատոնց է կը փորձէի համոզել խօսակցներս որ ասանկ պիտի վերջանար : Ընտրական մեքենան գոր ինք ստեղծեց իր յաջողութեան համար իր իսկ պատուութեան գործիքը եղաւ :

ԱՐՄԵՆԻԱ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԷՔԵԱԹՆԵՐԸ

(ՅԱՊԱՆՈՒՄՆԵՐՈՎ)

Հէքեաթներն ընդհանրապէս, այդ թրուում նաեւ հայ ժողովրդական հէքեաթները, վիպական սեռի ստեղծագործութիւններ են: Իրենց բովանդակութեան եւ բնոյթի համեմատ դրանք բաժանուած են երկու հիմնական խմբի: 1) Հրաշապատում եւ 2) Իրապատում: Այս բաժանումն, անշուշտ, պայմանական է, քանի որ առաջին կարգի հէքեաթները մէջ լաճախ դրսեւորուած են լինում իրական դէպքեր ու դէմքեր, իսկ երկրորդ կարգի հէքեաթներում էլ երբեմն առկայ են գերական ստարիաներ ու երեւոյթներ:

Ինչպէս այլ ժողովուրդների, այնպէս էլ Հայերի հէքեաթները դասական տեսակը կազմում են հրաշապատում հէքեաթները:

Անհրաժեշտ է սակայն նշել, որ իւրաքանչիւր հրաշապատում հէքեաթի հիմքում, ինչքան էլ այն բեկուած լինի երեւալական պատկերների եւ խորհրդանշական կերպարների մէջ, առկայ են իրականութեան տարրեր: Հէքեաթները ոչ միայն արտացոլում են իրականութիւնը, այլեւ դատաւճիճի են կարողում վերջինիս նկատմամբ:

Հայի հրաշապատում հէքեաթները հիմնական նիւթերի մէջ ցայտուն կերպով դրսեւորուած են նրանց սեռային առանձնատեսակութիւնները, բովանդակութեան կէտերը, գեղարուեստական յասկանիները եւ հասարակական - գաղափարական միտումները:

Ահա մի օրինակ, Արճեստ սովորելու նպատակով, ծնողներն իրենց աղջկան տալիս են աղբիւրի ահում աղբոց կախարհ ծերուկին (Օսիկ, Ուխայ, Բարեւեալ): Սա իր աշակերտին սովորեցնում է թռչունի եւ կենդանու փոխակերպութեան արհեստը: Ուսումն աւարտելուց յետոյ աշակերտն ուղարկւում է տուն վերադառնալ, սակայն ուսուցիչը թող չի տալիս, վախճալով, որ նա կը տարածի իր արհեստի գաղտնիքը: Աշակերտը կախարհ ծերուկի աղջկայ օժանդակութեամբ մի կերպ դուրս է սողսկում աղբիւրի ահից: Կախարհ ծերուկը դանազան թռչունների ու կենդանիների կերպարները ընդունելով հետապնդում է նրան: Աշակերտը նոյն միջոցին դիմելով ազատուած է նրա հետապնդումներից - եւ ի վերջոյ ոչնչացնելով կախարհ ծերուկին, վերադառնում է տուն (տես «Օսիկը», «Աղբիւրի հարսը» հէքեաթները):

Նիւթերի նման առանձնատեսակ բնոյթ ունին նաեւ հայի հրաշապատում հէքեաթների գործող անձինք: Գրանք են -

Բնութեան զարթոյնի ու գարնան անձնաւորում Հազարան պղպուլը, որի երգով կանաչում է չորացած այգին:

Երաշտի ու չարութեան խորհրդանշական զիջապ - օձը, որն ապրելով գետերի ու աղբիւրների ահումբում, խանդարում է մարդկանց օգտուելու ջրից:

Ջերմութեան ու լուսի աղբիւր, արեւի անուանակից սակեկարս ու զեղեցիկ Արեւահատը, որ հակառակ խաւար ու չարութեան նիւթած բոլոր դաւերին, դառնում է իր բախտի տէրը:

Պողպատէ մարմնով հրէջը (Ջամիւրաւ), որին յաղթելու միակ միջոցը ուրիշ առարկաների ու էակների մէջ զրտնուող նրա հողին խոցելն է:

Երբէք, եօթը եւ աւելի գլխանի Սպիտակ, Սեւ եւ Կարմիր գեւերը, խարդախ ու չար պառուները, թռչունի թեւերով եւ մարդկային լիզուով օժտուած ծովերի կամ քարայրների մէջ ապրող հրեղէն ձիւերը եւայլն:

Հայկական հրաշապատում հէքեաթները կենտրոնական դէմքը, նրանց հիմնական հերոսը ժողովրդի մարդն է, իր սրտին հողերանութեամբ ու բնաւորութեամբ, իր պայքարով ու սպորումներով: Տարբեր ստեղծագործութիւնների մէջ նա հանդէս է գալիս ու դործում է տարբեր անունների տակ, տարբեր կերպարանքերով: Այսուհանդերձ ժողովրդական այդ բոլոր հերոսները աչքի են ընկնում իրենց ազնուութեամբ, բարութեամբ, աշխատասիրութեամբ, խելքով, շնորհքով, համարձակութեամբ եւ ֆիլիքական ու հողեկան ուրիշ բարեմասնութիւններով: Նրանք մեծ յամառութեամբ ու հետեւողականութեամբ յաղթահարում են իրենց առջեւ ծառայած դժուարութիւններն ու խոչընդոտները, անձնական ջանքերով ստեղծում ապահով ու երջանիկ կեանքի պայմաններ: Այդպիսիք են հրաշապատում հէքեաթները ոչ միայն տղամարդ, այլեւ կին հերոսները, որոնք նոյնպէս հանդէս են գալիս իրենց գեղեցիկութեան, խելքի, ուժի, բարոյական բարձր սկզբունքների կենդանի մարմնացումների հիանալի օրինակներով ժողովրդի պատկերացումները խեղարկան կնոջ վերաբերեալ:

Հրաշապատում հէքեաթների մէջ իրենց գլխաւոր հերոս բաւական յաճախ հանդէս է գալիս նաեւ կրտսեր թագաւորը, որն այստեղ սովորաբար հակադրուած է իր աւալ ու միջակ կերպարներին: Որտեղի, ձկնորսի, հովիւի, գիւղացու դաւակների եւ միւսների նման նա հակամարտութեան մէջ է գտնուում թագաւորների, նազիր - վիզիրների, իշխանների, մելիքների, խանների, բէգերի հետ, մերկացնում, շարաչար պատժում ու պարտութեան է մատնում վերջիններին:

Տարբերութիւնով իրարից նիւթերով, գործով անձերով եւ հերոսներով, հրաշապատում հէքեաթները մօտ ու նման են իրար իրենց հասարակական - գաղափարական լիցքով: Նրանց բոլորի մէջ էլ, տարբեր ձեւերով ու կրանգաւորումներով, դրսեւորուած են երանգաւոր լուսարոյն ձգտումներն ու երջանիկ կեանքի պայմանները, որ կեանքում միշտ չէ, որ յաղթել է վերջինս: Այս շեղումը իրականութիւնից իր հիմքերն ունի զարմեալ նոյն իրականութեան մէջ: Ժողովրդի լուսատեսութեան ու առողջութեան, սեփական անպարտելի ուժի ու վերջնական յաղթանակի վերաբերեալ նրա ունեցած վստահատուն ցայտուն արտայայտութիւնն է դա, որ շեղուած կերպով երեւան է գալիս ոչ միայն հէքեաթների, այլեւ նրա բանաւոր ստեղծագործութեան շատ ուրիշ յուշարձանների մէջ: Ճիշդ է նկատուած, որ աւանդական բանահիւսութեանը կատարելապէս խորթ է յոռետեսութիւնը, չնայած այն փաստին, որ նրա ստեղծողները ծանր կեանք են ունեցել: Սակայն չնայած այդ բոլորին, հասարակականութեան յատուկ է եղել անմահութեան գիտակցութիւնը եւ այն համոզումը, թէ նա կը յաղթանակի իրեն թշնամի բոլոր սթերի:

Հրաշապատում հէքեաթներից բացի Հայաստանում գրքերի ընթացքում բնականութեամբ ու սերնդից - սերունդ պատմուել են նաեւ շատ թիւով իրապատում հէքեաթներ: Իրենց ծագումով դրանք հիմնականում կապուած են աւատապետական հասարակարգի հետ եւ արտացոլում են վերջինիս պայմաններում գոյութիւն ունեցող անտեսական, ընկերային, իրաւական, կենցաղային երեւոյթ-

րական լիցքով: Նրանց բոլորի մէջ էլ, տարբեր ձեւերով ու կրանգաւորումներով, դրսեւորուած են մարդկանց լուսարոյն ձգտումներն ու երազանքները առատութեան, երջանիկութեան, խաղաղութեան, համերաշխութեան, ազատ ու անկաշկանդ կեանքի ու աշխատանքի, ճերմութեան եւ գանազան հիւանդութիւնների դէմ պայքարելու անհրաժեշտութեան մասին: Նրանց բոլորի մէջ էլ, տարբեր ձեւերով, արձագանգ են գտել այն ճիւղերն ու ջանքերը, որ գործադրել են մարդիկ այդ ձգտումներն ու երազանքները ի կատար մտնելու, չըջապատի բնութեան եւ հասարակական կեանքի չար ուժերը ճանաչելու, գրանք յաղթահարելու եւ առհասարակ իրականութիւնը վերափոխելու ուղղութեամբ:

Հրաշապատում հէքեաթների մէջ ցայտուն անդրադարձում գտած «չարի» ու «բարու» կտիւր այդ պայքարի խորհրդանշական արտայայտութիւնն է, անձնաւորուած համապատասխան հէքեաթային բացասական ու դրական կերպարների մէջ:

Յիշենք, իրբեւ օրինակ, «Հազարան պղպուլ» յայտնի հէքեաթը, ուր չարի կրողներն են անմահական խնձորները յափշտակող դազերի դեւը, ջուրն արգելող հակաշական վիշապը, պողպատամարմին հրէջը, իսկ բարունը՝ հնարամիտ ու անվեհեր կրտսեր թագաւորազոյր կամ գեղջուկ Այո - Գինտն:

Հրաշապատում հէքեաթների մէջ չարի ու բարու պայքարը սովորաբար վերջանում է բարու յաղթանակով, չնայած այն հանգամանքին, որ կեանքում միշտ չէ, որ յաղթել է վերջինս: Այս շեղումը իրականութիւնից իր հիմքերն ունի զարմեալ նոյն իրականութեան մէջ: Ժողովրդի լուսատեսութեան ու առողջութեան, սեփական անպարտելի ուժի ու վերջնական յաղթանակի վերաբերեալ նրա ունեցած վստահատուն ցայտուն արտայայտութիւնն է դա, որ շեղուած կերպով երեւան է գալիս ոչ միայն հէքեաթների, այլեւ նրա բանաւոր ստեղծագործութեան շատ ուրիշ յուշարձանների մէջ: Ճիշդ է նկատուած, որ աւանդական բանահիւսութեանը կատարելապէս խորթ է յոռետեսութիւնը, չնայած այն փաստին, որ նրա ստեղծողները ծանր կեանք են ունեցել: Սակայն չնայած այդ բոլորին, հասարակականութեան յատուկ է եղել անմահութեան գիտակցութիւնը եւ այն համոզումը, թէ նա կը յաղթանակի իրեն թշնամի բոլոր սթերի:

Հրաշապատում հէքեաթներից բացի Հայաստանում գրքերի ընթացքում բնականութեամբ ու սերնդից - սերունդ պատմուել են նաեւ շատ թիւով իրապատում հէքեաթներ: Իրենց ծագումով դրանք հիմնականում կապուած են աւատապետական հասարակարգի հետ եւ արտացոլում են վերջինիս պայմաններում գոյութիւն ունեցող անտեսական, ընկերային, իրաւական, կենցաղային երեւոյթ-

ներն ու յարաբերութիւնները: Այդ սեռի հէքեաթները հասարակական գաղափարական հիմնական բովանդակութիւնը կազմում են ապահով ու երջանիկ կեանքի ժողովրդական երազանքն ու ձգտումը եւ այն տեսական, յամառ պայքարը, որ մղել է նա գրքերի ընթացքում իր այդ երազանքին հասնելու համար: Տարբերութիւնը այն է, որ մինչդեռ առաջին դէպքում ժողովրդի ձրցումներն իրականանում են զլխաւորապէս բնութեան «չար»ութեան դէմ տարուող պայքարի միջոցով, երկրորդ դէպքում նոյն այդ պայքարը հիմնականում ուղղուած է ընկերային կեանքի «չար»ութեան դէմ:

Մեծ է առհասարակ հէքեաթների, այդ թուում նաեւ հայի հէքեաթների, ինչպէս գաղափարական, այնպէս էլ պատմական հանաչողական եւ գրական - գեղարուեստական արժէքն ու նշանակութիւնը: Հէքեաթները ժողովրդի համար միայն հանելի ժամանցի առարկայ չեն եղել, որոնցմով նա կարճել է ձմրան երկար ու ձանձրալի գիշերները, փարաւոյցները կարճ ծանր ստորեայի ճնշիչ տպաւորութիւնը: Նրանք կատարել են հասարակական լայն գանդուածների լուսարոյն ձրցումների ու իդճերի իւրապատուկ համոզողի դերը, ամբապնդել են նրանց ներկրական աւանդները իրար յաջորդող սերունդների գիտակցութեան մէջ: Հէքեաթների միջոցով ժողովուրդը դրսեւորել է այն սպորումները, որ մղել է ինքր բնութեան տարերային ուժերի յաղթահարման համար, արտայայտել իր մտորումները, որոնք էլ իր կրած անուր ստատպանքների պատճառները, պայքարի կոչ է արել ամէն տիպի բնութեան, ճնշման, անարդարութեան ու շահագործման դէմ:

Մարդիկ գրքեր շարունակ ուղեւորուել են հէքեաթների հերոսների խիզախութեան, անվեհերութեան, խելքի ու հրեւաւորութեան հիանալի օրինակներով: Գժուարութիւնները յաղթահարելու մեծ կամքով, չքաւորներն ու ընկածներին զօրափոխ կանգնելու ազնիւ ձգտումով արդարութիւնը պաշտպանելու եւ ճշմարտութեանը հասնելու անձնագործ պատասխանութեամբ, ջանադիր աշխատասիրութեամբ, հաւատարմութեամբ եւ անձնագործութեամբ:

Ժողովրդական բանահիւսութեան միս սեռերի հետ, հէքեաթները շնորհակալութեամբ նիւթ են տալիս հողերանութիւնը, նրա իդճերն ու ակնկալութիւնները, նրա բուն պատմութիւնը ուսումնասիրելու համար:

Ա. ԴԱՆԱՍԱՆՅԱՆ

«Պատմա - բանասիրական հանդէս»

ԿԱՐԴԱՏԵՒ ԿԱՐԱԾՆԵՒ «ՅԱՌԱՋ»

ԲՈՒՍ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐԸ ՊԻՏԻ ԳՐԱԻԷՆ ԱՆԱՏՈՒՆ

(ԻՆՉԵՐ ԿԸ ԳՐԵՆ
ԹՐԲԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ)

Թէեւ, մեր անպաշտօն յայտարարութիւններէն դատելով, բոլոր արեւելեան ժողովուրդները այն ընդհանուր համոզում մը ունին, թէ մենք Բուլղարիկներուն դաշնակիցներն ենք եւ իրբեւ այդ ալ, իրենց յոյսերն ու ազատագրումի ակնկալուածքներն իրենց զրած են բուլղարիկ Ռուսիոյ վրայ:

Անկարելի է աւելի երկար շարունակել այս կայունութիւնը, որ որեւէ կայ շունի իրողութեանց հետ: Հետեւաբար, եթէ պիտի կարողանանք մեր փառքը ձեւով դաշնակիցները ըլլալ, ապիկա հարկ է որ իրականացնենք օր առաջ եւ դայն յայտարարենք բոլորին: Իսկ եթէ կարելի չէ

որեւէ համաձայնութիւն գոյացնել, այդ եւս հարկ է գիտնալ շուտով եւ առաջին իսկ առթիւ, քանի որ պարտաւոր ենք շարժելու ըստ այնմ, ստեղծուելիք նոր կացութեան յստակախալիք վիճակներու համաձայն:

Երբորդ, Ազրբայճանի հետ կարենալ կապ հաստատելու համար, Հայաստանի ի վնաս կատարուած իրողութիւն մը ստեղծելու ուղղութեամբ պէտք չէ յոյս դնել Ռուսիոյ վրայ եւ առանց Մոսկուայի հաւանութիւնը ստանալու, պարտինք օգտուել մեր իսկ սեփական միջոցներէն, ներկայացող առաջին իսկ առթիւն:

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ ԿԱՐԵՒԻ ՁԷ

ՄԵՐ ԱՋԳԱՅԻՆ ՈՒՆՏԸ ՓՈՒՆԵԼ

Չորրորդ, պէտք է, որ փոխանակ մեծ ակնկալութիւններով կապուելու Ռուսերուն, սկսինք մէկ դահիկանէն եւ մէկ փամփուռէն, բայց վայրկեան առաջ ձեւարկուի օժանդակութեան, Սեւ Մովեան նաւահանդիսաներու վրայէն: Եթէ պատերազանական գործիքներ չունին անդամ, ոչ մէկ տարակոյս միւս կողմէ, որ ոսկի ունին սակայն...»:

Այս տեղեկագրին մէջ, յստակօրէն նըկատուած ու շեղուած են ուսուական նըպատակներն ու մտադրութիւնները,

Թուրքիոյ եւ Թուրքերուն հանդէպ: Այս տեղեկագրին մէջ ալ ի յայտ եկած կարծիքին ու համոզումին համաձայն, Ռուսերուն նպատակն էր Թուրքիան զրկել անկախ եւ ինքնիշխան քաղաքականութիւն մը հետապնդելու կարելիութենէն եւ այս նպատակով ալ կ'ուզէին երկիրը դնել կատարուած իրողութեան մը առջեւ, մէկ օրէն միւսը դայն ներքնապէս համայնաւարացնելով, անակնկալօրէն:

Ռուսերը, իրենց կատարած քարոզութիւններով այնպէս մը կ'ուզէին ցոյց տալ Անգլիացիներուն, որ իրբեւ թէ Թուրքիան կը դառնուի իրենց հակակշիռն ու ազդեցութեանը ներքեւ եւ այս պարագան ալ կ'օգտաւորուէին բանակցութեանց ժամանակ, փոխադարձ շահեր ապահովելու համար:

Արդարեւ, յետպայլին ալ, դէպքերու պարզացումը ժամանակի ընթացքին ցոյց տուաւ, որ Թուրքիոյ Ազրբայճին Մեծ Ժողովը մագաչափ մը իսկ չէր խաբուած, այս ուղղութեամբ իր ունեցած նախատեսութեանց մէջ:

ՌՈՒՍԱԿԱՆ ՄՏԱԿՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՏԱԿԱՒ ԵՐԵՒԱՆ ԿՈՒԳԱՆ

Պէքիւր Սամի պէյ, 1920 Օգոստոս 28ին, անդամ մը եւս տեսակցած է Ձիչերինի

հետ, Մոսկուայի Արտաքին Կոմիտարութեան շէնքին մէջ:

Այս տեսակցութեան ընթացքին, Պէքիւր Սամի պէյ մասնաւորաբար ծանրացած է «Հայաստանի ճամբան բանալու, օժանդակութեան փութացումին եւ յատկապէս պատրաստուած եւ մակալուած թուրքեւստ բարեկամութեան դաշնակցի վաւերացումին անհրաժեշտութեանը վրայ»:

Ռուսական պատուիրակութեան նախագահը, Սապանին, դաշնադրի իւրմբայրուածին յաջորդ օրն իսկ բաժնուած էր Մոսկուայէն ու մեկնած:

Նախ քան անդրադառնալ այդ հետցումին շարժաթիւններուն ու հետեւանքներուն, հոս քանի մը բառով օգտակար նուաճին վերջին պարբերութիւնը այդ թուրքեւստական բարեկամութեան դաշնակցին խմբագրուած ձեւին:

«... Թուրքիոյ բացատրութեամբ, Պոլսոյ Երեւոյթանական Ժողովին կողմէ պատրաստուած եւ հրատարակուած 1920ի Փետրուարին ալ մամուլին եւ օտար պետութեանց ղեկավարութեանց յանձնուած թուրք Ազրբայճին Ուխային մէջ ակնարկութիւններ կը կատարուին հողամասերու մասին»:

(18 Շար.)

—*—

ԱԿՆԱԿ ՄԸ ԹՈՒՐԲԻՈՅ ՎՐԱՅ

« ՀԱՅ-ԲՈՅԺ »-Ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆԻ

Մօտ օրէն լոյս կը տեսնէ ՀԱՅ - ԲՈՅԺ-Ժը: Այս առթիւ վարչութիւնը հետեւեալ յայտարարութիւնը հրատարակած է:

ՀԱՅ - ԲՈՅԺի այս թիւը ծրագրուած էր լոյս բնծայել 128 էջ, իրբեւ 1965 տարեջրանի վեցամսեայ երկրորդ հատոր: Տպագրական գծաւարկութեանց պատճառով, աւելի չուշացնելու համար ստաբուլը, հրատարակ կը հանձնէր ութսուն էջ, մինչեւ դարուն՝ բաժանորդներուն տալու խոստումով յաւելուածական թիւ մը եւս, 48 էջ:

Հակառակ գծաւարկութեանց, որոնք ծանօթ են ամէն ընթերցողի, կը շարունակուէի այս թերթը... հրաշքի պէս: Թէեւ բոլորովին միանալ կատարելու համար ոչ միայն խմբագրական, այլեւ վարչական ստալակայի աշխատանքները, յաճախ արպագրութեան վերաբերեալ գործեր եւս, ինչպէս եւ առաջուրը, այսուհանդերձ զեռ պատճառ չէ կամքի ուժը անոր որ կը վարէ ՀԱՅ - ԲՈՅԺը:

Այս առթիւ, շնորհակալութիւն մեր բարեկամներուն եւ հաւատարիմ ընթերցողներուն, որոնք միշտ ապացոյց են տուեր համակրանքի եւ պարտաճանաչութեան:

Դարձեալ այս առթիւ, կարելի չէ ցուցյալանել այն բաժանորդներուն, որոնք այս կամ այն ձևով վնաս հասցուցին այս հանրանուէր, այս հանրօգուտ ձեռնարկին, բաժանորդագրուելով բայց բաժնեզին չվճարելու հարցը ձեռն փորձելով:

Ի դէպ, զարմանալի կը դաննէր որ մեր հաւատարիմ բաժանորդներն իսկ այս տարի ցոյց չտուին իրենց սովորական փութիտութիւնը: Ետեւեր կան, որ այս տարի չեն վճարած իրենց բաժնեդիրը:

1934ին ի վեր կը հրատարակուի ՀԱՅ - ԲՈՅԺը: Բայց չվճարողներուն թիւը, առաջին թիւին սկսեալ, այնքան է բարձրացած՝ որքան վճարողներուն թիւը: Պատճառն այն է, նախ, որ խմբագիրը իրեն ամօթ կը համարի պահանջել անպարտաճանաչ ընթերցողին պարտքը: Երկրորդ՝ խմբագիրը մեզք կը համարի վատնել իր ժամանակը աւելորդ նամակագրութեամբ, անպարտաճանաչ ընթերցողներու պարտքը պահանջելով, երբ այդ սուրբ ժամանակը պէտք է օգտագործուի գրական սուրբ աշխատանքներու համար:

Այսօր, սակայն, կը կրկնեմ. — Նա մակ չեմ կրնար գրել նման անպարտա-

տեն՝ անտեսականը օգտագործել ի նը պատ քաղաքական իրենց ձգտումներուն: Այսպէս էր առեւտարն վերջին երեք օսմանեան սուլթաններու օրով, նոյնն է այսօր ալ:

Տ. Ֆ.

ճանաչներու: Ժամանակա աւելի սուղ է քան իրենց բարեկամութիւնը: Իմ գրա-կան աշխատանքս չեմ կրնար դո՛ւնել 15 ֆրանք բաժնեդիրն մը պահանջելու համար: Բայց այսու ոչ ոք ՀԱՅ - ԲՈՅԺ կը ստանայ՝ երբ չի վճարեր կանխիկ:

Ստիպուած եմ խիստ խնայողութիւն ընելու՝ ծախքերը կրճատելու տեսակէտով:

Ուխտած եմ շարունակել: Եթէ հրատարակութիւնը այնքան դժուարանայ, որ անհնար թուի շարունակել, պիտի շարունակեմ դարձեալ՝ ի հարկին փախի՜ն փիլի մեքենայով: Եւ ես պիտի գրեմ, ես պիտի սպեմ:

Հաւատարիմ բաժանորդը երբեք թող չվախնայ: Թող ոչ ոք կասկածի թէ իր վճարած բաժնեդիրը, 15 ֆրանք, կ'ստանեմ կ'ուտեմ՝ ստանց թերթը դրկելու:

ՀԱՅ - ԲՈՅԺ-ի բարեկամներ, տարածեցէք այս թերթը, ուժ տուէք անոր բարգաւաճման եւ կանոնաւոր հրատարակութեան: Թոյլ մի տաք որ մակարոյձներ վնասեն:

ՀԱՅ - ԲՈՅԺ հանրօգուտ պարբերաթերթ մըն է, — կը ծառայէ հայ անհատին ստղծութեան, ճշգրիտ գիտութեան, ընդհանուր գարգացման եւ Մեծաբանչին բարձրացման:

ՀԱՅ - ԲՈՅԺ ձեռնարկ մըն է, որ կ'անցնէ ազգային հարստութիւնը «Իր լեզուական շինարարութեամբ»՝ ինչպէս կ'ըսեն:

ՀԱՅ - ԲՈՅԺ-ի տարեկան բաժնեդիրն է 15 ֆրանք, (արտասահման՝ 20 ֆրանք):

Շ. ՆԱՐԳՈՒՆԻ

×

« Նարդեան Հրատարակութեանց » շարքին առաջինը, ԼՈՒՍԱՄԱՏԵԱՆ, լոյս կը տեսնէ շուտով: ՀԱՅ - ԲՈՅԺ-ն եղաւ յայտարարութիւն պատեալը: Յաջորդ հատորները լոյս պիտի տեսնեն արտասահմանի մէջ, եւ այսպէս կը յուսանք կանոնաւորել թէ ՀԱՅ - ԲՈՅԺ-ի հրատարակութիւնը եւ թէ խոստացուած միւս հատորները:

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՄԲԵՐ

Կեանքը կը փոխուի, բայց չի կորսուիր, յոյսը կը մարի, բայց չի մեռնիր, ճշմարտութիւնը կը ծածկուի, բայց նորէն կը շողայ:

ՇԵԼԼԻ

×

Ազատ ըլլալու համար, պէտք է սուրբիս աղբատ ըլլալ:

ՎԻՔՅՈՐ ՀԻԻԿՈ

×

Յաջողութեան գաղանբը յամառօրէն նպատակին ձգտելն է:

ՏԻԶՐԱՅԷԼԻ

ԶԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

ԿՈՐՈՒՍՏ ՄԸ ԵՒՍ

Վայանսի մէջ Նոյեմբեր 29ին հողին յանձնեցինք սիրուած ազգային մը եւ հաւատաւոր ընկեր մը՝ Մկրտիչ Դաւիթեան, Մարտիրոսի, 61 տարեկան:

Ողբացեալ ընկերը, իր կարգին, ճաշակած էր թրքական սարսափները՝ 1915ի օրերուն: Իր ամբողջ դեղատոտանը զոհ զացած է արիւնտու կաթաղանին: 1924ին շատերու նման կը հաստատուի Ֆրանսա, Վարանա քաղաքը, ուր 1929ին կը մտնէ Հ. Յ. Դաւանկցութեան շարքերը:

Կազմած էր նահապետական բարբերով ապրող օճախ մը:

Հաւատաւոր եւ նուիրեալ, ողբացեալ ընկերը տանտեղական շարունակ ծառայեց իր ժողովուրդին, իր կուսակցութեան ճամբով:

Հանդիստ իր ոսկորներուն:

Տ. ՊԼԳԵԱՆ

ՆՈՐԵՐ ՈՐ ԿԸ ՀԱՄԻՆ

Մէտոնի գիտարանը աշխատող Ռու-մանասյ երիտասարդ Զատիկ Մուրատեան Փարիզի Գիտութեանց Համալսարանին ներկայացուցած է հետեւեալ աւարտաճառը Նոյեմբեր 25ին. —

- 1) Contribution à l'Etude du bord Solaire et de la Structure Chromosphérique.
 - 2) Propositions données par la Faculté : La Théorie de la Supergranulation.
- Եւ արժանացած է Տոբէթօր Էս Սիանս Թիզիֆ տիտղոսին:

ԿԱՐՄԻՐ ԵՐԳԻՄԱՆԲ

—*—

Հալանայի մէջ, երկուստարգ դուպայի մը, քաղաքական դատապարտեալներու բանտը կ'առաջնորդուի:

Հին բանտարկեալները կը հարցնեն. — Քանի՞ տարուան դատապարտուած ես:

— Երկու տարուան կը պատասխանան:

— Ի՞նչ բրած ես:


— Ոչինչ:

— Ի՞նչպէս թէ ոչինչ:

— Կ'երգնում որ բացարձակապէս անմեղ եմ:

— Ատիկա պարագայ խօսք է, կը յարէ փորձառու բանտարկեալ մը: Եթէ իսկապէս բոլորովին անմեղ ըլլայիր՝ անուագին 15 տարուան դատապարտուած պիտի ըլլայիր: Քանի որ միայն երկու տարուան դատապարտուած ես, ըսել է որ բան մը բրած ես...

« Ե Ա Ս Բ Ե Զ »-Ի ԹԵՐԹՕՐԸ (96)



— Եթէ լուս մնացած ըլլայիք, այս փորձանքները ձեր պիտուն պիտի չարչարէին, Պրիան: Ստացանք ձեր բաժինը:

— Ապա զանալով փութարոյն, պիտարկաւսաճուտէն ըսաւ.

— Երջանիկ եմ, որ Տոնալու Մարշը անմեղ է: Այդ երկուստարգը միշտ շատ համակրելի թուած է ինձի: Միեւնոյն տանն զոհուածութիւն մը կը զգամ, որ Գարլոթա Ատամսի մահուան վրէժը պիտի լուծուի: Իսկ զալով՝ այստեղ ներկայ Պրիան Մարթէնին, խոստովանելով որ իմ ամուսինս պիտի դառնայ շուտով, պարտն փութար: Եւ եթէ երբեք ան կը խորհի, թէ պիտի կարենայ, ինչպէս սովորութիւն է Հոլլիվուտի մէջ, իւրաքանչիւր մէկ կամ երկու տարին անգամ մը ամուսնալուծուելու եւ նոր կին աննել, սխալ ճիշդի վրայ զրամ է իր ոտքը: Քանի կ'ընդունի զիս

լրբ իր կինը, պէտք է գիտնայ որ մեր ամուսնութիւնը յաւիտենական պիտի ըլլայ:

Փութար զորովայն նայուածքով զետեց երկուստարգուհին:

— Ձեմ տարակուսիր, օրիորդ, Միթէ չեմ բսած արդէն, որ դուք ունիք բաւականին ուժ, անկարելին կարելի դարձնելու համար...

ԳԼՈՒԽ 31

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՄԸ

Այս տեսակցութեան յաջորդ օրն իսկ անակնկալ կերպով հրահանգուած էր ինձ մեկնել Արժանթին: Ուստի այլեւս բնաւ չտեսայ ժամն Վիլքեմստը եւ թերթերու միջոցաւ է, որ տեղեկացայ իր զատին եւ զատովճոխն:

Ինչպէս ըսի, իմ վերջին հանդիպումս ժամն Վիլքեմստին հետ տեղի ունեցած էր Գրարիճի հացիկոթիթիւն: Սակայն, ամէն անգամ որ իմ մասին կը մտածեմ, եւ կ'երեւակայեմ զինքը Սալուայի իր յարկարմին մէջ, նորաձե սեւ գլխարկներ փորձած պահուն՝ հայելիին առջեւ: Ես վստահ եմ որ այդ վայրկեանին հանդարտ ձեւանալու դերասանական խաղ մը չէր իր կատարածը: Իր ծրագիրը յաջողած էր եւ ինք ոչ խղճահարութիւն կը զգար եւ ոչ ալ մտավախութիւն:

քը անցնի, կը խնդրեմ որ ընծայէք անոր ժողովրդականացնելու բոլոր միջոցները: Ես կը փափաքեմ որ մարդիկ միշտ իմ մասին մտածեն, որովհետեւ արտասովոր կին մըն եմ ես: Այստեղ, բանտին մէջ, ամէն ոք այդ հանգամանքս կը վաւերացնէ:

« Իմ պատմութիւնս կը սկսի Ամերիկայէն, ուր հանդիպեցայ Մերթոնին: Գուշակեցի անմիջապէս, որ եթէ այրի ըլլայի, ան կ'ամուսնանար ինձ հետ: Գրքախոսարար այդ մարդը ամուսնալուծութեան գաղափարը չէր կրնար ըմբռնել: Ետեւ փորձեցի փոխել իր ըմբռնումը, բայց ի գուր: Ձէի համարձակելը շատ պնդելու, վախնալով որ կը վերաւորէի իր սկզբունքները:

« Ուստի մէկ լուծում միայն գտայ. ամուսինս պէտք է որ մեռնի: Այո, բայց ի՞նչպէս կարելի է այդ բախտը ունենալ: Կը շարժարէի միտքս միջոց մը ճարելու համար, երբ իրիկուն մը բեմին վրայ տեսայ Գարլոթա Ատամսը, որ զիս կը կեղծէր: Սքանչելի ներշնչում մը ունեցայ: Իր օգնութեան շնորհիւ, կրնայի անմեղութեան ապացոյց մը ստեղծել:

ԱԿԱՌԱՔՐԻՍՏԻ

Շարք.)

ՇԱՍ. — Պ. Գ. Տօնիկեան, ընտանեկան պարագաները, զուակները ու թոռները, իրենց հետը, բարեկամ ազգականները, խոր ցաւով կը ծանուցանեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր, զոքանջ մօր Տիկին Օդաս Տօնիկեանի մահը որ պատահեցաւ 20-րեքշաբթի Դեկտեմբեր մէջին եւ յուզարկաւորութիւնը կատարուեցաւ տեղ-տեղի Կաթողիկէ եկեղեցիին մէջ, այս տխուր առթիւ որպէս սգակիր հանգուցեալին կնքամայրն ու կնքահայրը Տէր Ե. Տիկին Թորոսեան կը նուիրեն տասը ֆրանք «Յառաջին», տասը Մ. Թէչիլի-եան սրահին, տասը Կապույտ Սաշի 0-դաի. կայանին: (Ստանալ «Յառաջին»):

ՀՈԳԵՂԱՆԳԻՍ

Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ նախկին դպրագետ Պ. Պոզոս Գուլարմ - նեանի քառասունքին առթիւ, եկեղեցւոյս հոգարարութեան եւ երկսեռ դպրագետու կողմէ՝ քառամայր պատարագ եւ հոգեհանգիստ կը կատարուի այս Կիրակի:

X

Տէր Ե. Տիկին Սիմօն Նամբար - ձուկեան եւ զուակները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի այս Կիրակի (12 Դեկտ.) առաւօտ Մարտէյի Մայր եկեղեցիին իրենց մօր, մեծ մօր՝ ԱՅՐԻ Տիկին ԹԱԳՈՒՂԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ:

Ի դիտութիւն որդացեալին յիշատակը յարգողներուն:

ՓՈՒԱՆ ԾԱՂԿԵՊԱԱԿԻ

Սէն Ժերմոսի Թաղ. Սորսուրդը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նըւէրները ողբ. Այրի Տիկին Մարիամ Զրպաղեանի մահուան առթիւ: Զրպաղեան եղբայրներ իրենց մօր մահուան առթիւ եկեղեցւոյ 50 ֆրանք, Շառլ, Մօիս, Ժան Փիէր Զրպաղեան իրենց մեծ մօր մահուան առթիւ եկեղեցւոյ 30, Պ. Պ. Մ. Գասպարեան քսան, Սէֆէրեան Բ., Մ. Աւետիսեան, Թ. Սէֆիլեան, Ա. Սա - մուէլեան տասնական, Այրի Տիկին Ն. Մակարեան հինգ եկեղեցւոյ: Ս. Զէյ - թունցեան քսան Սէն Ռաֆայէլի ծերանոցին:

Թաղ. Սորսուրդը այս առթիւ շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր նուիրատուներուն եւ խորին ցաւակցութիւնները Զրպաղեան եղբայրներուն եւ ննջեցեալի մօտաւոր պարագաներուն:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՔԱՐՈՉ ՍԵՆ ԼՈՒ Այս Կիրակի Սէն - Լուի Հայոց եկեղեցիին կը քարոզէ Թեմիս Առաջնորդ Արտաւազդ Նախկապու թրքոսեան:

ՀԱՅԿԱՔՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ 10 bis, Rue Thouin, PARIS

Այս Կիրակի, ժամը 10-30ին, Հայրապետական ձայնաւոր պատարագ ի ներկայութեան Սէն Լազարի Ապետներուն: Պիտի պատարագէ եւ քարոզէ ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿ. ԱՄԱՏՈՒՆԻ

ՇԱՒՈՒ Է

Փոքրիկի հագուստներու մեծաքանակ արտադրութեան գործ մը, Փարիզի կեդրոնը, շատ փայլուն վիճակի մէջ, երբ տասարդ գոյգի մը համար մեծ ապագայ: Դիմել թերթի խմբագրութեան:

ԳՈՅԱՄԱՐՏ 09.08.1966 Հրատարակութիւն Հ. Յ. Գ. Նոր Սեբաստի Մարտէյի շրջանի: Ապսպրանքներու համար դիմել՝ O. DJARAYAN 2, Place de la Corderie 13 MARSEILLE (7e)

IMPRIMERIE SPÉCIALE DU JOURNAL « HARATCH » 32, Rue de Trévis, PARIS (9e)

ՆՈՒԷՐ

Տէր Ե. Տիկին Պետրոս Զուրաբեան 20 ֆրանք կը նուիրեն Կապ. Սաշի Օդասի կայանին Արշամ Սոնողկարեանի մահուան առթիւ: (Ստանալ «Յառաջին»):

X

Այրի Տիկին Վարդապետեան քսան ֆր. կը նուիրէ եկեղեցւոյ զմբէթին նորոգու - թեան համար: (Ստանալ «Յառաջին»):

ՀՈԳԵՂՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ Դեկտ. 12, Կիրակի ժամը 21ին DANS ST. EUSTACHE ILLUMINÉE (12, Rue Dujour, Paris (1er) Métro: Halles ՎԱՐԴԱՆԱՆՑ ԱՍՊԵՏՆԵՐՈՒ ԵՂՔԱՅՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ կը ներկայացնէ (համաշխարհային առաջին ունկնդրութիւն): DU PROFOND DE L'ABIME (Oratorio) ԲՆԱԳԻՐ ԵՒ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ԱՐՇԱՄ ՃԻԶՄԷՃԵԱՆ Բարձր հովանաւորութեամբ քրդ - տարուքեան նախարար՝ ՄԱՐԿԹԻ ԱՊՐԻԼԵԱՆ ՅԻՄՆԱՄՆԵԱԿԻ ՅԻՇԱՍԱԿԻՆ կը մասնակցին Christiane Eda-Pierre (Soprano) de l'Opéra, Paul-Emile Deiber (récitant) sociétaire de la Comédie-Française, Raffi Ourgandjian (au grand orgue). LES CHANTEURS DE ST. EUSTACHE (Président-Fondateur R. P. Emile Martin) ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ

ԱՐՇԱՄ ՃԻԶՄԷՃԵԱՆԻ ՅԱՅՏԱԳԻՐ. — ԿՈՄԻՏԱՍ, ՀԱՅՐ ՄԱՐԹԷՆ, ՎԻՔՈՐԻՐԱ ՄՈՍԹԵ - ՎԵՐՏԻ, ՈՒՐԱԿԱՆՃԵԱՆ: Տոմարու գին՝ 5ԷՖ 25 ֆրանք Դիմել՝ Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցի, 15 Բիւ Ժան Կոստան, Սէն-Էտի - քաշ (Հալ), Տիրամ (4, Փլաս տը լա Մատրէն), Բալուեան զբոստան, (43 Բիւ Ռիշէ):

Ճ Ա Շ

Սերաստիոյ Նահանգային Մուրատ Ուսումնասիրացի կեդր. վարչութիւնը կը հրաւիրէ իսիի եւ շրջանի բոլոր Հայ - յերը անխափր իր տասնեակնգամեակի առթիւ կազմակերպած ճաշասեղանին: Այս Կիրակի ժամը 5ին իսիի Սերմեան զպրոցի սրահին մէջ: Նախագահութեամբ ԲԺ. Ա. ՊՈՂՈՍԵԱՆԻ Գեղարուեստական ճոխ բաժին, երգ, արտասանութիւն, նուագ եւ շատ մը անակնկալներ, մասնաւորապէս սիրայօ - ժար իրենց մասնակցութիւնը պիտի բերեն հայրենակիցներ, Միքիման Շիրվան - են, Շմաւոն Պալեան, իրենց նուագով եւ երկու քոյրեր Թադէոսեան: Ճաշագին 10 ֆրանք անձ զուր: (Ստանալ «Յառաջին»):

ՏՈՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԱՌԹԻ ՆՈՒԻՐԵՑԷԲ CONTES ET LEGENDES ARMENIENS Ֆրանսերէնով պատրաստուած՝ Շ. Տէր - Մելիքեանի կողմէ Գունաւոր կողմ, մաքուր տպագր - րութիւն, պատկերազարդ: Գին՝ 5 ֆրանք Առաւման ծախքերով 6.50 Ստանալու համար դիմել Հ. Սա - մուէլեան զբոստանը, եւ կամ՝ Mme C. DER-MELKONIAN 11, Rue Gabriel Péri CHATILLON s/BAGNEUX (Seine C. C. P. PARIS 19668-59 Կարելի է նաեւ անձամբ դիմել Յա - նաջի խմբագրութեան:

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԿԻՐԱԿԻ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 19ԻՆ ժամը 16ին: ՏՈՆԱԿԱՆ

ԴՊՐՈՑԱՄԵՐ ՏԻԿԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ ՏՈՆԱԿԱՆ հանդէսը Դեկտեմբեր 19 - ին, Կիրակի կէսօրէ ետք ժամը 4ին վար - ժարանին մէջ:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲԱՅԱՌԻԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ Կազմակերպուած Գ. Կապույտ Խաչի Շրջ. վարչութեան եւ մասնակիցներու կողմէն իրենց կայանի տասնամեակի առիթով եւ անոր ի նպաստ: Հրաւիրուած է Լոնտոնէն Հայ Երիտասարդաց Միութեան Թատերախումբը, ներ - կայացնելու Գ. Սնուկեանցի

Հ. Յ. Գ. ՓԱՐԻԶ. — Հ. Յ. Գ. «Բաֆֆի» խումբի ընկերական ժողովը այս Ուրբաթ ժամը 20ին, Մշակոյթի Տան մէջ: Պարտաւորիչ ներկայութիւն: Որքաւ կարեւոր օրակարգ: ԱՆՅՈՐՎԻԼ. — Հ. Յ. Գ. Ս. Միասեան Ենթակոմիտէին ընկերական ընդհ. ժող - վը այս Ուրբաթ, սովորական հասար - տեղին:

Պ Ե Պ Օ Շաբաթ՝ 18 Դեկտեմբեր Կիրակի՝ 19 Դեկտեմբեր Երկուշաբթի՝ 20 Դեկտեմբեր Երեքշաբթի՝ 21 Դեկտեմբեր Կիրակի՝ 26 Դեկտեմբեր Զորեքշաբթի՝ 29 Դեկտեմբեր Հինգշաբթի՝ 30 Դեկտեմբեր ԱՆՅՈՐՎԻԼԻ մէջ ժամը 20-30ին ՍԱՐՍԷԼԻ մէջ ժամը 15ին ՓԱՐԻԶԻ մէջ ժամը 20-30ին ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՅԻ մէջ ժամը 20-30ին ԼԻՈՆԻ մէջ ժամը 15ին ՄԱՐՍԷՅԻ մէջ ժամը 20-30ին ՎԱՍՆԱՍԻ մէջ ժամը 20-30ին, Տոմար կը վաճառեն Կապույտ Սաշի զր ասենեակը, հայ զբոսաշատները եւ Սաշուհիները: Ապահովեցէ՛ք ձեր տեղերը:

ԹԵՅԱՍԵՂԱՆ Ճրանտահայ Գրողներու Ընկերակցու - թիւնը, 1964ի «Աստուածատուր Հարենց» զբական պարզեւտուութեան առիթով, եւ ի պատիւ Ա. Սոփոկլեանին, այս Կի - րակի ժամը 14-30էն մինչեւ 18, կազմ - կերպած է թէյասեղան մը, Գ. Աճէմեանի ճաշարանին մէջ, 12 Բիւ Քառէ (Փարիզ) սեղանապետութեամբ Հր. Բալուեանի: Կը հրաւիրուին համակիրները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼՄԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԼԻՈՆԻ ՄԷՋ Հովանաւորութեամբ Ազգային Միու - թեան, նախաձեռնութեամբ Հայ Կրթ. մարմնոյ: Ի նպաստ «Հայկազեան» վարժարանի Կրթական զործին: Այս Երկուշաբթի ժամը 20-30ին, Սիե Արքի մէջ, 257 Բիւ Պուայօ (Եկեղեցւոյ մօտ), Բիւ Փօլ Պերի անկիւնը: Պիտի ցուցադրուին ԼԵՆԻՆԱՅԻՆ ԼԻՃԻ ԳԱՂՏՆԻՔԸ Եւ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ Գունաւոր եւ հայախօս ժապաւէններ:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ Մուրատ - Ռաֆայէլեան Նախկին Աշ - կերտաց Միութեան ՊԱՐԱՀԱՆՂԱԸ ՓԵՏՐՈՒԱՐ ՅԻՆ X Սամուէլ Մուրատեան վարժարանի քա - տերական ներկայացումը՝ ՄԱՐՏ 20ԻՆ X Դպրոցասէրի գեղարուեստական հան - դէսը Մարտ 28ին, Կիրակի օր:

ՅՈՒՇԱՏԵՏՐ Տէսիւն. — Կապ. Սաշի մասնահիւղի ժո - ղովը այս Ուրբաթ, ժամը 21ին Հ. Յ. Գ. Տան մէջ: ԼԻՈՆ. — Ֆ. Կ. Սաշի վարչութիւնը ընդհ. ժողովը կը հրաւիրէ իր բոլոր ըն - կերուհիները այս Երեքշաբթի ժամը 15 - ին, Ազգային Տան սրահը: Կարեւոր օրա - կարգ: Կը խնդրուի ճշգրտապէս ըլլալ:

Հայ Արիներու Միութեան Փարիզի շրջանի տարեկան համոզէր, Կիրակի Մարտ 6, կէսօրէ ետք ժամը 2-30, Սալ տը լա Շիմի: X Վիէն. — Մանուկներուն օրը Յունուար 9ին, Սէքըր Կաթողիկ սրահին մէջ: Կապույտ Սաշի Վիէնի մասնահիւղի պարահանդէսը Դեկտեմբեր 18ին, Սալ տէ ֆէրի մէջ: Մանրամասնութիւնները յե - տազային:

ԿԸ ՓՆՏՈՒՒԻ Հայաստանէն Տիկին Նուրար Շահպա - Էան կը փնտէս իր զուակը՝ Շահպաղեան Սաշիկ Սրապիտին: Հօրը անունը՝ Սրա - պիտն, քոյրը՝ Հայկանուշ, երկու եղբայր - ները՝ Մնացական եւ Յարութիւն: Ապ - բաժնէ Երեսն Գրուցեց փողոցի քիւ 71 տունը: Իր ընտանիքը ողջ - առողջ է եւ անհամբեր իրմէ լուրի կը սպասէ: Հաս - ցէն նոյնն է:

ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ ՍԱԿԱԳԻՆ ՄԵԿ ԱՆԳԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԴ	45 Գ.	մինչեւ 1/4 սիւնակ
ՀՈԳԵՂԱՆԳԻՍ	25 Գ.	մինչեւ 1/8 սիւնակ
ՅԱԻԱԿՑՈՒԹԻՒՆ	10 Գ.	» » »
ՇՆՈՐ ՀԱԿԱԼԻԲ	20 Գ.	» » »
ՀԱՐՍԱՆԻԲ: ՆՇԱՆՏՈՒԲ	25 Գ.	» » »
ԾՆՈՒՆԻ	25 Գ.	» » »
«ՓՈՒԱՆ ԾԱՂԿԵՊԱԱԿԻ»	10 Գ.	» » »
«ԿԸ ՓՆՏՈՒՒԻ»	10 Գ.	» » »
ԾԱՆՈՒԷ	25 Գ.	» » »

Այս գիծերը մէկ անգամ հրատարակելի եւ Յշմեկուած ծաւալով ազ - դերու համար են, չարքար էրը: Կանխիկ վճարումը պարտաւորիչ է: Առևտրական կամ այլ ազգերու մասնաւոր պայմաններու համար գիւնը վարչութեան:

ԴԷՊԻ ԱՇՏԻՇԱՏ

(ՎԱՀԱԳՆԻ ԾՆՈՒՆԻԸ)

Դիւցազուններու ծնունդը՝ իրենց ցե - ղին նկարագրին ու հոգեկան առաքելու - թեանց, սիրած ու ապրած սովորու - թեանց, թանձրացեալ խորհուրդին մարմ - նացումն է :

Հայոց քաջարի «Վահագն»ի հրաշապա - տում ծնունդն ալ այսպէս եղած է : Վի - ջապի խորհուրդին մէջ անոր մարմնաւո - րած ցեղին նկարագրի յատկութիւնները մեկնարանուած են :

Վիւջապ — Մեծ օձ, մեծ ձուկ, ած - տէր, փոթորիկ, թաթառ, կամ ուրախան : Ծովու ու ցամաքի կենդանիներուն , սպանալու, շանթերուն եւ օղերեւութա - բանական զօրութեանց անհասանելի ու - ժերուն համազրութիւնն է Վահագնը :

Դիւցազուն Վահագնի թեւաւոր վիւջա - պաքաղ պատկերը տիեզերքի ուժերը նը - ւաճելու ճշտող կամքին Հայոց լուսազոյն արտայայտութիւնն է :

Վահագնի ծնունդը.— Երկնէր երկին եւ երկիր, Երկնէր եւ ծիրանի ծով . Երկն ի ծովուն ունէր զԿարմրիկ եղէգնիկ : Ընդ եղեգան փոխ ծուխ ելանէր, Ընդ եղեգան փող բոց ելանէր . Եւ ի բոցոյն պատմեցիկի վազէր : Նա հուր հեք ունէր, բոց ունէր մօրուս, Եւ աչկուսնքն էին արեգակուսնք :

Կրակէն ծնած Վահագնը բնաւորու - թեամբ ալ սէջ էր, առնական եւ անպար - տելի :

Կաւանդուի, թէ ան կ'արշաւէ մինչեւ Ասորեստանի երկիրը . եւ Ասորոց Բար - շամ թագաւորին պալատը կ'աւերէ : Երբ Բարշամի շտեմարաններուն յարգերը տուրակը լեցուցած իր առնը կը բերէր, պարտեալ Բարշամի փոխըմէթի նետը հա - ղել Վահագնի տուրակին յատակը կրնայ ծակել :

Վահագնի տուրակէն թափած յարգե - րէն կը դոյանայ երկնակամարի «յարդ - զող»ը՝ աստղերու հոյլը : Այս աստղայլը վկայութիւն մըն է, թէ մեր նախահայ - րերը, նախապատմական շրջաններուն իսկ, երկնային մոլորակներու ու աստ - ղերու երևոյթներուն հանդամանքները քննած եւ ուսումնասիրած են :

Վահագնի զլխաւոր մեհեանը ԳՐԳՈՒՐ լերանց զերկը հաստատուած է : Անոր բա - ղինին վրայ գննուած դահածոնքին պատճառով, այդտեղին անունը ԱՇՏԻ - ՇԱՏ գրուած է :

Այսօր իսկ, Մշտ շրջակայքը հինէն մը - նացած Վիւջապի քանդակներով քարերու կը հանդիպինք : Իննականն լեռներուն

վրայ՝ Դեմետրի ու Գիսանէի անունով կառուցուած «Վիւջապազուն» եղբայրնե - րու մեհեանին անունը, Վիւջապի Որդի , Վիւջապածնունդ , այսինքն Վահագնի սե - րունդէն սերած , հրաշածնունդ ցեղի մը շտապիւրը եղած ըլլալու նշանակութիւնը ունեցած պէտք է ըլլայ . . . :

ԻՆՆԱԿՆԵԱՆ ԼԵՈՒՆԵՐՆ Ի ՎԵՐ

Մութ զիշերին, ծառի մը տակ նստած , յարզգողի տօնակատարութեան մասնա - կից էի դարձած : Ստուեր մը օրօրուելով ինծի մօտեցաւ : Տակաւ Սլիւնեաց լեռ - ներու ետին պահուրտող լուսնի մարդ լոյսով նշմարեցի . . . խոշոր սրջ մը, որ ցցուցաւ դէմս :

Նստած տեղս դաժուած մնացի, որով - հետեւ գիտէի թէ որեւէ շարժում կենդա - նին կը խորհչեցնէ : Ուստի խելօքիկ մը կենալով իրեն հնազանդութիւնս յայտնել ուղեցի :

Անտառաքնակը միջոց մը զիս զիտելէ ետք՝ սկսաւ դէպի իմ կողմս թքնել : Նո - րէն չչարժեցայ : Այս անգամ մթմթըր - թալով եւ երկու կողերուն վրայ կտրա - ուելով, ծառերուն մէջ անյայտացաւ : Ես ալ լայն շունչ մը առնելէ ետք ընկերն - րուս մօտ փութացի :

Արջուն թքնելը եթէ նախատինքնի ար - տայայտութիւն էր, կարեւորութիւն չու - նի, բայց եթէ համակրական բնոյթ ու - նէր՝ իր հիւրամեծարութեան համար ե - րախտապարտ եմ :

Պահ մըն ալ հանդստանալու համար , մեր ընկերներէն մին պահակ թողլով՝ հողին վրայ երկնցայ : Արջուն այցելու - թիւնը մոռցուցեր էր երկար ճամբորդու - թեան յոգնութիւնը : Մէկ կողմէն ալ մը - սածումներու տղանցքը քունս փախ - ցուց :

Վերջապէս, Բոյնունեաց լեռներու ետե - վէն, երկինքը սկսաւ լուսաւորուիլ : Մենք ալ մեր պայտասկները շարժաւորներուն թողլով եւ մէյմէկ փայտ առնելով, չորս ընկեր, Ս. Կարապետ երթալու համար խոր ու խիտ անտառները մտանք :

Լեռներ ու ձորեր անցնելով , հեւ ի հեւ, դարաւոր կարօտը սրտիս, Ս. Կա - րապետ ուխտի, ու ես կ'երթամ . . . :

Հին ճամբաներէն, հին հաւատքով եր - կու ժամ քալելէ ետք բուրի մը զագա - թէն, արեւուն առաջին ճառագայթներու վը պայտերուս հաւատքի կեզրոն սրբա - վայրը տամուկ աչքերով ու զօղացող ձեռքերով կ'ողջունեմ . . . :

Ոտքի կանգնած , ձեռքիս փայտին կըր - թնած , երկար ժամեր դէմս պարզուող տեսարանը կուշտ ու կուս կը զիտեմ : Եւ ապա, հին ուխտաւոր դէպի Ս. Կա - րապետ, ու ես կ'երթամ . . . :

Մեկ զիմաւորող Բիւրտերուն բարեւ մը տալէ ետք, ուղղակի լուսադրիւրին քով զացի : Կարօտի աղօթքը արտասանելէ ետք՝ լուսացուցայ եւ ափ մըն ալ ջուր խմելով , սկսայ ման դալ աւերակներուն մէջ : Տասնեւչորս ժամեր փրատակները

նօթագրելով ու լուսանկարելով, անոնց հետ զլուս զլիւի հին յիշատակներ փո - խանակեցի :

Կէսօրին, հաղիւ քառորդ ժամ մը ճաշի - զագար ընելով, աշխատանքներս շարու - նակեցի :

Ս. Կարապետի վանքին այսօրուան բը - նակիչները, որոնք Բիւրտեր են, անոնք ալ Ս. Կարապետի մասին պատմութիւն - ներ կը պատմեն : Կարգ մը տեղանուններ հայերէն կ'արտասանեն : Օր մը, վան - քին հիւսիսային կողմի բլուրին վրայ Սո - ֆիլին հետ նստած կը խօսէինք : Տեղ մը ցոյց տալով՝ «այս ալ մեղուանոցն է» բ - սաւ :

Դարձեալ, հիւսիսային կողմի ընկու - ղենիներուն մօտ, աղբիւրին քով նստած կը խօսէինք, ծերուկ Բիւրտ մը, որ վանքին փառքի օրերուն՝ անոր խոհա - նոցէն շատ անգամներ կերակրուած է, ե - րանելի օրերը սրտի կսկիծով վերջիւնց եւ սկսաւ Աջոյին պատմութիւնը պատ - մել .

Երեսուսարգ աղջիկ մը փափաքեր է Ս. Կարապետի գերեզմանը այցելել : Այստեղ մուտքը կիններուն արգիլուած ըլ - լալուն, կը մերժուի սակայն : Աջոն, այս - պէս կը կոչէին այդ աղջիկը, հնարք մը գտնելով գաղտնաբար ներս կը մտնէ : Բայց խեղճ աղջիկը կը հիւանդանայ եւ գրեթէ կիսամերկ փիճակի մէջ լեռները կը շրջի : Ան Չեղ ու մեղ՝ ձորա քոցոց . . . ըսելով ման կուզար .

Յուզ. Եպիսկ. Մամիկոնեան «Պատ - մութիւն Տարօնոյ» գիրքին մէջ յիշած է, թէ Վարդ Պատրիկի կինը, Մեծ Տիկինն ալ Ս. Կարապետի գերեզմանը մանկու - համար վանականները ստիպած էր, բայց դժբախտաբար ուխտը կատարելն ետք մահացած :

Նոր բնակարաններու պատերուն քարե - րուն ճաճարին պատերէն հանուած ըլ - լալը յայտնի է վրայի քանդակներէն : Բոլորը ուշի ուշով կը գնեմ ու կը լու - սանկարեմ : Պատի մը վրայ 50 - 60 սան - թեմեթր ծաւալով քարի մը վրայ, գեղե - ցիկ շրջանակի մը մէջ, յիշատակարան մը փորագրուած է : Գժբախտաբար ուս - եթեմքը պատերազմի ընթացքին երկու գնդակներու հասցուցած աւերին պատ - ճառով զրութիւնը ամբողջութեամբ կա - րելի չեղաւ կարգալ .

«Վերստն միջնաւալ նորոյումն մե - լոյ աթոռոյս նորակերտ մասն Արեւմը - տից եւ Հիւսիսային մասն երկուց . . . չը - նորհիւ հոգւոյն տուողին Պետրոս Վար - դապետս Տէր Կիրակոսեան առաջնորդեալ աստիճ նստման այս պղեղս կանգնե - ցաւ» :

Պատերուն վրայ աստ ու անդ երեւցող հին ու նոր քանդակներուն ու փորագրու - թիւններուն առջեւ ժամերով երկիւզա - ծութեամբ կը կենամ : Արեւը մայրամու - տին մօտեցած է : Մինչ ես աւերակներուն մէջ ման կուզամ :

Գիշերուան ժամը ութն է : Վերջապէս բազմաթիւ ձախորդութիւններէ ետք մե -

«ԿԻԼԻԿԵԱՆ ՇՐՋԱՆ»

(1375 - 1441)

Իրրեւ վարդապետական աւարտաճա - ներկայացուած այս գրքոյիլը, որ ունի 107 էջ, կը բաղկանայ երեք գլուխներէ եւ ժամանակագրական ցուցակէ մը :

Հեղինակը՝ Բարդէն Վրդ . Թօփճեան, Անթիլիսիսի միաբան, բժախղիւր պըր - պրտումներու շնորհիւ յաջողած է ներ - կայացնել Հայոց թագաւորութեան ան - կումէն մինչեւ Հայրապետական Աթոռի վերահաստատումը Էջմիածին, այսինքն 1375 - 1441ի Կիլիկեան շրջանը :

Վաթնուենայեց տարիներու համեմա - տարար կարճ այս ժամանակաշրջանը հե - տաքքարական եւ միւսնոյն առեւ շահ - կան մանրամասնութիւններ կը պարու - նակէ ընդհանրապէս միջազգային եւ յառ - կապէն Հայոց պատմութեան համար :

Գործին արժէքը կրկնակի կը դաճայ , երբ նկատի առնենք, որ ցարդ շատ քիչ ուսումնասիրուած ճիւղ մը եղած է կի - լիկեան այդ ժամանակաշրջանը :

Շ. Նարդուէի երկար վիճարանութեան մը բունուած է Փրոֆ. Ն. Ալանցի հետ , Կիլիկիոյ պատմութեան մասին, որ կ'անուանէր «Կիլիկիոյ պատմութիւն», մա - սամբ հրատարակուած «Երկունք»ի մէջ , — մեզք որ չէ լրացուցած :

Անտարակոյս ամէնէն շահեկան գլուխը Հայոց Լեւոն Ե. Լուսինեան վերջին թա - գաւորին կեանքին եւ զործունէութեան նուիրուած բաժինն է :

Հայ, արար եւ եւրոպացի պատմա - գիրներու հազորած տեղեկութիւններու հիման վրայ, Բարդէն Վրդ . պատասխ - վրայ կը հանէ Լեւոն Ե.ի կեանքը՝ կա - րելի մանրամասնութիւններով : Յատկա - պէս ցոյց կուտայ դահակորոյս արքային ճիւղերն ու աշխատանքները՝ Ելիպտոս, Փարիզ եւ նոյնիսկ Լոնտոնի մէջ , կորու - սած թագը վերստին ստանալու համար :

Այս առիթով է, ահա, որ երեւան կու - դայ կրօնա - վարդապետական հանդեր - ձանքերով ներկայացած օտար գիւտնա -

ղի արամազրուած ճիւղը կաւ : Գիւղա - ցիներէն ու կիսակործան պատերէն հրա - ժեշտ առնելով կառքին մէջ կը տեղա - տրուի : Այս անգամ ուրիշ ճամբայէ մը կ'երթանք : Անդունդներու վրայէն, որ - րապտոյս նեղ անձաններու խորթիկէ կ'անցնինք : Մութը կ'իջնէ տակաւ . . . Ինքնաշարժին լուսարձակներուն լոյսը անտառներու մէջ հրաշալից տեսարաններ կը դժարէ , պատկերներ կը յօրինէ . . . Ես ալ մտածումներով բեռնաւորուած , ու ես կ'երթամ . . . :

ՇՍԱՒՐՇ ՔԶՆՅ. ՊԱԼԼՄԵՆՆ

ՌՌԻՍ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐԸ ՊԻՏԻ ԳՐԱԿԵԻՆ ԱՆԱՏՈՂՈՒՆ

(ԻՆՉԵՐ ԿԸ ԳՐԵՆ)

ԹՐԲԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ

«ԱՆՊԱՅՄԱՆ ՊԵՏԳԷ Է ԼՈՂ ՏԱԼ ՀԱՅԵՐՈՒՆ՝ ՎԱՆԻ ԵՒ ՊԻԹԼԻՍԻ ՇՐՋԱՆՆԵՐԷՆ . . .», ԿԸՍԷ ՉԻՉԵՐԻՆ Ռուսերը, Հայերուն հող շահեցնելու նպատակաւ, կ'ուղէին փոփոխութիւններ կատարել այս յօդուածին մէջ, որ այնքան մեկին ու յստակ կերպով կը խօսէր Թուրքիոյ սահմաններուն եւ անոնց պարփակած հողամասերուն մասին, եւ այդ նպատա - կին հասնելու համար ալ, կը փորձէին գանազան ձեւերով ու միջոցներով ժամա - նակ շահիլ :

Այս ծրագրին իրազօրումին համար ալ, իրրեւ լուսազոյն միջոց, յարմար տե - սած էին Սապանիին հեռացումը Մոս - կուսէն :

Ահա այս ճիւղումի քաղաքականու - թիւնը կ'իրարկելով եւ ամէն օր նոր խնդ -

րով մը ժամանակ շահելով , Չիչերին , վերջապէս , պատեհագոյն առիթը եկած նկատելով, կ'ուղէ օգտագործել այդ ա - ռիթը եւ

— Բարեկամութեան դաշնային ծը - րագրին առնչութեամբ շատ զիտուող - թիւններ կ'ըլլան, բողոքներ կը կատար - ուին : Շատ յարմար պիտի ըլլար, որ, մասնաւորաբար փոփոխութեան ենթար - կուէր այդ յօդուածին մէջ այն բաժը, որ հոն կը նշուի «սահման» ըլլալով . . . :

Այն ատեն, հետեւեալ խօսակցութիւնը տեղի ունեցաւ Պէքեր Սամի Պէյի եւ Չի - չերինի միջեւ : Պէքեր Սամի Պէյ կ'ըսէ .

— Մեր ազգային Ռուսիոյ յօդուածներն ու արամազրութիւնները փոփոխութեան ենթարկելը վեր կը մնայ Մոսկուայի թրքական պատուիրակութեան կարգու - թեանէն եւ իրաւասութիւններէն : Արդէն , միւս կողմէ, այլ ձեւով զժուած սահմանի մը ընդունումն ալ բացարձակապէս ան - կարելի է եւ անընդունելի :

Չիչերին կը պատասխանէր . — Նման սահմանի մը հաստատումն ու վաւերացումը Ռուսիոյ կողմէ, ներհակ է մեր սկզբունքներուն : Մեր այս սկզբ - բունքներուն համաձայն, ամէն աղղ եւ ժողովուրդը իրաւունք ունի ինքը անձնա - պէս ձգչկելու իր ճակատագիրը, անկախ - օրէն եւ անկաշկանդ կերպով : Եւ, դարձ - եալ, այդ սկզբունքներուն հիմամբ, պէտք է որ անպայման հողամասեր տրուին Հա -

յաստանի, Վան եւ Պիթլիս նահանգներու շրջաններէն :

Պէքեր Սամի Պէյ կը պատասխանէ .

— Նախ եւ առաջ սա պարագան անպայ - մը եւս յիշեցնեմ ձեզի, որ Թուրքիոյ մէջ Հայաստան անունով նահանգ գոյութիւն չունի : Հայերը, մեր երկրին մէջ ամէն կողմ խառն կերպով ապրած են, Մահ - մետականներու հետ միատեղ : Հայերը ոչ մէկ տեղ մեծամասնութիւն կազմած են, նոյնիսկ մէկ երրորդը համեմատու - թեան հիմամբ : Հետեւաբար, այս նա - հանդներէն մէկը երկուքը Հայաստանի յանձնելով, փոքրամասնութեան մը ի նպաստ ստանկոխուած պիտի ըլլան իրա - տունքները միւս ջախջախիչ մեծամաս - նութեան, ինչ որ անարամարանական պարագայ մըն է անշուշտ : Այս պարա - պան, ներհակ է նաեւ ձեր սկզբունքն - րուն :

ՌՌԻՐԲԻԱ ԻՆՉՈՒՒ ԿԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ . . .

Չիչերին կը պատասխանէ .

— Անհրաժեշտ է, որ անպայման Վանի եւ Պիթլիսի շրջանէն որոշ հողամաս մը ձգուի Հայաստանի : Մեր կողմէ ձեզի արուելիք օժանդակութիւնը կապակցուած է այդ պայմանաւորումին : Մենք, Սալիլ եւ ձեզմալ փաշաներու հետ կատարուած բանակցութեան ընթացքին՝ անոնց ալ յիշեցուցինք այս պարագան եւ իրենք ըն - դունեցան զայն : Գաղթ պիտի կատարուի

դէպի Հայաստանի լքուած հողամասերը Պէքեր Սամի Պէյ .

— Մենք չէինք զիտեր, թէ մեզի խո - տացուած օժանդակութիւնը կապակ - ցուած է այդ պայմանին : Մեր ազգը , Յոյներուն ու Հայերուն հող չտալու հա - մար Դաշնակից պետութեանց հետ երբ պատերազմած է լման մէկուկէս տարի , իրաւունք պիտի ունենայ մտածելու թէ ինչ օգուտ պիտի ունենայ իրեն բարեկա - մութիւնը այն երկրին, զոր կը ճանչնայ իրրեւ բարեկամ որ սակայն ինք եւս նոյն առաջարկներն է, զորս կը ներկայացնէ մեզի : Հետեւաբար, մեր երկրին համար զժբախտաբար ոչ մէկ տարբերութիւն կը մնայ այլեւս Թուրքիան բաժան բաժան ընելու կոչուած այս երկու քաղաքակա - նութիւններուն միջեւ : Յետոյ, կ'ուղեմ չեւտի նաեւ սա պարագան , որ Սալիլ եւ ձեզմալ փաշաներն ալ որեւէ լիազօրու - թիւն եւ իրաւասութիւն չունին, թուրք ժողովուրդին անունով խօսելու համար :

Չիչերին հետեւեալ պատասխանը կու - տայ Պէքեր Սամի Պէյի այդ առարկու - թեան .

— Համաձայնական պետութիւններ կը պահանջեն այնպիսի Հայաստան մը, որ սահմաններուն մէջ պարփակէ մինչեւ Սերասալը եւ Տրապիզոն երկարող հո - դամասեր, այսինքն մեծ եւ ընդարձակ Հայաստան մը : (19 Շար .)

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

ՄԱՐԶԱԿԱՆ

Հայաստանի մէջ զեռ ծանօթ չեն որդի- պիի խաղին: Չարկ տալու համար, Մոս- կուսի չհարեցողները կ'ուսուցանուին մը, որ արդէն իսկ կ'ազատուի քանի մը խումբեր: Սաղին հանդէպ հետաքրքրութիւնը կը մեծնայ:

ՄՐՅԱՆՍԿԵՐ

Գրականութեան եւ արուեստի պետա- կան մրցանակներ ստացան:—

ՀՐԱՉԵԱՅ ԳՈՉԱՐ (յետ մահու) «Նա- հապետ» վիպակին համար:

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐԵԱՆ «Քաղաքական եւ նուագարտութիւնը ուսուցողութիւն» համար:

«ԿՈՄՍՏԱՍ» քառուկան չորս երաժիշտ- ները (Ս. Ալաբաբեան, Ա. Գաբրիէլեան, Ռ. Գաբրիէլեան եւ Հ. Փալալեան):

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐԵԱՆ «Անցնող օր» , «Գործ», «Կատարելից Սարեանի զիմա- նկարը», «Նախընթաց» նկարներուն հա- մար:

ԳՈՉԱՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ զանազան օփերա- ներու մէջ ստանձնած իր դերերուն եւ եր- պերուն համար:

ԱՅՅԵԼՈՒՆԵՐ

Ամերիկահայ ծանօթ երգչուհի Լուսին Ամարա, որ 1950-ին ի վեր մեծ յաջողու- թիւններ կ'արձանագրէ Նիւ Եորքի Մեթ- րոպոլիթէն օփերային մէջ, Երեւան կը գտնուի այս օրերուն: Հաւանաբար հա- մերգներ տայ:

կան իշխանութիւնը: Աթէնքի եւ Հոմի մէջ քաղցրեղանի պատրաստեցին քաղա- քական հարցախօսութիւն, ստեղծեցին ժողո- վրդապաշտութիւնը, պատրաստեցին ա- զատ քաղաքացին: «Աթէնքի եւ Հոմի մէջ իրական վեհապետը ժողովուրդն է, օրէնքը ժողովուրդին կամքին արտայայ- տութիւնն է»: (Ֆրեյդը, Լա Րիւի տը լա Սիւիլիպատիւն անթիք, էջ 226):

Նահապետական ընտանիքը եւ նախա- բարութիւնը ժողովրդապաշտութիւն չեն ծանօնար: Հողի տէր ազատ մշակը, ա- զատ քաղաքացին, կը պաշտպանեն հո- ղը, օճախը, ազատ կամքով կը միանան հասարակաց շահերու պաշտպանութեան, հողագործը պաշտպանուի հող չունի, ստրուկին համար տէր փոխելը միտիւթա- բութիւն մըն է:

Աթէնացի երիտասարդը կ'երգուի ա- լելի պայծառացնել Աթէնասի Բաղաքը, հոմոմայեի երիտասարդին փառքն էր Հոմի փառքը: Մէկը «Սալամիէի յաղ- թանակով փրկեց քաղաքակրթութիւնը արեւելեան բարբարոսութենէն» համա- ճայն Ռեանի, միւսը կայսրութիւն մը ստեղծեց, Եւրոպայի տուաւ իր դիրքը, լեզուն, օրէնքը:

ԽՈՐԷՆ ԳԱՅԻԿԵԱՆ

ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ

(Գ. եւ վերջին մաս)

Նախարարական հակամարտութիւնն էր կը տեսնուի մինչեւ անկումը: Նախա- բարներ իբրբո չհանդէպ աւելի առելու- թիւն ունին քան օտարին հանդէպ, կը վերահսկեն զիսկին թշնամիին հետ, մէկը ինտելիգենտի հաւատարմութիւնը իսկ: Սմբատի եղբորորդին, Աշոտ սպա- րապետ, Գուրգէն կ'երթայ եւ Երուսաղիմի հաւատարմութիւնը կը յայտնէ: Սմբատի դէմ կը պայքարի Վասպուրականի Սաշիկ Գաղիկ թաղաւորը: Յեղափոխ կ'ազդու- թիւնը կը մղէր հակամարտութեան:

Մամիկոնեանները երկու անգամ (771 եւ 859-85) կ'ապստամբին Արարներու դէմ եւ կ'ընկճուին Բագրատունիներու օ- ճանդակութեամբ: Ասոնք ալ կը վար- ձադրուին Մամիկոնեաններու կարծած- ներն ստանալով:

Օտարներ կը շահագործեն հակամար- տութիւնները, փառասիրութիւնները, տիրողներ կը բաշխեն: «Հայերու ան- բուժելի նախանձը իբրբո չհանդէպ օլ- տակար եղաւ թշնամիներուն»: Ոչ խալի- ֆան, ոչ ալ կայսրը պիտի ուզէին որ հակամարտութիւնները դադարէին եւ մի- ութիւն ըլլար:

Արարները 886-ին Աշոտին տուին թաղ արդիւլու համար ազգային միութիւնը, քան տարի ետք Արծրունիներն ալ թաղ ուղեցին (908), ուրիշներ ալ հետեւեցան եւ երկիրն ունեցաւ վեց թաղակիր: Կազմուեցան նաեւ ինքնուրոյն իշխանու- թիւններ, բաժանումներու առան տեղի կ'ունենային արեւմտեայ բախումներ, անխնայ ջարդեր, մինչդեռ արեւելակող- մէն արևմտարու մոտեցաներ կը յառա- ջանային:

Փիլարտոս ջանաց դիմադրական ուժ մը ստեղծել, բայց Հայերը կ'առաջնորդէին, որովհետեւ դաւանափոխ եղած էր, Յոյ- ներն ալ կ'առաջնորդէին որովհետեւ ծագումով Հայ էր: Նախանձաւ իշխաններ իր դէմ էլան եւ ձախողեցուցին ձեռնարկը:

Նախարարներու մօտ կը դորանան հա- բուստներ, կը կազմեն, մեծատուններու դասակարգը: Քաղաքներու մէջ ալ կը սկսին պայքարներ: Նախարար եւ մեծա- տուն կ'արհամարհեն տկարները, կը շա- հագործեն ստորին դասակարգերը: Վաչ- խառութիւնը ստիպական է, ինչպէս կա- շառակերութիւնը, դրամով հողերը պաշ- տօններ կը տրուին, հողեւորականութիւ- նին ալ վաճառութեամբ կը վրայել եւ կաշառակեր է: Գիւղացին կը վճարէ աշ- լապան տուրքեր, կը կատարէ ձրի աշխա- տանք: Գաժան պատիժներու կ'ենթար- կուի հարկ վճարելու անկարող զիւղաց- ին: Պարանոցէն կը կախեն կապարէ յա- տուկ նշան, ուր զրուած էր հարկատուին

ընակաւայրը: Այդ նշանով կը ճանչցուէր եւ տիրող կը վերադարձուէր երախանէ- ըրով մէկտեղ: «Նախարարը քմայքին համաձայն կը պատմէր, խոր վերապ կը նետէր, զլիստակ կուտար, քարկոծել կու տար, կը կուրացնէր հպատակները»: (Գէլորդ Ասլան, էքրիտ, Փարիզ, 1928, էջ 28):

Նախարարներ, մեծամեծներ կը տա- ուսպէին մտքի ծուլութեան, հեշտ կեանք կը վարէին, բազմակին էին:

«Հպարտ էին Անեցիները, կ'արհա- մարէին փոքրերը, ինքնահաւան էին, կը նախանձէին իրարու, կը մրցէին իրարու հետ աշխարհ եւ կիներ: Կամուպաշտ եւ ինքնահաւան՝ չէին անսար ծերերուն, ծոյլ էին, ունէին աղախիններ, ծրուկ ե- կեղեցի կ'երթային, աւետարանը դուրս բերել կուտային եւ համբուրելէ ետք՝ թատրոն կ'երթային: Արհաւորութիւն, ար- ծաթասիրութիւն սովորական էին, որբերն ու աշխուհիները կը զրկէին ժառանգութենէ: Ունէին նաեւ աշխարհ մեղանշումներ»: (Կրեմացի, Պատմագրութիւնը էջ 102-104):

Անի կուլայ բարեմիտ եկեղեցական մը, կը քարոզէ «Վասն զդաստութեան եւ արեւոյնութեան»: Երկուստարդներ կը ծիծաղին, կը հեղինակ, տուն կը հրաւիրեն բարեպաշտութիւն կեղծելով, կը թմրե- ցնեն, կը մերկացնեն եւ վանդակի մը մէջ զննելով կը զննն մայր եկեղեցիին ստղէ: Պատաւ մը կը վթայ խնդին վը- րայ, զղեստ մը կուտայ եկեղեցականը ոտքին փոշին թոթափելով կը հետանայ «անիճեալ քաղաքէն»:

Թաթար բանակները կը մօտենան Ա- նի: Քաղաքը կը դուրսանայ անտար- բեր եւ անհող: Տուրիլ կը պաշարէ քա- ղաքը, կը յուսահատի դրուելէ, ետ կը դառնայ: Սարուկներէ շինուած ամրա- կուս պարիսպները կը պաշտպանեն յը- փացած քաղաքները: Սուլթանը կը տա- բաժնուի ներսը, կարծելով թէ թշնամի կը նահանջէ աւելի ուժով հարուածելու համար պարիսպները: Թշնամին կը տես- նէ քաղաքին իրարանցումը, ետ կը դառ- նայ, կը հարուածէ:

Բարբերուս սպակառութիւնը ջլատած էր բնակիչներուն տոկունութիւնը, կը պակ- սէր յարատեւութեան ուղին:

Նահապետական ընտանիքը չի պատ- բաստեր մարդը: Հանրային կեանք վա- ըրող, առանձնական կեանքէ խուսափող անհատը չի կրնար կեղծոնացնել ուշա- դրութիւնը, որ անհրաժեշտ է ստիպու- թիւններ կազմելու: Ուշադիր դործաւո- րը ցրուած դործաւորէն աւելի կ'արտա- դրէ նուազ յոգնութեամբ, որովհետեւ սո- վորութիւնը կը նուազեցնէ յոյնութիւնը: Պիտի խուսափել ճիշդ պահանջող դործե- րէ:

Նահապետական ընտանիքէն դուրս ե- կող եւ հարստացող անհատը, մեծամի- տը, կը մնայ երթակայ աւելի մեծին, նախարարին: Քաղաքին դասակարգը հե- տամուտ չէ չափաւորելու նախարարա-

հարար տուրքի վարձատրութիւն մը: Այս առաջարկէս առինքնուած, ինք եղաւ առաջինը երեւակայողը թէ ի՞նչպէս պի- տի փոխանակելիք մեր զեխանները, եւն: Մենք չէինք կրնար մեր ծպտումը կատա- բել ոչ իր մօտ եւ ոչ ալ իմ յարկարած- նիս մէջ, ծառայողներուն պատճառաւ: Ինք չհասկցաւ թէ ինչո՞ւ, եւ չէի զիտեր ինչ պատճառ ներկայացնել իրեն, եւ, կարճ կապելու համար վէճը, եւ պարզա- պէս հակառակեցայ իրեն եւ իմ կամքովս գործել պահանջեցի: Անկասկած Գարլո- թան զիս նկատեց այնքան զարմանալի, որքան յամուտ, բայց վերջապէս տեղի տուաւ: Մենք իրեն հետ միասին պատ- բաստեցինք Փիլարտիլի Փալատի պատ- մութիւնը, եւ ես իմ հետս առի էլիլի ակնոցները:

Ուշ չմնալով՝ սկսայ խորհիլ, թէ Գար- լոթան եւս պէտք էր անհետանար: Կը ցուէի իր վրայ, հակառակ որ իր զանա- զան անձնաւորութիւններու նմանողական խաղերը քնու հաճոյ չէին թուած ինձի եւ անպատկառութիւնը կը համարէի զա- նանք: Քիչ մը վերանայ ունէի պահած, հակառակ որ շատ հազուադէպ կերպով գործածած եմ այդ թոյնէն: Այդ փոք- րիկ մթերքս գործը կրնար դիւրացնել: Այս մտքին հետ ունեցայ նաեւ ուրիշ հը- նարամտութիւն մը, ինչո՞ւ համար կար- ձել չտայ ամէնուն, որ այդ աղջիկը սովո- րութիւն ունէր ինքզինքը թունաւորելու:

Ուստի ապսպրեցի ոսկի տուփ մը՝ սկզբ- նատառով եւ արձանագրութեամբ մը: Բոլորովին երեւակայական սկզբնատառ մը եւ «Փարիզ»՝ որեւէ թուականով մը արձանագրութիւնը պիտի կրնային խիստ դժուարացնել պրպտումները: Օր մը, երբ կը ճաչէի Ռիչի մէջ, զրեցի ոսկի տուփին պատուէրագիրը եւ զրկեցի էլիլը զայն բերելու համար: Էլիլը գործին էութեան անձնօթ էր բոլորովին:

Ամէն րան լաւ կ'ընթանար: Ես զինուած էի փոքրիկ բայց խիստ սրածայր գմիլով մը, որ վերցուցած էի էլիլի իրերուն մէ- ջէն, երբ սպասուէի Փարիզ կը դառնուէր: Անիկա չէր նշմարած զմէլիլին բացակա- յութիւնը, որովհետեւ գործածելէս ան- միջապէս վերջ՝ կրկին իր տեղը դրած էի զայն: Սան - Պրանչիլոսոյն բժիշկ մը, առանց յետին մտքի, ցոյց տուած էր ինձ ծոծրակին ճիշդ այն մասը, որ հարուս- ձելով մահը վաշտակեանական կ'ըլլայ: Օր մը, շիճուկներու մասին բացատրու- թիւններ տուած ատեն, բժիշկը ըսած էր որ խիստ ուշադրութիւն պէտք է ընել այդ կէտին զգուշութիւն համար, որովհետեւ մա- հը բուժական կրնար ըլլալ: Մէկ քանի անգամներ խնդրեցի իրմէ, որ ծոծրակին վրայ բուն տեղը ցոյց տայ ինձի, խոր- հելով թէ օր մը այդ գիտակցութիւնս կրնար օգտակար ըլլալ ինձի: Իբր պա- տրուակ, ըսի բժիշկին, թէ մարդաս- պանութեան այդ եղանակը կրնար դոր-

ծաղուել շարժանկարի ժապաւնի մը մէջ:

Գարլոթան թերացաւ իր պատուոյ խօս- քին վրայ մեր զաղտնիքը տեղեկացնել ուղիով իր քրոջ: Երբուստ էր ինձի, որ ոչ ոքի պիտի խօսէր այդ մասին: Կը կարծեմ թէ մեծ հնարամտութիւն մը գործադրած եմ նամակին մէկ էջը պատ- ուելով՝ շիճուկին յառաջ բերած ըլլա- լուս համար: Այդ զաղափարը լոկ իմ մտքիս ծնունդն է: Ծատեր կը կարծեն թէ ուշիմ կին մը չեմ... բայց, ըստ ին- ծի, հարկ է ունենալ մեծ քանակու- թեամբ ուղիմութիւն պատրաստելու հա- մար այսպիսի ձեռնարկ մը:

Ամէն ինչ լաւ կարողացած էի, կէտ առ կէտ, եւ ծրագիրս, կը գործադրէի կանո- նաւոր ընթացքով: Նախ եւ առաջ քիչ մը վախայայ, որ կը ձերբակալուէի, բայց շուտով բոլորովին ապահով զգացի ինք- զինքս, որովհետեւ կարելի էր կասկա- ճի երթարկել Երուսաղիմ հացկերութիւն ներկայ մարդոց վիպակութիւնները, եւ չէի խորհէր երբեք թէ ունէ մէկը կրնար նը- մարած ըլլալ Գարլոթայի եւ իմ զեխատու- րման փոխանակուած ըլլալը:

ԱԿՆՊՎ ՔՐԻՍՏԻ

(Շար.)

* * *

«ՅԱՍՈՋ»-ի ԹԵՐԹՈՆԸ (97)

ԴԱՆԱԿԸ ԾՈԾՐԱԿԻՆ

«Այդ երեկոյեան էր որ ես ձեզի հան- զկեցայ եւ յանկարծ հանձարեց զազա- փարը ունեցայ ուղարկելու ձեզի ամուս- նոյն մօտ, պահանջելու համար մեր ա- մուսնալուծման իր համաձայնութիւնը: Յետոյ խօսեցայ ձեզի ամուսինս սպաննե- լու մասին. արդարեւ, նկատած եմ, որ կ'ըր կատակելու երեւոյթով ճշմարտու- թիւն մը կ'ըլլէր, ոչ ոք կը հաւատայ ձե- ղի: Յաճախ հաստատած եմ, որ լաւա- յոյն է երեւել քիչ մը տխմար, քան իս- րայց: Գարլոթա Ատամի հետ մեր ու- նեցած իրկրորդ տեսակցութեան ընթաց- քին, ես խօսեցայ իրեն ծրագրի մասին, ըսելով որ դրաւի հարց մը կար մէջտեղը: Ինք իմ տեղս պիտի ներկայանար ճաշիկ- րոյթի մը եւ եթէ յաջողութեամբ պտակ- ուէին իր ճիւղերը, պիտի ստանար տասը

Նոր Տարուս Առօրի — ՅԱՌԱՋ — ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Էլիզա եւ Հայկանուշ մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրեն իրենց մայրիկին՝ Տիկին Լինճայուն Նորիկեանի (Պաննէօ) :

ՆՈՒԷՐ

ՎԱԼԱՆՍ — Զ. Յ. Դ. Շըժ. կամրակն ընկեր Ազատ Պայեանի (Ռոման) ընդ Օր. Սիւլան Տէմիրեանի (Սոֆիա) ամուսնու- թեան առթիւ տասը ֆր. կը նուիրէ «Յառաջ»ին :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ

Մասնակցութեամբ Մարտէյլի, Լիոնի եւ իր շրջանային բաղադրուող հայ երի- տասարդաց թատերախումբը կը ներ- կայացնէ Այս Ետարթ Երեկոյ Լիոնի Ազգ. Տան թատերասրահին մէջ : Այս կիրակի օր ժամը 4ին Ս. Եամանի ժան տ'Արք սրահին մէջ Ա. Բ. Շ. Ի. Ը.

Ա. Չ. Դ.

Տիկին Գառնիկ Ալեքանեան կորսնցու- ցած է կիրակի դիւնը (5 Դեկտ.) ժամը 23 - 24ի միջև իր ազամանդեան սպա - րանջանը՝ յիշատակ իրենց ամուսնու - քեան, Կրանտ Օրթէյի մէջ, Փարիզահայ Տիկնանց Միութեան տարեկան պարա - հանդէսին ընթացքին որուն կ'օգնէր իր - բեւ անդամուսնի : Այն հայրենակիցը որ պատճ է զայն պատահմունքով, թող բա- րի ըլլայ իմացնելու իմրազրութեանս (կամ տիրոջը 553-58-23) փոխան լաւ վարձատրութեան :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Դպրոցատէր Տիկնանց վարձարանի վարչութիւնը շնորհակալութեամբ ստա - ցած է Տէր եւ Տիկին Ս. Տամրամեանէ եւ Տիկին Հայկունի Մուսթաֆեանէ 50ական ֆրանք ողբ. Յովհ. Թէրլէմէզեանի յի - շատակին :

ՏԷՍԻՆ. — Ս. Աստուածածնայ Եկեղեց-

ուոյ Կրօն. Ընկերակցութիւնը շնորհակա - լութեամբ ստացած է հետեւեալ նուէրնե- րը. — Այրի Տիկին Փ. Մարտիրոսեանի մահուան առթիւ Լիոնէն Տէր եւ Տիկին Մ. Մնացեան փոխան ծաղկեպսակի տասը ֆրանք, Պ. Յարութիւն Պետրոսեանի մահուան առթիւ Մարտիրոսյէն Տէր եւ Տիկին Ե. Մելքոնեան փոխան ծաղկե - պսակի յիսուն, Տէր եւ Տիկին Ժ. Պո - դոսեան յիսուն, Սէն Եամանէն Պ. Ե. Մի - քայէլեան տասը, Լիոնէն Տէր եւ Տիկին Յ. Ղազարեան քսան եւ Եկեղեցւոյ պայ - ծառայման քսան ֆրանք :

ՓՈՒԱՆ ԾԱՂԿԵՊԱԿԻ

Պուլ. Օտտոյի Ս. Յակոբ Եկեղեցւոյ թաղականութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները. — Տէր Պսակ Տօր թաղման առթիւ Երեկոյնը դպրոցին 50, Կ. Սաչը Առաջնորդարանին յիսուն, Ա. Դաւիթեան Առաջնորդարանին յիսուն Եկեղեցիին քսան, Բ. Նազարեան Եկեղեցիին քսան, Պապայիֆեան Եկե - ղեցիին քսան, Ա. Յովակիմեան Առաջ - նորդարանին տասը ֆրանք : Ողբ. Մ. Կիրակոսեանի թաղման առ - թիւ Ա. Մէնէմէհեան Եկեղեցւոյ յիսուն, Եղբայր Տորոմեան Եկեղեցւոյ քսան, Յ. Գուգուրեան Եկեղեցւոյ քսան, Ա. Նիկո - դոսեան Եկեղեցւոյ քսան, Ա. Տարեան Եկե - ղեցւոյ 15, դպրոցին 15 : Ողբ. Տիկ. Կիրակոսեանի թաղման առ - թիւ Յ. Աճէմեան, Պ. Սարաճեան, Յ. Պոյաճեան տասնական ֆր. Եկեղեցւոյ : Ողբ. Հ. Տէր Յարութիւնեանի թաղման առթիւ Պարտիզպանեան Եկեղեցւոյ 20 : Ողբ. Ա. Մարտիրոսեանի թաղման առթիւ Նիկոլոսեան Եկեղեցւոյ քսան : Այրի Տիկին Հայրապետեան հայեհան - դիտի առթիւ Եկեղեցւոյ 50 : Այրի Տիկին Հ. Գրիգորեան հայեհան - դատի առթիւ Եկեղեցւոյ 50 : Տէր եւ Տիկին Ա. Յովակիմեան հոգե - հանգիտի առթիւ Եկեղեցւոյ 30, Կ. Սա - չին 30, Առաջնորդարանին 10 :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ նախկին դպրատան Պ. Պողոս Գուլոսմ - քեանի քառասունքին առթիւ, Եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ Երկսեռ դպրոց գա - սու կողմէ՝ քառասուն պատարագ եւ հո - գեհանդիտ կը կատարուի այս կիրակի :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Լիոն. — Յ. Կ. Սաչի վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ըն - կերուհիները այս Երեքշաբթի ժամը 15 - Ին, Ազգային Տան սրահը : Կարելոր օրա - կարգ : Կը խնդրուի ճշգրտակէս ըլլալ :

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԱՇՏՈՒԹԻՒՆ

Դեկտ. 12, Կիրակի ժամը 21ին **DANS ST. EUSTACHE ILLUMINÉE** (12, Rue Dujour, Paris (1er) Métro : Halles) ՎԱՐԴԱՆԱՆՅ ԱՍՊԵՏՆԵՐՈՒ ԵՂԱՅՐԱԿՈՒՅՈՒԹԻՒՆԸ Կը ներկայացնէ (համաշխարհային առաջին ունկնդրութիւն) : **DU PROFOND DE L'ABIME** (Oratorio) ԲՆԱԳԻՐ ԵՒ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ԱՐՇԱՄ ՃԻԶՄԷՃԵԱՆ

Բարձր հովանաւորութեամբ բրդ - տարութեան նախարար՝ ՄԱՐԷԹԻ ԱՊՐԻԼԵԱՆ ՅԻՄՆԱՄԵԱԿԻ ՅԻՇԱՍԱԿԻՆ Կը մասնակցին Christiane Eda-Pierre (Soprano) de l'Opéra, Paul-Emile Deiber (récitant) sociétaire de la Comédie-Française, Raffi Ourgandjian (au grand orgue). **LES CHANTEURS DE ST. EUSTACHE** (Président-Fondateur R. P. Emile Martin) ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ

ԱՐՇԱՄ ՃԻԶՄԷՃԵԱՆԻ ՅԱՅՏԱԳԻՐ. — ԿՈՄԻՏԱՍ, ՀԱՅՐ

ՄԱՐԹԷՆ, ՎԻՔՈՐԻԱ ՄՈՍԹԵ - ՎԵՐՏԻ, ՈՒՐԿԱՆՃԵԱՆ : Տումբրու գին՝ 5էն 25 ֆրանք Դիմել՝ Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղե - ցի, 15 Բիւ ժան Կուստ, Աէնք-էօս - քաշ (Հալ), Տիւրան (4, Փլաւ սը լա Մաւրլէն), Բալուեան գրատուն, (43 Բիւ Ռիշէ) :

Ճ Ա Շ

Սերաստիոյ Նահանգային Մուրառ Ու - սումաստիւրացի կեղ. վարչութիւնը կը հրաւիրէ Իսիի եւ շրջանի բոլոր Հա - յերը անխտիր իր տասնհինգամեակի առթիւ կազմակերպած ճաշասեղանին : Այս կիրակի ժամը 5ին Իսիի Սրբեան զպրոցի սրահին մէջ : Նախագահութեամբ ԲՃ. Ա. ՊՕՂՈՍԵԱՆԻ Գեղարուեստական Տոխ քաժին, Երգ, արտասանութիւն, նուագ եւ շատ մը ա - նակնկալներ, մասնաւորապէս սիրայօ - ժար իրենց մասնակցութիւնը պիտի բե - րեն հայրենակիցներ, Միլիան Երվան - քեան, Եմալու Պալեան, իրենց նուագով եւ Երկու քայրեր թաղէտեան : Ճաշագին 10 ֆրանք անձ զլուի :

ՆՈՒՐՀԱՆ ՖՐԷՆՔԵԱՆ

Ձեր տրամադրութեան տակ է բոլոր նամարդութիւններու համար ՕԴԱՆԱԻ-ՇՈԳԵՆԱԻ-ԵՐԿԱԹՈՒՂԻ Դիմել **Agence de Voyage PARENTY & DESROUSSEAUX** 7, Rue de Hanovre — PARIS (2e) Métro : 4 Septembre ou Opéra Téléph. : RIC. 79-86 RIC. 79-39 Բաց է ամէն օր, ժամը 9-12 եւ 14-18 բացի շաբաթէն, IMPRIMERIE SPÉCIALE DU JOURNAL « HARATCH » 32, Rue de Trévis, PARIS (9e)

GALERIE **DAVID - GARNIER** 6, Ave. Maignon — Paris **CARZOU** *DESSINS REHAUSSÉS* Jusqu'au 18 Décembre

ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼՄԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ ԼԻՈՆԻ ՄԷՋ Հովանաւորութեամբ Ազգային Միութեան, նախաձեռնութեամբ Հայ Կրթ. մարմնոյ : Ի նպաստ «Հայկազեան» վարձարանի կրթական դործին : Այս երկուշաբթի ժամը 20-30ին, Սինէ Արքի մէջ, 257 Բիւ Պուալօ (Եկեղեցւոյ մօտ), Բիւ Փօլ Պերի անկիւնը : Պիտի ցուցադրուին ԼԵՆՆԱՅԻՆ ԼԻՃԻ ԳԱՂՏՆԻՔԸ եւ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ Գունաւոր եւ հայախօս ժայռակներ :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲԱՅԱՌԻԿ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄՆԵՐ

Կազմակերպուած Յ. Կապոյտ Խաչի Շըժ. վարչութեան եւ մասնակիւներու կողմանէ իրենց կայանի տասնամեակի առիթով եւ անոր ի նպաստ : Հրաւիրուած է Լոնտոնէն Հայ Երիտասարդաց Միութեան թատերախումբը, ներ - կայացնելու Գ. Սնգուկեանցի

Շաբաթ՝ 18 Դեկտեմբեր	Կիրակի՝ 19 Դեկտեմբեր	Երկուշաբթի՝ 20 Դեկտեմբեր	Յրեքշաբթի՝ 21 Դեկտեմբեր	Կիրակի՝ 26 Դեկտեմբեր	Չորեքշաբթի՝ 29 Դեկտեմբեր	Հինգշաբթի՝ 30 Դեկտեմբեր
---------------------	----------------------	--------------------------	-------------------------	----------------------	--------------------------	-------------------------

Տոմսեր կը վաճառեն Կացոյտ Սաչի զր ստենեակը, հայ գրափաճատուները եւ Սաչունիները : Ապահովեցէ՛ք ձեր տեղերը :

ԸՆԹԱՅԻԿ ԱԶԳԵՐՈՒ ՍԱԿԱԳԻՆ

ՄԷԿ ԱՐԿԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ	
ՄԱՀԱԶԳ	45 ֆ. միջնու 1/4 սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍ	25 ֆ. միջնու 1/8 սիւնակ
ՅԱԻԱԿՅՈՒԹԻՒՆ	10 ֆ. » » »
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	20 ֆ. » » »
ՀԱՐՍԱՆԻՔ : ՆՇԱՆՏՈՒՔ	25 ֆ. » » »
ԾՆՈՒՆԴ	25 ֆ. » » »
«ՓՈՒԱՆ ԾԱՂԿԵՊԱԿԻ»	10 ֆ. » » »
«ԿԸ ՓՆՏՈՒՄ»	10 ֆ. » » »
ԾԱԽՈՒ Է	25 ֆ. » » »

Այս գիները մէկ անգամ երատարակիլի եւ ճշանակուած ծաւալով ազ - դերու համար են, չարքարք էջը : Կանխիկ վճարուը պարտաւորիչ է : Առետրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմաններու համար դիմել վարչութեան :

Զ. Յ. Դ. ԱԼՖՈՐՎԻԼ. — Զ. Յ. Դ. Ս. Միւսսեան Ընթացիկութիւն ընկերական ընդհ. ժող - վը այս Ուրբաթ, սոխորական հաւաքա - տեղին : ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՔԱՐՈՉ ՍԷՆ ԼՈՒ Այս կիրակի Սէն - Լուի Հայոց Եկեղե - ցին կը բարոզէ ԹԵՄԻՍ Առաջնորդ Արտաւազդ Եպիսկոպոս Թրքեան :

ՀԱՅ ԿԱՅՈՂԻԿ Ե. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

10 bis, Rue Thouin, PARIS Այս կիրակի, ժամը 10-30ին, Հայրա - պետական ճայնուր պատարագ ի ներ - կայութեան Սէն Լազարի Աստղաներուն : Պիտի պատարագէ եւ բարոզէ ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿ. ԱՄԱՏՈՒՆԻ

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Կապոյտ Սաչի Մարտէյլ բաղադրի մա - նասեղին տարեկան պարահանդէսը, Շա - բաթ, Մարտ 5ին Սփրանտիտի սրահին մէջ :

ՃԱՇԱՐԱՆ Ե Ա Ր ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԹԵԻԱՆԵԱՆ Երապակեան, հայկական եւ կովկասեան ընտիր նաշեր : Առաջնակարգ կովկասեան խորովածներ : ՀԱՃԵԼԻ ՄԹՆՈՂՈՐՏ **AU CŒUR MÊME DES CHAMPS-ÉLYSÉES** 4, RUE ROBERT-ESTIENNE (coin Rue Marbeuf) PARIS-8e Téléph. : BAL. 31-21 et 30-84 Métro : F. D. Roosevelt

ՅԱՐԱՇ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN
RÉDACTION - ADMINISTRATION : 32, RUE DE TRÉVISE - PARIS (9^e)

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Tél. : PROvence 86-60
C.C.P. Paris 15069-82

Ֆրանսա՝ Տար. 60 ֆ. վեցամսեայ՝ 35 ֆ.
Արտասահման՝ Տար. 80 ֆ. Հատը 0,30 ֆ.

ԿԻՐԱԿԻ
12
ԴԵԿՏԵՄԲԵՐ
DIMANCHE
12 DECEMBRE
1965

LE NUMÉRO : 0,30 Fr.

Օ Ր Ա Ք Ե Ր Ք

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍՍԱԿԻԱՆ

41e ANNÉE — N° 10.483

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

ՀԻՐՈՒՄՈՒՄ — ԹԻՒՆ 10483

ԻՐ ԽՕՍԻՐԸ

ՊԱՆԾԱԼԻ ԵԴԵՍԻԱՆ (*)

Տարուերը՝ ծով կեանքի մը յորձանքին մէջ, մեր դանազան տարեկարճները ժա՝ մանակին կատարելու միջոցառումներն անգամ չունինք : Պիտի յարմարինք մի՛ ջախջախ պահանջներուն, — արամազընի սրահ գոնել, խուսափել խառնաձուլումներէ, զեղարուեստական բաժին ապահովել, եւայլն :

Ծնունդը եւ Չառիկը ճիշդ օրին, քանի որ սեփական եկեղեցի ունինք, բայց ուրիշ սրեւէ տարեկարճ, նոյնիսկ Հայոց — ջինջ Սարափներու պահանջներ կապուած է պատահականութեան, երբեմն ալ մարդոց բարեհաճութեան հետ :

Այսպէս նաեւ Եղեւսի Հերոսամարտին Յիմնադր, որու մասին խօսելու առիթ ունեցանք Հոկտեմբեր 14ին : Հակառակ իրենց կամքին, կազմակերպիչները հարկադրանքան աշտարակ մը կ'ուստակառնէին, մինչդեռ զէպըր տեղի ունեցած է 1915 Սեպտեմբեր 19 — Հոկտեմբեր 15ին :

Ամէն պարագայի մէջ լաւ է ուշ քան երբեք : Կսկիւնի բան պիտի ըլլար, եթէ հերոսներու եւ հերոսուհիներու յիշատակին ալ վերածուէր անցուկը — մոռցուկ պատմութեանց : Մանաւանդ այս ափսոսանքով, որ հոգիները այնքան շուտ կը թառամին, կը ցամքին, պղտոր չեն ստաններու կամ պարանոցները հրաբխային ժայռի մէջ : Անոնց ակնախաղ տիրապետութեան տակ :

Իրականութիւն է որ ոչ միայն մեր նոր սերունդը, այլեւ ժողովուրդը ինք շատ քիչ բան զիտէ ժամանակակից պատմութեան երեւոյթներուն, մանաւանդ անոր փառաբանող քննարկներուն :

Երեսուն տարեկ ի վեր, ինչպէս աւելի առաջ ալ, ընդհանրապէս խօսուած եւ զրուած է թրքական բարբարոսութեանց, ջարդերու եւ անարարութեան մասին : Օտարներուն առջեւ ալ, առաւելապէս ներկայացած ենք մեր մարտիրոսապետութեամբ :

Այնպէս որ, ներքին թէ դուրսէն, այն ասպարեզները զոտարած է թէ խեղճ, անձուր, զլուխը կախ ժողովուրդ մը եղած ենք, պարանոցը միշտ պատրաստ թշնամի դանակին տակ :

Եղեւսի, ինչպէս Վասպուրականը, Շ. Գարահիսարը, Տարօն — Սառուընը, Այ — Տաղը, Սուէախան, եւայլն 1915ին, Հաճընը, Մարաշը, Այնթապը եւ ուրիշ քաղաքներ՝ աւելի վերջը, իրենց խելապէս հերոսական մարտնչութեան թանցին աչքերը : Նոր եւ լուսաւոր էլ մը բացին Հայոց պատմութեան մէջ :

Ինքնապաշտպանութեան, պատուութեան, հարուածին հարուածով պատասխանելու այդ խիզախ, սպարական ոգին էր որ կը սուսանէր նաեւ Սարգսրապատի եւ Գարաբաղի խելաքարի արիւնալից զաշտարակները, երբ ամէն ինչ կըրտած կը համարուէր :

« Մահ կամ պատուութիւն » մարտուկը թերեւս ոչ մէկ աստեղ այնքան սարսափ էր բարձրութեանց հոգին, որքան այդ օրերուն :

Մինչեւ 1915 մարդիկ Եղեւսի կը յիշէին Արգար թաղաւորին պատմութեամբ կամ 1895ի ջարդերով : 1915 Սեպտեմբեր Հոկտեմբերի հերոսամարտէն վերջն էր որ հայկական այդ բոլոր գործաւ կրկնապէս պատմական եւ պանծալի :

Եւ ի՞նչ հերոսամարտ : Բառն անգամ անգլիացի կ'երեւայ, երբ կ'երեւակայենք այն զժողովրդի պայծառները որ մղուեցան օրհնական պայքարը : Կատարելով զայնքան ալ որ կարիճներով, որ երկատարով ու երկատարովսին կը ճախարակէին հաւատարման անձնութեան, քան իրականութեամբ :

ՕՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ՄՈՍԿՈՒԱՅԻ ԴԵՊՔԵՐԸ

ԳԵՐՄԱՆԻԱ ԿԸ ԲՈՂՈՔԷ
ԿՐՈՍԻԲՈՅԻ ՃԱՌԻՆ ԴԵՄ

Սորձողային զեկազարութեան մէջ, կատարուած վերջին բարեփոխումները զարմանք պատճառած են ժողովուրդին մէջ : Արեւմտեան զեկազար կարծիքով, կատարուածին բուն տարրութիւնը կը պարզուի միայն քանի մը ամիսէն : Լուրը հաղորդուած է ժողովուրդին լաւատեսական զեկոյցներով : Ամէն պարագայի մէջ, առաջին առթիւ այն տպաւորութիւնը կայ թէ Պողոտորինի նշանակումը կ'ամբարձրէր զէ Բերձնեւի զիրքը :

Գալով Կրօսիքոյի ճառին, կը թուի թէ սպասողական զիրքէն ելլելով, Սորձ : Միտիւնը այսօր կ'ուզէ կրկին ձեռք առնել արտաքին քաղաքականութեան նախաձեռնութիւնը :

Գաղափարային Գերմանիոյ Հանրապետութիւնը խիստ կերպով կը բողբէ խորհրդային Արտաքին նախարարին ճառին զէ : Կատարելութեան բաները շեշտած է թէ խորհրդային Արտաքին նախարարին խօսքերը «անմոռելի են մեծ պետութեան մը պաշտօնական անձնաւորութեան մը բերին մէջ» աւելցնելով թէ — «Վրէժի ոգին խորթ է արեւմտեան Գերմանիոյ կառավարութեան» :

× Լենինի կարգը շարժուած է Անաս — տաս Միկոյանի, որ ամիս մը առաջ, 70ամեակին առթիւ ստացած էր նոյն կարգի շքանշանը :

× Արտաքին նախարար՝ Կրօսիքո Փրօպիա մեկնած է :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Վիէթնամի պատերազմը օրական 82 — ուկէս միլիոն ֆրանք կ'արժէ Միացեալ Նահանգներուն :

Ֆրանսայի ընտրապայքարը երկրորդ շրջանին համար սկսաւ Շարաթ իրիկուն : Առաջին խօսուցիչ էր՝ նախագահ ար Կալ, որուն յաջորդեց Միթրան : Ընտրապայքարը կը վերջանայ Ուրբաթ իրիկուն, հետադարձին վերջին խօսուցիչ է՝ Ֆ. Միթրան, ձայնաւորուէն՝ ար Կալ : Ֆրանսայի կարգ մը զբաղեցնող կոչ մը ստաբարած են ի նպատակ Կոլիէ :

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ մէջ, Զօր. Ենրտանի — տէս կը հետապնդուի, Պետութիւնը վերադարձնելու յանձնարար : Պիտի պատուի Գեկտեմբեր 22ին : Զօր. Ենրտանի կ'արձակուի :

Հարկ է կարգաւ զիրքերը, հարկ է լրուել ակնառանդներու վկայութիւնները, ազատ գաղափար մը կարելու համար մղուած պայքարին վրայ :

Եւ ի վերջոյ ճակատ ճակտի կախը չէ որ կ'ընկճէ արի ժողովուրդը, այլ թնդանօթը : Բանակը՝ իր հրետանակով ուժերով եւ սպասարկչի խառնիճարմանով, էրբ բացուած էր քաջերուն վերջին փոստուղտար :

Եղեւսիները աւտարէր ձայներ, ան — չէլ բացեր են մեր արտապարտութեան փոթորիկային այլքներուն մէջ :

Տօնելով հերոսամարտներու յիշատակը, տարուէ տարի, մեր հոգիները կը լեցուին ինքնապաշտպանութեամբ : Եւ կըր — նանք աւելի պայծառ աչքերով զիտել ապագան, ո՛րք որ ալ գանուինք :

16 Դեկտեմբեր 1945

(*) Այս խմբագրականը կը վերահրա — տարակեցնէ Ռուսիայի երեսուսարարի յիշատակին առթիւ, որու նուիրուած է մեր այսօրուան թիւը :

ՈՂԲ ԵԴԵՍԻՈՅ

Հերոս եւ մարտիրոս քաղաք մըն է Ե — զեկազար : Մեր պատմութեան մէջ արժանազան է հերոսական իր մոնչիւնը, մեր պատմութեան մէջ թափած է մարտիրոսական իր արիւնք, առաջին օրէն : Բազմաշնորհ հայ կաթողիկոսը, Ներսէս Շնորհալի, իրեն նուիրած է զիրք մը, որ կը կոչուի Ռաբ Եղեւսիոյ, — այս զիրքը — առաջին անգամ տպուած է Մարգարի մէջ, յետոյ այլ քաղաքներու մէջ, այժմ հայ — ուսուցիչ : Թարգմանուած նաեւ Փրանսիայի սերբի :

Շնորհալի գայն զրի առած է իր ման — ինչհարկ եղբորորդուին ինչպանքով, — Գրիգոր Ապրիլաւի փափաքով :

Ողբը, սակայն, պատկեր մըն է հերոսութեան եւ մարտիրոսութեան : Եզե — սիան է որ կը խօսի, քաղաքը ինքն է որ կը հիւսէ իր Ողբը :

Պանծալի քաղաքը նախ իր ցաւին բն — կեր կը կանչէ Երուսաղէմը, իրեն բախտակից :

Արքեր եւ դու դառն ըմպելի :

Յետոյ վկայութեան կը կանչէ Երջանիկ ստանը, որ ժառանգեց զբիստանէս — թեան փառքը, բայց ոչ տառապանքը : Եւ դու, Հոռո՛ւմ, մայր քաղաքաց, Գերապայքաւ եւ պատուելի :

Եւ միւսը, որ բիւզանդական ակաւա — կուս գահերու վրայ՝ շողաց հելլենեհայ — կական զէնքերու կրակը :

Քաղաք յոյժ պանծալի ...
Շինեալ ի սկիզբն Ասիայի ...
Գահոյքի հզօր մեծ արքայի :

Այստեղ կը արանջայ՝ յայտնելով թէ, էր երբեմն, իր թեւն էր երկարած իրեն հոյանի, բայց յետոյ ...
Թողեր զիս անալի իրբեւ գրու յաւերակի :

Բիւզանդիանէն Ետ ձայնը կ'երկարէ Ա — զեկազարի, որ ժամանակ մը կը հա — մարուէր զբիստանէս թեան փառքերէն մին, այժմ՝
Յանօթիւնաց եղած գերի :

Իր ցաւին բնիկը կանչել էր Երուսա —

նիտէս որ հանդուստան կոչուած էր 1960 — ին, Քարամանլիսի կառավարութեան կողմէ, Բ. աշխարհամարտին, յունական տեղեկանատուութեանց սպասարկութեանց պետն եղած է :

ԱՄԵՐԻԿԱՅԻ զեկազարը՝ Պուստիկէն Մոսկուա կ'երթայ այս երկուշաբթի, պաշտօնական այցելութիւնը շարաթ՝ մը պիտի տեսէ :

ԱՔԲԱ ՖԻԻԼՊԷՐ ԵՆՈՒԼՈՒՍ որ բունտէն ԼԿՊՈՒՐՈՒՄ կը զարմարէ, յայ — տարաբար է թէ իր սպասարկութիւնը ե — բաշխարարուած է :

ԿԻՐԱԿԻ ՕՐ Ամերիկայի պիտի արձա — կեն ձեմիցի Զ. Երկու տիկերազնայն — ըրով որ պիտի փորձէ հասնել ձեմիցի Ե. ի, եւ յաջողիլ այսպէս անջրպետային ս — ռաջին ժամապարտութիւնը :

ԱՆԳԼԻՅԱՅ փարչապետը կը փորձէ ա — պահարկութիւն ապա Ռոստիկոյ Ապրիլի — ներուն, պատասխարելով հանդերձ Իան Սմիթը :

ԵՐԵՎԱՆԻՆ ԿԱՍԵԱԼ

ՀԵՏԱԲՐԳՐՈՒԹԵԱՄԲ ՊԵՏԻ ԿԱՐԳԱՔ

Հեղինակ Փիլիբ Մարտան

Շահեկան վէպ մը արեւելեան կեանքի :

Հեղինակ Փիլիբ Մարտան

Շահեկան վէպ մը արեւելեան կեանքի :

զէմը, Բիւզանդիանը եւ Ազեքանդրիան, կը գտնայ իր գրաչիւն, երբեմն իր խր — նամին, ինչպէս կ'ըսէ Ալիւան :

Բանի դատմամբ ընդ քեզ կազմ, Ո՛վ Անտիոք, քոյր սիրելի, իմ մերձաւոր եւ անձկալի Յուրախութեան ժամանակի, Ընդէ՛ր չհասեր վաղվազակի ինձ ի թիկունս օգնականի : Այլ բոյլ ետուր վասն խէրի՛ Մատնիլ ի ձեռս անօրինի :

Այս կշտամբանքէն Ետ, ձայնը կ'եր — կարէ « ի բնիկ աշխարհն Հայոց, որոց իշխանութեան տակ ալ երբեմն եղած էր Եզեկա » :

Բայց հարցանեմ, ո՛վ սիրելի, Բանիս խնդրեմ պատասխանի, — Այժմ ո՛րք է քաղք քո գաղղի եւ կամ պակն հրաշալի : Ո՛րք եմ գաւառի քաղաքի վաղարշապատ քո քաղաքի :

Ախտո՛ւս, Երազի նման չբացան բոլոր այս փառքերը եւ Արարատեան աշխարհը Ես :

..... Նստի որք եւ այրի Տխուր դիմօք գերք ի սրգի :

Այս տխուր պատկերին մէջ՝ կը տեսնէ Անին, պատմութեան եւ մշակոյթի այս գոհարք :

Բայց եւ գեղ յայս հրաւիրեմ, Արեւելեան քաղաք Անի, Կցող իմոյս լինել ձայնի եւ սիրտի տարակուսի : Քանզի եւ դու երբեմն էիր վայելչական հարսն ի օգի, Մերձաւորաց յոյժ ցանկալի, Հեռաւորաց փափաքելի, Յորում էիր ժամանակի Բերկրեալ ուրախ եւ ցնձալի, Մանկունքք քո գաւառի վասն նորագ բուրաստանի, Գտնեքք քո պանուրալի Յերգ եւ քնար միշտ ի խաղի, Իսկ քաղաքք քո պանծալի Նստեալ յարքո, քազն ի գլխի :

Բայց փառքի օրերն անցան, կործանե — ցա՛ն տաճարները եւ պալատները, ցրն — զեցա՛ն ցնձութեան եւ ուրախութեան ա — զգալիները :

..... Անցին քո երազի Որպէս ծաղիկք ամարայնի, Կամ ուսուցեալ պղպջակի՝ Որ ընդ լինելի պատուի, Սուրն անդորմ անօրինի՝ Որ մեր արեան է ի սովի : Նայն նա է հոս ուրեմն ի քեզ՝ Որպէս յիս՝ յայն ժամանակի, Արար դիակն անբուելի Անբաղ մեռեալ գէշ գազանի վասն այնորիկ, ո՛վ ցանկալի, Որ եւ ներսուս այսմ ամենի, Ի քոյն յայնժամ խիստ աղետի՝ Ծանի՛ր եւ զիմս ողորմելի, Եւ որպէս փորձ տարակուսի՝ Լեր տրտմակից ինձ յայս վայրի :

Այսպէս, Եղեւսի իրեն ցուակից ու կարեկից կանչելով Անին, զեւ կ'ուզէ ու — ըրէ պայցոյներ, ամբո՛ղջ աշխարհը :

Զտրեմձագեան կամ աշխարհի, Որ եւ հանուր մարդկան ազգի :

Բայց կը ձանձար աշխարհը, մարդ — կութեան սիրտը, միշտ անտարբեր : Ու — տի Եղեւսի կ'ազգապէս :

Լացե՛ք, լացե՛ք բարձր ի ձայնէ, Զիս ողբացե՛ք կողկողալի, Եզեկա՛ք քաղաք Ռուսայ Որդեկորայս, որք եւ այրի :

Յետոյ Եղեւսի կը պատմէ իր կրօն — քը, իր գժբախտութիւնները :

(Մնացեալը յաջորդով)

ՌԻՐՓԱՅԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ

(50ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ)

ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ

ԻՄԱՍՏԸ

ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ

ԴԱՐՔԻՆՆԵՐԸ

Ելլազայի պատմութեան մէջ Սպարտայի մարտնչութեանը մնացած են իրրեւ ցե - դային խորհրդանշանն եւ տխրանքն իր - ունիք :

Հայոց աշխարհի մէջ ծայրէն միւսը , Հայիկեան օրերէն մինչեւ Սարտարապատ , ինչո՞ւ չէ մինչեւ Փետրուարեան ընդվը - դումի դիւցազնամարտերը , կը մնան ա - դատութեան սրբազան դուպարներ մէկը միւսէն զերազանց :

Մասնաւորաբար 1915ին , ցեղին արիւ - նաբամ օրերուն՝ վանի , Շապին Գարա - Տիարի , Մուսա Լեբան , Ուրֆայի եւ այլ փոքր սակայն անհասարակ հերոսամար - տերը դարաւոր թշնամիին դէմ , պիտի մնան անսպառ աղբիւրներ՝ սերունդնե - բուն մարտական ու արատաւենչ ողին պողպատելու համար :

Սակայն Ուրֆան իր դարերու յարա - տեւ ու իրերաջանող դուպարներու խի - դախութեամբ կը մնայ Հայոց պատմու - թեան մէջ եղական քաջադործութիւնն - բուն վկայութիւն :

1915ի Սեպտեմբերեան տերեւթափի օրերուն մահը արհամարհելով ծառայու - ցեղին դարաւոր դահիճին դէմ , Ուրֆա - ցին նախընտրեց իր պաշտելի տան սե - մին , Հայրենիքի սրբաբան հոգին դահ - բերուել , իր արիւնով ողորդել , բնաշխար - հը , քան վատորէն երթալ ողջակիզուելու , նահատակուելու անսպառներու մէջ :

Եթէ պահ մը ուշի ուշով քննեք քար - տէսին վրայ Ուրֆայի աշխարհազրական դիրքը , անոր կերտած հերոսամարտը այնքան կը մեծնայ , այնքան կ'արժեւոր - ուի ու կը դառնայ տխրանամարտ , շան - թահարող փոթորիկ :

Եղեակիս ոչ մէկ օտար երկրի սահմա - նակից է : Հեռու՝ ծովերէ : Կարուած՝ աւելի քան հինգ հարիւր քերտեթիւր հե - աւարութեամբ արտաքին աշխարհէն , շրջապատուած բարբարոս ցեղախումբե - բով , զրկուած մտաւոր ու հեռուոր հայ գիւղերու եւ քաղաքներու օժանդակու - թեանէ : Ուրեմն ամէն փորձ կուրի եւ լըրոստութեան դատապարտուած է զի - տակից նահատակութեան :

Եւ սակայն այս արժուերոյնը դարեր շարունակ անվահերօրէն ճակատած է ա - րանց վհատելու անհասարակ հորդանքու - եւ կազմակերպուած բանակներու դէմ յանուն Հայրենի հոգին ու ցեղին յաւի - տենականութեան :

1915ի Ապրիլեան ձերբակալութիւններն ու պատերազմի անհրաժեշտ գրաւումնե - բը , տեսնելէ ետք , ամենայնայն Հայն անգամ կը դուշակէր մտալու փոթորիկ մը : Ուրֆային որ սովորութիւն ունէր իր տարեկան պարէնը պատրաստել Յուլիս - Օղոստոս ամիսներուն , այդ տարի աւելի կանուխ սկսած էր աշխատանքի : Բոլոր տունները լեցուած էին առատ պաշարով : Հերոսամարտի օրերուն՝ զեկալարու - թիւնը այդ կենսական հոգէն ազատ էր : Կը մնար դէնքի եւ ռազմաթերթի հոգը : Այդ ալ Մկրտիչ իր շանթահարող խում - բով կը կատարէր՝ Ուրֆայի ճամբով թուրքեւոտ ճակատը զրկուելիք ջորի - ներու կարաւաններէն : Մկրտիչի եւ ըն - կերներուն ամենամեծ մտահոգութիւնը կուտուղ ուժերու պահանջն էր : Զօրակոչին պատասխանած էին 20 - 50 տարեկան այ - բերու զրեթէ կրկու երրորդը , ամէն ճիւղ կը թափուէր կարելի եղածին չափ երի - տասարդութիւն պահել : Պատրաստուած էր ամբողջ պատանեկութիւն մը 14 - 19 տարեկան : Ահա այս սերունդն էր որ իր վտիտ սակայն վճռական ուսին վրայ կը - բեց հերոսամարտին ամբողջ ծանրութիւ - նը : Ահա անտիպ զրուալ մը , այդ փա - րահեց հերոսամարտէն :

×

Փախի փաշայի ժամանումէն ետք թը - քական յարձակողականը սկսած էր ռազ - մական խմատով կազմակերպուել : Բեր - զին , Ս . Սարգիս վանքի կոնսակին եւ Բիւլէֆլիւկայ բլուրին վրայ զետեղած է - ին նոր թնդանօթներ , փոխարինելով հին - ցած թնդանօթները : Մեր պաշտպան -

դական շրջադիւր օրէ օր կը նեղնար : Ա - ռաւօտ մըն ալ յանկարծ նշմարեցինք որ մեր դիրքին զիմաց մարտկոց մը կը հաս - տատեն , Թիֆլիսուրի աջ բարձունքին վը - րայ , թրքական զերեզմաննոցին կոնակ տուած : Մեր դիրքը կը գտնուէր Հեսնոց Մխչի Գէորգեան տունը , ուրեմն անմի - ջական սպանալիքին տակ նոր հաստատ - ուած թնդանօթներուն , հազիւ երեք-չորս հարիւր մեթր հեռավորութեան վրայ :

Մեր դիրքին խմբապետը՝ Հայկ Չա - վուշ (Շողոպոյցի թրքական բանակէն փախտական) անմիջապէս տեղեկացուց հայ զինուորական կեդրոնին : Մկրտիչ - անձամբ եկաւ ստուգելու եւ տեղուցն վը - րայ քննելու թուրքերու տարած աշխա - տանքը : Մտախոհ մեկնեցաւ , այդ պա - հուն անոր զլիւսն մէջ կարելի էր զու - շակել պատրաստելիք յանդուզն ճրարի մը ուրուաղիծը : Ո՞րդախ զեկալարը մին - չեւ կեդրոն հասնելը ամէն բան պատրաս - տած էր : Նախքան թրքական բանակի կազմակերպման , յախուսն ձեռնարկով մը քայքայել ու կազմալուծել անոնց յար - ձակողականը , մանաւանդ յուսալքել նոր հասած բանակին կորովը եւ շրջաններէն հաւաքուած քերտ եւ արար խումբնա - դանձը , որ թալանի ծարաւէն օր ըստ օրէ կընար դառնալ վտանգաւոր ուժ մը թուրք բանակին կողմին :

Յետ միջօրէին մեր դիրքը կը լեցուէր իրարու ետեւէ հասնող մարտիկներով : Միջազին կը հասնէր Մկրտիչ Եօթնոց - բայրեան՝ երբորը Սարգիսին հեռ : Տեղ - ուցն վրայ պատրաստեց երկու տասնեակ՝ ընտրելով փորձառու եւ յանդուզն կըտ - ուողներ , մէկ տասնեակը յանձնեց Սար - գիսին , անոր տալով իրրեւ օգնական՝ Լեւոն Չէրչեանը : Անհրաժեշտ հրահանգ - ները տուաւ , նախադրեցաւ պիտի ըլ - լար Սարգիս , անոր ազգանունին պիտի հետեւէր Մկրտիչ իր տասնեակով : Իսկ մենք նոյն յարձակողականին ազգանշա - նէն ետքը պիտի յառաջանայինք մեր դիր - քին յառաջապահ խումբով հասնել մինչեւ Գէորգեան տունը ու հոն դարանակալ պի - տի սպասէինք , ստեղծուելիք ընդհանուր յարձակումէն յառաջ եկած շփոթութեան պահուն Գիւրգեանի պիտի պոռայինք . « Հոս , հոս՝ են կեպուրները » : Այս ձե - տով թշնամիին ուշադրութիւնը մեր վրայ հրաւիրելով , կարծելով թէ օգնական ու - ժեր հասած են եւ մեր յարձակողական մեկնակէտն է , պիտի խուժէին մեր դիր - քերուն վրայ : Սարգիս աշնանային մու - թէն օգտուած՝ յաջողած էր իր տասնեա - կին հետ ճամատանին փրատակէն սողոս - կիլ թրքական զիրքերու կոնակը : Թըր - քական զերեզմաննոցը հրաշալի թաքը - տոց մըն էր հայ ռազմիկներուն համար : Մկրտիչ մինչեւ բողոքականաց ժողովա - բանը տունէ տուն ներքնաշարկերէն անց - նելով կը յառաջանայ թշնամի մարտի - ցին ձախ կողմը ու կը մխրձուի մինչեւ բլրակին ռաքը :

Հայերը մասնաւորաբար զինուած էին ձեռնապոսակներով (*) ու հազուած քըր - տական տարալ :

Թշնամին աւնուած էր Հայոց կրակին մէջ , կիսարտրակ մը կազմած կոնակէն , բաց թողով միակ փախուստի ճամբան զէպի Հայոց զիրքերը :

Նոր հասած թրքական բանակին զին - ուորները անձանօթ էին ոչ միայն տեղա - կան ռազմական զիրքին , այլեւ Հայերու կողմէն բնօթին : Այդ զիրքերուն մէջ փոքրաթիւ էին ու վտանգած անկանոն ա - ւարի եկող խումբանի մը ռազմուսակու - թեան : Մեր զիրքերուն մէջ անհամբեր կը սպասէինք յարձակման ազգանշանին :

Կէս զիշերուն մօտ անաւոր զըրրիւ -

(*) Այդ ռուբերը Ուրֆայցիներու րս - տեղծագործութիւնն էին : Երեք մեծու - բիւն ունէին ու կը գործածուէին ըստ բշնամիին հեռաւորութեան եւ բուրն : Անոնք շինուած էին խտացած կարի տու - փի ձեւ բիրեղէ , մէջտեղը ուժանակի փոփոխել բայն մը պատրաստ , շարքը լեցուած կրաքարի եւ երկաթի կտորներ : Պայքումը կ'ըլլար դժոխային եւ հար - ուածը մահացու :

Չենք մոռնար Ուրֆայի անցեալ պատ - մութիւնը : Հասնող սերունդը անմիջա - կան երէկն է որ կը փնտռէ , անով ինք - զինքը հպարտ զգալու համար :

Հային ու Արամը՝ հին դարերուն խան - դավառած են մեր պատերը : Այսօր եթէ անոնց կողքին նորերը չունենանք ներկա - յայցնելիք , ցեղին ազնուականութիւնը եղ - ծանուած պիտի նկատուի մեր դաւակնե - բուն կողմէ :

Վերջապէս կէս դարու մեր պատմու - թիւնը թուական մը ունի , որ առանց Ուրֆաներու զովացնող ազբիւրին , տե - ւական կերպով պիտի այլէք մեր սիրտը՝ հրատոյզը կրակներու մէջ :

Ապրիլեան եղեռնին կ'անարկենք , որ - մէ քնող մեր ամէնէն մեծ ցաւը պիտի մնայ պատուհասին հանդէպ որդեկրուած ընդհանուր համակերպութիւնը :

Ու եթէ քանի մը վայրերու մէջ Հայու - թեան բունցըը չբարձրանար , այդ ցա - տը պիտի առաջնորդէր մեզ խորունկ կասկածի մը՝ ցեղին առաքինութիւնն - բուն հանդէպ :

Այս հաստատուած կ'ընենք , քաջ գիտ - նալով երիտասարդութեան հողերանու - թիւնը , որ իր հայրերուն մօտ նախ եւ ա - ռաջ կը փնտռէ առնականութեան այն արժանիքը , առանց որուն ազգի մը իրա - տունք չի տրուիլ ապրելու արեւուն տակ :

Ժողովուրդ մը , որքան ալ օժտուած ըլ - լայ բարձր արժանիքներով , երբ կը տես - նէ կեանքը պայմանաւորող ուժը իր պատմութեանէն բացակայ , անխուսափելի կերպով կ'իյնայ ազգերը անհետացնող յուսալքութեան զիրկը :

Բարեբախտաբար այդ ուժը յաճախ ե - բեան բերուած է Հայութեան կողմէ՝ մեր պատմութեան ամէնէն մօտայ օրե - բուն անգամ ու փրկած ցեղին պատիւը :

Այդ ուժը եւ բունցըը եղաւ նաեւ Ուր - ֆան , որ 1915ի դաժան օրերուն բարձրա - ցաւ դազանին դէմ :

ԱՐԱՄ ՄԱՀԱԿԵԱՆ

նով պայթեցաւ հրաշագործ ռումբը , ա - նոր յաջողեց Մկրտիչի տասնեակին զը - ժոխային կրակը , բլուրը դարձած էր հը - բարիտային անաւոր բոցերու ճարակ , պոռչուող , ալ ու ձախ փախուստ : Մեր զիրքերէն բարձրացած մեր բացական - չուններէն՝ իսկապէս տեսանք զէպի մեկը կող խաժամուծը : Ուրիչ էլք ալ չունէ - ին , իրենց կոնակէն կը պայթէր հրացան , տասնոց եւ ռումբ : Կը մնար դէպի Հա - յոց թաղ իրենց փախուստի ճամբան , Թիֆլիսուրի եղբերին շարունած Հայոց բո - լոր զիրքերէն մահացու հարուածներու տակ կը տապալէին տասնեակ թուրքեր եւ Գիւրգեան : Գանդուած էր Թիֆլիսուրի մարտկոցը :

Գրեթէ մէկ ժամ տեսող այս կուրբ յե - տոյ մեռելային լուծեան մատնեց ամ - բողջ քաղաքը :

Ելած էր Ֆախրին ու յուսալքուած բարբարոս ջոկերը : Այդ զիշեր ուշ տունն վերադարձան Մկրտիչի եւ Սարգիսի տասնեակները յազմական իրենց հետ բե - յելով աւելի քան երկու տասնեակ հրացան եւ բաւական փամփուռայն պաշար :

Նման ծուգակի յաճախ կ'ենթարկուէր թուրքը : Դժբախտաբար Ուրֆայցին բնա - յոյս չունէր անխուսափելի ջարդէն փրկ - կուելու , կուտեցան միշտ մահուան ուր - ուականը արհամարհելով :

Պատմութեան դաժան վճիռն է : Այն ժողովուրդը որ պայքարի ջիւղ չունի , դատապարտուած է ոչնչանալու , փոշիա - նալու :

Ուրֆայցին դուպարի մէջ նետուեցաւ սարկութիւնը վանելով : Անոր մէջ հա - ւատք էր դարձած պայքարի եւ արեան զոհողութեան սրբութիւնը , որ «միայն զէնքով կայ Հայոց փրկութիւն » : Ու կուտեցաւ որ նուիրագործէ Հայուն դա - բերու մաքառումը , որ սպրի Հայը ու յաւերժանայ , փրկուի անոր պատիւը սպրտունակ :

Փառք բոլոր հայ հերոսներուն :

Յ . ՀԻՍԱՅԵԱՆ

Ուրֆայի հերոսամարտը անվահեր - կերպով համաժողովրդային էր : Ամէն Ուրֆայցի Հայ առանց դաւանանքի , դա - դափարաբանութեան , ապրիլի եւ սեպ - թտրութեան՝ նետուեցաւ ինքնապաշտ - պանութեան կուրի մէջ : Այն զօնգակ օ - բերուն , Ուրֆայցին տեսաւ իր արեւա - կիցներուն տեղահանութեան նկատմամբ կարաւանները , անոնց մերկ , անօթի ու թշուառ վիճակը , լսեց մասնաւորաբար բռնաբարումներու եւ ջարդի ահաւի պատմութիւնները , ախանապա դարձաւ կըր բոբնի թուրքը , առանց խղճահա - բութեան , իր արիւնտ թաթը կ'երկարէր Հայոց թաղը , հարածելով հոն ծուարող խրեակները :

Սակայն այս բոլորէն վեր՝ նման հեր - սամարտ մը նախապատրաստելու համար անհրաժեշտ էր երկար տարիներու աշ - խատոյ դէնք եւ ռազմաթերթ հայթայթել եւ ամբարել : Այս աշխատանքին լծուած էր Ուրֆայի երրորդութիւնը , Մկրտիչ Եօթնոցայրեան՝ ազատութեան , Յակոբ Եփրեյան՝ հաւասարութեան , Յարու - թիւն Ռասթիկէլեան՝ կըրայրութեան խորհրդանշան : Երեք անմահ տխրան - ները ամբողջապէս նուիրուած էին Հա - յութեան փրկութեան սրբազան գործին : Մկրտիչ Եօթնոցայրեան , արհեստով պայտառ , միջոցը ստեղծած էր երթե - լեկելու քաղաքի շրջանը բնակող արար եւ քերտ զերեզմար , անոնց կենդանիները պայտելով՝ գէնքի առևտուրն ալ կը կազ - մակերպէր եւ առիթէն օգտուելով արար եւ քերտ լեզուներու դարձուածքներուն կը վարժուէր : Յետագային երբ գործը նւաւակեցաւ , Յակոբ Եփրեյան բուրդի ներկարարի իր արհեստը ձգեց՝ կտա - պան դարձաւ , զնեց չորս բեռնատար կտաքեր , մտաւ Ամերիկեան Սուսի(*) ըն - կերութեան մէջ՝ փոխադրելու համար զիրկրու մէջ հաւաքուած ապրանքները մինչեւ Հալէպ : Յ . Եփրեյանն էր , որ Հալէպի գորանոցէն յափշտակուած գէն - քերն ու ռազմաթերթը զգուժի կուտի պարկերու մէջ տեղաւորած փոխադրեց Ուրֆա , մաս մըն ալ Տիգրանակերտ : Յարութիւն Ռասթիկէլեանն աւելի ուշ կերպասի ներկարարի արհեստը ձգեց եւ իր հօր գնած զիւղին մէջ հաստատուեցաւ իրրեւ երկրագործ որ լայնօրէն նուիրուի գէնքի առևտուրին :

Այս երեք նուիրեալները իսկական դար - բնները դարձան հերոսամարտին , պող - պատեցին նորահաս պատանիներու հօ - գիւնքը , մարզեցին ռազմական տեսակէ - տով՝ իրենց կիրակնօրեայ եւ տօնական օրերու արձակուրդներէն օգտուելով , վարժեցուցին նշանաւորութեան , զիրքերու մէջ եւ պարտիկանական կուրներու : Ա - նոնք անբաժան ընկերներն էին Հ . Յ . Դաշնակցութեան պատանեկան Միու - թեան , զիշերային դատախօսութիւններ , մարզանք եւ զինավարժութիւն կը կա - սասէին մեզի համար :

Այս նուիրեալ երրորդութեան աշխա - տանքներուն կը հսկէր տեղական պա - տասխանատու մարմինը , անոնց կ'օժան - դակէր բարոյապէս եւ նիւթապէս , իսկ Ուրֆայի Հայութիւնը ամբողջութեամբ թեւ ու թիկունք կը հանդիսանար :

Նման վտանգաւոր աշխատանք , առանց ժողովուրդի օժանդակութեան , անկա - բերի էր կազմակերպել : Ուրֆայցին հը - պարա է իրենցմով , եւ իրենք՝ Հայու - թեամբ :

Մկրտիչի եւ Յարութիւնի կեանքն ու մահը եղաւ հերոսական , անոնք ինկան զիւցազնական մահով : Իսկ Յակոբ Եփ - րեյան իր պարականութեան բերու - մով չկրցաւ մասնակցել հերոսամարտին , հակառակ իր քանիցս անյաջող փորձին քաղաք մտնելու համար : Ան փրկարար զեր կատարեց զազմականներու կարա - ւանին , իր վրիժառու բազուկով՝ հար - ուածեց բազմաթիւ թուրք ջարդարար - ներ , ահաբեկեց աւելի քան տասնեակ մը ոստիկան եւ զինուոր , Թէլ - Ապիտակն մինչեւ Ռազվա հետեւեցաւ զազմական - ներու կարաւաններուն , փրկելով քանի մը

(*) Բոյսի արմատ մը , որմէ կը քաղեն զանազան նիւթեր , Չան , զովացուցիչ ըմ - պիլիներ , եւայլն :

Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն

Գ Մ Ա Ս Գ Ի Գ Ի Մ Ը Մ Ա Ս Ի Ն

Երևանի մէջ լոյս տեսած է «Աստղա - գիտութիւն» դասագիրքը, որ թարգմանաբար նուիրուած է սուսերէն համանուն գիրքին : Այս առթիւ , Լ. Միրզոյեան եւ Բ. Թումանեան , առաջինը Բիւրակահի սաստղագիտութեան անձնակազմէն , երկրորդը՝ Երևանի պետական համալսարանի սաստղագիտական ամպլիոնի ղեկավար , «Մով. Հայաստան»-ի Դեկտեմբեր 4-ի թիւին մէջ ստորագրած են յօդուած մը , որ կը ստեղծէ ի մէջ այլոց : « Դասագիրքում ոչ մի խօսք չի սուսուած սաստղագիտի եւ նրանց սիւստեմները յառաջացման ու զարգացման հարցերի վերաբերեալ մեր երկրում , մասնաւորապէս Հայաստանում , վերջին 15 - 20 տարում ստացուած կառուցութեան արդիւնքները մասին , որ ղեկավարներ , որոնք համընդհանուր ճանաչում են դատել զիտական աշխարհում ... դասագիրքում խօսուած է եղիպտոսի ու Բաբելոնի հին դարերի սաստղագիտական գիտելիքները մասին , սակայն ոչ մի խօսք չի սուսուած հայկական լեռնաշխարհի այլ ժամանակակից սաստղագիտական գիտելիքների վերաբերեալ , որոնք չեն ղեկավար ստաղիներին : Յայտնի է , նոյնիսկ , որ սաստղագիտական երկրի ստաղիները համաստեղութիւնների կատարուել է այն տերիտորիայից , որի մեծ մասը զբաղեցնում է հին Հայաստանը : Երբ կաթիլի մասին սին խօսելու անհրաժեշտ էր յիշատակել , որ դեռ եւս է. դարձած հայ նշանաւոր գիտնական Անանիոս Ծիրակացիի գտնում էր , որ այն կազմուած է առանձին սաստղերից :

« Դասագիրքում նշուած է , թէ Ռուսաստանում առաջ ինչ օրացոյց էր ընդունուած : Միթէ՞ չէր կարելի որոշ տեղեկութիւններ տալ նաեւ հին Հայաստանում ընդունուած օրացոյցի մասին (տոմարի , ամիսների ու շաբաթուայն օրերի հայկական անունները) : Չէ՞ որ հայկական օրացոյցը համարուած է պատմութեանը յայտնի լուսագոյն օրինակներից մէկը » :

Պ Ա Ր Ա Ր Ո Ւ Ե Ս Ի Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ր Ա Ն Ը

Հիմնուած է 1930ին : Երեսուներեւի ստորաբաժնի ղեկավարութեամբ արժանապատիւ Նորանոս յաջողութիւններ եւ տուած է 25 խումբ շրջանաւարտներ , որոնց շնորհիւ , այժմ , Երևանի օտեւան ունի 70 պարուղիներ եւ պարուհիներ ընդհանուր պատկանելի խումբ մը : Ուսումնարանը ունի հանրակրթարանի բաժին մը , ուր պատանիները եւ պարմանուհիները պարտադիր ձեւով կը սորվին երաժշտութիւն , թատրոնի պատմութիւն եւ այլն : Միեւնոյն ատեն կը սորվին դասական եւ հայկական պարեր : Յետագային ըստ վրայ կը կատարելագործեն իրենց արուեստը :

Մայիսին , Մոսկուայի մէջ իրենց սաները ներկայացուցին 15 հանրապետութիւններու պարուստեմի ուսումնարանները : Երևանինը նկատուեցաւ յառաջագոյններէն մին :

Պ Ա Լ Ե Ս Ա Ռ Ո Յ Յ Ի Ն Վ Ր Ա Յ

Երևանցիները առաջին անգամ ըլլալով Դեկտեմբեր 7ին առիթը ունեցան ղեկավարուելու յայտնական «Պալէ սասոյցին վրայ» խումբը : Սրան մը արուեստական եղանակով սահագաշուի վերածուած էր :

Մ . Ն Ա Լ Բ Ա Ն Դ Ե Ա Ն Ի Յ Ի Շ Ա Ս Ա Կ Ի Ն

Երևանի մէջ մեծ շուքով բացուած կատարուեցաւ Մ. Նալբանդեանի յուշարձանին : Ներկայ գտնուեցան պետական ղեկավար եւ մտաւորականներ :

Սոսոյցներէն Գ. Հասարակեան ղեկավարուելու էր , թէ Նալբանդեան հայ դարական քնարերգութեան , յայտարարեց . « Նրա քնարական գործերը ստեղծագործութեան պատկար , միասնական լիարժեքութեան արժանիքները քաղաքական բանաստեղծութեան լուսագոյնի զօրքը հանդիսացաւ » : Այսպէս ձեռնարկը զօրքը :

Ներկայներէն բանուոր Պ. Սարգսեան նոյն միտքը արտայայտած է , արտասանելով նաեւ քերթուածէն հաստուած մը : ՆԵՐԳԱՂԹ

Դեկտեմբեր 2ին Պաթում ժամանց Սուրիահայ հայրենադարձներու հինգերորդ կարգաւոր ընդհանուր 392 հոգիէ :

ման անցանք : Կեանքները կը ղրկուէին , սակայն , յայտնի էր որ իրենց վերջին օրերը կ'ապրէին : Մեր թարգմարը իրարմէն Բահման կ'ընտան յաճախ կողմէն կը յառաջանար : Երկու կարեւոր թարգմաներ զբաղեցնէ ետք , հասած էինք եկեղեցիին մօտ , որ բերդի մը նման կը ղրկուէր մակաւրին : Այդ օրը մինչեւ իրկուան պէտք էր զբաղեցնէր եկեղեցին , այդ էր Ֆախրի փաշային հրամանը : Չինուորներու տասնեակներու բաժնետիր տեղաւորուած էի եկեղեցիին շրջապատին մօտ գտնուող կիսով աւերակ դարձած տուններուն մէջ եւ կը սպասէի , որ ամբարձուութիւնը զարկէն ետք յառաջ շարժինք : Այդ պահուն յանկարծ տղայ մը նշմարեցի , որ կեցած էր մեր դիւրբին մօտ դրանուող պատին վրայ , ուսէն կ'ախարհէր զպարտական մը տղայի մը ու կարծես մեր կողմը կ'ուզէր անցնել : Այս տեսնելու ու խորհրդածելու իրիվայրիկեան շտեկեց , երբ այդ տղան իրարու ետեւէ կ'ընկուսուէր նետեց մեր ղեկավարներուն վրայ : Երբորդ ուսմբին միայն ձայնը լըսեցի , անկէ ետք պատահաններէն լուր չուներայ : Երկու օր ետք երբ աչքերս բացի , ինքզինքս դատայ հիւանդանոցը՝ մահահալուին մէջ եւ փաթկուած լիւրակալուով : Ա՛խ , այդ ի՞նչ լակոտ էր , հարկէ 14 կամ 15 տարեկան կտր , սակայն հողէ առ ստանայ մը ըլլար կարծես : Այդ քաղաքի բոլոր Հայերն ալ , մէջն ըլլալով նաեւ կ'ընկուսուէին , քաջ եւ անվախ մարդիկ , ախտո՞ւ իրենց կեանքը ըլլալուն : Ուրժայի հիւանդանոցը գտնուած շրջանին այնպիսի զրուարներ պատմեցին վերաւոր ընկերներս , որ պատմելը չի վերջանար :

Ծննդավայրի մասին երբ այս պատմութիւնները կը լսէի , կարելի է պատկերացնել թէ այդ պահուն ի՞նչ կը զգայի : Սակայն , մեծ ճիգ կը դորձադրէի յուզումս յայտնի չընելու համար : Այս պարագան հարկէ թէ խուսափէր հիւանդին աչքերէն :

Քանի մը օր ետք , երբ ան հասկցաւ Հայ եւ Ուրժայի ըլլալս , այն ատեն միայն անդրադարձաւ թէ ինչու ալլայլած վիճակ ստացած էի : Այս պարագան սուսմբին անգամ ինքն էր որ յայտնեց , բարեկամութիւն ցոյց տուաւ եւ սկսաւ դո՞վասանքով խօսել Ուրժայիներու մասին : Իր խօսքերուն համաձայն՝ Ֆախրի փաշան , հիացած՝ Ուրժայիներու քաջութեան վրայ , կուսէր ետք ուղած է օգտակար ըլլալ Հայերուն , սակայն , չէ կրցած իր խօսքը արժեցնել :

Տ Ո Ւ Թ Ձ . Ք Ի Լ Է Ծ Ե Ա Ն

Կ Ա Ր Դ Ա Յ Է Ք Տ Ա Ր Ա Շ Ե Ց Է Ք Յ Ա Ռ Ա Ձ Ը

նիկ ըլլալ կ'ուզէի իմ ղրկուած ձեռնարկ : Եթէ ունեցած ըլլայի Սալուայի այն սակցութիւնը ձեռի հետ , դուք ամենեւին առիթը պիտի չուներայիք իմ խնդրով ղրկուելու : Ես երբեք չէի կարծեր թէ այդքան յառաջատես կ'ըլլար : Չեղի տեսնուող չի կրնար այդ հաւատքը ունենալ :

Հակառակ բոլոր մտահոգութիւններուն , որ դասալիւրդ պատճառած է ինծի , ոչինչ կորսնցուցած եմ իմ ղեղեղութեանս : Ընդէ կ' , որ քիչ մը տօգոյն եմ եւ նիհար , բայց ատոնցմով աւելի հրապուրելի եմ դարձած : Ամէն ոք կը հիւանայ քաջութեանս վրայ :

Իմ պարագան անդուզական է ոճրային պատմութիւններուն մէջ : Այժմ հարկ է որ վերջացնեմ նամակս : Մնաք բարով : Ես կը սպասեմ բովանդակ իմ հանդարտութիւնս եւ ամենեւին չեմ զարհուրել զվախքին : Վաղը պիտի տեսնեն խոստովանահայրս :

Կը ներեմ ձեզի : (Քրիստոնէարար՝ միթէ հարկ չէ՞ ներել թշնամիները) :

Ժ Ա Ն Վ Ի Լ Ք Ե Ն Ս Ո Ւ Ն

Յ . Գ .— Կը կարծէ՞ք թէ ինձ այ տեղ մը կը յատկացուի թիւսաւ թանդարանին մօտէ արձաններու կարգին :

Ա Կ Ա Ս Ս Գ Ի Ր Ի Ս Տ Ի

(Վ Ե Ր Ձ)

Ո Ւ Ի Ր Ց Ա Յ Ի
Կ Ո Ւ Ի Ե Ն Ե Ր Ո Ւ Ե Մ Ա Ս Ն Ա Կ Յ Ո Ղ

Թ Ո Ւ Ի Գ Ե Ն Ր Ա Ս Ս Պ Ա Յ Ի Մ Ը

Վ Կ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Պոլսոյ մէջ , 1915ի վերջերը համալսարանի հիւանդանոցին մէջ իրբեւ օգնական բժիշկ ծառայութեան կոչուած էի : Օրին մէկը հիւանդանոցի այն բաժնին մէջ , ուր ես կ'աշխատէի , վերաւոր ենթաստղայ մը բերուեցաւ : Այդ օրը ուրիշ վերաւորներու կարգին անոր ալ անհրաժեշտ դարձանումները ըրի : Հիւանդանոցին օրէնքըն էր իւրաքանչիւր հիւանդի կենսապահութիւնը եւ վերաւորուելու պարագաները արձանագրել : Յաջորդ օր այս ենթաստղայն հետեւեալը պատմեց .—

« Հայկոյ էինք , հրաման ստացանք անպարանքով Ուրժայ մեկնել , ըսին , որ կեանքները սպաստմբած են ու պարտականութիւն պիտի ունենայինք զսպելու զանոնք :

« Երեք օր , զիչեր ու ցերեկ ձամբօրդեղէն ետք , Ուրժայի մօտեցանք : Քաղաքին մէկ ժամ մնացած՝ ղեղացիներու եւ ուսմբերու ձայնը լսեցինք , այն սպասուածութիւնը ունեցանք , որ լայն ճակատով ուղարկուած մը պիտի մըտնէր : Քաղաքին կէս ժամ մնացած մեղհրահանգութեամբ խնայելի ձեւով ու յառաջանալ հիւանդանոցին կողմը տարածուող այգիներուն մէջէն : Մեղ ղրմաւորելու եկած սպայ մը յայտնեց , որ ստիպուած են այդ կարգադրութիւնը ընել , որովհետեւ կեանքները զարանակալ կը սպասեն քաղաքին ձամբաներուն վրայ :

« Յաջորդ օրը մեղ բաժնեցին կեանքներուն թաղերը եղերող ղրբերուն , իսկ թնդանութիւնն ալ ղեկավարելու շրջակայ ըլլաներուն եւ բերդին վրայ :

« Հրաման ունէինք ընդհանուր ուժբարկուածութեան ետք յարձակողականի անցնել : Առաջին օրը տակաւին անձանօթ ըլլալով մեր ղրմաց գտնուողներուն ուժին , զործադրեցինք արուած հրամանները , սակայն , այնպիսի ղեկավարութեան մը հանդիպեցանք , որ բաւական զոհեր տանէր ետք ստիպուեցանք կրկին սպասուածութիւն մեր ղրբերը : Անկէ ետք , այլեւս ակամք խոհեմութեամբ շարժել , մինչեւ որ թնդանութիւնը ղեկանի հաստար գործուցին Հայոց տուններն ու ղրբերը : Սակայն , մեր այս յոյսերն ալ ի ղերեւ ելան : Կեանքները կը կուսէին աւերակներու ետեւէն : Այն ատեն մեր հրամանատարը հրահանգեց զոհերու առջեւ կանդ չտանել ու ամէն ղեղով նուաճել սպասուածութիւնը :

« Յաջորդ օր իստ շարքերով յարձակուեցինք , եւ ոչ թէ քաղաք մը : Ես կ'անդիտանայի թէ ով էր այդ Փարսը ... Ամենայն զէպս ծիծաղելի կը զանեմ որ այդ անունը արուած է մարդու մը : Ինչ որ ալ ըլլար , սակայն , հարկ էր որ վերջ մը կարենայի զնել Տոնալա Բոսսի ցոյց տուած հետաքրքրութեան : Ժամանակ չկար երկարօրէն մտածելու , ուստի զործնական ըլլալ ուղեցի : Մէկէն տուած որոշումս յաջողութեամբ պահուեցաւ : Անկէ յետոյ այլեւս վերջնականապէս վտանգ չեղար ըլլալ կարծեցի :

Էլիզ հաղորդեց ինձ , որ հրաւիրած էիք ղրբեր ձեզի մօտ , հարցաքննելու համար : Անմիջապէս հասկցայ որ ձեր հետաքրքրութիւնը կապ ունէր Պրիան Մարթէնի հետ իմ ունեցած յարաբերութիւններու հետ , առանց սակայն գուշակելու թէ ուր կ'ուզէիք յանդիլ : Դուք կարեւոր չէիք նկատած հարցնել իրեն , թէ արդեօք ի՞նչ պացած էր Փարսի սկի տուիք բերելու համար : Ենթադրած էք , հաւանաբար , որ եթէ ձեր հարցումը ինձի կրկնէր , ես կրնայի զգալ սպառնացող վտանգը : Այնուհանդերձ տեսակ մը դարմանք եւ կասկածամտութիւն ունէի , ղրմանալով որ իմ բոլոր շարժումներս ծանօթ էին ձեզի : Այդ վայրկեանէն առկին՝ ես զրպայի որ իմ բախտիս անիւր հակառակ զանալ սկսած էր : Միթէ չէ՞ք ցաւեր այն բոլոր շարքերուն համար որոնց ենթարկեցիք ղրբս : Ես միմիայն եւ պարզապէս երջան

Ն Ե Ղ Ե Ս Ե Կ Ա Ւ Մ Ե Թ Հ Ե Ր Ո Ս Ո Ւ Հ Ի Ն
Օ Ր . Խ Ա Ն Ը Մ Ք Է Թ Է Ն Ծ Ե Ա Ն

Փարսը սղջիկ մըն էի այդ օրերուն , սակայն մտքիս մէջ անընթացի կերպով տըրտըտուած են Ուրժայի միամտեայ հետաւորներին բոլոր անցքերը :

Մեր հերոսական քաղաքին կուսակցուն խաղի գրուած է արդէն : Ես միայն կ'ուսուէի պատմել թէ ինչպէս ինկաւ մեծ հեղափոխութիւն , Օր . Սանրմ Քէթիլեան :

Հերոսամարտի վերջաւորութեան էր : Այնուամենայնիւ անհրաժեշտ կը լիւրերու գրուած էինք ամերիկեան կոյրերու գրուած լրագիր : Մայրս այդ հաստատուութեան մատակարարն էր : Այդ պահուն անհրաժեշտ էր կեցած էր Միս Եսայի Եսայի անունով : Այդ օրը ուրիշ վերաւորներու կարգին անոր ալ անհրաժեշտ դարձանումները ըրի : Հիւանդանոցին օրէնքըն էր իւրաքանչիւր հիւանդի կենսապահութիւնը եւ վերաւորուելու պարագաները արձանագրել : Յաջորդ օր այս ենթաստղայն հետեւեալը պատմեց .—

« Հայկոյ էինք , հրաման ստացանք անպարանքով Ուրժայ մեկնել , ըսին , որ կեանքները սպաստմբած են ու պարտականութիւն պիտի ունենայինք զսպելու զանոնք : Երբ կարգը խանրմ Քէթիլեանայոյն ալ անհրաժեշտ դարձաւ , ան արդէ կերպով ղեկավարեց մէկ պահուած արձանապարհ հանեց ու կրակեց սպային վրայ : Երբ սպանութեանը տարածած կոտորած վրայ կ'ընկաւ , ղրմաւորները կրակեցին խանրմի կողմէն ու հերոսուհին ինկաւ մեր ստիպուած առջեւ :

Այս ղեկավարի ակնատեսներս սեղմուեցանք իրարու՝ գայիբէ չըջապատուած ստիպուած հօտի մը նման : Չինուորները ղեկերը բարձրացուցած հրամայեցին մեզի իրենց առջեւ շարուել : Կը սպասէինք որ անոնք կրակեն մեր վրայ , սակայն ով զարմանք , կարծես չըմած էին խանրմ Քէթիլեանի ցուցադրած վերջին այդ խիզախութեանն ու մեղ սպասուած հարցոյցին Չալոնց Սանր :

Ականատեսի այս վկայութիւնս , կ'ուսուէմ որ արձանագրուի Ուրժայի պատմութեան մէջ , որպէսզի մեր երիտասարդներն ու երիտասարդուհիները օրինակ տանեն ձեր հերոսուհին կեանքին :

Յ . Թ Ե Ր Ձ Ե Ա Ն

տանեակ Հայեր : Ան ծպտուած էր արարական տարազով : Անոր զոհերը յաճախ կը տարալէին Արարներու յատուկ ղէնքով , մուրճով կամ քօփալով , (կարաստան աւազը կարճ դատարանի ծայրին փակցուած) , հաղուողէպ պայմաններու մէջ արձանակով :

Այս հսկան կսկիծք սրտին , որ չկրցաւ ձանձախել հերոսամարտին , զոհ զնաց այդ օրերու ահաւոր համաճարակին , երկրորդ ջարդարար թիֆլիսին : Վարձերները կատար , համբուրելի հայր ղրբներ :

Յ .

Յ Ա Ռ Ա Ձ Ի Թ Ե Ր Թ Օ Ն Ը

(98)

Դ Ա Ն Ա Կ Ը
Ծ Ո Ւ Թ Ր Ա Կ Ի Ն

Պորժը լաւ կը քաղէր - Մերթնի ղրբանէն ինձի հանդէպ կարելի ընթացքով էր կը վերաբերուէր , բայց ղուքը շատ ծանոթակատարութիւն ցոյց կուտար ինձի : Անիկա սրեւէ թերութիւն չէր զաներ իմ վրաս եւ կ'ուզէր ամուսնանալ ինձ հետ կարելի եղածին չափ շուտ : Ամուսնոյս , լորտ էճվարի երթորդուայն ձերբակալութիւնը աւելի մեծ հանդատութիւն պարգուեց ինձի : Հետզհետէ աւելի կը զմայլէի այն դադարաբախ վրայ , զոր ունեցած էի , պատուելով Գարրութեա Ատոմսի նամակին մէկ էջը :

Ինչ կը վերաբերի Տոնալա Բոսսին , ղրբեք է ըսեմ որ անբախտ երիտասարդ էր : Հայկերոյթիւն ընթացքին ղրբանակա սուր հայեացքով քննելուն պատճառը չէի հասկցած : Իրբ թէ Փարսը , որուն մասին խօսուեցաւ , մարդ մըն է ե-

« ՅԱՌԱՋ »-ի

ԲԱՐԳԱՒԱՃԱՆ ՆԱՄԱՐ

Այս թիվին Պ. Զրինկիրեան կը նուիրէ տասր Փրանք «Յառաջ»-ի բարգաւաճման, Տիկին Շ. Միտաբեանի մասնաձեռն տարի - դարձին առթիւ :

X

Կարտանէն Պ. Խաչատուր Գինոսեան կը ծնողաց յիշատակին եւ իր կնոջ մասնաձեռն Բ. տարեդարձին առթիւ յիշուին Փր. կը նուիրէ «Յառաջ»-ի բարգաւաճման :

ՍՏԻՊՈՂԱԲԱՐ ԾԱՒՈՒ Է

Սեւրանի բանուկ պողոտայի վրայ ծախու է պատերով :

Ա) Նպարալսման խանութ մը, նը - կուղ, կառատուն, բնակարան երեք սեն - եակ, գին 100.000 Փրանք :

Բ) Սրճարան, 9 մէթր ճակատ, մեծ լի - սանս, յարակից սրահը՝ հինգ մէթր բար - ձրը, 280 քառ. մէթր ամէն իրաւունք, թատրոն, սինեմա, պատ, խնջոյք եւն., սու - սու, 200 քա. մէթր (երեքը միա - սին) : 200.000 Փրանք :

Գ) Բնակելի սենեակներ՝ զանազան գի - ներով :

Վարձան դիրքով իսկ : Հասցէ՝ 87 Ալբրի տը Լիվրի, Սեւրան : Հեռաձայն 929 76 - 40

« Լիւն եւ շրջակայի մէջ տուն չի - նելու համար մասնաւոր պատրաստ - տուած հողեր եւ վիլլաներ, նմա - նապէս Լիւնէն 5էն 20 քիլոմէթր հեռաւորութեամբ հողեր (industriels) Մասնաւոր հաստատութիւն մը ուր կրնաք գիմել ամենայն վստահու - թեամբ :

Տեղեկ. Ա. ՕՂԱՆԵՆՍԵԱՆ

BRON - Immobilier

109 bis, Ave. Franklin-Roosevelt BRON (Rhône)

Tél. : 70-88-68 et 70-88-69


ԾԱՒՈՒ ԵՆ

Տէլիֆոնի մէջ, յարկարածիներ. Բո - վրափրկէք Էֆ 3, Էֆ 4, Էֆ 5 : Դիմել Ս. ԱՌԱՔԷԼԵԱՆԻ ամէն օր, 12 Րի տը Նանտէն : Հեռաձայն 49-50-82, ժամը 12-30էն 14 եւ 19էն 20-30 :

ԱՆՆԱԵԼՆԹԱՅ

ՀԱՅՎԱԿԱՆ ՈՍԿԻ ՇՔԱՆՇԱՆ

Modèle Déposé Թանկագին ու Մնայուն Ամէնէն Սիրուն Նուրբ



Պարզ ձեւ՝ 200 Գ. Շրջանակով 300 Գ. Գնելու համար դիմել՝

EDOUARD KHEDERIAN 66, Rue Lafayette, PARIS (9^e)

Tél. : PRO. 11-63 Expédition contre-remboursement

IMPRIMERIE SPÉCIALE DU JOURNAL « HARATCH » 32, Rue de Trévis, PARIS (9^e)

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ Կ'ԵՐԳԵՆ

ԿԻՐԱԿԻ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 19ԻՆ Ժամը 16ին : ՏՕՆԱԾԱՌ

ԴՊՐՈՑԱՄԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐՃԱՐԱՆ

ՏՕՆԱԾԱՌԻ հանդէսը Դեկտեմբեր 19 - ին, Կիրակի կէսօրէ ետք ժամը 4ին վար - ժարանին մէջ :

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԳՈՅԱՄԱՐՏ ՕՐԱՑՈՅՑ 1966

Հրատարակութիւն Հ. Յ. Գ. Նոր Սե - րունդի Մարտէլի շրջանի : Ապագայանքներու համար դիմել՝ O. DJARAYAN 2, Place de la Corderie 13 MARSEILLE (7e)

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ

Կազմակերպուած Գ. Կապոյտ Խաչի Շրջ. վարչութեան եւ մասնաճիւղերու կողմէն իրենց կայանի տասնամեակի առիթով եւ անոր ի նպաստ :

Հրաւիրուած է Լոնտոնէն Հայ Երիտասարդաց Միութեան Թատերախումբը, ներ - կայացնելու Գ. Սնդուկեանցի

Պ Ե Պ Օ

Շաբաթ՝ 18 Դեկտեմբեր Կիրակի՝ 19 Դեկտեմբեր Երկուշաբթի՝ 20 Դեկտեմբեր Երեքշաբթի՝ 21 Դեկտեմբեր Կիրակի՝ 26 Դեկտեմբեր Զորեքշաբթի՝ 29 Դեկտեմբեր Հինգշաբթի՝ 30 Դեկտեմբեր

Տոմսեր կը վաճառեն Կացոյտ Խաչի զր տանեակը, Հայ դրամաճառատները եւ Խաչուհիները :

Ապահովեցէ՛ք ձեր տեղերը :

ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ ՍԱԿԱԳԻՆ

ՄԵԿ ԱՆԳԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

Table with 3 columns: Item name, Price, and Quantity. Items include ՄԱՀԱԶԳ, ՀՈԳԵՀԱՆԳԻՍ, ՅԱԻԱԿՑՈՒԹԻՒՆ, ԵՆՈՐՀԱԿԱԼԻՔ, ՀԱՐՍԱՆԻՔ, ՆՇԱՆՏՈՒՔ, ԾՆՈՒՆԳ, «ՓՈՍԵՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ», «ԿԸ ՓՆՏՈՒՒՅ», ԾԱՆՈՒ Է.

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ թշնամեալու ծաւալով տղ - դերու համար են, չարքաք էջը :

Կանխիկ վճարուը պարտաւորիչ է : Առևտրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմաններու համար դիմել վարչութեան :

ԵՐՐՈՊԱՅԻ

Advertisement for Bosphore chocolates, featuring a logo with a sun and the text 'LE BOSPHORE MARQUE DÉPOSÉE'. Text includes 'ՄԵԾԱԳՈՅՆ ԱՐՏԱԴՐԻԶԸ', 'ՇԷԼՎԱ ԼՈԳՈՒՄ ՍՈՒՍԱՄ', 'ՇԷԼՎԱ ԹԱՀԻՆ ՇԱՐՈՑ (ՌՈՃԻԿ)', 'ՎԱՐԴԷ-ԱՆՈՅՆ'.

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ... CHOC-ALVA • CHOCO-LOC Sté le BOSPHORE SIÈGE SOCIAL 2, Rue Louis Astovin Marseille (2^{ème})

Այս թիվին Քնարիկ Չափուշեան, Տի - կին Հայկուհի Չափուշեան եւ տղան, Տէր եւ Տիկին Վարդէն Ինճէեան եւ զուակնե - րը, ինչպէս նաեւ Կոմիտեան ընտանիքն - րը ցաւով կը ծանուցանեն իրենց ամուս - նոյն, հօր, մեծ հօր եւ ազգականին՝

ՅԱԿՈՒՑ ԶԱՒՈՒՇԵԱՆԻ (Ատապազարցի)

ժամը սր պատահեցաւ Գեղեմեմբեր 5ին, 82 տարեկանին, Սէնթ Օարան (Ստորին Արլաններ) :

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Հայ Բժշկական Միութիւնը գտաւիս - տութիւն մը կազմակերպած է այս Զորեք - շաբթի ժամը 21ին, Հայ Մշակոյթի տու - նը, 17 Րի Պլէօ :

Կը խօսի Բժ. Ռ. Տէր - ԴԱԻԹԵԱՆ Նիւթ. — Հայկ. բժշկութեան բանի մը պատմական կէտերը մինչեւ բաները դար (ֆրանսերէն) :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Լիւն. — Գ. Կ. Խաչի վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ըն - կերուհիները այս Երեքշաբթի ժամը 15 - ին, Ազգային Տան սրահը : Կարենը օրա - կարգ : Կը ինքուրի ճշգրտան ըլլալ :

GALERIE DAVID - GARNIER 6, Ave. Matignon — Paris CARZOU DESSINS REHAUSSÉS Jusqu'au 18 Décembre

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Կապոյտ Խաչի Մարտէլի քաղաքի մաս - նաճիւղին տարեկան պարահանդէսը, Շա - բաթ, Մարտ 5ին Սիբրանտի սրահին մէջ :

Մուրան - Ռաֆայէլեան Նախիկն Աշա - կերաց Միութեան

ՊԱՐԱՀԱՆՆԻՍԸ ՓԵՏՐՈՒԱՐ ԵՆ

Սամուէլ Մուրանեան վարժարանի բա - տերական ներկայացումը՝ ՄԱՐՏ 20ԻՆ

Դպրոցատէրի գեղարուեստական հան - դէսը Մարտ 28ին, Կիրակի օր :

Հայ Արիներու Միութեան Փարիզի շրջանի տարեկան հանդէսը, Կիրակի Մարտ 6, կէսօրէ ետք ժամը 2-30, Սալ տը լա Շիմի :

Վիէն. — Մանուկներուն օրը Յունուար 9ին, Սէքսըր Կաթիլի սրահին մէջ :

Կապոյտ Խաչի Վիէնի մասնաճիւղի պարահանդէսը Դեկտեմբեր 18ին, Սալ տէ Գիլի մէջ : Մանրամասնութիւնները յե - տազային :

Լիւն. — «Մանուկներու Օր»ը Յուն - ուար 16ին Ազգային Տան սրահը :

Մանուկներու Օրը կը տօնուի Տէսիլի մէջ Յունուար 9ին Շարաթ Երկուշաբթի, Հ. Յ. Գ. Տան մէջ :

Ս. Խաչ Ընկերակցութեան տարեկան պարահանդէսը Փետրուար 27ին :

ՀԱՅ ԿԱՐՄՈՒՄ ԽԱՉԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԵՆ (Փարիզահայ Տիկնայ Միութե - թիւն) ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԿՈՅԹ ՊԱՐԱ - ՀԱՆԴԷԼՍ 23 Յունուար, Ամպաստէօրի սրահին մէջ :



Օ Ր Ա թ Ե Ր Թ

Հիմնադիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿՅԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Sup. 60 ֆ. վեցամսյա՝ 35 ֆ.
Արտասահման՝ Sup. 80 ֆ. Հատը 0,30 ֆ.

ՀԱՐՉ՝ ՏԱՐԻ — ԹԻՒ 10484

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

41e ANNÉE — N° 10.484

ՕՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ՏԵ ԿՈԼ - ՄԻԹՐԱՆ

ԴԵՄ ԴԻՄԱՑ

Տր Կոլ և Միթրան 15-ական վարկեան խոսքեան հետադարձիչն և ճանապարհը - սին : Մինչ ար Կոլ Կիրակի օր ճանապարհը կր կրկնէր ինչ որ բնած էր հետադարձիչն, Միթրանի ճանապարհը ճանապարհեան մըն էր ար Կոլի յայտնաբերութեանց :

Նախագահ ար Կոլ յառաջդիմութիւն, անկախութիւն և խաղաղութիւն խոստացաւ ժողովուրդին : «Ձեզի կարծում ունի, որ ի վերջոյ, նոր Հանրապետութիւնը, եթէ պահուի և վաւարարուի ձեր կողմէ իր նախագահին նստածով, շարունակ և զարգացնէ, նախ իրեն հետ, յետագային ուրիշներու, յառաջդիմութեան, անկախութեան և խաղաղութեան իր գործը : Այդ ապագային մասին է որ պիտի խօսիմ, այս իրիկուն » : Ու նախագահ ար Կոլ ստանձին ստանձին կը ծանրանայ այս երեք հեռանկարներուն արեւելքներուն վրայ : Ինչ կը վերաբերի յառաջդիմութեան, կը բացատրէ թէ ինչ կարողութեամբ է եօթը տարեկ ի վեր բոլոր մարդկերուն մէջ : Ինչ կը վերաբերի անկախութեան, աշխարհի մէջ կան մեծ իրականութիւններ որոնց մէջ կ'ապրի Յիւրանա : Ներկայիս երկու հսկայ պետութիւններ՝ Միացեալ Նահանգները և Սոր-Տրոյի Միութիւնը մրցակցութեան մէջ, Ձիւնաստան՝ հսկայ իր զանգուածով և ապագայով, արեւմտեան Եւրոպա, սորուն ամէն բան կը հրամայէ որ միասին, վերջնական Աֆրիկէի, Ասիոյ և Լատին Ամերիկայի երրորդ աշխարհը : Այս ամբողջին նկատմամբ, ինչ կ'ընէ Յիւրանա : Եթէ Յիւրանա կը մնայ Ամերիկայի բարեկամն ու զինակիցը, եթէ, վարչակարգը ի վեր որ կ'անցնին, բնական շատ նմանութիւններ և հասարակաց մեծ շահեր կը դրայ Ռուսիոյ հետ, շրջողներ են թարկուել մէկուսի կամ միւսին :

Վերջնական խաղաղութեան մասին, անհրաժեշտ է որ հիւսկական զինքերը չօրտագործուին :

Միթրան յայտարարեց թէ այլևս քաղաքական մեծամասնութիւն չկայ Յիւրանայի մէջ, վասնզի որչ քաղաքականութիւն մը, Չոր. ար Կոլի ու իր կառավարութեան քաղաքականութիւնը դատարարութեանց : Դեկտեմբեր 5-ին ի վեր այլևս կոյրս մեծամասնութիւն չկայ, ու Նիկիթի Երեսօրհանը կը շեշտէ. — « Որ կողմն է արկածախնդրութիւնը որ մասին այնքան կը խօսուի այս օրերս : Անոր կողմը որ ոչ մէկ բան կ'առաջարկէ, այնպէս պիտի ընէ որ Յիւրանան տեսակ մը ազատական կայսրութեան վարչաձևէ մը անցնի մենատիրական կայսրութեան մը կամ անոր կողմը որ կը խօսի յիստակորէն և կ'ըսէ թէ ինչ պիտի ընէ » :

Հայաստանի մասին, Միթրան յայտարարեց թէ ձեռքով մը ընտրել, առանց քաղաքականութիւն մը ընտրելու անհասկանալի խնամքեան կ'առաջարկէ : Այդ էր որ պատահեցաւ 1958ին : Ինչ որ կը մեղադրէմ է. Հանրապետութեան այն է որ որչ քան ինքզինքին տալ անհրաժեշտ հիմնարկութիւնները իր աշխատանքը ստանալու համար և սակայն ճախարհեցաւ այդ աշխատանքին մէջ » :

Միթրան կէտ աւ կէտ պատասխանեց նաև ար Կոլի յառաջդիմութեան, անկախութեան և խաղաղութեան :

Մօրիս Յօս գործակից կը կենայ Միթրանի : Նոյն գիրքը կը բռնեն Կի Մոլի, Վալաէր - Ռոչ :

ՔԱՆԻ ՄԵ ՏՈՂՈՎ

Առ-Ձի ՕՐ, մինչ ամէն ինչ պատրաստ էր և «ձէմինի 6»-ի թուիչքին պատրաստութիւնները սկսած էին արդէն, յանկարծ, Ի.Է.Բի.Գ. գծուարութեան մը հետեանքով թուիչքը տեղի չունեցաւ : Կ'ենթադրուի թէ մինչև յառաջիկայ Ուրբաթ Ամերիկայից պիտի կարենան յաղթահարել գծուարութիւնները և յաջողութեամբ պահել միջոցին մէջ «ձէմինի»-նու ճանդիւղումը :

ՄՈՍԿՈՒՍԵՅԻ մէջ ուսումնոյնը ցոյց մը կատարած են, բարեկարգ համար Անտրէ Մինիստրի գրադէտին արդեւորականութեան զէմ : Մինիստրի ամբաստանութեամբ է ճանդիւղումով Արեւմտեան մէջ գրեթէ արած ըլլալու յանցանքով սրանտարկուած : Ոստիկանութիւնը վրայ հասած է երբ երկու հարգ ուսանողներ հաւաքուած էին Պուշքինի սրճանին շուրջ :

ՄԻԱՅՆԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ արտաքին նախարար Տին Ռեքը, որ երկու օրէ ի վեր Փարիզ կը գտնուի ընկերակցութեամբ պաշտպանութեան նախարար Մաք Նամարայի և երկրակալ նախարար Ֆաուլէրի, տեսակցութիւններ պիտի ունենայ Աւստրալիան Ռեխարի իր գործակիցներուն հետ : Հակառակ տարիներու սովորութեան, Միացեալ Նահանգներու արտաքին նախարար պիտի չտեսակցի Չոր. ար Կոլի հետ, բնորոպագրարին պատճառով :

ԵՐԻՐՈՒՊՍԻ Բրիտանիայ - Գեմերկաս Միութիւնը, որ իր համաժողովը կը գումարէ Միլիթրոյ մէջ և որուն կը մասնակցին ինը երկիրներու քաղաքական ղեկավարներ, որոնց մէջ նաև Յիւրանա, առջի օր միաձայնութեամբ յանդէպ այն եզրակացութեան, որ Հասարակաց Շուկայի երկիրները շարունակեն Եւրոպայի ամբողջականութիւնը :

ՓՒՔԻՍՏԱՆԻ նախագահ Այսուպ Սան, անցեալ Շաբաթ օր Լոնտոնի մէջ Ուելսընի հետ տեսակցելէ ետք, մեկնեցաւ Նիւ Եորք : Փաքիստանի նախարար Միացեալ Ազգերուն նիստին խօսք անելէ ետք պիտի անցնի Ուելսի կղզին, տեսակցութիւններ ունենալու համար նախագահ ձոնուրի հետ :

ՄԵՇՆ ԲԻՐՏԱՆԻՈՅ Պահպանողականները այն կարծիքը ունին թէ Ուելսըն կը խորհի ընդհանուր բնորոպիւններ կազմակերպել 1966ի Մարտին : «Սընտէյ Թալմոյ» և «Սընտէյ Էքսպրէս» առջի օր այս լուրը կը հարգողէին, աւելցնելով թէ Ուելսըն վերջնական որոշում մը պիտի տայ յառաջիկայ Յունուարին, Հուլի մասնակի բնորոպիւններէն ետք :

ԱՆԳՒԻՍՏԻ ծանօթ վիպագիր Սամբր - սէթ Մոմ, 91 տարեկան, անցեալ Շաբաթ օրը ընէ ի վեր մահաբանի մէջ է Նիսի անդրեւմտեանի կեան հիւանդանոցին մէջ :

ԼԵՀԱՍՏԱՆԻ կախիկոպոստագետը՝ Կարգինայ Վիշինսկի, անդրադառնալով վերջին ամիս և լեհ կղերին փոխանակաց նամակներուն և համայնապար կուսակցութեան քննադատութեանց բնու իր կիրակնօրեայ քարոզին մէջ. — « Ծառայեցինք մեր հայրենիքին, մեր նախնականութիւնը չի կրբար ամօթի նիւթ ըլլալ, սակէ դատ ինչ որ ըսէք, չէք թաթ նկատեցէք » :

ԻՐԱԿ համաձայնեցաւ վերահաստատուելու իր զիւանակախական յարարները թիւնները Սուրիոյ հետ, զեւպանական ատոմանի վրայ :

ԿԻՊՐՈՍԻ Արտաքին նախարար՝ Կիոյ - բանու յայտարարեց Աղղաժողովին մէջ որ Կիպրոսը որեւէ գնով Էնոսիս չընդունուի : Արդարեւ Կիպրոս չուզեր որ Յունաստանի հետ միացման փոխարէն, խարխիւներ տրուին Թուրքիոյ :

ՈՂԲ ԵՂԵՍԻՈՅ

(Բ. Ե. Վերջին մաս)

Յետոյ Շնորհալի կը նկարագրէ, միշտ քաղաքին բերնով, Եղեւսոյ աշխարհազրահան գիրքը և անցեալ փառքը :

Դեռաց նման վտակ հոսեր, Զբուրաստան արբուցաներ : Ծովն ի միջի իմ ծածաներ, Քաղցրիկ օդովն ծիծաղեր : Զաղտեղութիւն տղմի մաքրեր Եւ գիրապարակս գարդարեր : Սաղարբարքի ծառով ծաղկեր, Աստուայնի պողպատեր, Տերեւախիտ հեղիկ շարժեր, Հոտ անմահից յիւրմէ բուրեր : Առաւօտուն ցօղն իջաներ, Ոսկեմանն նախանջ վայլեր : Անհամեմատ յերկրի նա էր, Պողոպէ ամեն գոր ընծայէր, Զոր եւ ասել ով ոք կարեր Մի առ միոյ՝ Բէտե կամեր :

Շնորհալի օրով՝ 70 զիւր ունէր եղեւսիս, և այս զիւրերուն մէջ՝ Եղեւս կը կանգնէր ինչպէս արագող մը հաւերով չըջապատուած :

Կամ քաղաքի յոյժ գեղարար Ոսկեւրատուն եւ նախկալար :

Հին օրերու իր փառքն ու վայելչու թիւնը, պայծառ եկեղեցիները և ճօն վաճառանոցները նկարագրելէ ետք՝ կը սկսի ողբալ իր ճակատագրը : 40 տարեկան ի վեր անհոգութիւն կը տիրէր, պաշտպանութեան մասին մտածող չկար : Թշնամին նկատեց որ Եղեւսիս լքուած էր բախտին : Եւ յանկարծ օր մը թշնամին կեաւ պաշարեց : Քաղաքային զէնքի զիւրմէ, բայց ամառու սկսող էր, — դուրսէն օդն ու չեղաւ և իր սեփական ուժերով կուսեցաւ յուսահատ : Եւ Եղեւս կը շարունակէ ողբը :

Աստուար սիրտ իմ նմի, Երկամուտնս գալարին, Յաւ հարկանի որովայնիս, Միտք եւ հոգիս իմ այլայլին Միջոցեւ յիշեմ գօրն ահագին եւ գառնուտն մրազին : Զանոյս ցեղեկի խաւարին Որ լուսացաւ նստմ խորին, Յորժամ գիտրն Սողոմին ներքուստ ի վեր բորբոքեցին Ոչ ի վերուստ անձրեւածին, Այլ ի ստորիս փորածին :

Աճուրի պատերազմ մըն է որ տեղի կ'ունենայ : Եղեւսոյց կը կուսին սուրբի պէս, թոյլ չտալով որ թշնամին խուժէ քաղաքին գոնեւէն ներս : Թշնամին կը փորէ պարիսպներուն ոտքը, սկսած կը գործածէ և կրակ կը թափէ, ի վերջոյ յաջողելով փոյցնել պարիսպները : Եղեւսոյց կը մեթեն անձնատուր ըլլալ, կախիկոպոստներուն և քահանաներուն քաղաքներով թիւր առ թիւր կը պաշտպանեն քաղաքը, կատարելով ներխուժողները : Եւ որպէս փայտ ինչ անուտի Յանօրինաց կոտորէին Մինչ զի գահի հարկանէին Եւ յետս ընդդէմ նախանջէին :

Թշնամի հրամանատարը կը գոռայ. — « Ի սուր, յաւար և ի գերութիւն » : Եւ վայրենացեալ թշնամին՝

Իբրեւ գեղանոց պտուտէին, Շրջան առեալ շուրջ քաղաքին Զեռամար յետոյ տագնապէին, Մի առ միով արշաւէին, Փոզս եւ գոսերս գոչէին,

Իբրեւ յամպոցն որոտային, Չայնս ահագինս հնչէին, Մինչ զի գերկիր դրողէին :

Քաղաքին պաշտպանները կը նահանջեն զէնքի բերք, ժողովուրդը կը հետեւի, բայց բերքը չէր կրնար ընդունիլ այդքան մարդ, և ահա կը սկսի աննկատ քաղաքի կոտորած մը :

Որպէս գայլ ի հոտ գառանց՝ Ի մէջ նոցուց անկանէին, Առեւտարակ կոտորէին, Արեան վտակ հոսէին :

Ամէնէն զարհուրելի տեսարանը պարպուցաւ բերքին դրան առջև, Երբ դուրս փակուցաւ : Գուրբ մնացողներուն վիճակուած գործարարութիւնը անկարելի է պատմել :

Յայնժամ առ դուրսն կ'ուտէին Իբրեւ գեղջս անհնարին, Կամ յօրինակ մայրից փայտին Միմեանց վերայ դիգանէին : Արք եւ կանայք, ծերք եւ աղայք, Մանկուսք, ամէն չափ հասակին : Դատերքն ի մարց լայնի գրկին Եւ ընդ լայնցն նուաղէին, Մարք գողայնս գրկէին, Ի միասին մեռանէին :

Կը թուի թէ այդ շրջանին Եղեւսոյ բրնակութիւնը կը քաղաքանար չորս ազգութիւններէ, որովհետեւ ողբասացը կը յիշէ թէ կախիկոպոստներն ալ կը մասնակցին այս կուսին : Հողմայեցոց կախիկոպոստը ծեր էր, կ'ըսէ, բայց կուսեցաւ քաղաքը : Իսկ Հայոց կախիկոպոստը շարունակ կուսեցաւ, քանիցս վտանգուող զիւրերու մէջ մնաց, բայց և այնպէս յաղթեց ամէն գծուարութեանց, զարկաւ յաղաքուցաւ, սպաննեց բայց չորս պանուսեցաւ : Ի վերջոյ

Անձամբ տուեալ գանձն իր ի մահ Իբր յօրինակ հոսից նորին :

Թշնամի հրամանատարը կ'առաջարկէ բերքապահներուն որ անձնատուր ըլլան, խոստանալով չզուցել իրենց կեանքին : Բայց հաղի բերքէն դուրս ելած՝ բոլորն ալ կը սպանուին նեատահար և սրտաղայ խոյ :

Այնուհետեւ Եղեւս կ'ողբայ իր փառքը, իր սքանչելի եկեղեցիները, որոնց զանգակատունէն այլևս կը լսուի միայն մուէզգիւնի ձայնը :

Յետոյ ողբերգուն անէծք կը կարգայ նման գործարարութեանց պատճառ դարձողին :

Արդ քեզ ելցէ կարնի յօրեւ, Եւ կայնէին հասցէ երեւ : Ի գառնուրիս դարձցին տարեք, Սրեւեղեղին կցեն գետեր : Մետ ամպ իրին կարկտաբեր Զձեց արասցէ անպողպարեր, Սողոմացոց հուր ծրծրեր Իցէ ի գուլոյ արիւնաբեր : Հարցէ գարեղ ի սուր սուտեր, Իբր յանխնայ յիս դու հարեր :

Հուսկ յետոյ նահատակներուն, իր կուստրեալ և կորուսեալ զաւակներուն ողբերգութեամբ, կ'ըսէ՝ « դուք մեռած չէք » :

Բայց դուք, որդիք իմ սիրելիք, Զէք իմ մեռեալ, այլ կենդանիք, Քանզի յերկրի նախաւակեալք Եւ ի յերկրիս պակիք :

ԱՅՍՕՐ
ԿԱՐԳԱՅԷՔ ՄԵՐ ՆՈՐ ԹԵՐԹՕՆԸ
ԿԱՆԱԶ ԱԴԱՄԱՆԴԸ
Հեղինակ Փիեր Մարտոսի
Շահեկան վէպ մը արեւելեան կեանքէ

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ա.

« Հին քղեր քրքրելիս, պատահաբար ձեռք բերեցի հետեւեալ գրութիւնը Շա- հան Շահնուրի մասին՝ գրուած «Վէժ»-ի համար :

Վէժը հոգիին աւանդեց եւ գրուածքը մնաց անտիպ հին քղերի փոշիների մէջ :

Կարելի էր գամբիւղը նետել եւ տին գերբուռ ոչինչ չէր պակասի, բայց ես ուզում եմ հրատարակել: Գրանով ուզում եմ յայտնել իմ հիպոթեզը Շահնուրի տա- ղանգի հանդէպ, որ հէնց սկզբից գրա- լել էր իմ սիրտը :

Ուզում եմ նաեւ յայտնել իմ ցուն ու բողոքը, որ Շահնուր մեր «փոքր ածուկ» փոշի է ուրիշի «մեծի ածուկ» հետ :

Մեր «փոքր ածուկ» հարագատ է հայի հոգուն: Նրանց վրայ ահուտ է հովիտնե- թի շուշանն ու դաշտերի ելակը, որոնք պակաս հոտաւէտ ու համեղ չեն, քան փրանսական անտառի պտուղները :

Ես հասկանում եմ մարդու ձգտումնե- իրը դէպի լայն հորիզոններ, բայց ամէն քանակ որակ չէ :

Ս. Վ.

Հայ մշակույթը շատ սիրող մարդիկ յաճախ ծանր մտածումներ են ունենում արտասահման տարազրուած մեր գրա- կանութեան ճակատագրի մասին: Արդար անհանգստութիւն. արտասահմանի հայ գրականութեան ասպարէզը որ մտա- հոգի է: Ինչպէս բոյսը՝ գրականութիւ- նը ծնունդ է հոգիի, ազգային բնական մի- ջավայրի: Այսպէս գրականութիւնը անհրա- ժեշտ պայման է գրականութեան դար- պացման: Իսկ հայ գրականութիւնը, յայտնի է, աշխարհագրութիւն չունի, գուրդ են սեփական հոգից ու հայրենի միջավայ- րից: Եթէ Հայաստանը, վերջի վերջոյ, չզրտնայ դադութահայութեան համար ոչ միայն վերացական ներշնչարան, այլեւ մայր դիրքի, որ իր մէջ ամփոփէ Սփիւռ- քում տարածուած դանդաղներն էլ, կամ դէժ պատ եւ կենդանի հաղորդակ- ցութեան մէջ չմտնէ նրանց հետ, ժամա- նակի ընթացքում բոլորովին կը ցամաքի աւելը՝ գաղութահայ մշակույթի երակնե- թից եւ անխուսափելիորէն կը մեռնի նա- եւ արտասահմանի հայ գրականութիւնն էլ: Այս պէտք է զիտակցել, ամէն զնով բանալ Հայաստանի դեմքը, գրական — մշակութային գործօն յարաբերութիւն ստեղծել զրաի եւ ներքի միջեւ, որպէսզի «ներքը» օգտուի զրաի մտաւորական ու- ժերից, իսկ «ուրքը» ունենայ շնչելու համար ազգային թթուածին :

Այսօր բարեբախտաբար այս վտանգը անմիջական չէ: Մեր վախերը վաղուայ վախերն են: Այսօր ազգային մարմինը արտասահմանում դեռ կենդանի է եւ շա- րունակում ստեղծագործել: Ապացոյց՝ իրար յետեւից լոյս տեսնող արժէքաւոր երկերը, հետզհետէ կազմաւորուող եւ գրական կենսաբի նախարեմում հասակ նետող երկասարգ գրողները: Ճիշդ է, գրանք բոլորն էլ դեռ ծնունդ են ազգա- յին միջավայրի, իրենց գրական դաս- տիարակութիւնը ստացել են այնտեղ, մայր հողին կրած ժողովրդի մէջ եւ ար- տասահմանում միայն զարգացրել ու կա- տարելագործել են իրենց կարողութիւնը, բայց օտար միջավայր ընկնելով էլ ոչ միայն չիսամբեցին ու չմեռան, ոչ միայն մնացին կենդանի ու ստեղծագործութեան ճիգեր են անում, այլեւ արտազրուած են ինքնուրոյն եւ արժէքաւոր երկեր: Լեզու եւ ոճ են մշակում, աշխատում են օտար հողի վրայ հայ գրական ծագիկները բուս- ցնել: Եւ ինչ որ զարմանալի է — եւ ուրախալի է հարկէ — որոշ չափով յա- ջողում էլ են :

Այդ երկասարգ գրողներին բանակն ու որակը խոտոր համեմատում են իրար. այնքան որակով՝ բարձր :

Միայն երկու փոքրիկ հատորիկներ — այս է Ե. Ծահնուրի գրեթէ ամբողջ տար- ուայ գրական վաստակը: Ուրիշ երկտա- սարիներ այդքան ժամանակամիջոցում ամբողջ դէպեր արտազրուելի: Ծահնուրը չի հետեւում նրանց օրինակին, քանակը նրան չի հրապուրում: Նա սեպտեմբեր — ծուծ է դանդաղ, բայց ինչ որ տալիս է՝ լիահնչուն արժէք է: Իր այս երկու հա- տորիկով նա արդէն հաստատուն քայլե- լով մտաւ Հայոց գրականութեան մէջ եւ գրուեց իրեն համար որոշ տեղ: Այդ տե- ղից նրան այլեւս անկարելի է հեռացը- նել: Իրենից կախում է նուաճած տեղի սահմանների ընդլայնումը, բայց եթէ սրանից յետոյ մի տող էլ չգրէ, Հայոց գրականութեան պատմութեան էջերում նրա տեղը ամբայնդուած է :

Ծահնուրը, ինչպէս Համաստեղը, ինչ- պէս ամէն մի իսկական տաղանդ, Հայոց գրականութեան մէջ մտաւ անազնուկ, « առանց երգի »: Մի դեպքից օր «Յա- ուաջ»-ի էջերում սկսեց ապուել «Նահանջը ստանց երգի», համար յետեւից՝ աւելի եւ աւելի յայտնի դարձաւ, որ բնութիւնը մի նոր շնորք է պարզեւում Հայոց գրա- կանութեան: Երբ 1929ին լոյս տեսաւ «Նահանջը ստանց երգի» հատորը, այլ — եւս ոչ մի կասկած չէր մնում, որ յանձին Ծահնուրի Հայոց գրականութիւ- նը մի նոր նուաճում է անում :

Ճիշդ է, հայ գրական քննադատութիւ- նը, բաւարար յոտակութեամբ չարտա- յայտուեց Ծահնուրի գործի մասին, եւ երկասարգ հեղինակը չլսեց զնահատ — ման որոշ խօսք: Եղան նոյնիսկ վերապա- հուումներ, որ մասամբ արդիւնք էր «Նա- հանջ»-ի ներքին անորոշութեան, բայց

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ ԵՐԿՐԷ ԵՐԿԻՐ

ԼՈՒՏՈՒՆԻ ՆԷՇԸՆԸԼ ԿԱԼԸՐԻՆ

Թրաֆալիար Սփուրի աղանիները անդ- լիական դատարարութիւն մը ստացած են: Սուրբ Մարկոս հրապարակի աղա- նիներուն նման դեր — մուրաբիտներ չեն, եւ ոչ ալ համարու հեղնող փողո- ցայիններ՝ ինչպէս Թիւրքիի աղանիներ — րը: Դեռ շատ փոքրիկ, արդէն իսկ դաս- տիարակած են զիրենք անդլիացին բնո- լոչող խոհմ քաղաքապարութեամբ, — անտարբերութիւն ուրիշին հանդէպ: Փոխանակ իբրեւ պատիժ ողբալու իրենց մեկուսացումը, կ'ապրին այնուարար ա- դանի իրենց կենսաբ: Եթէ երբեք գրա- դինք իրենցմով՝ կը դառնան սիրալիք, իսկ եթէ ամապարենք՝ Նէշընըլ Կալըրի մտնելու՝ կը թողուն մեկ պատա :

Հալիւ հասած Լոնտոն, կը փութամ Նէշընըլ Կալըրի: Ընդհանրապէս կը մըտ- նեմ հոն իբրեւ քմահաճ այցելու մը: Չայն կը վերաթղթատեմ վէպերու պէս՝ որոնք ստէպ կարգացած եմ արդէն: Կը սկսիմ վերջաւորութեան, բարձրանալով աջակողմեան աստիճաններէն, ցատկելով ուշացած վեներտիկաններուն վրայէն՝ որոնք հոն են՝ ստանց դիտնալու թէ ինչու: Կ'ուզուիմ ժժ. Կարու Ֆրանսա- կաններուն քով: Զիկզկուումով կ'անցնիմ տպաւորապաշտներուն եւ Թրքերի սրահ- ներէն, ցաւելով որ Թէյթ Կալըրիին զի- րենք միացնող գաղտնի անցք մը չկայ :

Անհրաժեշտ է օր մը մեծ ցուցահան — դէս մը կազմակերպել «Լոյսի սիրահար- ներու»: Թրքերէն Մօնէ, Մարքէէն Ծաօ փու — Բի: Լոնտոնի մէջ, մարդիկ փա- վաքած են որ քաղաքակրթութիւնները, ինչպէս անձերը, մ'ան իրենց պատեան — ներուն մէջ ու իրարու չմիանան: Արեւ- մուտքը Արեւմուտք է եւ Արեւելքը Արեւ- լելք: Եւ սակայն օր մը արեւմտեան նը- կարչութիւնը հասաւ արեւելեանին. փո- խանակ տիեզերքին տիրելու, ան ինկաւ բնութեան տիրապետութեան ներքեւ, անեղբ եւ անսահման բնութեան :

Նէշընըլ Կալըրին կը պարունակէ Արեւ- մուտքի առաւելարար երկու երեք չինա- կան նկարները, կտաւներ ընդմէջ ջուրի եւ հողի, շան ու պայլի, մշուշի ու ծո- վու: Թրքերի Զիւնամրիկը, Մօնէի Ա- րեւմ ու ձիւնը եւ Ողղուումը: Հանրի Միւօ

Հայոց գրականութիւնը վաղուց է որ գրական քննադատութեամբ չի ստաջնու- դուած, ոչ էլ պարբերական մամուլի կող- մից: Հայ հեղինակը ինքը, իր ճակատի քրտինքով է ճանապարհ բաց անում իրեն համար :

Ս. Վ.ՐԱՅԵԱՆ

(Շար.)

զրած է Թաօիսք ամէնէն զեղեցիկ ու հա- մառօտ բանաստեղծութիւններէն մին, որ կը յիշեմ — « Սեղանիմ վրայ կը դնեմ խնձոր մը: Կը մտնեմ խնձորին մէջ: Ի՞նչ խաղաղութիւն »: Տպաւորապաշտները սակայն, իրենց վարպետը՝ Թրքերը, այսօրուան իրենց հետեւորդները (որոնք իբրեւ թէ չեն ճանչնար իրենց վարպետ- ները, ապսքրէ են), խնձոր մը չէ որ կը գնեն սեղանի մը վրայ, այլ երկիրը ամ- բողջ է, իր չորս եղանակները, չորս տար- րերը եւ զլիւսուոր չորս առաքինութիւննե- րը՝ որոնք կը կոչուին լուսիւն, ան — մարդկային, յաւիտենական շարժում եւ անուարտ: Կը մտնեն բնութեան մէջ: Ի՞նչ խաղաղութիւն :

Այլին, սրահին մէջէն ուր մեծ մատով բազմած են մեծ տպաւորապաշտները, ու- ըրէ, փոքրիկ սրահ մը կը բացուի, ուր միշտ կ'երթամ ողջունելու համետ Բօթօ մը՝ Անճաօթուիին, նրբորէն անուարտ: Տուած հաճոյքը մաքուր նկարչութեանը չէ: Բայց ե՞րբ, ո՞ւր, ինչպէս կը սկսի մաքուր նկարչութիւնը: Կրնամ համակ- րել միայն կրակի օրերու այցելուե- լուն: Որպէսզի չճանճրանա թանկարան- ներուն մէջ, կը փնտնեն նմանութիւններ, կը գտնեն դանտը, եւ ուրախ են՝ երբ Սրբ Թոմաս Կէյնպուրոյի Աստուծոյ պտոյտի թաւէ զլիւսարկով կ'ընդ կը նմա- նի Պէթթի դարձուէին, կամ թէ Տիւրքիի Արուեստագէտին հայրը այնքան կը նմա- նի Աստուծուրի որ կարծես քիթէն ին — կամ է: Այսօրուան մեր սիրտը նկարչը — ներք միշտ ալ նոյն հաճոյքը չեն տար մեր թոռներուն :

Երբ երազը վերջ է գտած այս սրահնե- րուն մէջ, կը սկսիմ երկմտել Նէշընըլ Կա- լըրիին տալիք քանի մը ակնարկներու: Գեոմետրիկ ինչ ի՞նչ Ռամպարնիէն երեք սրահ կայ: Անհրաժեշտ է արագօրէն անցնել իտալական սրահներէն եւ երթալ ինքնամփոփուել Ռամպարնիէի զիմացը: Ամենուրեք նկարչութիւն է անշուշտ: Բայց եթէ ուշի ուշով ունկնդրենք թէ ինչ կը բղբուի Խաղաղութիւնը ան — հինգ գարեթի ի վեր (բացառութիւնները յար — դելի են անշուշտ), նոյն երգն է որ կ'եր- գեն. կենսաբ կը դիտեն իր զեներթիւն մէջ, ամառը՝ իր հասունութեան, կնոջ մար — մինը՝ իր կատարելութեան, շնորհք՝ իր ծագիւնին: Ռամպարնիէ ուրիշ է :

Ինչո՞ւ, երբ Ռոտէ Վան Տէք Վէյտրն, հոս, կողքին, ուրիշ սրահի մը մէջ, մեղ կը կանչէ դիտելու արիւնյուայ եւ մեռած Յիսուսը Աստուածամօր ձեռքերուն մէջ՝ ցաւէն քարացած եւ մահու չափ արտուած, ինչո՞ւ համար Իդիպոսի պատկերը՝ չաղ- ուած արիւնով, ամօթով եւ արցունքով, արուած Անտիոնէն, ճգմուած Վոյզէլ եւ Ռամպարնիէ այլ բոլոր մարդիկ՝ մա- մանակէն հիւժած, ցաւէն ու տարիներէն մաշած, ինչո՞ւ համար այս նկարները մեր սրտերը ուրախութեամբ կը լիացնեն: Ինչո՞ւ համար կը հաճոյանանք, եղբրա — կան արուեստին մէջ, կրելու անկարելին: Անկասկած աշխարհի մեծագոյն նկա-

ՌՈՒՍ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐԸ ՊԵՏԻ ԳՐԱԿԱՆՈՒՆ ԱՆԱՏՈՒՆ

(Ինքնօր կը ԳՐԵՆ ԹՐԲԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ)

Իսկ մենք, ձեզի կ'առաջարկենք պրոֆիլ Հայաստան մը, չըջանային բնակչութեան համեմատական դրութեան վրայ հիմնը — ւած: Այսպիսով, ձեզի համար աւելի նը- պաստաւոր պայմաններ առաջարկած կ'ըլլանք, միւսներուն հետ բաղադրուած :

Պէջեր Սամի Պէյ . — Եթէ Վան եւ Պիթլիս նահանգներէն հողամասեր տրուին Հայաստանի, այն ա- տեն Պայազիտի հաղորդակցութեան ճամ- բաները կը խզուին էրզրումի հետ: Այս- պիսով, վտանգուած կ'ըլլայ նաեւ մեր Պայազիտ նահանգը : Զիչերին . — Այդ ձեռք յիշած երկու շրջաններուն միջեւ կարելի է մասնաւոր անցք մը ըս- տեղծել : Պէջեր Սամի Պէյ .

— Մենք չենք կրնար ընդունել այդ ա- ուաջարկը, որ կը սպառնայ մեր հողային ամբողջականութեան եւ անտեսական շա- հերուն: Միայն կրնանք յօժարել հայ գաղթականներուն վերադարձին՝ զէպի այդ շրջանները: Եւ սակայն, միւս կող- մէ չենք կրնար արտօնել այդ հողամա- սերէն ներս մուտքը մէկ հատ իսկ Հա- յու, որ Օսմանեան հպատակ չէ եղած սակայն: Ամէն հայ կրնայ վերադառնալ հոն, ուր որ բնակած էր նախապէս: Կր- նաք վստահ ըլլալ, որ անոնք մեր մօտ պիտի վայելին այն վերաբերումը, ինչ որ ցոյց կուտան ամէնէն քաղաքակիրթ եր- կիրները՝ իրենց մօտ ապրող փոքրամաս- նութիւններուն :

« ՀԱՅԵՐԱՆԻ ՀԱՄԱՐ ՀՈՂ ՊԱՆԱՅԵՆԸ ԿԱՅՍԵՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ Է »

Զիչերին կը պատասխանէ Պէջեր Սամի Պէյ . — Առաջին պարբերութիւնը կրնանք ընդունել: Սակայն, անկարելի է, որ ըն- դունինք երկրորդ պարբերութիւնը: Պէտք է որ Վանի եւ Պիթլիսի բնակչու- թեան համեմատութեամբ հողամաս մը ձգուի Հայերուն եւ այդ շրջաններու բը- նակչութիւնը պէտք է բաղկացած ըլլայ միայն եւ միայն Հայերէ եւ անոնք ալ վայելեն կատարելալ ու բացարձակ ան —

կախութեան իրաւունք »: Պէջեր Սամի Պէյ . — Պիտի չկարենեմ ընդառաջել ձեռ այդ առաջարկներուն, որոնք բոլորովին վեր կը մնան իմ իրաւասութեանս սահ — մաններէն: Պիտի հարցնեմ կատարու- թեանս եւ բոտ այնմ պիտի պատասխա — նեմ ձեզի, երբ այդ ուղղութեամբ նոր հրահանգներ ստանամ »:

Զիչերին .

— Նկատելով որ ամէն ազգի ու ժողո- վուրդի համար ճանչցած ենք անջատումի եւ ինքնորոշման իրաւունքները, հարկ է որ Հայերուն նման փոքրամասնութիւն կազմող ժողովուրդ մըն ալ ունենայ իր համեմատութեան հիմամբ սեփական հո- դամաս մը: Հետեւաբար, պէտք է որ Թուրքիայէն տեղ մը տրուի Հայերուն եւ անոնք ազատ ըլլան իրենց տրուելիք այդ հողամասին վրայ: Նոյն սկզբունքը կ'ըն- վունինք նաեւ Կարսի եւ Արտասանի մահ- մտական բնակչութեան համար: Այս երկու խնդիրները յատկապէս աւելի մանրամասն կերպով կը քննենք ու կը ձեռնարկ, միասնաբար կազմելի խառն յանձնախումբի մը միջոցաւ: Պատժի մասին, այժմ որքան որ վրաստանի կա — ուավարութեան հետ համաձայն ենք եւ պայմանաւորուած, բայց եւ այնպէս, եթէ զէպերը ներկու ըլլան յատկապ — յին, պիտի ջանանք աւելի գրական ու շո-

չախելի արդիւնքներու յանդիլ : Պէջեր Սամի Պէյ . — Կարելի չէ Վանի եւ Պիթլիսի մէջ այդ նահանգներու պատկանող հողամա- սերու վրայ, անկախ կառավարութիւն մը հիմնելու իրաւունքը տալ քանի մը հա — զար Հայերու, որոնք ոչ մէկ կապ ունին Երեւանի կառավարութեան հետ եւ ան — նչան փոքրամասնութիւն մը կը կազմեն, Մահմետական բնակչութեան հետ բաղ- դատած: Այս պարագան իր որոշ անպա- տահութիւնները ունի, բազմաթիւ տե- սանիւններէ զիտուած: Եթէ այդ ըս — կըզբունքը ընդունուելու ըլլայ, այն ա — տեն երեւան պիտի գայ Թուրքիոյ իւրա — քանչիւր նահանգին մէջ պրոֆիլ Հայաս — տան մը հիմնելու պարտաւորութիւնը, ինչ որ անիմաստ եւ անհեթեթ բան մը պիտի ըլլար անշուշտ, գուրկ՝ տրամա- բանական որեւէ հիմ ունենալէ : Զիչերին . — Թուրքիայի համաձայնա — գրի նախագիծին վաւերացումն ու խոտացած օժանդակութեան արժանաւ — րապէս ընձայումը կախում ունին Թուր — քիոյ կողմէ այս շրջաններէն մաս մը հո — դի յանձնումէն՝ Հայաստանի կառավա- րութեան : (20 Շար.)

ՆՈՐ ՏԱՐԻ ՆՈՐ ԵՌԱՆԴ

Անցեալ տարի Պուլվար Օտտոյի շրջա- նին մէջ կազմուած «Հայոց Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութիւն» բոլորեց իր մէկ տարին: Անցնող տարուան ընթացքին նորակազմ միութիւնս իր ջանքերով պայ- ծատացուց շրջանիս եկեղեցին կազմելով Երզնասեանքի եւ յաճախելով հոն: Նաեւ իր քաջալերանքը բերաւ հայկական բար- մաթիւ ձեռնարկներու նիւթապէս եւ բարոյապէս, նոյնիսկ երբեմն յայտարարին մաս կազմելով:

Նոր տարուան հետ կ'առնենք մեր առա- ջին քայլը դէպի մեր ծրարի ամբողջա- կան իրականացման որ է դուրս գալ մաս- նակի հանդամանքէ եւ դառնալ ամբողջ Մարտիրոսի եւ շրջաններու «Հայոց Եկե- ղեցւոյ Երիտասարդաց Միութիւն»ը, ու- նենալով մէկ կեդրոն քաղաքին մէջ:

Նոր Տարուան հետ կ'առնենք առաջին քայլը դէպի նոր ու խանդավառ դործու- նելութիւն Հայ Ազգային եւ Եկեղեցական կեանքին մէջ:

Նոր Տարուան հետ կ'առնենք առաջին քայլը դէպի նոր ուղիի ստեղծում, այլ խօսքով վերականգնում իսկական հայ ու գիի բոլոր ընդարմացած ու ստամ սըր- տերուն մէջ:

Անա այս առաջադրութիւններով «Հա- յոց Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութիւ- նը» որ կ'ոգնունէ նոր տարեշրջանը եւ կը շնորհաւորէ համայն Ֆրանսահայութեան նոր Տարին եւ Ս. Ծնունդը, մաղթելով աշխարհիս խաղաղութիւն, եկեղեցւոյ պայծառութիւն եւ հայ ազգին ազատու- թիւն:

Այս առթիւ սրտապին կոչ կ'ուղղենք հայ ժողովուրդի բոլոր զաւակներուն, յատկապէս երիտասարդներուն, ամուս- նացած կամ ամուրի, առանց սեռի խրո- լութեան, որպէսզի անդամագրուին եկե- ղեցւոյ հովանիին տակ հասակ առնող եւ ուսնացող այս ազգանուէր միութեան եւ իրենց կարելի ծառայութիւնը բերեն մեր մղած ազատագրական - ազգայնասիրտ - ման ճակատագրական պայքարին:

Ան որ ինքզինք կը զգայ որպէս Հայ, ան որ իր երակներուն մէջ կը զգայ հոսող հարազատ Հայու արեան դարկերը պէտք չէ անտարբեր մնայ հայ ժողովուրդի կեն- սական պահանջներէն բխած այս կոչին: Արձանագրութեան համար դիմել նա - մակով կամ հեռագրով:

Père K. TERTERIAN
100, Bd Vauban — MARSEILLE (6e)
Tél. : 532751
Յունուար 7էն սկսեալ ժողովները տեղի կ'ունենան ամէն ուրբաթ, ժամը ճիշդ Տիմ,
7, Bd. d'Athène, MARSEILLE (1er)
ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄԱԳՐՈՒԹԻՒՆ
Պատուոյ անդամ կրնան արձանագրուիլ

Ֆրանսայի որեւէ շրջանի մէջ ապրող Հա- յերը անխափր, որոնց կը արուի հետեւ - եալ արձանագրութեամբ պատուոյ քար - թեր:

« Միրելի պատուոյ անդամ »
Միրա սրտի եւ ձեռք ձեռքի ջանանք ան- սասան հաւատքով, անխափա յոյսով եւ աննկուն կամքով պայծառացնել Հայոց Ա- ռաքելական սուրբ եկեղեցին եւ պահպա- նել զարուար ու պատուական հայ ժողո- վուրդը:

ՆԱԽԱԳԱՀ
Պատուոյ անդամագրութեան նուագա - ղոյն սակն է հարիւր Փրանք:
Արձանագրութեան համար դիմել՝
Père K. TERTERIAN
100, Bd Vauban — MARSEILLE (6e)
Հեռագրային 53 27 51:

Առաքուները կատարել նոյն հաս - ցէին:
Մտորեւ կուտանք ցանկը արդէն իսկ արձանագրուած պատուոյ անդամներուն:
Տէր Ե. Տիկիմ Զարգարեան 300 ֆրանք,
Տէր Ե. Տիկիմ Առաքելեան 300, Տէր Ե. Տի- կիմ Նիկողոսեան 200, Տէր Ե. Տիկիմ Գա- զապալեան 100, Տէր Ե. Տիկիմ Արգար - եան 100, Տէր Ե. Տիկիմ Սամուէլեան 100, Տէր Ե. Տիկիմ Ղազարեան 100:

ԺՈՂՈՎՈՒԲՆԵՐՈՒ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Ով որ չի գիտեր, ու չգիտնալը չի՛ գիտեր՝ անմխտի մէկն է, մեղացուցէ՛: Ով որ չի գիտեր ու չգիտնալը գիտե՛լ տգէտ մըն է, զարգացուցէ՛: Ով որ գիտէ ու գիտնալը չի գիտեր, երազատես մըն է, արթնցուցէ՛: Ով որ գիտէ ու գիտնալը գիտե՛լ իմաս- տուն մըն է, օրինակ առէ՛ք:

ԱՄԵՐԻԿԵԱՆ

Ինչ որ մէկ օրէն չըլլար, մէկ տարիէն ալ չըլլար:

ԱՐԵՒԵԼԵԱՆ

Ջուրը խմելէ ու ծարալը անցընելէ ետք, էշը կից կը գարնէ դոյլին:

ԻՏԱԼԿԱՆ

Ամուսնացած մարդը կը գոջայ մէկ ան- գամ, ամուրին՝ երկու անգամ:

ՀԵԼԵՆԵԱՆ

Հոգ մի ընեք եւ հոգ չես ունենար:

ՃԱՓՈՆԱԿԱՆ

Քեզի նամբայ ցոյց տուող մատը մի՛ կարեր:

ՄԱՍԿԱՍՏՐՈՒՆ

Օրէնքէն մի՛ վախնար: Դատարէն վախցիր:

ՌՈՒՍԱԿԱՆ

Հուսկ, Տիեզերական ժողովը դարձաւ աշխարհին: Կը հաստատէ կրօնական անհատութեան արեւելքը: Կը դատաւարչէր անցնալին շրջաններուն դէմ վերաբերումը: Կը քննէ ազգերու եւ մարդոց իրեղիքները, պատերազմն ու խաղաղութիւնը, անասունաձեւութիւնը, ինչպէս նաեւ ընտանեկան կեանքը:

Տիեզերական ժողովը վերջացաւ, բայց

բոսները Հայեր են, քաղաքական եւ ընկերային որոշ պայմանները որոշ արդիւնք հայ երիտասարդներ՝ բնաւ չեն փոխում ինչիւր: Իր յղացման նկատմամբ բնական հասկացողութիւնը քիչ է մնում սր փչացնել երկրի գերաբնականաբար մէքի տեսակէտով, բարեբախտաբար, Գահանուրի տաղանդը շատ աւելի զորաւոր է դուրս եկել, քան իր միտումը:

Ս. ՎՐԱՅՆԻՆ (Մնացեալը յաջորդով)

ՌՈՒՍ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐԸ ՊԵՏԻ ԳՐԱԻԷԻՆ ԱՆԱՏՈՂՈՒՆ

Ռ.

(Ինքնօր կը ԳՐԵՆ ԹՐԲԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ)

«Թուրքիոյ Ազգ. Մեծ Ժողովը, որ իր կազմութեան տեսակէտով աէր է նաեւ գործադիր իշխանութեան, պատասխանելով նախարարաց խորհուրդին այն դիմումին, որ ցանկաւ ինքիներու վերաբերմամբ իր տեսակէտներուն, տեղեկացուցած է թէ Ժողովը միաձայնութեամբ որոշած է միանգամայն իր անհատականութեան մերթ շարժման մեղքը, որ կը դրսնէ անասարկելի կերպով անընդունելի թուրք ժողովուրդին համար:

«Արդարեւ, Զինագաղարին յաջորդող ժամանակներուն եւ առաւելաբար սպասման շրջան մը ըլլալով ընդունուած օրերուն, պատահեցան կարգ մը դէպքեր եւ իրականացան այն նախատեսութիւնները, որոնք կը սպասուէին աշխարհակալներէն, Թուրքիան առաւել եւս ընկճելու համար եւ այդ զմով կատարուեցան շարք մը ոճրափորձեր ալ: Այդ օրերուն, մասնաւորաբար Անատոլի մէջ, երեւան եկաւ բուռն հակահոսանք մը աշխարհակալութեան նկատմամբ եւ այս վճռակամութիւնն ու բուռն ընդդիմութիւնը ի յայտ եկան ու նուիրագործուեցան ի վերջոյ Ազգ. Ռուստով: Իսկ այս Ազգ. Ռուստին հիմնական ոգին կը կարգէր պայտ ու անկախ թուրքիա մը, իր հողային անբաժանելի ամբողջականութեամբ, որուն պաշտպանութիւնն ու պահպանումը սրբազան երդումի մը պէս ընդունուեցան: Արդ, արուած պայմաններու մէջ, ոչ Ազգ. Մեծ Ժողովը եւ ոչ ալ նախարարաց Խորհուրդը կրնան ընդունել նման առաջարկ մը, որ ամէն տեսակէտով խոտոր կը համեմատի երկրին շահերուն, ըլլայ աշխարհագրական, ըլլայ գիւնուորական եւ ըլլայ անտեսական տեսանկիւններէ գիտուած: Ուստի, բացարձակօրէն եւ ի վրէժ ամէն բանի կը մերժուի այդ առաջարկը, որ կը ներկայացուի թուրք ժողովուրդի շահագրգիռ եւ իրաւասու այս իշխանութիւններուն:

ՕՏԱՐ ԳԵՏԵՐ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՁ

«Համաձայն այն վիճակագրութիւններուն, որոնք պատրաստուեցան Վանի եւ Պիթիլիի շրջաններուն մէջ օտար եւ չկողք գէտերու եւ փորձագէտներու կողմէ, եւ սրոնք արժանահաստ եւ ի գորու վաւերագրեր ըլլալով ընդունուած են միջազգային բոլոր մարմիններու մօտ, ինչպէս նաեւ համաձայն այն իրողութեան, որ այժմ եւս Հայերու մեծամասնութիւնը պարփակելով ձանդերձ, դարձաւ ջախջախիչ մեծամասնութիւնը կը բաղկանայ մասնաւորապէս բնակչութիւնէ, պէտք է իրեն աշխարհակալական առաջարկ մը ըլլալով ընդունել այդ բանաձեւը, նոյն իսկ երբ անիկա կուզայ Խորհրդային Հանրապետութեան կողմէ եւ նման հայկական փորձատեսութեան մը հողամաս մը ձգելու կոչում, Թուրքիոյ մայր երկրին շրջան մը անջատելու գնով: Ասիկա կը յայտնէ այժմ եւս առկայութիւնը աշխարհակալական եւ դադարեալական մտայնութեան մը՝ Խորհ. քաղաքականութեան մէջ եւ այնքան բացարձակ է այս պարագան, որ վեր է ամէն տարակուսելու ու կը մնայ մեր աչքերուն առջեւ որպէս անուրանալի եւ անհերքելի իրականութիւն:

«Անդարալի կատարութեան հիմնու-

մին զրդապատճառը կը կայանայ այն իրողութեան մէջ, որ ժողովուրդը վերստին չի շեղ պայմաններով միայն Ազգ. Մեծ Ժողովին առում է դորձադիր իշխանութեան կատարելալ լիազօրութիւնն եւ Ազգ. Ռուստով պայմանաւորում է անոր հետ երկրին հողային ամբողջականութիւնը եւ անկախութիւնը պաշտպանելու սկզբունքին ու խոստումին հիմամբ: Այս փոխադարձ համաձայնութեամբ, Անգարայի կատարութիւնը իրաւունքը չունի ընդհատելու կատարելալ լիազօրութիւնը կատարելու երկրին հողամասերէն, նոյնիսկ թիւրքացի մը, ափ մը վիջելու եւ զօհելու անկէ: Եւ իրական գաղափարական մըն է ասիկա եւ զօրաւորագոյն կուտանն ու գրաւական թշնամի աշխարհին դէմ եւ որուն ստանակիստումն ու անասուն կրնան պատճառ դառնել ազգային միասնականութեան տկարացման, ուխտին ու ճակատին քայքայման: Այդ պարագային ալ առաջին օգուտը պիտի ըլլայ Պոլսոյ յետադիմական կատարութիւնը, որուն օգնելու եւ իր ծրագրերնրը իրագործելու կարելիութիւնը ստեղծելու համար շարժման պիտի անցնի վերստին Անգլիան, Անատոլու թափանցելու եւ չունի իր տիրապետութիւնը հաստատելու նպատակաւ:

(22 Ծար.)

ՓԱՌՉՈՒ (Dessins rehaussés) (1)

Համակ բանաստեղծութիւն եւ երգութիւն աշխարհ մը կը բերէ մեզի Գաղութիւնը : Այսօր, արուեստագէտը հասարակութեան կը ներկայացնէ քառասուն դունուսուսած զճարտարութիւններ, ուր ոճը կը մնայ միշտ ինքնատիւ, ուր արուեստը սակայն միշտ նոր է :

Գիտար է խօսիլ Գաղութիւնի նկարչութեան մասին : Չոր բառեր չեն կրնար բացատրել, չեն կրնար նկարագրել արուեստագէտին ներաշխարհը, որ սակայն այնքան լայն բացատրուած ու նկարագրուած է զիմերով, զոչնչերով, զըմբիւրով մը թեթեւ հարմարութիւններ որոնց վերայ դոյնը եկած է բնորոշում մը տալու, շեշտ մը դնելու սա կամ նա զիմիւր վրայ, երազ մը աւելցնելու կողմ մը նայուածքին մէջ :

Նախընտրել քանի մը ստեղծագործութիւններ ուր չենք զննելու : Չեն կարծեր որ շատ զերբին ըլլայ երբ հեղինակը Գաղութիւնը է : Բայց ունի « Գեղարվեստ », « Զանգիտար », « Մեծած Բնութիւն » մը, « Երեւում մը », « Մատուց մը », « Ընծայ » մը, որոնք զուգեղ աւելի կը դրոշմաւորեն ձեռքին ու սրտին մէջ քան ուրիշներ : Ի վերջոյ սակայն Գաղութիւնը ինքնատիւ աշխարհն է զոր այցելուելու կը տանի իրեն հետ, աշխարհ մը, որ Մոցարթեան համանուշակ մը անմահութիւնն ունի :



Գաղութիւնը շատ ներշնչուած է Պրիմիթի Պարտոյով, որու մասին խօսելու անձինքն օր հեռախօսութիւն : Արուեստագէտին համար, զերեսանունին խորհրդագրերը կը մնայ կողմ, զարու մը մէջ ուր կրնար երթալով արահան կը դառնայ : Ներկայացուց զիմանկարներ զոր բրած է Պրիմիթի Պարտոյին :

Ա. Մ.

1) Galerie David et Garnier, 6 Avenue Montaigne, jusqu'au 18 Décembre.

Լոնտոնի մէջ ձեռնարկն զայս ցած իւրաքանչիւր լիթը ջուր կը պարունակէ 0,4 կրամ մուր :



Ինքնաշարժի առաջին մրցումը տեղի ունեցաւ Փարիզի մէջ 1894ին : Արդարձ թեան չափանիշը եղաւ՝ ժամը 12 քիւր - միթր :



1901ին աշխարհի մէջ կար 7200 ինքնաշարժ : Իսկ 25 տարի ետք՝ 27 միլիոն :

զակի իր եպիսկոպոսին : Մինակ է անոր առջեւ :

Ասկէ ետք. — Առանց ջնջելու քահանային ուղղակի ենթակայութիւնը իր եպիսկոպոսին, թեմի մը քահանաները կը կազմեն « մարմին » մը, որ հաւաքաբար ներկայացուած է եպիսկոպոսին մօտ : Միւս կողմէն, բնորոշուած է թէ քահանաներու որոշ թիւ մը կրնայ իր առաջնութիւնը կատարել աշխատելով զորձատուներու մէջ :

ԺԱՌԱՆԳԱՍԻՐՆԵՐԸ

Առաջ. — Ժառանգաւորները կը ստանան ինքնավարացնող վարչապետական « սոց » դատարարութիւն մը :

Ասկէ ետք. — Ժառանգաւորները պիտի ստանան աւելի « հոլոսակի » դատարարութիւն մը, յարմար ապագայի իրենց առաջնութեան : Երազները երկու կը կրնան տարբերիլ :

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Առաջ. — Առաջնութիւնները ենթակայ են Հաւատոյ Տարածման Ժողովին, որ կաթողիկէ Եկեղեցւոյ Ծերակոյտին մէջ Դատաստանական մարմինն է :

Ասկէ ետք. — Քարոզիչ եպիսկոպոսները ներկայացուցիչներ իրաւունքով պիտի մասնակցին Հաւատոյ Տարածման Ժողովի աշխատանքներուն : Պիտի կազմուին մասնապիտակ հաստատութիւններ :

Մանաւանդ իր ողբին մէջ, քարոզիչները այլեւս պիտի չեն ներկայանան իրեն լատին քաղաքակրթութեան առաջնութիւնը : Երբեք պէտք չէ այն ապաւորութիւնը թողուն որ մրցակցութեան մէջ են միւս դատաստաններուն հետ :

ԿՐԹՆԱԻՐՆԵՐԸ

Առաջ. — Իւրաքանչիւր կարգ շատ անկախ էր եւ կրօնաւորները պարտաւոր չէին մասնակցելու այն թեմի որոշումներին, ուր կ'ապրէին :

Ասկէ ետք. — Թեմական դեմոկրատի վրայ, կրօնական կարգերը հարկ է իրենց գործունէութիւնը ներդաշնակին տեղւոյն եպիսկոպոսին հետ : Իսկ հայեցողական կարգերը պիտի մնան նուիրուած միայն ազօթքի :

Թ. Ա. Թ.

(Մնացեալը յաջորդով)

ԿՐԹԻ ԳԻՏՆԱԼ

Աշխարհի մէջնէն փոքր զիրքը տպուած է Փատոլայի մէջ, Սալմիի կողմէ : Գիրքին երկարութիւնն է 9,5 միլիմետր, լայնութիւնը՝ վեց միլիմետր : Ամէն էջ ունի 9 տող, իսկ տողը կը բաղկանայ 100 տառերէ : Բովանդակութիւնն է՝ Կայի լէի անտիպ նամակը՝ ուղղուած Քրիստինա Լոտարինկայի :



նոր կը սկսի բուն իսկ աշխատանքը : Բազմաթիւ մարմիններ ստեղծուեցան շաբաթական համար այդ գործը ամէն քսանի վրայ, Պօլոս Զ. ի հսկողութեամբ : Եկեղեցին, ինչպէս կը յայտարարէր եպիսկոպոս մը, մոլորակին տատիճանին վրայ զբաղ ինքզինքը : Ստորեւ կուտանք վատիկան Բ. ի բերած կարեւոր փոփոխութիւնները :

ՊԱՊԸ

Առաջ. — Եկեղեցիին մէջ զերպոսն իշխանութիւնը Պապն էր :

Ասկէ ետք. — Գերագոյն իշխանութիւնը թէ Պապը մինակն է, եւ թէ նաեւ եպիսկոպոսական մարմինը (Եպիսկոպոսներուն ամբողջութիւնը՝ միացած Պապին՝ որ գոյնին է, բայց երբեք առանց իրեն : Քահանայապետը կրնայ հրամայել ուրեք մըն թէ՛ իր անունով միայն, եւ թէ՛ բոլոր եպիսկոպոսներուն անունով :

ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

Առաջ. — Գլխաւորը իր թեմին, եպիսկոպոսը ենթակայ է միայն Պապին : Այս վերապահութեամբ, իւրաքանչիւր թեմ ինքնավար է :

Ասկէ ետք. — Իրեն անդամ եպիսկոպոսական մարմինն, եպիսկոպոսը կը մասնակցի համայն Եկեղեցիի կառավարութեան : Ասկէ դուրս, ան մաս կը կազմէ նաեւ « ազգային եպիսկոպոսական համագործակցութիւն », ինչ որ կ'ենթադրէ իրեն համար միաժամանակ ազգային պատասխանատուութիւն մը եւ հպատակութիւն մը համաժողովներու որոշումներուն :

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ

Առաջ. — Պապը կը կառավարէր օգնութեամբ չափազանց կեդրոնացած մարմինի մը, « Կաթողիկէ Եկեղեցւոյ Ծերակոյտին », որու « դատաստանական » մարմինները նոյնքան զօրաւոր են :

Ասկէ ետք. — Պօլոս Զ. կը ստեղծէ եպիսկոպոսներու սինոդ մը, որուն մեծ մասը ընտրուած է ազգային համաժողովներէ : Որով Կաթողիկէ Եկեղեցւոյ Ծերակոյտը աւելի վարչական գեր մը կ'ունենայ : Ասով իսկ Եկեղեցւոյ « կառավարութիւնը » ապակեդրոնացած է հաւաքակազմակերպ իսկ սկզբունքով :

Նուիրակութիւնը ուրեմն հետեւեալ կարգով կը ներկայանայ. Պապ — եպիսկոպոսական սինոդ — ազգային համաժողով — թեմ : Կաթողիկէ Եկեղեցւոյ Ծերակոյտը պիտի բարեփոխուի. դատաստանական մարմիններու դուրս կարգինները այլեւս ցեղանոց պիտի չնշանակուին եւ անդամները անցեալէն նուազ կառավարի պիտի ըլլան :

ՔԱՀԱՆԱՆԵՐԸ

Առաջ. — Քահանան ենթակայ է ուղ-

երեսուն տարինէլ ի վեր, Հայ Կաթողիկոսներու եւ Մարտիրոսներու Միութեան Տէսիսի մասնաճիւղը կը մասնակցի Զինարարի արարողութեան, Նոյնմբեր 11ին, Քաղաքապետութեան մասնաւոր հրահրով եւ միշտ մեր զբօսով, որ հայ եռագոյնն է :

Մինչեւ այժմ, մեր գաղութին մէջ ոչ ոք չէր գիտողութիւն բրած է աւանդութիւնը դարձած մասնակցութեան այս ձեւին զէմ :

Այս տարի, երիտասարդ մը, Փօլ Մուրատեան, որ անդամ է Հայազգիտական Ուսմանց Կեդրոնին ու միաժամանակ քաղաքապետական խորհրդական ընտրուած վերջին անգամ, կը թուի թէ իր այս հանգամանքով կարծած է նաեւ իրաւունք ունենալ, յանուն Քաղաքապետութեան, յանձնարարելու Միութեան ներկայացուցիչին որ այսուհետեւ Հայ Կաթողիկոսներու եւ Մարտիրոսներու Միութիւնը կազմուցով ներկայանայ Զինարարի արարողութեան : Զի գոհանար այս խիստ յանարարութեամբ, այլեւ անաչարկ կը ներկայացնէ Քաղաքապետական խորհուրդի վերջին ընդհ. Ժողովին՝ այլեւս Զինարարի արարողութեանց մասնակցութեան չհրահրել Հայ Կաթողիկոսներու եւ Մարտիրոսներու Միութիւնը, որ, ինչպէս կը յայտարարէ, յանձնարարել խմբակցութիւն մը չէ եւ եռագոյնն ալ կը պատկանի որոշ հոսանքի մը : Ենթադրեալ Քաղաքապետական խորհուրդի երկրորդ հայ անդամի մը միջամտութեան, կը մերժուի առաջարկը :

Չենք ուղիւ հարցնել այս պարոնին թէ... հայազգիտական մարզա՞նք է հայ գրօշին զէմ իր պայքարը, — թող այդ հարցումը ընէ Հայազգիտական Ուսմանց Կեդրոնը եւ պատասխանը հարողէ հայ Ժողովուրդին : Մեր կողմէ ասանկ երբ տասարդի մը կ'ըսենք մէկ բան միայն. — Հայ գրօշը միշտ հասակեղ վեր, հասակեղ բարձր ծածաներ է եւ պիտի ծածանի : Հազարաւոր երիտասարդներ կուտեն հայ եռագոյնին տակ, որոնք քեզի նման երիտասարդներ չեն ապահովարար : Ու դո՛ւն պիտի ըլլայի հայ գրօշին զէմ կուտողը : Մինչեւ այժմ մենք զիմիւր թէ ինչ անուն կը կրէին անոնք որ կը ունեցան այդ գրօշին զէմ, դո՛ւն ալ կը կրեն անոնց անունը, անոնց ազգութիւնը, անոնց թշնամութիւնը :

Հայազգիտական Ուսմանց պարոն աշակերտ, նախ ճանչցիր Հայազգիտութեան նուիրականութիւնները :

ՀԱՅ ԿԱԹՈՒՍՈՒՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՏԵՍԻՍԻ ՄԱՍՆԱԿԻՆԸ

« Ե Ա Ռ Ե Զ » ԹԵՐԹՕՆԸ

ԿԱՆԱԶ ԱԴԱՄԱՆԴԸ

— * —

Ժողովը ազմուկի վերածուեցաւ եւ ազմուկն ալ հեռացեալ բարձրանալ սկըսաւ :

Այս անգամ այլեւս բոլորն ալ հասկցան այդ անորոշ ազմուկին ինչ ըլլալը :

Հեծեղազունը մը քառամբակ իրենց կը մօտենար :

— Էլ արվամ կային (Երոպայիները կուտան), զօշեցին բոլոր թուարեկները միարեան :

Եւ ապին անդին ցրուելով՝ սկսան իրենց ընկերներուն նշան ալ :

Ծերունիի ցեղապետը ուրախութեամբ մպտեցաւ, իսկ աւագակները սկսան զոռու :

— Խալի պալէք, էլ արվամ կային (Ուշադրութիւն, Երոպայիները կուտան) :

Շեփորի ձայն մը լսուեցաւ, որուն յաջորդէ հրաման մը.

— Կրակ բացէք, յառաջ խողացէք ... :

Փրանսացի հեծեալ զինուորները, մուրթին մէջ արձակուած ուռմբի մը պէս սուր ի ձեռն յառաջ խողացան :

Ջարդարանները յանկարծակիի եկած ըլլալով, իրար հրձուկելով ապին անդին փախչել սկսան :

Եւ երկու ժամուան մէջ, Ջարդարաններու հինգ հարիւր հոգինոց բանակը պատերազմի գաշտին վրայ երեք հարիւր մեռեալ եւ հարիւրէ աւելի ալ վիրաւոր ձգելով, փախուտի մասնուեցաւ :

Կողպտուած բոլոր զոջերը, կենդանիները եւ արջանները երեմակները, ինչպէս նաեւ առեւանգուած կրիներուն ու մանուկներուն մէկ մասը Փրանսացիներուն ձեռքը անցան :

Ա Յ Ի Շ Է

Փրանսացիներուն ձեռքը անցնող կրիներուն մէջ ձեռնուրի ցեղապետին աղջիկն ալ կար, զոր զօրավար Սէնթ - Ֆուս ինքը անձամբ խրած էր առեւանդիչի մը ձիուն վրային :

Այլ չէ տանելուց տարեկան էր եւ իր հօրը մէկ հատիկը :

Իր ցեղին բոլոր մանկամարդ աղջիկներուն պէս՝ ան ալ թոքախտաւոր էր եւ այն օրը չափէն աւելի փախցած ըլլալով՝ հիւանդութիւնը աւելի յառաջացած էր :

Անձերեւները սկսած էին եւ Փրանսական հեծեղազունը մինչեւ անձերեւներուն

կանը չուղեց շարժար գործածել այդ անմեղ ու մաքրամաքուր զգացումը :

Չանապան առարկութիւններ մէջ բերելով, անկէ վեր յայլեւս չուցայ Այլ չէ վրանը, բայց անմեղով որ մանկամարդ աղջիկը երբեմն լուր կը զրկէր իրեն, լուրսաւ կարճատեւ այցելութիւններ տալ միայն :

Այլ չէ, կարծելով որ իր սիրած մարդը արձամարձած էր զինքը, սրտին դրաւ : Ասոր վրայ վիճակը աւելի վատթարացաւ :

Այլ չէ հայրը, ցեղապետ Հաճի Մոհամէտ աղջկանը վիճակը տեսնելով ամէն ինչ կուտար : Հասկցաւ թէ աղջիկը օտար զինուորականը սիրել սկսած էր :

Հաճի Մոհամէտ, Շամպա ցեղին պետը, շատ յարգուած կրօնաւոր մըն էր : Հարաւարտ Արթուրի մէջ իր համբուր մեզն կողմ տարածուած էր :

Իր աղջկանը սէրը նմարելով, ազնուական ցեղապետը թէպէտ դուրսէն բան մը յայտնի չըրաւ, բայց ներքնապէս անձկութեան մասնուեցաւ :

Փիլի ՄԱՐՏՕՏՆ

(Շար.)



Նոր Տարուս Առօրի — ՅԱՌԱՋ — ԿԸ ՆՈՒՐԵՆ

Արժանի է լինի Պ. Պարոնի թերթի մէջ տարեկան «Յարուս» կը նուիրի Պ. Յակոբ Թերթեանի (Ալէն Շամոն) :

ՀՈԳԵՆԱՆԳԻՍ

Պ. Յակոբ Ասատուրեան եւ գրականներ՝ Վերթին եւ Զապէլ կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի այս կիրակի սուսուս Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին իրենց կողմէ եւ մօր՝ ՆԱԶԻԿ ԱՍՏՏՈՒՐԵԱՆԻ (Ծննդաւ Երամեան, Բուսուրցի) մահուան քառասուններն առթիւ :

×

Տէր եւ Տիկին Եղիա Թօփալեան կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի այս կիրակի սուսուս, Շաբաթի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին իրենց ծնողքին :

ՄԱՐՍԷՅԻ ԱՐՄ. ԹՕՓԱՒԵԱՆԻ

յիշատակին, ինչպէս նաեւ Թօփալեան եւ Գառնուանի զերգատաններու համայն ննջեցեաց յիշատակին :

Կը հրաւիրուին սրբապատիւներու յիշատակը յարգողները :

×

ՄԱՐՍԷՅԻ. — Այրի Տիկին Շահան — գուրու Լաւրեան եւ գուրու Արփի, Փարիզէն Տէր եւ Տիկին Սաշիկեան կը ծանուցանեն թէ այս կիրակի հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Մարտիկի Պարիզի Օտտոյի Ս. Յակոբ եկեղեցին, իրենց մօր, մեծ մօր եւ հօրեղբոր կողմէ :

ԺՐՆԵՎ ԼԱՍՅԵԱՆԻ

(Ծննդաւ Զամեան) մահուան քառասուններն առթիւ : Կը հրաւիրուին իր յիշատակը յարգող սրբապատիւները եւ բարեկամները :

×

Այս կիրակի սուսուս, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի Հայ Բժշկական Մարմնի անդամներու յիշատակին, որոնք մեռած են 1915ի ջարդերու ընթացքին եւ անկէ ի վեր :

×

Այրի Երեզկին Հայրապետեան եւ գուրուներ կը ծանուցանեն թէ այս կիրակի (19 Դեկտ.) Պարիզի Օտտոյի Ս. Յակոբ եկեղեցւոյ «Տօնախմբութեան առթիւ» հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի տեղւոյն հոգեւոր հայր Արթ. Տ. Պատկ Բեմի : Հայրապետեանի մահուան քառասուններն առթիւ : Յիշատակը յարգող սրբապատիւները, բարեկամ սրբապատիւները կը խնդրուին ներկայ ըլլալ :

ՇԱԽԻԼԻ Ս. ԳՐ. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ վերջին տարեկան եւ օժան Տրդ. տարեկցը կը տօնուի այս կիրակի սուսուս :

Պիտի պատարագէ եւ քարոզէ Հայրապետական պատուիրակ :

ՍԵՐՈՎՈՒՄ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Երկուցուրթիները պիտի կատարուին բարձրագոյն, Մայր եկեղեցւոյ զոյրներու — բոլոր մասնակցութեամբ եւ զեկապարու — թեամբ երաժշտապետ Պ. Նշան Աւարդ — եանի :

Յուարա Ս. Պատարագի, մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի եկեղեցւոյ բարեբարներու ննջեցեաց հոգւոյ համար :

Կը հրաւիրուի բարեպաշտ ժողովուրդը :

ԼԻՈՆԻ Ս. ՅԱԿՈՒԲ ԵԿԵՂԵՑԻ

Այս կիրակի, Ս. Յակոբի տօնին առթիւ, որ միաժամանակ եկեղեցւոյ անուանակոչութեան տօնն է, տեղի պիտի ունենայ հանդիսաւոր պատարագ, Լիոնի համանուն եկեղեցին մէջ :

Յուարա պատարագի տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն, եկեղեցւոյ կնքած Պ. Կարապետ Յակոբեանի եւ իր կողմէ ծնողաց յիշատակին : Առաւօտեան պատարագ ժամը 10ին : Հոգեհանգստի 12ին : Առաջահանգստի ժամը 12-15ին :

Կը հրաւիրուի հայ հասարակութիւնը :

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ ՅՐԱՆՍԱԿԱՆ ՀԵՌՈՒՍԵՍԻԼԵՆ

Այս կիրակի սուսուս ժամը 9-30ին հեռուստիւի Ա. կայանին վրայ՝ ժերար Սթեֆանեանի կողմէն : Նիւթ «Սասունցի Գալի» : Կը խօսի Ֆրոֆ. Ֆելտի : Կը մասնակցի Մամուլ — Մուրա եւ Գարուսեանի վարժարաններու աշակերտներու միացեալ երգչախումբը զեկապարու թեամբ Գ. Եանդիկեանի :

GALERIE
DAVID - GARNIER
6, Ave. Matignon — Paris
CARZOU
DESSINS REHAUSSÉS
Jusqu'au 18 Décembre

ՄԱՐՍԷՅԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Այս կիրակի Տօն Ս. Յակոբայ Մճրնայ Հայրապետի, հանդիսաւոր պատարագ եւ օրուան յատուկ երգեցողութիւն զարաց պատու կողմէ : Այս առթիւ մասնաւոր հոգեհանգստեան կը կատարուի եկեղեցւոյ նուիրուած Տէր եւ Տիկին Կրիստ Զաթրի եւ Մանկեան ննջեցեաց հոգւոյն, ինչպէս նաեւ Պատկ Ծ. վրդ. Տէր Ստրէնեանի «Պարբերիկ նահատակուած Առաջնորդ» ու Կէրկէի բնոց՝ նահատակներու հոգւոյն ի հանդիսա :

×

Կիրակի (26 Դեկտ.) Տօն Ս. Ստեփանոսի նախապատիւ, հանդիսաւոր պատարագ ժամը 10ին եւ Սարգիսապոյց բնծառ յարերու ժամը 11-30ին : Նոյն օրը հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի եկեղեցւոյ մեծ բարեբար սրբ. ՎԱՀԱՆ ԽՈՐԱՍՏԱՆԸԱՆԻ, հոգեւոր ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊՍԿ. ՊԱՍԿԵԱՆԻ եւ զարգացող սրբ. ՅԱԿՈՒԲ ՄԱՍԿԵԱՆԻ ի յիշատակ : Կը խնդրուի սոյն երեք արժանաւորներու յիշատակը յարգել ներկայութեամբ :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ողբ. Արտաշէս Մարտիկի յարգելուութեան առթիւ փոխան ծաղկեպտակի շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները : Պ. Պ. Մ. Եկեղեցեանէ 30 Փրանք, Համալեան կրթարար (Ալէն Ի — թիկնէն) 30, Մ. Ինչեանէ 10, Կ. Սր — վաղեմանէ 10, Ա. Պատկ յիշատակէ 10, Եկեղեցիին : Իսկ Ա. Պատկ յիշատակէ 10, Ալէն Լուի եկեղեցիին, Սարգիսեան բն — տանիք Կարմիր Սաշին բոսն Փրանք :

Ողբ. Տիկին Թագուհի Համարձուածեանի հոգեհանգստեան առթիւ Օրբերգներ կ'օժէն եւ Օտէթ Գոնտուարեան 10 եւ Կեղեցիին եւ տարր Աղբատարանին, Տէր եւ Տիկին Ժ. Աղբատար 10 սրբ — տանիք մին : Առանց գումարները ստանալ եկեղեցիին :

ԿԸ ՓՆՏՈՒԻԻ

Պարիզի Գործարարական քաղաքին Իւզարի Յակոբ Շիրօնեան կը փնտռէ Պ. Արմենակ Վարդան Մեկրեան, որ հետագոյ կ'օժանդակուի որ ունի կրթարար մը Անդրանիկ եւ քոյր մը Սաթեմիկ անունով որոնք երեքն ալ Մարտիկ ըլլալ կը կարծուի : Լուր ունեցողներէն կը խնդրուի իմացնել եկեղեցւոյ քարտուղարութեան 339 Ալիքի տիւ Փրանտ, Մարտիկ Տրդ :

ՍԱՄՈՒԷԼ ՍՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

ԿԻՐԱԿԻ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 19ԻՆ
ժամը 16ին :
ՏՕՆԱԾԱՌ

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐՃԱՐԱՆ

ՏՕՆԱԾԱՌԻ հանդէսը Դեկտեմբեր 19ին, Կիրակի կէսօրէ կ'օր ժամը 4ին վարժարանին մէջ :

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ Կ'ԵՐԳԵՆ

ՄԱՐՏ 13ԻՆ
ՍՈՐՊՈՆԻ ՄԵԾ ԱՄՓԻԹԱՏՐՈՆԻՆ ՄԷՋ

ՄԱՍԱՂՈՐՀՆԷՔ

ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒԲ ՏՕՆԻՆ ԱՌԹԻՒԻ
Այս կիրակի, Պարիզի Օտտոյի Հայոց Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ :
Եղիսկապատեան հանդիսաւոր Ս. պատարագ :
Կը պատարագէ եւ կը քարոզէ Թեմիս Ա. — առաջնորդ ԱՐՏԱԻԱՉԻ ԵՊԻՍԿՈՒՍԻՆ :
Պատարագի վերջաւորութեան պիտի կատարուի Ս. Մեքարպի նկարի օժուճ, Ս. Յակոբի եւ Ս. Մեքարպի նկարներու կնքահայրութիւն, Մատաղի օրհնութիւն :

ՄԱՐՍԷՅԻ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ
Նախաձեռնութեամբ Նոր Սերունդի Շրջ. վարչութեան :
Հայաստանի համալսարանի թէմիս Առաջնորդ ԱՐՏԱԻԱՉԻ ԵՊԻՍԿՈՒՍԻՆ ԹՐԹՈՒԵԱՆԻ
Կը գտաստուէ՝
Պ. Կ. ԳԱԶԻՆԷՃԵԱՆ
(Բժշկական համալսարանի ուսանող)
Նիւթ՝ Հայ Առաքելական եկեղեցին :
Այս Որբաթ ժամը Տիւրք 18-30ին,
Քլեօպի սրահներուն մէջ, 51 Բիւ կոնքեան
Մուտքը ազատ է

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲԱՅԱՌԻԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ

Կազմակերպուած Ֆ. Կապոյտ Խաչի Շրջ. վարչութեան եւ մասնակիցներու կողմէն իրենց կայանի տասնամեակի առիթով եւ անոր ի նպաստ :
Հրաւիրուած է Լոնտոնէն Հայ Երիտասարդաց Միութեան թատերախումբը, ներկայացնելու Գ. Սնդուկեանցի

Պ Ե Պ Օ

Շարաք՝ 18 Դեկտեմբեր
Կիրակի՝ 19 Դեկտեմբեր
Երկուշաբթի՝ 20 Դեկտեմբեր
Երեքշաբթի՝ 21 Դեկտեմբեր
Կիրակի՝ 26 Դեկտեմբեր
Չորեքշաբթի՝ 29 Դեկտեմբեր
Հինգշաբթի՝ 30 Դեկտեմբեր

Տոմար կը վաճառեն Կապոյտ Խաչի զր սանեակը, հայ գրալստաստները եւ Մաշուհները :
Ապահովեցէ՛ք ձեր տեղերը :

ՄԱՐՍԷՅԻ ՊՈՒՍԱՀԱՅԵՐՈՒ ՌԻՇԱԳՐՈՒԹԵԱՆ ԾՆՈՒՆԻՒՄԻ ՏՕՆԱԾԱՌ

Մարտիկի Պարեգներու Հայր. Մշա — կուրթի Միութեան կողմէ, Ծնունդի տօնածառ մը կազմակերպուած է Յունուար 9ին (Հայկական Ծնունդի առթիւ), կէսօրէ կ'օր ժամը 15ին մինչեւ կէս յիշեր, Պիպլիքէ՛ք Փոփիլիտի սրահ, Բիւ Ֆրանսիս Շիրա (նախկին Փլաս տ'Օպլերվան) :
Կը խնդրուի հայրենակիցներէն այժմէն ապահովել մուտքը, դիմելով միութեան վարչական անդամներուն : Պօմն 31 Պարիզի Պօմն, Պ. Հրաչ Մարտիրոսեանի, իսկ քարոզը 15 Բիւ տը լա Կամիտ Արմէ զերծակ Արարի, հեռ. 62-60-03 :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Կապոյտ Խաչի Մարտիկ քաղաքի մասնաճիւղին տարեկան պարահանգէսը, Շարաթ, Մարտ 5ին Սփրանտի սրահին մէջ :

Մուրաւ — Ռաֆայէլեան Նախկին Աշա — կերպար Միութեան

ՊԱՐԱՀԱՆՈՒՄՈՐ ՓԵՏՐՈՒՄՈՐ ԵՆԻՆ

Սամուէլ Մուրաւեան վարժարանի քաղաքական ներկայացուցիչ ՄԱՐՏ 20ԻՆ

Դարձուցաւ զեկապարուստեան հանդէսը Մարտ 28ին, Կիրակի օր :

Հայ Արիներու Միութեան Փարիզի շրջանի տարեկան հանդէսը, Կիրակի Մարտ 6, կէսօրէ կ'օր ժամը 2-30, Սալ տը լա Շիմի :

Վիլեն — Մանուկներուն օրը Յունուար 9ին, Մէրքը Կաթողիկ սրահին մէջ :

Լիոն — «Մանուկներու Օր»ը Յունուար 16ին Աղբային Տան սրահ :

Մանուկներու Օրը կը տօնուի Տէրնի մէջ Յունուար 9ին Շարաթ երեկոյան, Հ. Յ. Գ. Տան մէջ :

Ս. Սաշ Բնակարանի տարեկան պարահանգէսը Փետրուար 27ին :

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ
ՄԱՐՄԵՆ (Փարիզահայ Տիկնացի Միութեան) ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵՆՈՒՅԹ ՊԱՐԱ — ՀԱՆԴԵՍԸ 23 Յունուար, Ամպաստակօրի սրահին մէջ :

ՅՐԱՆՍԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՄՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՔՈՅԹ

Իր հիմնադրութեան 35ամեակին առթիւ 1930 — 1965, նախագահութեամբ՝ ՀՐԱՉ ԶԱՐԳԱՐԵԱՆԻ
Այս Շարաթ ժամը 20-30ին, Հօրէլ Մուրեքի սրահներուն մէջ, Փլաս տը լա Ռէփիլիքէ :
Ընթերցում Միութեան սրբապատիւ անդամներու զործերէն :
Մուտքը ազատ է

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԻՍԻ ԼԵ ՄՈՒՎԻՆՈՅԻ եւ չրջանի եկեղեցւոյ յանձնարարութեամբ ընդհ. ժողովի կը հրաւիրէ չրջանի երկուս Հայրապետ եւ կազմակերպութիւնները այս կիրակի կէսօրէ կ'օր ժամը 14-30ին, տեղւոյն Սրբ. Եւսեպիոսի սրահ, 2 Բիւ տը լա Տէֆանս : Կարեւոր օրակարգ :

ԿԸ ՓՆՏՈՒԻՆ

Հայաստանի Նոր Սարգիսի չրջանի Պ. Մարտիկ Սարգիսեան եւ Շարաթ Հայրապետ, գուրուներ Հրաչիկ եւ Գառնիկ կը փնտռեն իրենց գուրուներ, ամուսինը եւ հայրը Գրիգոր Սարգիսեան, որ հայրն — նախան պատերազմին զերի ինքնա եւ Յիւրանա փոխադրուած ըլլալ կը կարծուի : Յրանալի արտասուածքն է կ'օր զինք տեսնողներ կ'օր են : Լուր ունեցողներէն կը խնդրուի իմացնել Հայաստանէն վերադարձած եւ այժմ Կարսին հաստատուած Տէր եւ Տիկին Ժան եւ Մարգրիտ Համալեանի :

4, Rue du Repos

13 GARDANNE (B. du R.) FRANCE
Հայրենական մեծ պատերազմէն չփրկուած Ալիպեան Նահապետ Զարաթի հարազատներն են. Ալիպեան Սրբաթի Սարգիսի Սրբաթի աղջիկ Բարսեան Վիկտորեան (Տարիկ) Անդրանիկի, Նահապետի քոյր Ալիպեան Սրբաթի քոյր Ալիպեան Իսկուհի, Իսկուհի երախտներն են Սոս, Վարթիթեր, Ռիտա, Կիտա, Ալիքի (Յօսեփ), Նահապետի կրթարար Ալիպեան Ռաբէլ Սարգիսի, Ռաբէլի աղջիկներ Լարա եւ Լիլիկ : Փնտոյ Բարսեան Վիկտորեան Աղբատարի, Կարպի երեան Արտաշատի չրջանի թաղակալու :

ՅԱՐԱՏԻ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN
RÉDACTION - ADMINISTRATION : 32, RUE DE TRÉVISE - PARIS (9^e)

Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731

Tél. : PROvence 86-60
C.C.P. Paris 15069-82

ՌԻՐԱԹ
17
ԳԵԿՏԵՄԲԵՐ
VENDREDI
17 DECEMBRE
1965
LE NUMÉRO : 0,30 FR.

Օ Ր Ա Թ Ե Ր Թ

Հիմնադիր՝ ՇԱՎԱՐՇ ՄՄԱՍՎԵՆ

ՔԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա՝ Տար. 60 ֆ. Վեցամսեայ՝ 35 ֆ.
Արտասահման՝ Տար. 80 ֆ. Հատը 0,30 ֆ.

41e ANNÉE — N° 10.487

Հիմ. SU.ՐԻ — ԹԻԻ 10487

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

ՕՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ԱՆՋՐՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՅԱՋՈՂԵՑԱԻ

ձեՄԻՆԵՆԵՐԸ ԿՈՂԲ ԿՈՂԲԻ ԴԱՐՁԱՆ

Թէև յարգուածով բայց՝ անըզպետի ժամագրութիւնը զոր Ամերիկացիք որս-լած էին, կատարեալ յաջողութեամբ պըտակուեցաւ Չորեքշաբթի օր : Իր արձակուակն վեց ժամ ետք ձեռնին Զ. մինչև մէկ մեթր ութսուն մտակաւ ձեռնին է-ի, սպա երկուք միասին շարունակեցին իր ժելովերենան ճամբորդութիւնը : Հանդիպումը տեղի ունեցաւ ժամը 20-34-ին : Առաջին անգամն է որ անըզպետին մէջ միաժամանակ չորս հոգի կայ : Ամերիկացիներուն այս յաջողութիւնը իր տեսակին մէջ, աննախընթաց է : 1962ին թուերը երկու վրաստի արձակած էին ծիրի վրայ, մէկական այրեալուորդով իրարանջիւրին մէջ : Ապա, 1964 Հոկտեմբերին մէկ վրաստի մէջ երեք հոգի զբոսած էին : Յարը 11 խորհրդային տիւր-գերատուց կայ և 14՝ ամերիկացի :

Նախատեսուած է որ երկու ձեռնիները միասնաբար պիտի դառնան վեց ժամ, սպա ձեռնին Զ. պիտի վերադառնայ աչ-խարճ մինչ ձեռնին է. երկու օր ալ պիտի շարունակէ իր ճամբորդութիւնը, որ այդ ձեռով 14 օր տեսած պիտի ըլլայ :

ԸՆՏՐԱՊԱՅԲԱՐ

Չորեքշաբթի իրիկուն Միթրան եւ տը Կոլ իրենց նախափրջին յարտարարութիւններն ըրին հեռատեսիլէն :

Նախ ձախերու թեկնածուն, որու հարցումներ կ'ուզէր ժուրթ աը Բօնն, պատասխանեց մամուլի ուզած լուսարանու-թեանց : Յայտնեց թէ մասամբ դո՛ւ է ընտրապաշտարի ձեռն : Եօթը տարի է ընդդիմութիւնը չէր խօսած հեռատեսիլ-էն, այսօր այդ ստիժն ունեցաւ արտա-յայտուելու : Միթրան չի դատեր տը Կո-լը, բայց կը խորհի թէ ան չի կրնար ա-մէն բան տեսնել, եթէ ատուած թիւերը սխալ են, յանցաւորը ինք չէ, բայց չի կրնար ամէն բանէ լաւ տեղեակ ըլլալ ու Միթրան կ'աւելցնէ. « Երբ կը ըսեմ ին-նէ ինի ընդ՛. ջարտուողը որ կ'ըսէ թէ թէ Տիւրքական ուժը ջնջմը գիտուորս-կան ծառայութիւնը 28 ամիս պիտի ըլլայ, երբ կը ըսեմ թէ պիտի ազգայնացնեմ ըր-տակութիւնը, ասոնք յիմար խօսքեր են » :

Միթրան կը բացատրէ նաեւ թէ ինչո՞ւ կ'ընկերը աը Կոլի ի նպատակ կը ջուճարկեն : Կրնար ապահովութիւն կը սերեն և կը խորհին թէ տը Կոլ կը ներկայացնէ այդ ապահովութիւնը, բայց եթէ լաւ խոր-հին, պիտի տեսնեն թէ 1958էն ի վեր ամառականներու տարբերութիւնը այսի-րու եւ կ'ընկերու միջեւ կը մեծնայ ի վը-տաս կ'ընկերուն :

Գայտի ներքին եւ օրհասուց հասուցման, Միթրան կողմնակից է որ հիւսիսային Ամերիկէէն, մասնաւոր Ալթերիայէն պազ-թամ բոլոր Ֆրանսացիները այսքան շա-նորաւուին :

Վերջապէս պատասխանելով « Գառն » ի հարցումին, Միթրան կը ճշդէ թէ որեւէ պայմանագրութիւն չունի համայնապար-տեան հետ : Բարոյական պայմանա-գրութիւն մը կայ յամբողջ ձախին հետ եւ ձախ - կեդրոնի եւ կեդրոնի մէկ մասին հետ : Կարելի չէ կ'ըսէ, Միթրան, անդ - բազմաձայնով « Փարի - Նորմանտի » խորհրդին իրարու կոպտի Աղբ. ժողովի ներառութեանն եւ Հանրապետութեան նախագահին ընտրութիւնը : Բայց երկուք կը զանէ Հանրապետութեան նախագահին պաշտօնի ժամանակաշրջանը, որ ատու-ւորուին հինգ տարի պէտք է ըլլայ :

Օր Երբ

ԿԱՂԱՆԴԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ԵՐԳ

Տարին կը վերաջանայ քանի մը օրէն : Նորը կը սկսի՝ նոր յոյսերու, նոր ա-կրեկալութեանց խոստումով :

Եթէ Կէօթէն հիշդ է, « յոյսը մարդ ա-րարածին մեծագոյն տկարութիւնն է » : Անոր « մեծագոյն յիմարութիւնը » :

Բայց, Կէօթէնին անգամ ամէն ատեն շիտակ բաներ չեն ըսեր : Երբեմն, անոնք ալ կը սայթափին, ինչպէս հասարակ մահկանացուները :

Ինչպէ՛ս կարելի է ապրիլ առանց « քա-պատումի եւ յոյսի քաղցրութեան » :

Մանաւանդ, մեր նախաազգիքը ունե-ցող ժողովուրդ մը ինչպէ՛ս կրնայ փրցը-նել առօրեայ կեանքն ու յոյսը իրարու

Նախագահ տը Կոլ երրորդ պրոյքթը կ'ու-նենար Միշէլ Տոուայի հետ : Հիմարիտ-թիւններու մասին, տը Կոլ կ'ըսէ թէ պա-հարան մըն է Սահմանագրութիւնը : Պէտք է զիտնալ թէ մէջը ի՞նչ կայ : Անեղբիւ-սխալ մը կը նկատէ յաւանութիւնն ու - նենալ Ֆրանսան ներկայացնել հասանքի մը անունով : « Ֆրանսան, ամբողջն է, մէկ անգամէն : Չարք չէ, Ֆրանսան : Ա-ջը չէ, Ֆրանսան : Երբ ալի և ձախի կողմնակիցները կ'ըսեն թէ միւս հոտան - քին կը պատկանիմ, կը փաստէ ինչ սը կ'ըսեմ : Այսինքն ոչ մէկ կողմն եմ, ոչ միւս կողմը, Ֆրանսայի համար եմ : Կուսակցութեանց վարչակարգը խտտել - ճարանչն է : Չայն ապրեցանք ատաջին աշխարհամարտէն առջև եւ 1914ը եկաւ : Փրկուեցանք 1914 - 15ին Պապոս ժոֆրի « անհատական իշխանութեան » նոր՛իւ, սպա Բլէժմանտի « անհատական իշխա-նութեան » նոր՛իւ : Յետոյ կ'ըր կուսակ-ցութիւնները մարքեցին Բլէժմանտի մի-ջակութեան, անկարողութեան վարչա-կարգ մը ստեղծուեցաւ » :

Երբ լրացողը զիտել կուտայ թէ տը կուտայ թէ տը Կոլ կը մեղադրուի որ ը-սած է « Ես կամ ջարտը », տը Կոլ կը բա-ցատրէ. « Ես չըսի ես կամ ջարտը : Ը-սի եւ կը կրկնեմ : Եթէ պատահէր որ Դեկտեմբեր 19ին Ֆրանսայի ժողովուր - դը որոշէր հեռացնել տը Կոլը, համար - ուած որ կուսակցութեանց վարչա-կարգին վերադարձով, երկրին համար մեծ զժբարխտութիւն կ'ըլլար : Բայց զիս հեռացնելով Դեկտեմբեր 19ին իր պատ - մութեան մէկ մասն է որ ուրացած գետի ըլլայ : Գալով իմ յաջողութեանս : Ներ-կայի հարց չէ : Բայց օր մը, բնականա-բար, ուշ կամ կանուխ, տը Կոլ պիտի անհետանայ : Այն ատեն պիտի ապրինք ինչ որ կ'ապրինք այսօր : Եթէ Ֆրանսայի ժողովուրդը վերադառնայ նոյն հոտանք - ներու վարչակարգին, այն ատեն միայն ևս պացած կ'ըլլանք աւելի լաւ ցատկելու համար : Իսկ եթէ, ընդհակառակն, շա-րունակէ հետեւի իմ գժամ ճամբուս, այն ատեն սպառն ապահովուած կ'ըլ - լայ : Անշուշտ իմ յաջողութիւնը, ինչի պէս չի կրնար ըլլալ : Կրցածը պիտի ընէ : .. Ա-մէն պարագայի, ինչ որ ալ պատահի, իմ ճակատագրիս կատարած կ'ըլլամ » :

ՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ մէջ եկեղեցուց ևւ պե-տութեան միջեւ ծագած սպառնալի կըր-կին սաստիկացաւ : Եպիսկոպոսներու ընդ՛-ժողովը մերժեց կառավարութեան օրի-նադիրը որ կ'առաջարկէր նոր սինդ մը դոմարել տայնապը լուծելու համար :

ՎՍԻՇՆԱՍՏԻ մէջ բացուած է լե՛հ հա-մայնալար կուսակցութեան լիակատար նիստը Կոմունիստի նախագահութեամբ :

կապող բեղը : Կարեցէք այս վերջինը ու աղոթե՛ք կեանքը կը կարսնցնէ իր իմաստը՝ բանար էակին համար :

Միայն շնչելով եւ ուտելով կեանքն կ'ըլլայ :

Անասուններն անգամ յոյսով կ'ապրին : Մայր եկեղեցիներու բոլորտիքը, ամէն ատուս եւ ամէն իրիկուն քոչկոտող աղա-նիներն ալ հաշիւ ըրած են .

— Հիմա՛, ուր են, ուր չեն կուգան մե-զի բարեկամ բարի մանչուկներն ու ա-նուշիկ աղջնակները եւ մեզի կուտ ու փշրակ կը նետեն... Քալեցէք...
X

Մենք ալ կը սպասենք այդ կուտին ու այդ փշրակին : Ու քանի՛, քանի՛ տարիէ ի վեր — հազա՞ր, երկու՞ հազար, երե՞ք հազար : Հաշիւը պատմաբանին հարցու-ցէք :

Տարին ննգուկի մը չափ ալ չապրիք : Խեղճը :

Կը տեսնէ միայն 365 արշայոյս եւ 365 վերջալոյս : Կը վայելէ միայն մէկ գա-րուն, ծաղիկներով զարդարուն ու միայն մէկ ամառ : Միայն մէկ աշուն ու մէկ ամառ : Յետոյ, մագ ու մօրուք ներմըլ - ցուցած, կ'ելլէ կ'երթայ :

Լացո՞ղ ունի իր վրան : Ո՛չ : Միակ մահ-կանացուն է . որուն յաղարկաւորութեան գիշերը մարդիկ օդի կը խմեն ու կը պա-րեն : Կը խեղճեան՝ չես գիտեր ինչու : Կը պզտիկան՝ գիտես ինչու :
X

Կաղանդին գիշերը, մենք անգամ ամէն հոգ ու մօրուք մէկ կողմ շարտած, կը խնդանք, կ'երգենք, կը պարենք՝ լաւա-գոյն օրերու ակնկալութեամբ :

Եթէ անցեալը ողբերգութիւն մըր միտքը զար այդ գիշերը, պէտք է տունը նստելիմ ու նարեկ փաղիկիմ :

Բայց, յոյսը, կենսապարգեւ արեգա-կին պէս հզօր, կը խրախուսէ մեզ ու գոնէ կարնատեւ պահ մը մտոցնել կուտայ ե-րեկուան հարուածին սաստիկութիւնը :

Եթէ չըլլար այդ խրախուսը, որով գը-րահուած ենք, շատուց փլած կ'ըլլայինք : Շատուց հիմն ի յարի կործանեալ :
X

Մեր պատմութեան փիչ - շատ ծանօթ-օտար բարեկամներ, երբեմն, կը գայնա-նան թէ ուրախութեան եւ ցնծութեան եր-գեր ունինք : Միտք ու աշխատանքի եր-գեր ունինք : Մարտաշունչ երգեր ունինք՝ մեր ողբաձայն աղօթքներուն կողքին :

Կը զարմանան թէ կը խայտանք, կ'ը-փինք, կը ցատկուենք ու երբեք երբեք չենք մտածեր մահուան մասին : Գոնէ այն փակտագրին մասին, որ եղաւ այնքան անգուք ու անողոք, այնքան շարախիւղ ու թշնամական :

Դժբախտաբար, մեր օտար բարեկամ-ները մեզ նանչցան, դուրսը, մեր խա-նուրպաններով : Ներսը՝ իրենց հիւպա-տուաներով : Իրենց զօտաշքիկներով :

Ժողովուրդ մը հայրենի հողերէն բաժ-նուած իր ընդվայրայած բազմութեամբ չէ որ կը նանչցուի : Ո՛չ ալ պաշտօնով կամ արձակուրդով այդ հայրենի հողերը այցելող պատահական հիւրերու ակնու-ցով :

Ֆրանսացիին պիտի նանչնաս իր սեփա-կան հայրենիքին մէջ՝ իր բարեբերով եւ իր մշակոյթով : Իրեն հետ կուշտ կուշտի ապրելով : Ոչ թէ աշխարհի այս կամ այն շուկան վրան նետած ֆրանսական գաղութով :

Մեր պարագային ալ այդպէս է, բնա-կանաբար :

Բայց, օտար հնարաւորութիւն չունի, հիմա, մեզ մեր հայրենիքին մէջ նանչնա-լու : Դոնապանը թոյլ չի տար :

Ի՞նչ պիտի ընենք :

Դուրսը, ծագաց ի ծագս, մենք մեզ պիտի ներկայացնենք մեր մշակութային արժէքներով : Միայն մշակոյթի ջանքն արձակած լոյսն է որ ի յայտ կը բերէ ժո-ղովուրդի մը դիմագիծը : Անոր հոգին :

Խանութեանը, միլիոններու մէջ ալ լու-ղայ, մոմի լոյս անգամ չի ձգեր խնդրոյ առարկայ ժողովուրդին վրայ :

Բացէք օտար լեզուներով մեր մասին գրուած բազմաթիւ գիրքեր ու պիտի տեսնէք որ շատ մը անհամ ակնարկու-թիւններ, « քարեր » կան մեր առեւտրա-կաններուն մասին :

— Մէկ Հրեայ երկու Յոյն կրնայ խա-բել, իսկ մէկ Հայ՝ երկու Հրեայ, կը գրէ մարդուն մէկը :
X

Նոր տարուան դրան աղջիւ պէտք է ուխտ ընենք, երզում ընենք որ յետ աշ-տարիկ պիտի չխօսինք մեր ողբերգութեան մասին :

Այսինքն, 1915ի եղեռնի պատմութիւ-նը պիտի չվերածենք տեսակ մը զառթ տրիանթիթէի՝ փաղափական դատ հետա-պնդելու եւ մեր անյեղի իրաւունքնե-րուն վերականգնումը պահանջելու հա-մար :

Այս անբարոյական աշխարհին մէջ, « ջարդուեցանք, մեզի մեղքե՛ք » ալ յիւս փաղափական գէնք չէ :

Երեկ ալ գէնք չէր : Բայց, յուսահատու-րէն վիայական ժողովուրդ, մեզի այնպէս բուեցաւ թէ կրնայինք փրատուեալ մարդկութեան գութը շարժել՝ ի խնդր արդարութեան :

Այսօր, շատ անելի փորձառու, այդ տեսակ միամտութիւններ չունինք ու այլեւս չենք հաւատար թէ « լացող երա-խային կաք կուտան » :

Մեր փաղափական դատը պիտի հետա-պնդենք դուրսը՝ առաւելապէս քարոզ - չական գրականութեան միջոցաւ, որուն մէջ նուազագոյն տեղը պիտի գրուէ մեր ողբերգութեան վերաշինումը, իսկ առա - նելագոյն տեղը՝ մեր վերածնունդին պատմութիւնը :

Հագար անգամ անելի լաւ է որ գրենք թէ երեսնի մէջ քար մը քարի մը վրայ գրինք ու շէնք մը կանգնեցնենք, քան զը-րենք թէ թշնամին, երէկ, քարք քարին վրայէն վար առաւ ու շէնք քանդեց :

Քաղաքակիրթ մարդկութեան վերջին յիսնամեակի անտարբերութիւնը մեզի հանդէպ, կը նշանակէ միայն մէկ բան — փայ ըլլայիք եւ թոյլ չտայիք որ մեր տունը քանդուին :

Այսուհետեւ — այս տարուան սկսեալ — պիտի արտասուենք տարին միայն մէկ օր, մենք մեզի՝ առանց խնդրելու ուրիշ-ներէն որ գան ու կաք ի մը արցունք ալ իրենք քապեն ի պատիւ մեզի : Ի յար - գանս մեր նահատակներուն :

Եթէ խեղճեցինս գլուխիս եկած է, միանգամընդմիջու պիտի հրաժարինք այն բոլոր մարգարէներէն, որոնք միայն մէկ իմաստ ունին .

— Չեք բարեկամը մեզ ջարդեց, ու - ըմբն մենք մեր հողերը կը պահանջենք... Այսքան ծոնցաւ մեր փաղափականու-թիւնը շիտակ նախէն : Որովհետեւ, ար-ցունքուտ աչքերով նախայ ինկանք :

Յոյս ունինք որ յառաջիկայ տարին - բուն կ'երգենք միայն մէկ երգ՝ ի լուր ամենեցուն .

— Արեւմտեան Հայաստանը մերն է է - րեքհազար տարիէ ի վեր... Չջարդուած ալ մենք էինք անոր տէրը... Ես կը պա-հանջեմ...
X

Կաղանդին գիշերը ուրիշ երգ չկայ մե-զի համար :

ԵՐԲՈՂԱՅԻ

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(Գ. եւ վերջին մաս)

Ի՞նչ է «Նահանջ»-ի բովանդակությունը երկու խոսքով. Պոլսից Փարիզ փոխադրուած երկուստարգ Պետրոսը — Փիէն — սիրահարուած է մի Փարիզուհի կնոջ ժամանակէն — որ կապուած է մութ դործերով զբաղող Փրանսացու՝ Լեաքիւտի հետ: Ամբողջ վէպը այս սիրոյ պատմութիւնն է, որ կնճռոտուած է եւ ի վերջոյ պարզութեամբ վերջանում է: Այս նիւթին զուգընթաց երեւան են բերուած եւ մի քանի ուրիշ հայ տղաք — Սուրէն, Հրաչ, Լուսում եւայլն — նրանց կեանքը այլապէս կ'ընթացէր: Եթէ ես սը — խալ չեմ հասկանում՝ հեղինակի համար վէպի այս, այսպէս ասանք՝ ազգային կողմէն է առաջնահարգը, եւ այդ պատճառով վերնագրին էլ դրել է «Նահանջը առանց երգի», այսինքն՝ Փարիզի ապահանութեան մէջ հայ երկուստարգութեան այնքան անչլուկ փճացումը:

Այս բնութեամբ, Շահնուր, ի հարկէ, սխալուած է, նրա վէպի կենտրոնը, էութիւնը Փիէնի եւ Նեհէթի սէրն է եւ այդ սիրոյց բոլոր հետեւանքները: Այդ սէրը ներկայացուած է զարմանալի հարգումով — առեւթեամբ եւ ուժով, այնքան բնական, այնքան խորը եւ բազմակողմանի: Սիրոյ առթեմ տառապանքները, հոգեկան վերելքներն ու փլուզումները, տանջանքի ահաւորութիւնը — Համառոտեան վրձինով դժուած հոգեբանական պատկերներ, որոնց հաւասարը Հայոց դրական նութեան մէջ եւ կը դժուարանամ ցոյց տալ:

Շահնուրի առաջին գրքից յետոյ անցաւ գրեթէ հինգ տարի: Կարելի էր վախենալ թէ «Նահանջ»ը կը մնայ մենակ: Ինչպէս Չիֆթէ Սարաֆի հետ, «Միամիտի» մը արկածներ»-ից յետոյ նա հայ գրականութեան արժէքաւոր բան չտուեց: Բարեբախտաբար, վախերը անտեղի էին ու ահա «Յարալէզներու Դաւաճանութիւնը» — մի խոշոր քայլ դէպի առաջ, մի նոր նուաճում, նոր յաղթանակ Հայոց գրականութեան համար:

Այս անգամ Շահնուրը մեծ մասով մը — նուազ է հայկական միջավայրում: «Նահանջ»-ի քննադատները շատերը իբրեւ բացասական կողմ՝ մատնանշում էին օտար միջավայրը եւ օտար տիպերը հայերէն լեզուով օտար գրականութիւն: Նոյնը կարելի չէ ասել «Յարալէզներու» մասին. բացի մէկ պատմութեանցից, միջավայրն ու դործող անձերը հայկական են — Պոլիս — հայկական Փարիզ:

Երկրորդ «Յարալէզներ»ը մէկ վէպ չէն, այլ պատմութեանցից կամ նորավէպեր — 7 կտոր:

Պատար աշխարհ է Շահնուրի ներկայացուցած միջավայրը: Մասլ. յուսա — հատական: Անասման յոռետեսութիւն է պարսկական աշխարհագրագիտական գիտելիքի մէջ:

Նիւթը. — Շահնուրի երկի նիւթը առօրեայ կեանքն է, սովորական մարդիկ, մարդկային սպրուսումներ: Նիւթը բնորոշուած է զժուարմութիւն չի քաշում — կեանքը այնքան հարուստ է ամէն տեսակ նիւթով. ա՛ռ ու մշակիր:

Շահնուրի ստեղծագործութեան հիմքը մարդն է, մարդու հոգին: Երջարար, բնութիւնը, նրան քիչ են գրադեցնում, ինչպէս եւ կենցաղը — այնքան, որքան անհրաժեշտ է մարդկային հոգու այս կամ այն կողմը լուսարանելու, վայր — կեանքին յատուկ որոշ տրամադրութիւն առաջ բերելու համար: Վրձինի մի քանի ուժգին հարուած, գունազոյ ներկեր — ահա բնութիւնը, եւ յետոյ երկար խու — դարկութիւններ հերոսի հոգեկան աշխարհում:

Տիպերը. — Հերոսի՞ ... Հերոս բառի իմաստով դերակատար չունի Շահնուր: Նրա հերոսները փոքր մարդիկ են, սովորական մահկանացուներ, յաճախ սովորականից էլ վար մանրութիւններ: Ի դուր չէ որ նա շատ է սիրում մարդուկ բառը: Շահնուրի հերոսների մեծ մասը մարդուկներ են, տիրու տիպեր, խելոճ մարդիկ:

Վերջին հաշուով, զարհուրելի է Շահնուրի պատկերացուցած աշխարհը: Նա — համընդհանուր օրինակ է ինքզինքը կարելի է նրա նկարագրած միջավայրում: Այդ միջին ու ծուծը փչացած Լեաքիւտները, այդ պարտասօժ ու այդ «Նահանջող» Սուրէնները, Հրաչները, Փարիզի ու Պիլանդրոսը: Եւ իրենք՝ զլիսա — լոր հերոսները՝ Պետրոս ու ժաման եւ Յարալէզների տիպերի մեծ մասը:

Լաւ, համակերպող զարթեցնող տիպերն էլ, վերջին հաշուով, ողորմելի արարածներ են, զոհերը այս զարհուրելի ճիւղի, որ Կեանք է կոչուած: Այդ Փրթիթ Լիզը, Նահանջի մէջ, Յարալէզների Ա. դասին, դեղադործ Արթուրին, Յամաիկը, Չաքոսքիի դժբախտները, կրաւորական, կեանքից ծեծուած:

Կարեկցանք են զարթեցնում քո մէջ, ցաւ ու խղճահարութիւն եւ այդքան:

Ի՞նչ է Շահնուրի իտէլիքը: Նա անի — տէլ սերնդի երգիչ է: Ոչինչ լաւ բան չի տեսնում իր շուրջը: Ամէն ինչ մոսլ է, յուսահատական:

Շահնուրի խոշոր առաւելութիւններից մէկն էլ այն է, որ նա դիտակցորէն դուրս է գալիս ազգային նեղ շրջանակներից եւ աշխատում է հայ գրականութեան մէջ բնաւ լայն, համամարդկային հորիզոններ: Նրա հերոսները նախ եւ առաջ՝ մարդիկ են: Անունն ու միջավայրը նրա համար միջոց են միայն. նպատակը մարդկային հոգու ներքին ելեւէջների պատկերացումը:

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ՎԱՏԻԿԱՆ Բ.Ի

(Բ. եւ վերջին մաս)

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՆԵՐԸ

Առաջ. — Աշխարհականները, որոնք կը կազմեն հաւատացեալներու խումբերը, մասնաւորաբար կրաւորական են եւ լուս:

Ասկէ ետք. — Աշխարհականները հարկ է մասնակցին Եկեղեցւոյ առաքելական դործունէութեան: Հարկ է իրենց կարծիքը տան եւ աշխատին, օրկանական կապով, եպիսկոպոսներուն եւ քահանաներուն հետ:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Առաջ. — Եկեղեցիին համար իրական մէկ դպրոց կայ միայն, Քրիստոնեայ դպրոցը:

Ասկէ ետք. — Մաղթելով հանդերձ պահպանումն ու զարգացումը դաւանան — կան դպրոցներու, հարկ է նկատի առնել նաեւ պայծառները երկիրներուն՝ որ մանուկները կը դաստիարակուին ազգային դպրոցներու մէջ: Այս նկատումը թոյլ կուտայ որ խօսակցութիւններ սկսին բողոքական եկեղեցիներուն հետ, որոնց համար ռեֆորմի ժամանակ Աւանդու — թիւնը չեղեցաւ:

ԿՐՕՆԱԿԱՆ ՊՈՇՏԱՄՈՒՆԵՐԸ

Առաջ. — Պաշտամունքի պաշտօնական լեզուն լատիներէնն էր:

Ասկէ ետք. — Տեղական լեզուի լայն դործածութիւն մը թոյլատրելի է պատարագի մատուցման թէ խորհուրդներու մատակարարման մէջ: Ի դէպ, հաւաքական աղօթքը արարողութիւններու ընթացքին, պէտք է ձգտի փոխարինելու անհատական աղօթքը:

Այդ է մասամբ պատճառը, որ Շահնուրի գրականութիւնը լայն տարածում չունի. հայ մարդու հոգին այսօր ուրիշ սպրուսումներով է բնուած. ազգ ու հայ — րեմիք — այս է նրան հրապուրող: Այդ — դային ու հայրենասիրական սպրուսումների պատկերացումը զանդուածների սրտին մօտ է: Նաեւ մտաւորականութեան մէկ ասպարէզ մասի: Ժամանակի յատկանիւնն է այդ:

Իբրեւ գրական արտադրանք, Շահնուրի երկերը, ի հարկէ, աւելի մնայուն են եւ իրենց էութեամբ աւելի լայն սահմաններ ընդգրկող:

Ս. ՎՐԱՅԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Առաջ. — Հոսմէական Եկեղեցին չէր ճանչնար Արեւելեան Եկեղեցիներու խորհուրդներուն վաւերականութիւնը:

Ասկէ ետք. — Հրովարտակ մը թոյլ կու տայ որ կաթողիկէները կարգ մը խորհուրդներ ընդունին օրթոտոքս քահանաներու ձեռքով: Նմանապէս կաթողիկէ քահանաներ կրնան խորհուրդներ մատուցանել օրթոտոքսներու:

ՌԵՖՈՐՄԷ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Առաջ. — Արդիւրեւ էր որեւէ յորաբերութիւն, բացի բացառիկ պարագաներէ:

Ասկէ ետք. — Կաթողիկէ Եկեղեցիի եւ բաժնուած Եկեղեցիներու անդամներուն միջեւ տեսակցութիւնները բաղձալի են, երբ խնամքով կազմակերպուած են: Ասոր օրինակը տուաւ Պօղոս Զ., երբ երկու շարքի առաջ համախմբելով ժողովական հայրերն ու գէտերը Ս. Պօղոս եկեղեցիին մէջ, միասին աղօթեց: Բայց տեղեկականութիւնը արդիւրէ չէ վարդապետութեան, որ կը մտայ անխախտ:

ՀՐԵԱՆԵՐԸ

Առաջ. — Հրեայ ժողովուրդը նկատուած էր պատասխանատու Քրիստոսի մահուն:

Ասկէ ետք. — Հրեայ ժողովուրդը չի կրնար նկատուել անիծեալ կամ դատապարտեալ, եւ ոչ ալ — առանց որոշ կերպով ըսելու բարձր՝ աստուածասպան: Քրիստոնէութիւնը հարկ է ճանչնայ հրեական իր սկզբնաւորութիւնը: Հակասեմականութիւնը դատապարտուած է իր բոլոր երեսներով:

ՈՉ - ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԿՐՕՆՔՆԵՐԸ

Առաջ. — Եթէ ոչ թշնամութիւն, աւելայն անտեսում:

Ասկէ ետք. — Կաթողիկէ Եկեղեցին պէտք է «դործակցի» հասարակաց այն կէտերուն շուրջ, որ միւս կրօնքները ունին իրեն հետ. Աստուծոյ անկեղծ փրկարարութիւնը:

ԿՐՕՆԱԿԱՆ ԱԶՍՏՈՒԹԻՒՆԸ

Առաջ. — Օրինաւոր է որ Եկեղեցին, իբրեւ միակ ճշմարտութիւն, առանձնաշնորհեալ զիրք մը ունենայ: Աւելի լաւ չըլլալով, կը բաւականանայ չէզոքութեամբ:

Ասկէ ետք. — Բազաբային իշխանութիւնը չի կրնար ստիպել մէկը դաւանելու վարդապետութիւն մը եւ ոչ ալ արգիլել մէկուն դործադրելու իր դաւանած ճշմարտութիւնը: Եթէ երբեք Պետութեան մը մէջ Եկեղեցի մը առանձնաշնորհեալ զիրք մը կը գրաւէ, այս երեսովքը՝ ոչ

ՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐԸ ՊԻՏԻ ԳՐԱԻԷՆ ԱՆԱՏՈՂՈՒՆ

(Ինքնօր կը գրեն ԹՐԲԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ)

«Երբ որեւէ հոգեմաս իր սեփական փափաքովն ու ցանկութեամբ չի բաժնուել երկրին մայր հողամասէն, որեւէ նոպա — տակով կամ անհրաժեշտութեան բերուածով, Աղարայի Աղբ. կառավարութիւնը չի կրնար կամովին հրաժարել որեւէ հողամասէ, քանի մը մեծ նահանգներ երկրին հիւսիսայնայն, Արեւելքի մէջ եւ Հարաւայն տալով Հայերուն, իսկ ուրիշ զիջումներ ալ կատարելով Յունաստանի, ինչ որ պատճառ պիտի դառնար այդ կառավարութեան յաւիտեանայն անիծուելուն թուրք ժողովուրդին կողմէ եւ ատելին դառնալու անոր:

« Եւ այդ պարագային, միւս կողմէ, Աղարայի կառավարութիւնը իրականութեան մէջ ոչ մէկ տարբերութիւն ունեցած պիտի ըլլար Պոլսոյ յետադիմական

կառավարութեան, որ ձեւով մը հլու կամակատարը դարձած էր Արեւմտեան աշխարհակալութեան եւ դործադիրը առնոր նուաճողական ու զաղճարարական քաղաքականութեան: Իսկ, վերջապէս, նման կառավարութիւն մը այդպիսի պարագայի մը բոլորովին պիտի կորսնցնէր վստահութիւնը Անատոլիոյ ժողովուրդին, ինչ որ, աւելորդ է բացատրել, պատճառ պիտի հանդիսանար, որ Աղարայի կառավարութիւնը որեւէ օգնութիւն եւ զորութիւն պահանջելու եւ սպասելու իրաւունք չունենար նոյն այդ Անատոլիոյ ժողովուրդին:

« Հակառակ ասոր, Աղարայի Աղբ. — յին կառավարութիւնը, անկեղծօրէն փափաքելով շարունակել աւելի սեղմ ու դործակցական յարաբերութիւններ ուսուսական Պորճ. Հանրապետութեան հետ, կողմէ կրկին երաշխալի եւ սպասուողութեան խոստումներ լսել այսուհետեւ ալ, թէ Լեւինէն եւ թէ Չիչերինէն: Թուրք Աղբ. կառավարութիւնը փոխադարձ նոյն բարի նկատումները եւ զգացումները կը սիրէ տեսնել նաեւ Ռուսական Պորճ. կառավարութեան եւ անոր զեկալարներուն մօտ:

« Հետեւաբար, այդ պատճառաւ ալ, Աղարայի Աղբ. կառավարութիւնը, վրաստան ըլլալով որ Ռուսիոյ արտաքին գործաւարը եւս սողորուած նոյն բարեկամական եւ անկեղծ զգացումներով, պիտի շարունակէ տեսականացնել, հաւատա —

րիմ մնալով ցվերջ, տրուած սպասուողութեան խոստումներուն, իրենց կողմէ, կացութիւնը անգամ մը եւս պիտի քննէ ալ աւելի մօտէն եւ նաեւ նկատի առնելով թուրք Աղբ. Մեծ ժողովի որոշումին տուն տունը պարագաներուն ու պայմաններուն լրջութիւնն ու կենսականութիւնն ալ, դայն պիտի արժեւորէ իր արժանի կզած կարեւորութեամբ, որոնց ուսումնասիրութեան եւ մանրազնին քննութեան ներքեւ վստահ ենք, որ ետ պիտի կենայ այս անգամ ներկայացուած այդ առաջարկներէն:

« Ուստի Նախարարաց Պորճուրդը, կացութիւնը անգամ մըն ալ քննելէ ետք հարկ եղած լրջութեամբ ու բժախնդրութեամբ, պատրաստեց ստորեւ ներկայացուած երկու յորուածներէ բաղկացեալ փոխ — առաջարկը, որուն փոխանցումը կը խնդրէ ձեռ միջոցաւ, Ռուս Պորճ. Հանրապետութեան արտաքին գործաւար Չիչերինին:

ՀԱՅԵՐԸ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆ ԵՆ ՎԱՆԻ ԵՒ ՊԻՌԻՒՍԻ ՄԷՁ

« Յօդուած Ա. — Նախապէս եւ ներկայիս ալ օտար փորձագէտներու եւ գէտերու կողմէ պատրաստուած վիճակագրութեանց համաձայն, Վան եւ Պիթլիս նահանգներու բնակչութեան համեմատութեան մէջ, Հայերը անցեալին երբեք ալ

մեծամասնութիւն չեն կազմած եւ չեն կազմեր նաեւ ներկայիս՝ շրջանին մահմետական բնակչութեան հետ բաղդատած:

« Հետեւաբար, որոշ հողամասի մը համար պահանջ ներկայացնել՝ փոքրամասնութեան մը սեփականութիւնը դարձնելու դիտաւորութեամբ, կարելի չէ մեկ նարանել ալլապէս, բայց եթէ դայն որակել աշխարհակալական զաղափարներու ծառայել միայն:

« Անդարայի Աղբ. կառավարութիւնը, աշխարհակալութեան գէժ պայքարելու եւ պաշտպանութեան համար հիմնուած կառավարութիւն մըն է եւ իբր այդ բացարձակապէս անկախ է նման գաղութարարական առաջարկ մը եւ պահանջ մը մերժելու, առանց որեւէ այլեւայլի»:

ՕՍՄԱՆԻ ՀԱՅԵՐԸ ԿՐՕՆՎԱՐԿԱՌՆԱԼ

«Յօդուած 2. — Անդարայի Աղբ. կառավարութիւնը, իրեն համար պարտականութիւն կը նկատէ թուրքիայէն դալթթած, նախկին Օսմանցի Հայերուն տարաբերութեանց առաջ իրենց բնակած ըլլալուն կը վերադարձին արդիւրէ Հանդիսանալը եւ այս պայմաններուն տակ վերագաւառելը Հայերուն, ամէն երկրի մէջ փոքրամասնութիւններուն հանդէպ ցուցարեւած վերաբերում մը ցոյց տալը: (23 Շար.)

մէկ ձեւով պէտք է արդիւր հանդիսանայ միւս դաւանանքներուն :

ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆԸ

Առաջ.— Համեմատական եւ ցրուած հետաքրքրութիւն տարածման արդիական միջոցներու մասին (ձայնասփիւս, հեռատեսիլ, սինեմա) :

Ասիէ ետք.— Մեր ժամանակակիցներու տեղեկատուութեան եւ կազմութեան համար անհրաժեշտ են «ընկերային հաղորդակցութեան» միջոցները : Եկեղեցին, իր պատգամը ճանչցնելու համար, հարկ է դրժած է զանոնք :

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

Առաջ.— Որոշ պատերազմներ կրնան օրինաւոր ըլլալ :

Ասիէ ետք.— Պատերազմը միջոց մը է այլեւս իր իրաւունքները արժեքներու համար : Դիմում պէտք է ըլլայ միջազգային կազմակերպութեանց մօտ, զորս Եկեղեցին պէտք է արժեւորէ :

Ընդհանուր եւ զանազան ընտանեկան շնորհներով պատերազմը դատարարուելի է, նոյնիսկ օրինաւոր ինքնապաշտպանման պարագային : Յանկացուած արդիւնները սակայն կրնայ դրժագրուել հետզհետէ եւ ոչ թէ միակողմանի կերպով :

ԾՆՈՒՆԴՆԵՐՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱՅՈՒՄ

Առաջ.— Ծնունդներու սահմանափակումը կրնար դրժագրուել միայն բացառիկ պարագաներու մէջ եւ բնական միջոցներու օղնութեամբ :

Ասիէ ետք.— Ամուսինները իրենց իրող ձին մէջ իրենք են դատաւորները զաւակներու թիւին, որ կրնան օրինաւորապէս ունենալ : Բայց թոյլատրելի են միայն բնական եղանակները :

Տիեզերական ժողովը Պապին կը թողու սահմանել, իր կազմած յանձնախումբի կողակացութիւններուն հիման վրայ, այս սարնութեամբ դրժանական վարդապետութիւնը :

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Առաջ.— Անաստուած համայնապարտութիւնը դատարարուած էր :

Ասիէ ետք.— Միշտ դատարարուած է անաստուած համայնապարտութիւնը : Բայց Եկեղեցին պատրաստ է ընդառաջելու բարի կամեցողութեան որեւէ նշանի, թոյլատրու համար որ համայնապարտ երկիրներու մէջ ապրող քրիստոնէականները շարունակեն կատարել իրենց կրօնական պարտաւորութիւնը, բայց ատով ոչ մէկ ուրացում կայ վարդապետութեան :

Թ. Ա. Թ.

« ՀՈԳԵՒՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ »

Վարդանանց ստեղծանքները ընկերակցութեան կազմակերպած հոգեւոր երաժշտութեան այս երբորդ երեկոյթը, այս տարի, խումբ մը համակիրներու թանկագին օժանդակութեամբ, կատարեալ յաջողութիւն մը եղաւ :

Աւելի քան երկու հազար հոգի հաւաքուած էին Սէնթ Էոսթաշ եկեղեցւոյ դարպասը կամարներուն տակ, երկուրդ օրը թուրքերու եւ արժանապաշտ ձեւով ողբերգութեամբ համար բոլոր հայ նահատակներու յիշատակը (Վարդանանցի մինչեւ մեր օրերը ինչպէս չէր ճշդեր յայտարարը...) եւ ի մասնաւորի 1915ի ցեղասպանութեան զոհերը :

Մեր նպատակը չէ, ոչ ալ մեր ձեռնհասութեան մէջ է, զովի կամ ընդհակառակը քննադատել զեկեղեցւոյ եւ երգչախումբը, կամ արձագանք հանդիսանալ «չար լեզուներու» որոնք պիտի նախընտրէին հայկական երգչախումբի մը կողմէ լսել կոմիտասեան պատարագէն եւ դուած մասերը : Չենք ուզեր խօսիլ նաեւ հայր Մարթէնի կատարած վերածնունդի արժէքին մասին, «Ո՛ր ես, մայր իմ» կամ « Ի վերին Երուսաղէմ » մէջ (զոր հանդիսականները պէտք է երգեն միասին) : Չենք խօսիլ նաեւ Տիկին Էտաֆիէի հաղուսագրուած մասնակցութեան նուրբ հարցին մասին, ոչ իսկ Օրաքար ընդհանրապէս, զոր անկատար հնչակնութիւն մը երբեք անհասկնալի դարձուց, հակառակ Փօլ — Էմիլ Տէպլերի կատարեալ առողանութեան : Նման նիւթեր կը վերաբերին մասնագէտներու :

Երեկոյթը սկսաւ երգչախումբերու եւ պատուակալներու թափօրին մուտքով : Անհրաժեշտ էր արդեօք : Առջեւէն զպրայզ դասի մանուկները խաչելութեան պատկերով, ոսկեփառ դրօշով, մոմերով երգչախումբին անդամները (կիները երկար հասակով, այրերը Փարիզի մեր եկեղեցւոյ փայլուն զոյններով զարդարուած շապիկներով), Սէնթ Էոսթաշի ժողովրդապետը, վերապատուելի Միսիւան, արարողութեան զգեստով, Սերովէ Աբբայտաճաջան : Դանդաղօրէն, թափօրէն անցաւ կեդրոնական թեւը, երգչախումբի անդամները դրաւեցին իրենց տեղը : Եւ « Խորհուրդ խորհի » եւ « Հրաշափառ » ընկերակցութեամբ, մանուկներու թափօրէ պատուակալները առաջնորդեց իրենց վերապատուած տեղերը : Թմբուկներու զօրինակէն ետք՝ մէկ վայրկեան լուսնի :

Հոգեւոր նուագահանգիստին մտքը սկսաւ երկար — շատ երկար — յանդարտութեամբ յօրինուած մը, երգչուհիները վրայ, որու հեղինակն է Բաֆֆի Ուրկանձեան, այս երեկոյթին իսկական յայտնութիւնը : Փօլ — Էմիլ Տէպլեր սկսաւ արտասանել օրաթորիսի ընդդէմը — ներշնչուած Եղիշէն — եւ ընդհատուած կարգ մը կը արտերոյթ «Մարդուն Երգը» (Հայր Մարթէն), «Կալի Երգ» (Կոմիտաս), «Ուր

Թ Ո Ւ Ղ Թ Ը

—*—

Վիճակագրական տուեալներու համաձայն, մարդ զլուս թուղթի սպառումը կը ներկայանայ հետեւեալ ձևով : Մ. Նահանգներու մէջ տարեկան 200 քիլօ, Բանատայի մէջ՝ 135, Շուէտի մէջ՝ 120, Անգլիոյ մէջ՝ 74, Հասարակաց Շուկայի անդամ եւրոպական երկրներու մէջ՝ 30-60 քիլօ : Թուղթի սպառումն այս քանակութիւնը ցոյց կուտայ տուեալ երկրին զարգացման չափը : Բնականաբար թուղթին դիւար տեղի պիտի ունենար այն երկրին մէջ, ուր ծնունդ առած է առաջին քաղաքակրթութիւնը : Այդ երկրի, ըստ պատմական տուեալներու, Չինաստանն է, ուր թոյս լուսի կողմէ հնարուցաւ թուղթը մեր թուագրութեան 105 տարի առաջ : Չինաստան ապահովեց այդ նիւթին մեծաշորճը մինչեւ Ժ. դար, երբ թուղթի պատրաստութեան ծանօթացան նաեւ Քորէա, Ճափոն եւ արաբական երկրները : Ընդդէմը նաեւ այն՝ որ արար վաճառականները առեւտրական սերտ կարել հաստատուած էին Չինաստանի հարաւային շրջաններուն հետ եւ այս առիթով անոնք իրենց երկիրը ներմուծեցին նաեւ թուղթի արտադրութիւնը եւ դրժածութիւնը : Ժ. — Ժ. դարերուն թուղթը արաբական երկիրներէն կարտածուէր զէպի Սպանիա եւ Իտալիա : Եւրոպայի մէջ առաջին անգամ թուղթի դրժարաններ հիմնուեցան՝ 1150 թուս

ես մայր իմ» (վերածում՝ Հայր Մարթէն), Տէ Փրոֆուստիս, «Որ յանէից» եւ « Ի վերին Երուսաղէմ » (վերածում՝ Հայր Մարթէն), « 0 Վոս Օսնէս » տա Վիքթորիա, «Սուրբ — Սուրբ» (փողերդի սկզբնաւորութեամբ), «Հայր Մեր» եւ «Տէր Կեցո» (այս վերջին երեք կտորները շատ լաւ կատարուած, թէեւ ճիշդ է որ երբորդ տարին է որ Սէնթ Էոսթաշի խումբը զանոնք կ'երգէ), վերջապէս Ավէ Մատիա Սքիլլան, որ կը շարժուի Տէր ողորմեայի մը զոր անձնապէս բնաւ չըմահատեցի : Եւ իբրեւ պատիկ՝ նոր յանդարտութեամբ յօրինուած մը երգչուհիները վրայ :

Մանչեսթրի երեկոյթ մը, ի վերջոյ, որ կը փակէ ցեղասպանութեան յիշատակը եւ կը նուիրագործէ Արչամ Ճիզմէճեանի ստեղծած ու արժանիքները իբրեւ զեկաւար եւ բնագիրը : Փարիզի «Վարդանանց Ասպետներ» ձեւ իրենց համակիրները, որոնք այնքան ջանք թափած էին այս երեկոյթին յաջողութեան համար, կրնան հպարտ ըլլալ իրենց յաջողութեան համար, համակերպելով հանդերձ կարգ մը քննադատութիւններու որոնցմէ պիտի չլուսափին :

Հանրային որեւէ ձեռնարկի օրէնքն է, կարելի չէ բոլորը զոհանքնել : Ժ. Լ. Ա.

Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն

ՉԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

« ԱՐԱՐԱՏ » ամսագրակի խումբը մարդիկները, որոնք փայլուն յաղթանակներ արձանագրեցին վերջերս, Երեւանի մարդադաշտին մէջ, տասնեակ հարաւոր մարդասէրներու ներկայութեան, ստացան ոսկեայ շքանշաններ :

ԵՐԵՒԱՆ քաղաքին խորհուրդը պատասխանեց այն բաց նամակին, ուր կը քննադատուէր վաճառատուներու, խառնութեան եւ այլ հանրային սպասարկութեանց կեղծոններու ճակատներուն զետեղուած անճոռնի (կէս հայերէն, կէս ուսերէն, շատ անգամ միայն ուսերէն եւայլն) ցուցատախտակները : Խորհուրդը կ'ընդունի, որ «այստեղ նշուած փաստերը միանգամայն համարատաստանում են իրականութեան» եւ, այս առիթով, կը խոստանայ հարկ եղածը տնօրինել :

ՍԷՐՕ ԽԱՆՉԱՏԵԱՆԻ ծննդեան 50ամեակին առիթով, Հայաստանի դրողներու միութեան վարչութիւնը շնորհատուրեց զբարգիտը «Իբրեւ վաստակաւոր զբող, իբրեւ հայրենիքի եւ ժողովրդի շահերուն նուիրուած քաղաքացի» :

Կանին Սպանիոյ մէջ, 1189ին Ֆրանսայի, 1320ին Գերմանիոյ, 1494ին Անգլիոյ, 1564ին Մոսկուայի մէջ : Մ. Նահանգներու մէջ թուղթի դրժարանները հիմնուեցան Ժ. դարու սկիզբները՝ Ֆիլաթիոյ մէջ :

Սթեֆանէսը կ'էմիտի : Նիւթ՝ «Սա -
սունցի Դաւիթ» : Կը խօսի Ֆրոնթ.
Ֆէյտի : Կը մասնակցի Սամուէլ - Մու -
րատ եւ Դպրոցատէրի վարժարաններու ա -
շակերտներու միացեալ երգչախումբը
ղեկավարութեամբ Գ. Նանդէկեանի :

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

ԿԻՐԱԿԻ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 19ին
Ժամը 16ին :
ՏՈՆԱԾԱՌ

ԴՊՐՈՑԱՄԱՔԻ ՏԻԿՆԱՆՑ

ՎԱՐՃԱՐԱՆ

ՏՈՆԱԾԱՌԻ հանդէսը Դեկտեմբեր 19 -
ին, Կիրակի կէսօրէ ետք ժամը 4ին վար -
ժարանին մէջ :

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԳՈՅԱՄԱՐՏ

ՕՐԱՑՈՅՑ 1966

Հրատարակութիւն Հ. Յ. Գ. Նոր Սե -
րունդի Մարտի 11 շրջանի :

Ապստոլանքներու համար դիմել՝
O. DJARAYAN
2, Place de la Corderie
13 MARSEILLE (7e)

BAHADOURIAN

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ

ԲՈՒՐՈՎԻՆ ԱՐԳԻՄԱԿԱՆԱՅԱՇ
Երապայի Մեծագոյն
Արեւելեան Վաճառատներ
Բոլորովին նոր դրութեամբ

SELF SERVICE

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ խանութ մը չայ -
ցելովին սեզանին վրայ ամէնէն հա -
մով պատասխան կը պահուի՝ մեծին ու
պզտիկին համար : ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ
վաճառատան մէջ պետի գտնէք ա -
ւանդական ընդհանրութեամբ եւ անու -
շեղէններու ամէն տեսակը, անմրցի -
լի դիմերով :

ԾՐԱՐԻ ԱՌԱՔՈՒՄ
Ֆրանսայի ամէն կողմ եւ Արտա -
սահման՝ Պելժիա, Չուիցերիա,
Անգլիա :

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՆ

LYON

Super-Alimentation
20, Rue Villeroy MO 32.10

ԱՐԱԳ ՍՊԱՍՏՐԿՈՒԹԻՒՆ

Արմա, «պարիս», «հալանճի տող -
մա», յունական «թուրչի», «պի -
պի», տերեւ, թահին հելիա, «վա -
նիլ», շոքրա, «նուարթ», «լո -
գում», «սպարդ», պիստակ, Շիրակ
օղի (41 - 450), Իզմիրի չամիչ,
«սուճուք», սառնալարի սուրճ,
(ֆարպան եւ մոզա), համեմներ
մակիլայ, սալիլայ, ձիւրպապուր, ձիւր -
«լաւալայ» պուլկարական, ձիւր -
մակ պանիլ ոչխարի կաթով : Ամէն
կարգի պահածոներ, «քուրու»,
հարիս, սուսագ, քարամա, լա -
միս, եւ այլն :

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Ունի նաեւ առաջնակարգ մասվա -
ճառատուն մը, որուն ընտիր տե -
սակի միտերը գտնուում կուտան ա -
մէնէն նորաճաշակներուն : Այսպե -
սի, հորթի եւ կրան միս (քաղաւթ)
ֆերտա, բալիւս, ֆաուսիլի, տե -
րեւ եւ այլն :

Stabilisation des Prix

ՇԱՏ ՄԱՏՁԵԼԻ ԳԻՆԵՐ

Եթէ Ձեր ՈՒՋԱՄԸ ԱՐԵՒԵԼԵԱՆ Է՝
ՎԱՃԱՌԱՏՈՒՐԵԱՆ «ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ» Է՝

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲԱՅԱՌԻԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ

Կազմակերպուած Ֆ. Կապոյտ ինչի Շրջ. վարչութեան հա -
մանակերպում կողմէն իրենց կայանի տասնամեակի առիթով եւ անոր ի նպաստ :

Հրաւիրուած է Լոնտոնէն Հայ Երիտասարդաց Միութեան թատերախումբը, ներ -
կայացնելու Գ. Սնդուկեանցի



Հինգշաբթի 23 Դեկտեմբեր Ա.ՖՈՐՎԻԼԻ մէջ ժամը 20:30ին
Մէլոն - Արժոյրի քաղաքապետարանի սրահը, Բիւ ժամ - ժօրէս :

Կիրակի՝ 19 Դեկտեմբեր ՍԱՐՄԵԼԻ մէջ ժամը 15ին
Քաղաքապետարանի սրահը, Փլաս տիւ 11 Նովամպրը :

Երկուշաբթի՝ 20 Դեկտեմբեր ՓԱՐԻՋԻ մէջ ժամը 20:30ին
Սալ Ֆարալիք, 21 Բիւ Իվ Թուտիք, մեթրօ Ռեփուպլիք :

Երեքշաբթի՝ 21 Դեկտեմբեր ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՅԻ մէջ ժամը 20:30ին
Քաղաքապետարանի սրահը :

Կիրակի՝ 26 Դեկտեմբեր ԼԻՈՆԻ մէջ ժամը 15ին
Երկ թաղամասի քաղաքապետարանի սրահը, 58 Բիւ տը Սէգ :

Չորեքշաբթի՝ 29 Դեկտեմբեր ՄԱՐՄԵԼԻ մէջ ժամը 20:30ին
Թէաթր տիւ ժիմնայ :

Հինգշաբթի՝ 30 Դեկտեմբեր ՎԱԼՆՍԻ մէջ ժամը 20:30ին,
Թէաթր Միւնիսիփալ :

Տոմսեր կը վաճառեն Կապոյտ ինչի ղրասենեակը, հայ ղրաւճառատները եւ
Պաշտօնները :

Ապահովեցէք ձեր տեղերը :

ՏՈՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԱՌՔԻԻ
ՆՈՒԻՐԵՑԷՔ
CONTES ET LEGENDES
ARMENIENS
Ֆրանսերէնով պատրաստուած՝
Շ. Տէր - Մելիքեանի կողմէ
Գունաւոր կողք, մաքուր սպառք -
րութիւն, պատկերազարդ :
Գին՝ 5 ֆրանք
Առաքման ծախսերով 6:50
Ստանալու համար դիմել Հ. Սա -
մուէլեան ղրատունը, եւ կամ՝
Mme C. DER-MELKONIAN
11, Rue Gabriel Péri
CHATILLON s/BAGNEUX (Seine
C. C. P. PARIS 19668-59
Կարելի է նաեւ անձամբ դիմել Յա -
նաչի խմբագրութեան :

ԵՂԱՆԱԿԻ Ա. ՊԱՐԱՀԱՆԳԵԱՆ
ՎԻԵՆԻ ՄԷՋ
Կազմակերպուած Վիէնի Կապոյտ ինչի
մասնաճիւղին կողմէ, այսօր Շաբաթ
(Դեկտեմբեր 18), Սալ Տէ ֆէրի մէջ :

ՆՈՒՐՀԱՆ ՖՐԷՆԲԵԱՆ
Ձեր տրամադրութեան տակ է
բոլոր քաղաքապետարաններու համար
ՕՐԱՆԱԻ-ՇՈՒԳԵՆԱԻ-ԵՐԿԱՌՈՒՂԻ
Դիմել
Agence de Voyage
PARENTY & DESROUSSEAUX
7, Rue de Hanovre — PARIS (2e)
Métro :
4 Septembre ou Opéra
Téléph. : RIC. 79-86
RIC. 79-39
Բաց է ամէն օր,
ժամը 9-12 եւ 14-18
բացի շաբաթէն,

ՀՐԱՊԱՐԱԿ ԵԼԱԻ
ԱՐԱ ՊԱՐԹԵԻԵԱՆԻ
«ՀԱՅ ՍԷՆՏՈՆԻՔ ԵՐԱՇՇՏՈՒԹԵԱՆ» նոր երգապահար
Mc 20176, Vogue — Série Artistique
« OEUVRES SYMPHONIQUES » d'ARA BARTEVIAN
Par le célèbre orchestre
DES CONCERTS COLONNE
1. — Rhapsodie Caucasienne (Կովկասեան Համախումբ)
2. — Dans une Forêt en Novembre (Անտառի մէջ՝ Նոյեմբերին)
3. — Bergers à la Montagne (Հովիտները լեռան վրայ)
4. — Fête Villageoise (Գեղջկական տօն)
Ստանալու համար դիմել հեղինակին
Ա. ՊԱՐԹԵԻԵԱՆ — 14, Rue Petit, Paris (19e), Tél. BOT 99-22
15, Rue Jean Goujon, Paris (8e)
Գին՝ 30 ֆր.
Microsillon 33 tours, 30 cm. 45 վայրկեան
ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԳՈՒՆԱԻՐ ԿՈՂՔ
ՆԱԿԻՆ ԵՐԳԱՊԵՆԵՐԸ
Եկման պատարագ N° 20114 — Կամրասեան պատարագ 20150
Գանձարան Հայ-եկեղեցական երգերու N° 20169 եւ 20175
Ժողովրդական երաժշտութիւն 20103 (Հայ Կովկասեան երգեր) 20136 (Arménie)
20157 Reflets d'Arménie, 20162 (Arménie Immortelle),
20169 (Promenade en Arménie)
20172 (Soirée Arménienne) — 10016 երգեր՝ Իրիս Պիլիպիեանի
Գաւառներու առաքում contre remboursement խնամուած ծրարով

ՅԱՐԱՏԻ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN
RÉDACTION - ADMINISTRATION : 32, RUE DE TRÉVISE - PARIS (9^e)

Fondé en 1925 T.él. : PROvence 86-60
R. C. Seine 57 A 2731 C.C.P. Paris 15069-82

ԿԻՐԱԿԻ
19
ԴԵԿՏԵՄԲԵՐ
DIMANCHE
19 DECEMBRE
1965
LE NUMÉRO : 0,30 FR.

41րդ ՏԱՐԻ — ԹԻԻ 10489

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

41e ANNÉE — N° 10.489

ՕՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿԸ ՎՃՈՒԷ

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ՎԵՐՋԻՆ ԽՕՄԲԵՐԸ

Նախագահ տը Կոլ կրկին անգամ բա-
ցատրեց ժողովուրդին թէ ի՞նչ է տարբե-
րութիւնը իր վարչակարգին եւ Միթրանի
վարչակարգին միջեւ : Եթէ չընտրուի
պիտի դաշ կուսակցութեանց վարչակար-
գը, երկու ապագաներու մէջ պէտք է ժո-
ղովուրդը ընտրէ : Այդ ապագաներէն մէ-
կը արդէն, անցեալը կը ներկայացնէ,
ազգը կը դարձնէ քաղաքական խաղերու
զործիք, անկարողութեան վարչակարգին
է : Եւ այս անգամ անցեալէն ալ դէշ
կ'ըլլայ որովհետեւ հակառակ հասանքներ
այսօր զիրար կը գտնեն միայն տը Կոլը
հետաքննելու համար :

Տը Կոլի եղբայրութիւնն էր —
« Նոր հանրապետութիւնը իր նախա-
դասն ունի : Ես եմ : Ահա ասիկ, ինչպէս
որ եմ, չեմ ըսեր որ կատարեալ եմ եւ
տարբեր բեռը չունիմ : Չեմ յաւանիր
ըսել թէ ամէն բան գիտեմ, ամէն բան
կրնամ : Ոեւէ մէկէն աւելի լաւ գիտեմ
թէ պէտք է յաջորդներ ունենամ եւ ժո-
ղովուրդը պէտք է գտնուի ընտրել որ-
պէս ինչ նոր գիծին հետեւին : Պատմա-
թիւնը ինձի վիճակեց որ յաջողիմ կարգ
մը ձեռնարկներ : Փրանսացի ժողովուր-
դին հետ ներկայիս կ'աշխատենք ազատ-
վելու համար յառաջդիմութիւնը, ան-
կախութիւնը եւ խաղաղութիւնը : Չեղի
հետ, որ Փրանսացի ժողովուրդն էք,
կրնամ վազը, մեր աշխատանքներուն տղ
նոր դարձ մը, հակի աւելի մօտեցնել որ ի-
րաքանչիւրը իմ մասն ունենայ ազգային
բարգաւաճումէն, առաջնորդել Փրանսան,
ըստ իր կոչումին, կրկին գաւազան
մարդկային գործունէութեան մը արդի
աշխարհին մէջտեղ :

« Փրանսուհիներ, Փրանսացիներ, ու-
հաւատիկ ինչու պատրաստ եմ կրկին ըս-
տանձնելու բարձրագոյն պաշտօնը, այ-
սինքն մեծագոյն պարտականութիւնը :
Կեցցէ՛ Հանրապետութիւնը, կեցցէ՛ Փր-
անսան » :

Հանրապետականներու թեկնածու, Փր-
անսու Միթրան, իր կ'ըլլին յաջորդ
որ պիտի բողոքէր որ ջնջուած է իր
յայտարարութիւններէն մէկը :

Անդրապատանայով, տը Կոլի յայտարար-
ութեանց կուսակցութեանց դէմ, Մի-
թրան չեղանց : Դատարարուի կու-
սակցութիւնները, կը նշանակէ 1958ի
Ամսամանգրութեան դէմ երթալ, որ կը
նախատեսէ վիճարանութիւններ պատաս-
խանատու հասանքներու միջեւ եւ քաղա-
քացիներու ընտրութիւնը իրեն նախընտ-
րածներուն միջեւ : Ինչ կը վերաբերի ին-
ձի : Ոչ կուսակցութեան մը մարդն եմ,
որ ալ կուսակցութեանց խմբակցութեան
մը մարդը, պայքարի մարդն եմ : Ի՞նչպէս
բարեկէ Հանրապետութեան նախագահ մը :
Եթէ լաւ հասկցայ Չոր. տը Կոլը, ոչ ա-
րդէն պէտք է ընտրել, ոչ ձախել, ոչ կեղ-
բանել : Հանրապետութեան նախագահը,
քաղաքացիներու մասնաւոր ոչ մէկ զա-
նակարգին արտադրութիւնը պէտք է
ըլլայ : Այն ատեն, աւա՛ղ, կը փնտռեմ :
Հարկ է արգելօ՞ք դայն աննի արքայա-
կան Տան կամ Ռոզիլիտ տան մէջ, կամ
ձոբէ քլըպ :

Եւ Միթրան կ'եղբայրանէ. — « Այն
պահուի երբ ձեզ կը թողու, մէկ կողմ
նշելով աւելորդ բողոքատուութիւններ,
անցած պայքարները, պտուղով պատաս-
խանատու մարդու մը հաւատոյ հան-
դանակը, ճառագիւր Փրանսական Հան-
րապետութեան, այն ատեն նայինք մեզ
տեղեւ, հաւատանք մենք մեզի, հաւա-
տանք մեր երկրին ապագային, հաւա-
տանք մեր սահմանած քաղաքականու-

թեան : Եւ այս իրիկուն պիտի տեսնենք,
այնքան ցաւերէ կտր եւ այնքան աշխա-
տանքի առջեւ, որ ձամբան դեռ այնքան
երկար է, բայց նաեւ այնքան զեղեցիկ է
նոյն քայլով յառաջանալ : Որո՞հէնք, Ֆը-
րանսուհիներ եւ Փրանսացիներ, թէ այլ-
եւս կարելի է, եթէ կը հաւատանք, պո-
տալ՝ կեցցէ՛ Հանրապետութիւնը եւ կեց-
ցէ՛ Փրանսան » :

ՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ՎԻՃԵՆՆԱԿԻ ՆԱԽԱԳԱՀՆԸ՝
Յօ Շի Մինս յայտարարեց թէ պատրաստ
է բանակցութիւններ վարելու Միացեալ
Նահանգներուն հետ, խաղաղութիւնը վե-
րահաստատելու համար ՎիՃեյնամի մէջ :
Յօ Շի Մինս կ'ըսէ թէ կ'երթայ որեւէ
տեղ, ոեւէ մէկուն հանդիպելու համար :
Այս հրաւերը եղած է Ամերիկայի ՄԱԿի
ներկայ նախագահ Փանֆանի խոսքով —
կով : Նոյն խոսքով կով, ամերիկեան Ար-
տաքին նախարարութիւնը պատասխանած
է որ Միացեալ Նահանգները պատրաստ
են առանց նախապայմանի բանակցու-
թեանց, սակայն եթէ կ'ուրեշու հետ —
զու՞մ մը կամ դադրում մը կարգադրուի
բանակցութիւններէն առաջ, բացայայտ
է որ ատիկա պէտք է ըլլայ արդար եւ
փոխադարձ հիման վրայ : Ռուսիայի
համար Յօ Շի Մինսի յայտարարութիւնը
չատ համոզիչ չէ ինչ կը վերաբերի բա-
նակցութեանց անկեղծօրէն խաղաղութիւն
վերահաստատելու համար :

ԻԻՒՍՆԱՆԻ մէջ կառավարական տաղ-
նապը անխուսափելի կը նկատուի : Երեք
նախարարներ արդէն իրենց հրաժարակա-
նը ներկայացուցած են :

ԾՆՈՒՆԴԻ տօներուն առթիւ, Պերլինի
Ամօթի Պատը պիտի բացուի մինչեւ
Յունուար 2 :

ՄՈՍԿՈՒՍԻ մէջ մամուլի «Ի.Ս»
գործակալութիւնը առաջին անգամ ըլլա-
լով, արձագանք կը հանդիսանայ Պոսե-
տիկն — Բրեժնեւ խօսակցութեանց : Ալ-
մերիկայի նախագահը հրաժարած է Պարու-
երթից եւ նախատեսուած թուականէն
աւելի առաջ, Ալժէ կը վերադառնայ :

ՄԱԿ-ի քաղաքական յանձնախումբը A7
ձայնով (վեց դէմ եւ 51 ձեռնպահու-
թիւն) բանաձեւ մը քուէարկեց որ կը
հռչակէ. — « Կիպրոսի Հանրապետու-
թիւնը, իրրեւ հաւասար իրաւունքներով
անդամ ՄԱԿի, իրաւունք ունի վայելելու,
համաձայն Ուխտին, բացարձակ զերիշ-
խանութիւն մը եւ ամբողջական անկա-
խութիւն մը, առանց օտար միջամտու-
թեանց » : Բանաձեւը ներկայացուցած է-
ին 32 երկիրներ, մեծ մասամբ արիււ-
ասիայի : Թուրքիա դէմ քուէարկեց :

ԹԻԹՕ ՇԻԹԱ, ծանօթ թեւորը մեռաւ
առջի օր, Նիւ Եորք : Բապիտի Հանրա-
պետութեան նախագահը Մատակաթ ցա-
ւակցական հեռագրով մը կը նշէ թէ «Ի-
տալիա, Թիթօ Շիփայի մահով, կորսն-
ցուց մեծագոյն երկրէն մէկը » : Ծը-
նած էր 1889ին եւ ասպարէզը սկսած
Թրապիստով :

ՊԻՐԻԹ ՊԱՐՏՕ արտակարգ ընդունեւ-
րութեան արժանացած է Նիւ Եորք, ուր
պայքած էր ներկայացնելու իր վերջին
Ֆիլմը՝ Վիվա՛ Մառիա : Պատասխանելով
լրագրողի մը որ կ'ուզէր զիտնալ թէ հա-
մաձայն է՞ «սեռին համաշխարհային
խորհրդանիշն ըլլալու», զերասանուհին
պատասխանած է «կ'ուզեմ եւ ըլլալ » :

ՆՐՈՏՈՍՄ ՍԻՍՆՈՒԻ Իշխանը յայտա-
բարած է Փնոմ Փեն հասած մէկ ձառին
ընթացքին թէ մերժած էր ժողովրդական
Չինաստանի առաջարկը՝ դրամական օ-
ժանդակութիւն մը ընելու Քամպու՛ն :

ԻՎԻԻԻ մէջ գողութիւն մը տեղի ունե-
ցած է Ուրբաթ առաւօտ, 167 քիլօ ոսկի
զողցուած է :

ԹՐՔԱՊԱՏՈՒՄ

«ԹՈՒՐԿ ԳԼՈՒԽԸ ՊԵՏԻ Է ԻՒՐԱՅՆԷ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԱՂԱՔԱՎՐՈՒԹԻՒՆԸ»

Պոլսոյ թրքական թերթերը կը գրեն թէ
վարչապետ Սիւլէյման Տէմիրէլ թուր-
քիոյ թէքնիք հետադարձութեանց ընկե-
րակցութեան խորհուրդին ու պետական
ջուրի գործերու շրջանային տնօրէններու
հաւաքոյթին ընթացքին երկու ուղերձ
արտասանեց եւ ըսաւ թէ թուրքիա պա-
հետի էրկար. ուժի տեսակէտով տաղ-
նապ կը կրէ :
— « Այսօր թրքիկա մթութեան մէջ է :
Այսօր Սեւ Ծովեան շրջանը, մեծ Մէնտե-
րէսի աւազանը մթութեան մէջ է : Չեք
հորիզոնները շատ լայն բռնեցէք որպէսզի
տարինք իտեւ նայելով չափոտաք որ
այս թախտոտ երկրին համար ինչու այս-
քան թիչ բան բրած էք : Եւ զիտեք որ
մեր պարտականութիւնն է ոչ միայն ներ-
կայ ազգիւնները բանեցնել, այլեւ նոր
ազգիւններ գտնել, այսինքն նոր Բէպան-
ներ կառուցանել :

« Նկատելով որ անջրպետի դարաշրջա-
նը թեւակոխած երկիրներուն տարբեր
ձևով պիտի չկարենանք հասնել, մեր
երկրին վերականգնումի թափը շատ ու-
ւելցնելու ենք : Մեր ժողովուրդին տա-
նապանքներուն համար ոչ թէ վաղան-
ցուկ, այլ իրական միջոցներ գտնելու
ենք : Արեւիկա քաղաքակրթութեան պայ-
քար մըն է : Թուրք զուլեթը պէտք է իւ-
րացնէ արեւմտեան քաղաքակրթութիւնը
(ԽՄԲ. — Եւրոպայի Եւրոպայի) : Անպայման
պիտի հասնինք նպատակին : Չեք կրնար
արտօնել որ թուրքիա աղքատ երկիր մը
մնայ : Ոչ մէկ սիրտ կրնայ յօժարել ա-
տուր : Թուրքիոյ համար ցարգ եղած գոր-
ծերը թիչ են : Հարաւ արեւելեան Անա-
տոլու, կեղը. Անատոլու ու Սեւ Ծովեան
շրջանները մասնաւորաբար շահագրգռու-
թեան կը կարօտին : Տիրիսի ու Եփրատի
միջեւ տասը միլիոն հող ու հինգ հարիւր
հազար հողի կը գտնուի : Եփրատ գետը
ամէն տարի միլիոնաւոր թոն ջուր կ'առ-
նէ կը տանի » :

ԱՅԱ — ՍՈՓԻԱՅԷՆ ԷԶԱՆ ԹԷ ԴՕԴԱՆԶ

Այս — Սոֆիան մղկիթի վերածելու
մասին ուղղուած հարցապնդումի մը
պատասխանելով պետական նախարար
Սէզկին յայտարարեց այս խնդիրը կը
քննուի կառավարութեան կողմէ :
Հարցապնդումի հեղինակ Սամի Պինի-
ճիօլու (Միլլէթիան) յայտնեց թէ ամ-
բողջ ազգը կը բազմայ Այս Սոֆիան վե-
րածել մղկիթի : Ասոր վրայ Հալքեան
չարքեւն ազգապետին. «Այդպիսի բան
չկայ » : Պինիճիօլու պատասխանեց «Ըստ
ձեզի չկայ, բայց ազգը կ'ուզէ » : Այս
խօսքերը Ատալէթական երեսփոխանն
ըսել կողմէ ծափահարուեցան :

Պինիճիօլու ապա չեղանց թէ ազգ մը
բարոյական արժէքներով կ'ապրէ, հետե-
ւաբար թուրք ազգն ալ պէտք է բարոյա-
կան արժէքներու կարեւորութիւնը ընծա-
յէ, եւ շարունակեց. — «Բրեստոնեայ աշ-
խարհի համակրելի երեւալ ուղեով իս-
րամական աշխարհը կորսնցուցինք : Կիպ-
րական կիճիոն մէջ ո՞ր քրիստոնեայ
պետութիւնը մեզի զօրապիղ եղաւ : Մեր
հողերուն վրայ սմեղուկ գործունէու-
թիւն ցոյց տուող քաղաքական օճախի
փոխակերպուած պատրիարքարան մը
կայ : Եթէ Այս — Սոֆիան արտաքին նը-
կատումներով չենք կրնար վերաբանալ,
ասիկա թուրք ազգին գերիշխանութեան
վերաւորութեւն է : Աթաթիւրք այն օրուան
պայմաններուն ներքեւ ուղած էր թանգա-
րանի վերածել : Եթէ Աթաթիւրք ողջ ըլ-
լար, շատոնց կը լսէր էզանի ձայնըը :
Ատենը եկած է ի դերեւ հանել յոյսերը
անոնց որ կ'ուզեն զանապիղ զօրանջներ
լսել Այս Սոֆիայէն » :

Ատալէթի խորհրդարանական խմբակին
երէկուան նիստին Կարսի երեսփոխան
ձէյալ Նաւրի Քոչ խօսելով հարց տուաւ.

«Դեռ ի՞նչ բանի կը սպասենք Այս Սո-
ֆիան պաշտամունքի առջեւ բանալու հա-
մար » :

Քոչ պահանջեց որ կառավարութիւնը
ամենակարճ ատենէն պատրաստէ այն ու-
րոշմագիրը, որ պատմական Այս Սո-
ֆիան վերաբանայ պաշտամունքի առջեւ :
Քոչ ընդգծելով որ ազգայնական երիտա-
սարգութիւնը եւ թուրք ժողովուրդը կը
պահանջեն իրրեւ մղկիթ գործածել Այս
Սոֆիան, ըսաւ. «Ատալէթական կառա-
վարութեան պարտքը պիտի ըլլայ այս ու-
րոշումը որ պիտի արուի » :

Ատալէթական երեսփոխանները ջերմօ-
րէն ծափահարեցին Քոչը :

Մակի ընդհ. ժողովին քաղաք. կո-
միտէն այս վերջին օրերուն զբաղեցաւ
Կիպրոսի թնձուկով :

Սորհ. պատուիրակի Ֆէտէլէնքօ առա-
ջարկեց թողու որ «Կիպրական խնդիրը
Կիպրացիներուն կողմէ լուծուի, պայմա-
նաւ որ կղզիին երկու հաւաքականու-
թեանց բոլոր իրաւունքները պաշտպան
ուին ու կղզիին պահպանուի իրրեւ կա-
տարելապէս գերիշխան հանրապետութիւն
մը » :

Սորհ. պատուիրակը, ընդգծելով որ
Կիպրական խնդիրը կարելի է լուծել ա-
ռանց զուրկէն միջամտելու հաշտարար
կերպով, իրաւունքին եւ պատուութեան
սկզբունքները յարգելով, ըսաւ. —

« Կիպրոսի ներքին գործերը միայն
թուրք եւ յոյն հաւաքականութիւնները
կրնան լուծել : ՄԱԿ պէտք է երաշխաւոր-
ուի զոյստեւուած գերիշխան հանրապե-
տութեան, որ պիտի պաշտպանուին եր-
կու հաւաքականութեան իրաւունքները » :

Ֆէտէլէնքօ լուծման համար հիմնական
պայման նկատեց յարգել Ապահովութեան
Սորհուրդին վերջին որոշումը, որ կող-
մեր կը հրաւիրէր կայքութիւնը վատթա-
րացնելու կոչուած վերաբերումներէ խու-
սափել » :

Երբորը ճառախօսը եղաւ Իրանի պատ-
ուիրակը որ, չեղտելով թէ Կիպրոսի հա-
մար իրապաշտ ու երկու հաւաքականու-
թեանց շահերը նկատի առնող բանաձեւի
մը միայն կրնայ քուէ տալ, յայտնեց թէ
Աթաթիւրքանի, Բաքըի, Սուտական Արա-
բիոյ ու Լիպիոյ կողմէ պատրաստուած
բանաձեւին զօրապիղ պիտի ըլլայ : Այդ
բանաձեւը կը նախատեսէ երաշխաւորել
Կիպրոսի անկախութիւնը, գերիշխանու-
թիւնը եւ հողային ամբողջութիւնը :

Երկրպետի պատուիրակն ալ Մակա-
րիտի թէքը պաշտպանելով պահանջեց
Կիպրոսի կատարեալ անկախութիւն տալ,
խորին ջնջել օտար խաբիսները՝ պնդե-
լով որ ներկայ համաձայնութիւնները
զաղթարարութեան շրջանի մասնաւորութի-
ւնը կը կրեն » :

Փրանսական պատուիրակն ալ թրքական
թէքին ի նպատակ արտադրուեցաւ, պա-
հանջելով ամէն բանէ առաջ հասկացո-
ղութեան եղբ մը գտնել Յունաստանի եւ
Թուրքիոյ միջեւ :

Ամերիկեան պատուիրակը կողմերը հը-
րուիրեց հրաժարել տալու լուծելու
համար ուժ գործածելու սպառնալիքէն,
պահանջեց բանակցութեամբ լուծել իրն-
զիրը, չեղտելով որ ՄԱԿ ընդհ. ժողովը
այս մասին կանխակալ որոշումներ չէ
կրնար տալ եւ կողմ բռնել :

ԽՈՐՀ. ՀՐԹԻՌՆԵՐ ԿԻՊՐՈՍԻ ՀԱՄԱՐ

Պոլսոյ թրքական թերթերը կը գրեն թէ
Կիպրոսի կառավարութիւնը որոշած է
Կիպրոս փոխարքել այն հակառակին հը-
թիւնները, որոնք Սորհ. Ռուսիոյ կողմէ
արուած են եւ 1964 Դեկտեմբերին ի վեր
Աղեքսանդրիոյ մէջ կը մնան : Ըստ յու-
նական ազգիւններու երեսփ. ժողովի
նախագահ Քլերիտիս Միացեալ Արաբ
Հանրապետութիւն այցելելով անհրաժեշտ
թիւով հրթիռներու փոխադրութեան հա-
մար տեսակցած է երկրպետի վարիչնե-
րուն հետ :

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԻՐ ԴԻՄԱԳԻԾԸ

ԺԹ.

Հայոց դարձին (*) պատմութեան մէջ երկար վէճերու նիւթ է դարձած թուականի հարցը, բայց գրեթէ երբեք չէ ուսումնասիրուած դարձին քաղաքական պատճառաբանութիւնը: Այսպիսով զորքի բերած վիպային հէնքը այնքան շարունակաբարձ է միտքերը, որ վերաբնութեան կամ հետազոտութեան փորձ չէ կատարուած այլևս:

Եւ սակայն Հայոց դարձին (Գրիգոր) եւ հանդանակին (Արիստակէս) պատմութեան մէջ յոյժ կարեւոր է քաղաքական պատճառաբանութիւնը (Տրդատ):

296 թուականին* Գրիգորի անունով Անտիոքի մէջ, ուր յարձակողական մը կը պատրաստէ Հայաստանի վերայ, որ ենթարկուած է պարսկական զէնքերու տիրապետութեան: Հռոմէական կանխապէս կը յանձնէ Գաղերիոսի, որ կալիքի կուսակցութեան մօտ (այժմ Բաքա) կ'անցնէ Եփրատը եւ կը նստուի պարսկական հեծելազորքին վրայ: Հռոմէական քաղաքական մէջ կը գտնուի նաեւ Տրդատ: Չարաչար կը պարտուի Գաղերիոս եւ մեծ կորուստով կը վերադառնայ ետ: Վերաւերելու է Տրդատ, բայց հակառակ վերաբերում «տակալ գերիվարն, եւ դասպագէտն նորին եւ գիւր գտնադէնն կայեալ ի թիկունսն, ի վերայ մկանանցն, ի լիւզ անցանքը ընդ դեռն Եփրատ» (Ագաթ. ԺԹ.):

Գաղերիոս կը ներկայանայ Գրիգորին արհամարհ, որ սատարի գայրացած՝ կը հրամայէ հետիոտն քալել առջեւէն, որքին առջեւէն:

Եւ սակայն պէտք էր գրաւել Հայաստանը, ուրիշ խօսքով՝ հեռացնել պարսկական հեծելազորքը: Հայ առաջնորդներուն թեւ կ'երկարէին Հռոմէական ցիւղերուն: Երկու հայ իշխաններ, Արշաէր եւ Անդրովկ. կը թելադրեն յարձակողական կատարել ոչ թէ հարաւային տարածքներն ի վեր՝ մտնելու համար Հայաստան, այլ հիւսիսային լեռնոտ շրջաններէն, ուր չէր կրնար խաղաղ պարսկական հեծելազորքը: Հայ առաջնորդներուն հետեւելով՝ Գաղերիոս, կազմաւորուած զորքով պէս ծառայուած, կ'ուսումնասիրէ ճամբան: Յետոյ այդ ճամբով կը յարձակի Պարսկաստանը վրայ, լուծելով իր պարտութեան վրէժը: Մանրը, շատ ծանր էր Պարսկաստանը կրած պարտութիւնը:

Այս յաղթանակէն ետք հաշտութեան դաշինք կը կնքուի Հռոմէականոց եւ Պարսից միջեւ: Գրիգորի անունով թաղաւոր կը նշանակէ Տրդատը, որ իր քաղաքործութիւններով (ճոխ ասանդութիւններ

ներ կուտան մատենագիրները) դարձած էր կեսարին սիրելի:

Տրդատ կը մտնէ Հայաստան, թաղաւոր Հայոց:

Սիրաշահելու համար քրմական դասը, որ երկպետութիւն էր ստեղծած, երկրին երկրորդ տէրը դարձած, նախ կ'օգտուէր զործէ քրիստոնեաները այն ձևով, ինչպէս էր հռոմէական սովորութիւնը՝ գերիները նետել դաղաններու առջեւ, կըրկէսներու մէջ: Այս անգամ գերիները քրիստոնեաներն էին, դաղանները՝ քրմականներուն խիզճ:

Արդարեւ, քրիստոնէութիւնը յամբարձն թափանցելու էր Հայաստանի մէջ ասորական քարոզչութիւններով, «սկսել էր տարածուել հարաւային Հայաստանում եւ Տարսուսում, հաւանորէն Գ. դարի սկիզբներում կամ թերեւս արդէն Բ. դարի վերջերում» (Մամաւր, Բ. 124):

Ամէնէն վաղաք հայրաձայններէն ետք, որոնց ենթարկուեցան քրիստոնեաները առաջին առթիւ, երբ ամբողջով էր իր դիրքը եւ այլևս երկրին ռազմադիտական կէտերը իր ձեռքը, Տրդատ ձեռնարկեց այն ծրագրին, որու համաձայն՝ բաւական չէր դրաւել երկիր մը քաղաքական տեսակէտով միայն, այլ եւ հարկ էր — եւ Հռոմ այդ էր որ կը պահանջէր — գրաւել կրօնական խորութեամբ: Այսինքն, Հայաստանը ազատագրել Պարսկաստանի կրօնական թափանցումէն կամ ճնշումէն: Երկրի մը կատարեալ տիրապետութեան համար մեծագոյն զէնքն էր կրօնը, — ասոր համար էր որ թաղաւորները աստուած կը հռչակուէին (Յիսուս եւս, այդ պատճառով թեւ, Քրիստոս, այլ խօսքով թաղաւոր անուանուեցաւ), կեսարները՝ քրմայեւտ, — յետագային ասկէ՝ սեգա-քրօփափիւմը: Տրդատ, իրական տիրապետութիւն մը հաստատելու համար երկրին մէջ, ծրագրեց տապալել հին կրօնքին ծառը, որու արմատները դուրսն էին, տալ նոր կրօնք մը՝ պետական գտնուող պատկերներու տեսակէտով դեռ անմիջ, — ուստի քանդեց մեհեանները, հալածեց քրմերը, մինչեւ անգամ ներքին պատերազմի մը ձեւը տալով իր արեւմտեան պայքարին՝ ընդդէմ Վասէլիանի համարձակութեան, այս անգամ քրիստոնեաներուն տալով զէնքը:

Յաղթանակը ապահովեց անշուշտ, բայց ընդդիմութիւնը տեւեց երկար տարիներով: Երբեք կաթողիկոսներու սպանութեամբ, (Տրդատի մահն ալ ունիւք կը վերադրեն այդ ընդդիմութեան, բայց վերապահութեամբ): Հայաստան այս ընթացքով եւ արեւմտեան մասերով կը հետանար պարսկական ազդեցութենէն եւ կը կապուէր Հռոմի, կը դառնար «դաստակերտ կեսարներու» (այս պարագան շատ է ուսումնասիրուած, բայց դեռ կարօտ նորագոյն ուսումնասիրութեան):

Այս պայմաններուն տակ, երբ կը դուրսուէր Նիկիոյ ժողովը, զարմանք պիտի չպատճառէր, եթէ հայ եպիսկոպոս

մը երթար Նիկիա, մասնակցելու համար «տիեզերական ժողովին»:

Բայց տեսէք թէ ինչ էր պատահած: Մաքսիմիոս Դալա, արեւելքի կայսրը, պատերազմ յայտարարած էր Հայոց դէմ, պատերազմ մը, որ զարմանք ուցու պատճառած է Եւսեբիոս Կեսարացիի, երբ իրբեւ կ'առաջարկէր կըրէ «Յարեաւ եւ պատերազմ ի բռնաւորէն (Մաքսիմիոս Դալա) ընդդէմ՝ Հայոց, որք ի սկզբանէ անտի բարեկամք եւ մարտակիցք էին Հռոմոց» (Պատմ. Եկեղ. Թ. 8), պահանջելով որ Հայաստան հրաժարի քրիստոնէութենէն եւ, այսպէս, թշնամացնելով Հայերը:

Արեւմտեան կողմէն տեղի ունեցան հռոմէական եւ հայկական բանակներուն միջեւ, ու թէեւ այս զարկելի կայսրը պարտուեցաւ, յետագային եւս 313 թ. — Լալիանին անձնասպանութեամբ, Տարսուսի մէջ, վերջ տուաւ իր կեանքին, բայց եւ մեռած էր Տրդատի պաշտպանը, Գրիգորի անունով: Կ'ուզեմ ըսել թէ թշնամութիւն ստեղծուած էր ընդմէջ Հայոց եւ «Հռոմոց»:

Ճիշդ է թէ Մաքսիմիոս Դալա կայսրը մահէն ետք Արեւելքի կայսր դարձած էր Լիկինիանոս, որ բարեկամն էր Տրդատի, միանաբար կուտած էին Պարսկաստանը դէմ՝ Եփրատի վրայ, երբ վերաւորուած, ձիւնը ասպաղէնն ալ շարկած, խիզճ կենդանին կողքին առած, լողալով անցաւ դեռն: Բայց այն ատեն քրիստոնեայ չէր Տրդատ: Ոչ մէկ վկայութիւն ունինք թէ Լիկինիանոս եւ Տրդատ կը շարունակէին իրենց բարեկամութիւնը, երբ առաջինը դեռ կը շարունակէր քրիստոնեաներու հալածանքը՝ կայսր գտնուելու ետք, իսկ երկրորդը՝ կը պաշտպանէր քրիստոնեաները՝ թաղաւոր դառնալէ ետք: Գեոռապիոս — Լիկինիանոս իր յաղթական պատերազմէն ետք, երբ իջաւ մինչեւ Կիլիկիա եւ բնաջնջեց Մաքսիմիոս Դալայի ամբողջ զինապատանը, յանկարծ իր մէջ անցաւ անպատկերի ցանկութիւն մը, անխնայութեամբ փառասիրութիւն մը, — դառնալ «տիեզերակալ», հռոմէական բացատրութեամբ:

Ու վերադարձաւ Բիթանիա, դնաց մինչեւ Միլան, ուր նոյն տիեզերակալութիւնը կ'որոճար Կոստանդիանոս՝ շարաւար պարտութեան մը մասնակցէ ետք Մաքսիմիոսի կայսրը, Միլիտիոսի կամ մուրջին տակ խեղդուած, (Կոստանդիանոս ջրամոյն մեռած կայսրը դեռնէ հանելով զլիստամ ու զուրիս զրկած էր Հռոմ):

Երկու ախոյեանները, Կոստանդիանոս եւ Լիկինիանոս, երկուքն ալ իրենց մըրցակից կայսրերուն զուրիս կերած, այժմ կ'որոճային այն մասին թէ ո՞վ պիտի ուտէ միւսին զուրիս: Եւ, կարծես զիտար կռուելու համար իրարու մօտ եկած, բարեկամութիւն կը կնքեն, թողով ժամանակը իրբեւ իրաւարար: Կոստանդիանոս իր քոյրը կնուցեցին կուտայ Լիկինիանոսի, եւ այս հարսանեկան միջոցով

մէջ՝ երկու կայսրերը, միանաբար, նոր դաշնակցներ ձարելու նպատակով կարծես՝ բարեկամութիւն կը յայտարարեն քրիստոնեաներուն ու կը ստորագրեն Միլանի հռչակաւոր հրովարտակը:

Այնուհետեւ Լիկինիանոս կը վերադառնայ Արեւելք: Չզուշտոր դաւանակեր: Իսկ երբ Կոստանդիանոս կը քալէ Թեսալոնիկէի վրայ, իր թէ պաշտպանը համար կայսրութեան Դանուր երկու ախոյեաններուն միջեւ: Լիկինիանոս կը պարտուի, կը նահանջէ, կ'անցնի Վասիլոսը, զարձեւալ կը կուտի ասիական հրեաներուն բարձունքներուն վրայ, — Հայաստանէն ոչ շատ հեռու:

Ինչ կ'ընէր Տրդատ: Եթէ բարեկամ էր Լիկինիանոսի, շարժման մէջ կը դնէր հայկական բանակը, այն ուժը որ պարտութեան մատնած էր Մաքսիմիոս Դալան:

Լուս մնաց Տրդատ: 323 թուականին աչնան՝ ինչպէս նաեւ Լիկինիանոս: Երկու տարի ետքը՝ Նիկիոյ ժողովը:

Որեւէ վկայութիւն չունինք զարձեւալ թէ Հայաստան մտած էր հռոմէական կայսրութեան ծիրին մէջ: Ճիշդ է, մեր մատենագիրները Հռոմ կը տանին Տրդատը՝ դաշինք կնքելու համար կեսարին հետ, բայց կը շփոթեն Տրդատ Առաջինը Տրդատ Երրորդին հետ:

Ան՝ թէ ինչու կը կասկածիմ որ Տրդատի Հայաստանը ներկայացուցիչ զըրկած ըլլայ Նիկիոյ ժողովին:

Գտնուելէ քալել մեր պատմիչներուն հակասութեանց արտին մէջ: Մանասակ Ագաթանգեղոսի վկայութեանց հետքերուն վրայ, դատակ դարձած կարծես: Վերջերս յունարէն արձանագրութիւն մը գտնուեցաւ Գառնիի մէջ: 1946ին Յ. Մանասեան հրատարակեց ուսումնասիրութիւն մը այդ մասին, Գառնիի յուրմարտի արձանագրութիւնը եւ Գառնիի հետքերը արձանագրութիւնը: Մանասեան եւ այլ բանասէրներ կապ մը կը տեսնեն այս արձանագրութեան եւ Պորթիոսի հետեւեալ վերակարգութեան միջեւ, «Չայտու ժամանակաւ վերադարձեր էր Նիկիայէն» կատարէ Տրդատ զինուած ամբողջին Գառնու...», յունարէն արձանագրութեամբ մը (Բ. 90):

Ոմանք այս շինութիւնը կը համարեն հեթանոսական տաճար կամ մեհեան:

Գրիգոր Լուսաւորիչ, Արիստակէս հանդանակեր եւ Տրդատ... հիմնադիր նոր մեհեանի մը:

Ով որ կրնայ՝ թող լուծէ:

Անցնինք հանդանակին քննութեան:

Շ. ՆԱՐԳՈՒՆԻ

(*) ԺԳ. յօդուածով (տես Յառաջ, 13 Հոկտեմբեր) տուած էի «դարձ» բառի լիգուարաբանակաւ եւ աստուածաբանակաւ բացատրութիւնը: Ձեռքս նոր անցաւ 0 —

ՌՈՒՍ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐԸ ՊԻՏԻ ԳՐԱԿԵՒՆ ԱՆԱՏՈՂՈՒՆ

(Ինքնօր ԿԸ ԳՐԵՆ)

ԹՐԲԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ

Հակառակ այս բողոքագրին, Հայերը շարունակեցին սակայն իրենց յարձակումները: 1920 Սեպտեմբեր 24ին ալ Կոտայքի եւ Պարտէզի շրջաններուն մէջ հայկական զորաւորները կանոնաւոր յարձակողականներ ի գործ դրած ըլլալով, պատերազմական վիճակ ստեղծուած եղաւ թուրք եւ հայ կառավարութիւններու միջեւ:

28 Սեպտեմբերին, թրքական զորքը հակառակորդական անցաւ եւ Սեպտեմբեր 29ին զրաւեց Սարղղամիւրը, Սեպտեմբեր 30ին ալ Մարզանակ եւ Լալապառի շրջանները եւ առաւ Հայերու ձեռքէն: Կարգ մը նկատումներով, թրքական

բանակը Սեպտեմբեր 30էն մինչեւ 22 Հոկտեմբեր մնաց իր զրաւած այս զիջքներուն վրայ, իսկ 30 Հոկտեմբերին ալ կարսը զրաւելէ ետք սկսաւ յառաջանալ Արփաչայի ուղղութեամբ, տեղ-տեղ յայտնուող զինազորական փորձերը չհզօքացնելով:

ՍՍՏԻ ՊՈՐԱՔ — «ՀԱՊԷՐ»

Հայերը, Նոյեմբեր վեցին հաշտութիւն առաջարկեցին եւ երկու Դեկտեմբերին ստորագրուեցաւ Կիւմրիի (Աղքաւան-դրափոլ) դաշնագիրը: Այս դաշնագրին հիմամբ ալ, Կարսը, որ 1877ին Օսման — եւ ուս պատերազմով զրաւուած էր թշնամիին կողմէ, վերստացուեցաւ եւ կըրուեցաւ հայրենական հողերուն:

ԵՐՐՈՐԳ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԸ
ԵՒ ԹՈՒՐԻՒՄ

ՆՊԱՏԱԿՐ
ԹՈՒՐԻՒՄՆ ՀԱՄԱՅՆԱՎԱՐԱՅՆԵՒ

Ինչպէս յարկելի ձէպէսոյ ալ կը դրէ իր յիշատակներուն մէջ, երբ թուրքերը աւանդաբար կը թափէին ցարբուս օրով ցանուած թուրքերու թշնամութեան սերմերը փճացնելու համար, Ռուսերը, ընդհակառակն, թափ կուտային իրենց

համապարական աշխարհակալական քաղաքականութեան եւ այսպէսով, տեսակ մը շարունակողը կը հանդիսանային ցարբուրու աշխարհակալական զաղափարաբանութեան:

Բոլշեւիկները, մինչ մէկ կողմէ կը ջանային Արեւելեան նահանգներէն հողաւորներ փրցնել Հայաստանի համար, միւս կողմէ ալ ծրագրեալ աշխատանք կը տանէին Անատոլիոն համայնալարացնելու հեռանկարէն թելադրուած:

Նոյնիսկ, Երրորդ Միջազգայնականին մէջ, զարտնի որոշում առնուած էր Ուկրաինայի որին կողմ, թուրքերն ալ համայնալարացնելու եւ զայն Պորտ. Համազանակցութեան մասնակից դարձնելու համար: (Ալի Գուսաւ ձեպէսոյ, «Մոսկովեան Յուշեր», էջ 97):

1920 Սեպտեմբեր մէկին, Երրորդ Միջազգայնականի Երկրորդ Համագումարը տեղի ունեցած էր Պաքուի մէջ, որ այս պայմանի որոշումը բանաձեւուած էր հետեւեալ ձևով. — «Բարեկամ երեւալ յեղաշրջական թուրքիոյ եւ օսլանական ու օսլանկար թուրքի անոր, տպաւորելու համար իւրմասկան աշխարհը եւ օսլանկար թուրքերուն Մասնատակաւ աշխարհին վրայ ունեցած ազդեցութենէն, զայն միջոց զործածել Եւրոպայիներուն դէմ յեղափոխութիւններ կազմակերպելու, եւ ներկայացող այս առիթներէն ալ օգտուելով, անի-

րաւուածներուն եւ ճնշուածներուն տէրն ու պաշտպան ներկայանալ, Մասնատակաւ երկիրներուն վրայ եւս ազդելու եւ անոնցմէ ներս թափանցելու համար»:

ԱՆԳԱՐԱՅԻ ԳԻՒՐԱԶԳԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Այդ միջոցին, «Թուրք Ընկերակալական Կուսակցութեան» մէջ (Թիւրքիյէ ԷՅՔԻ — Բախիյուն Ֆըրքաւ) որուն կեդրոնը կը գտնուէր Արեւմուտքի մէջ, անդամներ ունէր նաեւ թուրքեր, ընդ որս օրուան ծանօթ ղէմքերէն էնպէր Փաշան:

Երրորդ Միջազգայնական Պաքուի մէջ զուսմարուած Երկրորդ Համագումարին իր մասնակցութիւնը կը բերէր նաեւ էնպէր Փաշան:

Թուրքերի Ազգային Մեծ Ժողովը, իր կողմէն, Մոսկուայի թրքական պատուիրակութեան անդամներէն Տըքի. Իպարսիմ Թալի — Էօնկէօրէնի պաշտօն յանձնեց նոյնպէս ներկայ գտնուիլ այս Համագումարին, ղէտի հանգամանքով: Տրպիկի Հաֆը Մէհմէտ եւ երկրաչափ Ալիպ Պէյ, իսկ Էրզրում նահանգի անուանով ալ համագրակու Արիֆ Պէյ, բոլորն ալ ղէտի հանգամանքով:

(27 Շար.)

ՈՒ ԵՍ ԿԵՐԹԱՄ

Մ Ո Ւ Շ

17 Յունիս 1964 Ուրբաթ

Կտուրը երբեմն կը յառաջանայ անար - ղել, երբեմն կ'ոտտասէ : Ես յիշատակ - ներուս հետ զլուս զլուս, զանոնք մէջ - դուրսեան մէջ կը տեղաւորեմ , որպէսզի չկորսնցնեմ ... :

Գիշերուան տասնին Մուշ կը հասնինք : Յոգնած եմ : Պատկելի դատ ուրիշ բանի մասին չեմ խորհիր : Յիշատակներով բնանաւորուած , հին օրերու երանութեան երգով անուրջներու աշխարհը ու ես կ'երթամ ... :

Վահագնատին էֆէնտին տան մէջ , արե - լեկան սովորութեանց համաձայն , բաղ - նիբը վառած էր : Բայց ես երկարատեւ ճամբորդութեան յոգնութենէն ուժաս - պառ , տեղական սովորութիւնն ու առող - ջապահական կանոնները անտեսելով , ճամբու փոշիներու աղտով անկողին մը - տեր էին :

Աստուտեան կանուխ ժամերուն , կաղ - դուրուած կ'արթննամ : Մահահալալիս մտ , երկու երկուսարդներ ձեռնածալ կը սպասեն ինծի սպասարկելու համար : Ե - բիտասարդները անգամ մը ես կ'ըսեն , թէ բաղնիքը պատրաստ է դարձեալ : Լը - տացուելէ ետք , գետնիւր ծալապատիկ կը

պէնի գիրքը , ամբողջովին (256 էջ) «դարձ» տարագին նուիրուած , ուր եր - կար ու խոր վերլուծումի մը ենթադրու - ւած է բարձր Աստուածաշունչ Մատենի , Պոտոնիսի , Իոնեկտի , Կոնստանտին , Որո - փիկէսի վկայութիւններով , — Երբայե - բեր՝ շուշ , յունարէնը՝ էֆիսթրոֆէ : Օպէն սխալ կարգացած , սխալ գրած է երբայեբէնը , — կը գրուի ու կը կար - դացուի շուշ : Ասացին տար , սին կամ յին , ունի եռաձայնի մը պատկերը (ֆը - բանսերէն՝ Փուշ , տառին անունն ալ , իբր բառ , այդ իմաստն ունի , կը նշանա - կէ նաեւ ակոս) , եւ երբ կ'էտ մը դրուի եռաձայնի մասն ահապիցն վրայ՝ կը կարդացուի սին , աջ ակոսիցն վրայ՝ շին : Վերջին տառն է պէթ , որ իբր բառ՝ կը նշանակէ տուն , ու կը կարդացուի պէ : Երբայեբէն յեգուի մէջ շուշ բառը երան - գի խաղեր կը կատարէ : Օպէն մէկ առ մէկ բնան է Աստուածաշունչ Մատենի մէջ բարձր բայական եւ գոյական գոր - ծածուրթիւնները (բայականը անիլի քան 550 անգամ , հայերէնի մէջ՝ անիլի) : Այդ գործածութեանց մէջ անկէն յատկանշա - կանն է . «Կարճի հոգի յերկիր որպէս եւ էրն , եւ հոգին դարճի առ Աստուած որ ետ զնա (Ժող . ԺԲ . 7) : Գոյականն ձեռով - «Կարճ հեթանոսաց» (Գործք , ԺԵ . 3) :

ճաշենք : Միջոց մը բազմոցներու վրայ նստած կը խօսինք : Մեր գտնուած տունը Մուշի վերի թաղն է եւ Հայոց թաղը , մեր գտնուած տունն ալ Հայու մը կը պատկանի :

Մուշ քաղաքը ճորի մը մէջն է : Վերի բարձունքին վրայ Մուշեղ Մամիկոնեանի բերդը կը գտնուի : Չորին մէջէն դեռ մը մեծ աղմուկով կը հոսի : Չորին արեւել - եան կողմի լանջքին վրայ այգիներ կան , իսկ արեւմտեան կողմը , տուններու շար - բը մինչեւ դաշտը կ'երկարի : Վարի թաղը թրքական թաղն է : Մեր իջեւանած տու - նը Հայոց թաղին ամէնէն բարձր դիրքին վրայ կը գտնուի :

Արեւուն առաջին ճառագայթներովը դուրս կ'ելլենք : Գէպի գառնիվարը , փո - ղոցներէ կ'անցնինք : Դարաւոր ճառեր մեզ կը բարեւեն : Գետն ալ հին երգը եր - դելով կ'անցնի , կ'երթայ Մեղրապետին կը պլուի ... :

Առաջին այցելութիւնս կուտամ Ապա - հովութեան Տնօրէնութեան : Այցելու - թեան նպատակը կը բացատրեմ : Տնօ - բէնը կ'ընդունի զիս : Քաղաքավարական ձեւակերպութենէ ետք , կ'անցնի պաշ - տոնական գործողութեան : Անձնագիրս կ'ուզէ :

Անձնագրիս քննութեան ընթացքին , Պ . Տնօրէնը մտածումի կը տարուի : Եւ ա - պա քիչ մըն ալ զարմանքով՝ կը հարցնէ .

— Հայերու մէջ այսպէս անուն չկայ , այս ի՞նչ կը նշանակէ ... :

Ես ալ բացատրութիւն կուտամ .

— Իմ աշխարհական անունս «Յաւակ» էր ...

Եւ ապա ինք կը սկսի բացատրել .

— Այո «Յ» դիրքը թուրքերէնի մէջ չը - կայ ...

« Յ » դիրքը այնքան հարազատ արտա - սանեց , որ Հայերէն գիտցող մը միայն կրնար ... եւ սկսանք հայերէն խօսիլ :

Ապա , կուսակալ պէյի այցելեցի : Ե - բիտասարդ ու լուսամիտ կուսակալը , էտհէմ Բէճէպ Պոյսան Պէյ , նոյնպէս ժպ - տերես ու մտերիմ ընդունեցաւ զիս : Ա - նոր ալ այցելութեանս նպատակը բա - ցատրեցի :

— Կուսակալ Պէյ , հայրենակիցները դանձ փնտռելու համար պետութենէն ար - տօնութիւն ստած են : Ես ալ ձեռքս փաս - տաթուղթեր ունիմ եւ իրենց հետ այս մասին պայմանագրութիւն կնքած ենք :

Այսօր եկած եմ աշխատելու . եթէ արտօ - նէք՝ պիտի աշխատեմ , թէ ոչ՝ Պոլիս կը վերադառնամ ...

Ան ինձի հաւաստիք կուտայ .

— Տէր Հայր , քանի որ պետութիւնը ձեզի արտօնութիւն տուած է , մենք ալ պարտաւոր ենք ձեզի օգնելու : Վստահ կրնաք ըլլալ , ամէն կերպով պետական պաշտպանութեան տակ էք , կրնաք ապա - հով դալ :

ՇԱՒԱՐՇ ՔՆՆՅ . ՊԱԼԼՄԵԱՆ

ՀԱՅ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Մեր մշակոյթի հնագոյն ճիւղերէն է Հայ ճարտարապետութիւնը : Իսկական արուեստի արդասիք ըլլալով , Հայ ճար - տարապետական յուշարձանները երբեք չեն կորսնցուցած իրենց ներդրածն ու - ժը :

Եւ այս որակին շնորհիւ է , որ անցեալ դարէն սկսեալ մեր ճարտարապետական արուեստը եւրոպացի եւ Հայ մասնագէտ - ներուն ուշադրութիւնը դրաւ եւ անոնց մանրակրկիտ քննութեան առարկան դար - ձաւ : Այդ բազմակողմանի հետազոտու - թիւններուն շնորհիւ կարելի եղաւ Հա - յաստանի մէջ հիմը դնել ճարտարապե - տական յուշարձաններու ուսումնասիրու - թեան գործին , որուն հիմնադիրը հան - դիսացաւ Թորոս Թորամանեան : Եւ երբ կազմուեցաւ Հայաստանի Գիտութիւննե - ռու ակադեմիան , ակադ . Յովսէփ Օրբե - լիի ժամանակութեամբ արուեստագիտու - թիւնը իր բնական տեղը դրաւ այնպէս , որ կազմին մէջ :

Վերջին տասնամեակներուն արուեստի ուսումնասիրութիւնը Հայաստանի մէջ երկու ուղղութեամբ զարգացաւ , նախ՝ կազմակերպուեցան Հնագիտական արշա - ւախումբեր (Կարմիր Բլուր , Արին , Բերդ , Գառնի , Դուրն , Ամբերդ եւ այլն) , որոնք շահեկան յայտնաբերումներ կա - տարեցին եւ յետոյ՝ զուգահեռաբար ի մի բերուեցաւ այն մեծ նիւթը , որ արդէն կուսակալուած էր եւ համակարգման կը սպասէր :

Ահա այս կարգի ուսումնասիրութիւն է «Ակնարկ Հայ ճարտարապետութեան պատմութեան» ստուար հատորը , մէկը՝ Հայ արուեստի պատմութեան ակնարկնե - ռու քառահատոր մատենաշարէն , որուն հրատարակութեան գործին լծուած է Գիտութիւններու Ակադեմիայի Արուեստի հիմնարկութիւնը : 1963ին տպուեցաւ Հայ երաժշտութեան պատմութեան ակ - նարկը , իսկ յաջորդաբար լոյս պիտի տեսնեն նաեւ Հայ թատրոնին եւ կեր - պարուեստին պատմութեան ակնարկ - ներէ :

Յաւալի է միայն , որ Հայ ճարտարա - պետութեան ամբողջական պատկերը ուր - ուազմող այս առաջին գիրքին տպագրա - նակը ընդամէնը 1500 օրինակ է , նուա - զագոյն քանակ մը , որ ոչ մէկ պարագա - յի տակ չի կրնար համապատասխանել ե - դած պահանջին :

Այս գործը բաղկացած է եօթը գլուխ - ներէ : Ներածութեան հեղինակը՝ Ա . Սահինեան կը թուէ Հայ ճարտարապե - տութեան ուսումնասիրութեան պատմու - թիւնը եւ աղբիւրները եւ , կ'ընդդէ , որ ճարտարապետական , շինարարական գոր - ծը հայկական լեռնաշխարհին մէջ սկսած է անլի քան չորս հարազատ տարի առաջ :

Հայ ճարտարապետութեան սազմնա - տրուածին անուշադ կարեւոր չափով նը -

պատած են Հայաստանի (Ք . Ա . 15-12րդ դար) եւ ապա Ուրարտուի (Ք . Ա . 9 - 6րդ դար) մէջ զարգացած մշակոյթները : Հայ ժողովուրդը , տեղական ցեղախումբերուն շինարարական աստիճաններուն հետ ժառանգած է նաեւ Հայաստանի եւ Ու - րարտուի կառուցողական արուեստները :

Այս պարագան հաստատուած է միայն Ուրարտուի նկատմամբ , մանաւանդ վեր - ջերս կատարուած յաջող պեղումներու հետեւանքով , ինչ կը վերաբերի Հայա - ստանին , անոր վերաբերեալ նիւթերը այն - քան քիչ են , որ միայն ենթադրութիւն - ներ կարելի է ընել :

Յամենայն դէպս անլիճելի է այն իրո - ղութիւնը , որ մէկեւէկս հաղարամեակ տեւող քաղաքաշինական եւ շինարարա - կան արուեստը պէտք է ոչ միայն շարու - նակուէր , այլեւ զարգանար : Այդպէս ալ եղաւ : Չամազան վայրերու մէջ , ինչ դար տեւող ժամանակաշրջանի մը մէջ (Ք . Ա . 6էն մինչեւ Ք . Ե . 3 դար) վեր խոյացան բազմաթիւ նոր քաղաքներ , պաշտպանողական հզօր կառոյցներ , մեծ բնակավայրեր եւ յուշարձաններ , որոնց յօրինուածքին եւ շինարարական մասին զիտութիւնը խիստ սահմանափակ տը - եախներ ունի , յաճախակի կրկնուող պա - տերազմներուն , ասպատակութիւններուն պատճառով ակերներուն պատճառով :

Միջնադարեան սկիզբը կը նկատուի Հայ ճարտարապետութեան կազմաւորման շրջանը , երբ Հայ ստեղծագործ միտքը կը սկսի փնտռել նոր զարգացումներ եւ նոր ձեւեր : Գ . եւ Զ . դարերուն վերջ - նապէս կը կազմուի Հայկական ազգային ճարտարապետութիւնը :

Է . դարը Հայ պատմական ճարտարա - պետութեան զարգացման ամէնէն ծաղ - կուն շրջանը կը նկատուի , երբ կը հասնի դասական արուեստի գերագոյն աստիճա - նին : Միջնադարուն սկիզբները համաշ - խարհային արուեստի ինքնուրոյն ոճե - ռուն կողքին երեսան կուզայ , իր իւրա - յատուկ զիմարծը ունեցող հայկական ճարտարապետական ոճը :

Ներածական մէջ Ա . Սահինեան կ'ընդդէ , որ «Հայ ճարտարապետութիւ - նը 4-7րդ դարերում սերտ շփման մէջ գտնուելով Սուրբայի , Միջագետքի , Բիւ - ղանդիոնի եւ Կովկասեան ժողովուրդներէ համապատասխան արուեստներէ հետ , համարձակօրէն վերցրել է նրանցից այն , ինչը կը նպաստէր իր զարգացմանը (ճարտարապետական մանրամասնութիւն - ներ , առանձին ձեւեր եւ մոթիֆներ) , վերամշակել է , հարստացրել , տեղայնա - ցրել ու ինքն էլ իր հերթին առատաձեռն բաժնի տուել ուրիշներին » :

Թ . — ԺԱ դարերու Հայ ճարտարապե - տութեան զարգացման մեծագոյն օճախը եղաւ Բագրատունիներու թաղաւորու - թեան մայրաքաղաքը՝ Անին : Այս - պէս , ճարտարապետական — շինարարա - կան միտքը Հայաստանի մէջ 10 — 11րդ դարերուն կը թեւակոխէ նոր շրջան մը՝ ոճի նոր ուղղութեամբ մը , որ զարգաց - ման մեծ թափ ստացաւ յատկապէս 12րդ եւ 13րդ դարերուն , մասնաւորապէս Չա - քաբեաններու շրջանին :

Ներածականը կը խօսի նաեւ կրկի - եան հայկական ճարտարապետութեան մասին :

Ռ . ԱՂԱՔԱՅԱՆ

«ԵԱՌԱՂ» ԻԹԵՐԹՈՆԸ (6)

ԿԱՆԱԶ ԱՂԱՔԱՅԱՆԻԸ

— * —

Արկածասէր զինուորականին հետա - քրքրութիւնը արթնցած ըլլալով , ծերու - նիին առաջարկը ընդունեցաւ եւ որոշեալ ժամուն թիկնեղ ու հաւատարիմ խափշի - կի մը հետ ժամադրովայրը հասաւ :

Յեղապետը ձի մը հեծած եւ երկու ձիե - ռու ալ սանձերը բռնած , հոն իրեն կը սպասէր :

— Հարիւր քայլ հեռուէն մեր ետեւէն եկուր , բաւ ծերունին խափշիկ հետեւոր - զին :

Երեք մարդիկը երկու ժամ քառամբակ յառաջանալով զաշտ մը հասան , որուն ետին լեռնաշխարհ մը կը բարձրանար :

Դաշտը անցնելէ յետոյ կիրճը մտան : Հոն ցեղապետը բլրակի մը առջեւ իր ձի կեցնելով ըսաւ .

— Կեցէք , հասանք : Չինուորականն ու ծերունին իրենց ձի - երուն սանձը խափշիկ սպասաւորին յանձ - նելէ ետք նեղ զանդիւրէ մը վեր ելլալով

բլրակի մը զազաթը հասան :

Մերունի ցեղապետը հոն ինքզինքը հա - ւաքելով եւ բլրակին կուշտին վրայ բաց - ուած քարայր մը ցոյց տալով , խեղդուկ ձայնով մը ըսաւ .

— Հոս , այս մեծ ապառաժներուն տակ , երեք հարիւր յիսուն տարիէ ի վեր թաղ - ուած մնացած է Սուլթան Սէլիմ առաջի - նի անհատնում դանձը ... :

Սէլիմ-Փուս այս խօսքերը լսելուն պէս տեղէն վեր ցատկեց ... :

Ան հինգ տարիէ ի վեր Ալժերիոյ մէջ մղուած դանազան կռիւներուն մասնակ - ցած էր եւ ամէն տեղ այդ դանձին մասին խօսուելով իմացած էր :

Պատմուածքի համեմատ , թուրքերու Ալժերիա կատարած առաջին արշաւանքի միջոցին , Շալուզ (վայրագ) Սուլթան Սէլիմ առաջինի դանձը զազտի տեղ մը պահուած էր , բայց մարդ չէր դիտեր ա - նոր տեղը :

Սակայն իրականութեան մէջ , ինչպէս Սէլիմ Փուսայի , նմանապէս նաեւ բոլոր միւս Եւրոպացիներուն համար առանկ զանձ գոյութիւնն չուէր : Ո՞ր Եւրոպացին կը հաւատար առանկ առասպելներու :

Չինուորականը չուզելով լսածին հաւա - տալ , թերահաւատ լուսնի մը սրահեց , իսկ ծերունին շարունակեց .

— Ես , Հաճի Մոհամէտ , մեծ մարզա - բէին համեստ աշակերտը , Կանաչ Աղա - մանդին պահապան կարգուած եմ :

Սէլիմ Փուս , աչքերը խոշոր խոշոր բացած , իր խօսակիցին երեսը նայեցաւ : Հաճի Մոհամէտ իր բարձր հասակը ցցեց : Գէմքէն յայտնի էր , որ ըսածները ճիշդ էին : Վստահելի նայուածքով մը զինու - րականին կը նայէր ան :

Սէլիմ Փուս համոզուելով որ իր հետը խօսող արար ոչ խնձիք էր եւ ոչ ալ խա - բերայ մը , կ'մկնաց .

— Ինչո՞ւ այս զազտիքը ինձի յայտ - նեցիր :

— Չաւակներս մեռան , աղջիկս քու զիրկից մէջ աւանդեց իր հոգին , պա - տասխանեց ծերունին : Չարդի միջոցին իմ ամէնէն հաւատարիմ ու ամէնէն քաջ պատերազմիկներս մորթուեցան : Ես ալ ծերացած եմ եւ Ալլահը մօտ օրէն իր քո - վը պիտի կանչէ զիս ... : Իմ սիրելի աղ - ջրկանս ամուսինին , զեղի կուտամ այդ դանձը եւ իր զազտիքը ... : Գիտցած ե - գիր , աղաս , որ աշխարհի մէջ ինչ որ ցանկեւ , այն կը հնձնու ... : Այնու վերա - բերմունք մը ունեցող մեզի հանդէպ , եւ արժանի ես այս դանձին ... :

Այս բնույթ , Շալուզ Սուլթան Սէլիմ առաջինի դանձերուն պահապանը ձեռքը կտրեցին տարաւ եւ լսութեան տակէն կաշիէ շինուած փուկ մը քաշելով՝ ծայ - բէն կախուած առարկայ մը ստաւ ու զին - ուորականին երկարեց :

Անմիջապէս ծերունի ցեղապետին ափն ու դէմքը փայլիլով սկսան : Լուսնի լոյ -

սին տակ , Հաճի Մոհամէտի ձեռքի ա - տարկան այնպիսի կանաչ շողեր կ'արձա - կէր , որ զինուորականին աչքերը խրա - դրտալ կը սկսէին :

Սէլիմ Փուս զողոջուն ձեռքերով ա - ուաւ զայն ծերունին ձեռքէն :

Խոշոր աղամանը մըն էր ան : Այնպիսի խիտ ու աչքերը կուրացնող շողեր կ'ար - ձակէր , որ անկարելի կ'ըլլար անոր ծա - կայն ու տարօրինակ ձեւը որոշել : Ութ - եւէկէս սանթիմեթր երկարութեամբ եւ չորս սանթիմեթր հաստութեամբ երկար խորանարդաձեւ կտոր մըն էր ան , որուն երեսին վրայ , դէպի երկարութեանը , եր - կար եւ նեղ բայց իրարու անհաւասար ցո - լարձակներ բացուած էին : Ասոնցմէ դատ , աղամանիցին երկու ծայրերը կոնաձեւ ցոլարձակներ կային , որոնք մէկ ծայրէն միւսը մէկ միլիմեթր խորութիւն ունեցող եռանկիւն ուղղանկյուն իրարու կը միանա - լին : Երկու ծայրերը ճիշդ բուրդի մը ձե - ւըն ունէին :

ՓԻԷՐ ՄԱՐՕՏՆ

(Շար .)

ՆՈՒԷՐ

Այրի Տիկին Անի Քորսաք (Պրիւսէլ) 100 Քրանք կը նուիրէ Թ. Կ. Սաչի փա- րիկի մասնաճիւղին իր ամուսնոյն Գոնա- տանդէն Քորսաքի մահուան քառասուն - քին առթիւ :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ՊԱՏՐԱՍՏՈՒԵՑԷՔ Կապոյտ Սաչի «Մանուկներու Օր»ուն, Կիրակի Փետրուար 13ին :

X

Հ. Բ. Ը. Մ. տարեկան պարահանդէսը Փետրուար 20ին, Ժորժ Ե.ի սրահը :

X

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ Կ'ԵՐԳԵՆ ՄԱՐՏ 13ին ՍՈՐՊՈՆԻ ՄԵԾ ԱՄՓԻԹԱՏՐՈՆԻՆ ՄԷՋ

X

Կապոյտ Սաչի Մարտի 1 Քաղաքի մաս- նաճիւղին տարեկան պարահանդէսը, Շա- բաթ, Մարտ 5ին Սփրանտիտի սրահին մէջ :

X

Մուրատ - Ռափայէլեան Նախկին Աշա- կերաց Միութեան ՊԱՐԱՀԱՆԳԵՍԸ ՓԵՏՐՈՒԱՐ 6ԻՆ

X

Սամուէլ Մուրատեան վարժարանի քա- տերական ներկայացումը՝ ՄԱՐՏ 20ին

X

Գլորիոսէրի գեղարուեստական հան - դէսը Մարտ 28ին, Կիրակի օր :

X

Հայ Արիներու Միութեան Փարիզի շրջանի տարեկան հանդէսը, Կիրակի Մարտ 6, կէսօրէ ետք ժամը 2.30, Սալ տը լա Շիւի :

X

Վիէն. — Մանուկներուն օրը Յունուար 9ին, Սէրբը կաթոլիկ սրահին մէջ :

X

Լիոն. — «Մանուկներու Օր»ը Յուն - ուար 16ին Ազգային Տան սրահը :

X

Մանուկներու Օրը կը տօնուի Տէսինի մէջ Յունուար 9ին Շաբաթ երեկոյեան, Հ. Յ. Գ. Տան մէջ :

X

Ս. Սաչ Ընկերակցութեան տարեկան պարահանդէսը Փետրուար 27ին :

X

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԵՆԻ (Փարիզահայ Տիկնանց Միու - թիւն) ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԿՈՅԹ ՊԱՐԱ - ՀԱՆԳԵՍԸ 23 Յունուար, Ամպաստէօրի սրահին մէջ :

ՄԱՐՍԷՅԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Կիրակի (26 Գեղտ.) Տօն Ս. Սահման- սի նախաժողովին, հանդիսանալով պատա - րազ ժամը 10ին եւ Սարկուսաց ընծա - յարեում ժամը 11.30ին: Նոյն օրը հո - դէհանդատեան պաշտօն կը կատարուի Ե - կեղեցոյս մեծ բարերար ողբ. ՎԱՀԱՆ ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆԻ, հոգեւոյս ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊՍԿ. ՊԱՆՍԳԵԱՆԻ եւ դպրապետ ողբ. ՅԱԿՈՒ ՄԱՆՔԵԱՆԻ ի յիշատակ : Կը խնդրուի սոյն երեք արժանաւորներու յի - շատակը յարգել ներկայութեամբ :

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԳՈՅԱՄԱՐՏ

ՕՐԱՑՈՅՑ 1966 Հրատարակութիւն Հ. Յ. Գ. Նոր Սե- րունդի Մարտի 1 շրջանի : Ապստոլանքներու համար դիմել՝ Օ. DJARAYAN 2, Place de la Corderie 13 MARSEILLE (7e)

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍԵԼԷ

ՄԱՏԵՆԱՇԱՐ ՆԱՐԴԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ Թիւ 1

ԼՈՒՍԱՄԱՏԵԱՆ

(ՀԷՔԵԱԹ ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ) Շ. ՆԱՐԴՈՒՆԻ Ապստոլանքներու համար դիմել հեղի - նակին ՅԱՌԱՋԻ խմբադրութեան հաս - ցէով: Գինը 10 Քրանք, փոստով՝ 12 Քրանք: Գումարները զրկել միայն ման - տա - ֆաթով :

BAHADOURIAN

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ

ԲՈՂՈՐՈՎԻՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՅԱԾ Երապայի Մեծագոյն Արեւելեան Վաճառատունը Բոլորովին նոր դրութեամբ

SELF SERVICE

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ խանութ մը չայ - ցելովին սեղանին վրայ ամէնէն հա - մով պատար կը պահուի՝ մեծին ու պղտիկին համար: ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ վաճառատան մէջ պիտի գտնէք ա - ւանդակեան ընդհանրութեան եւ անու - շեղէններու ամէն տեսակը, անմրցե - լի գիներով : ԾՐԱՐԻ ԱՌԱՔՈՒՄ Ֆրանսայի ամէն կողմ եւ Արտա - սահման՝ Պելժիա, Չուիլիերիա, Անգլիա :

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՆ

LYON

Super-Alimentation 20, Rue Villeroy MO 32.10 ԱՐԱԳ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

Արմա, «պամիա», «հարանճի տու - մա», յունական «թուրչի», «պի - պէն», տերեւ, թահին հելլա, «վա - նիլ», շոքոյա, «նուազէթ», «լո - դում», «սաղրո», պիստակ, Շիրակ օղի (41 - 45o), Իզմիրի չամիչ, «սուճուք», առաջնակարգ սուրճ, (ֆարավան եւ մագա), համեմներ մահիկայ, սալէպ, միքապուոյ, ձիւր, «դաշքովայ» պուրկարական, ձեր - մակ պանիր ոչխարի կաթով : Ամէն կարգի պահածոներ, «քուքուս», հարիսա, սոււազ, քարամա, լա - միս, Էւային :

ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ Ունի նաեւ առաջնակարգ մսավա - ճառատուն մը, որուն ընտիր տե - սակի միսերը զոհացում կուտան ա - մէնէն նորաճաշակներուն. — Ոչխա - րի, հորթի եւ եղան միս (քաշուած) Բերտա, բաբլաւա, ֆաուայիֆ, տե - բեւ Էւային :

Stabilisation des Prix

ՇԱՏ ՄԱՏՁԵԼԻ ԳԻՆԵՐ * Եթէ Ձեր ՈՒՋԱԾԸ ԱՐԵՒԵԼԵԱՆ Է՝ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ «ՊԱՀԱՏՈՒՐԵԱՆ» Է

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲԱՅԱՌԻԿ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄՆԵՐ

Կազմակերպուած Թ. Կապոյտ Սաչի Շրջ. վարչութեան եւ մասնաճիւղերու կողմանէ իրենց կայանի տասնամեակի առիթով եւ անոր ի նպատ : Հրատարակուած է Լոնտոնէն Հայ Երիտասարդաց Միութեան Թատերախումբը, ներ - կայացնելու Գ. Սնդուկեանցի

Պ Ե Պ Օ

Հինգշաբթի 23 Գեկտեմբեր ԱԼՖՈՐՎԻԼԻ մէջ ժամը 20.30ին Մէլզոն - Ալֆորի քաղաքապետարանի սրահը , Բիւ ժամ - ժօրէս : Երեքշաբթի՝ 21 Գեկտեմբեր ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՑԻ մէջ ժամը 20.30ին Քաղաքապետարանի սրահը : Կիրակի՝ 26 Գեկտեմբեր ԼԻՈՆԻ մէջ ժամը 15ին 6րդ թաղամասի քաղաքապետարանի սրահը, 58 Բիւ տը Սէգ : Զորեքշաբթի՝ 29 Գեկտեմբեր ՄԱՐՍԷՅԼԻ մէջ ժամը 20.30ին Թէաթը տիւ Ժիմնայ : Հինգշաբթի՝ 30 Գեկտեմբեր ՎԱՍԱՆՍԻ մէջ ժամը 20.30ին, Թէաթը Միւնիսիփալ : Տոմսեր կը վաճառեն Կապոյտ Սաչի զրատենակը, հայ զբոսվաճառատուները եւ ինքնուրուիները : Ապահովեցէք ձեր տեղերը :

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Է

Համախարրերդիական Միութեան Ֆը - րանսայի շրջանի 1966ի օրացոյցը : Գին 2.50 Քրանք, դիմել մասնաճիւղե - րու վարչութեանց :

ՊԱՇՏՈՆԵԱՅ ԿՈՒՉՈՒԻ

Աղքատանամ ընկերակցութիւնը իր Հանդատեան Տուններուն համար կը փնտը - ուն. — Ա) Տնօրէն, օտուուած վարչական կարողութիւններով եւ տեղեակ հաշուա - կալութեան :

Բ) Հիւանդապահուիչներ, վկայեալ Փարիզէն կամ այլուր :

Գ) Կառավար (շօքթօր) :

Թեկնածութիւնները ներկայացնել զը - րաւոր Աղքատանամի զրատենակը՝ Association Arménienne d'Aide Sociale 32, Rue de Trévis, Paris (9e)

« Լիոն եւ շրջակայի մէջ տուն չի - նելու համար մասնաւոր պատրաս - տուած հողեր եւ վիլլաներ , նմա - նապէս Լիոնէն 5էն 20 քիլոմէթր հեռաւորութեամբ հողեր (industriels) Մասնաւոր հաստատութիւն մը ուր կրնաք դիմել ամենայն վստահու - թեամբ . Տնօրէն Ա. ՕՀԱՆՆԵՍԵԱՆ BRON - Immobilier 109 bis, Ave. Franklin-Roosevelt BRON (Rhône) Tél. : 70-88-68 et 70-88-69

IMPRIMERIE SPÉCIALE DU JOURNAL « HARATCH » 32, Rue de Trévis, PARIS (9e)

ԸՆԹԱՅԻԿ ԱԶԳԵՐՈՒ ՍԱԿԱԳԻՆ

ՄԵԿ ԱՆԳԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԳ	45 Թ.	մինչեւ 1/4 սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍ	25 Թ.	մինչեւ 1/8 սիւնակ
ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ	10 Թ.	» » »
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	20 Թ.	» » »
ՀԱՐՍԱՆԻՔ : ՆՇԱՆՏՈՒՔ	25 Թ.	» » »
ԾՆՈՒՆԴ	25 Թ.	» » »
«ՓՈՒՍՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ»	10 Թ.	» » »
«ԿԸ ՓՆՏՈՒՄԻ»	10 Թ.	» » »
ԾԱՆՈՒ Է	25 Թ.	» » »

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ ձշանկուած ծաւայով ազ - դերու համար են, չարքար էլը :

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է :

Առևտրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմաններու համար գինի վարչութեան :

ԵՐՐՈՊԱՅԻ

ՄԵԾԱԳՈՅՆ ՀԷԼՎԱ ԼՈԳՈՒՄ Սոլսամ - ՀԷԼՎԱ ԱՐՏԱԴԻՐԻԶԸ ԹԱՀԻՆ ՇԱՐՈՑ (ՌՈՃԻԿ) ՎԱՐԴԷ-ԱՆՈՅՇ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ... CHOC-ALVA • CHOCO-LOC Sté le BOSPHORE SIÈGE SOCIAL 2, Rue Louis Astouin Marseille (2ème)

ԱՆՆԱԵԸՆԹԱՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿԻ ՇՔԱՆՇԱՆ Modèle Déposé Թանկագին ու Մնայուն Ամէնէն Սիրուն Նուրբ  Պարգ ձեւ՝ 200 Թ. Երջանակով 300 Թ. Գնելու համար դիմել՝ EDOUARD KHEDERIAN 66, Rue Lafayette, PARIS (9e) Tél. : PRO. 11-63 Expédition contre-remboursement

ՅԱՐԱՏԻ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

Directrice : ARPIK MISSAKIAN
RÉDACTION - ADMINISTRATION : 32, RUE DE TRÉVISE - PARIS (9°)
Fondé en 1925
R. C. Seine 57 A 2731
Tél. : PROvence 86-60
C.C.P. Paris 15069-82

ԵՐԵՎԱՆԻ
21
ԴԵԿՏԵՄԲԵՐ
MARDI
21 DECEMBRE
1965
LE NUMÉRO : 0,30 Fr.

Օ Ր Ա Թ Ե Ր Թ

Հիմնադիր՝ ՇԱԽԱՐՇ ՄԻՍԱԿԻԱՆ

Քրանսա՝ Տար. 60 ֆ. վեցամսեայ՝ 35 ֆ.
Արտասահման՝ Տար. 80 ֆ. Հատը 0,30 ֆ.

ՏԻՐՈՒ ՏԱՐԻ — ԹԻԻ 10490

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

41e ANNÉE — N° 10.490

ՏԸ ԿՈՒ ԸՆՏՐՈՒԱԾ

ՆՈՐ ԵՕԹՆԱՄԵԱԿԸ ԿԸ ՍԿՍԻ ՅՈՒՆՈՒՄՐ ՏԻՆ

ԻՆՉ ԿՂՍԵՆ ՊԱՐՏՈՒԱԾՆԵՐԸ

Ինչպէս կը սպասուէր Չօր. տը Կուլ, նախագահական ընտրութեան երկրորդ փուլին, վերընտրուեցաւ Հանրապետութեան նախագահ, նոր եօթնամեակի մը համար: Իր յաղթանակը անակնկալ մը չէ երբ նկատի առնուին պայմանները: Նախքան Կիրակի օրուան ընտրութիւնը վերլուծելը, ամենը վերջին թիւերը:

Նախարար՝ Փէյրէֆիթ յայտարարած է. — Ստիպողական գործերու կարգին, առաջին հարցը՝ Եւրոպան է: Տը Կուլ Կե- սարը չէ, որովհետեւ Կեսարը իր իշխան- նութիւնը երբեք խնդրոյ առարկայ չընէր երբ անգամ մը ձեռք առած է: Ի՞նչ է ինչի քարտուղար՝ Պոմպէլի համար, այս ընտրութեան զլխաւոր պարտաւոր՝ Լը- քանիւն է, որ չկրցաւ համոզել իրեն թուէ տուողները որ տը Կուլ զէմ թուէր- կեն:

Կի Մուլէ կը յայտարարէ թէ երկրորդ շրջանի արգիւնները կարեւոր հանգր- ւան մը կը կարգեն: Տը Կուլ ստացաւ մօտ 55 առ հարիւր արտայայտուած ջը- ւէներուն, այսինքն միայն 45 առ հարիւր ընտրողական մարմինն, (արձանագրուած թուէարկողներուն):

Պարտուած թեկնածու Ֆ. Միթրան կը շեշտէ. — « Առաջին շրջանը գէշ էր: Քուէարկութեան երկրորդ շրջանը միջակ է: Սկիզբէն չափած էի ձեռնարկիս զբ- ուարտութիւնը, բայց ձեռք բերուած ար- դիւնքը կը հաստատէ այն վստահութիւ- նը որ ժամը կը մօտեցայ երբ Հանրապե- տականներ պիտի յաղթեն »:

91 Նահանգներու վրայ, տը Կուլ մեծա- մասնութիւն ստացած է 66 նահանգներու մէջ (առաւելագոյն՝ Ստորին — Հոնոու) մէջ Միթրան 25 նահանգներու (առաւելա- գոյն՝ Փեռ): Չեռնպահներու թիւը աւելի չէ եղած քան առաջին շրջանին, ինչպէս կը կարծուէր, այլ մօտաւորապէս նոյնը (15-88 առ հարիւր):

Տը Կուլ պաշտօնին նոր շրջանը կը սկսի Յունուար 8ին:

ՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

ՆԻԿՈՍԻՈՅ մէջ յանկարծամահ եղած է Կիրարտի ՄԱԿԻ ուժերու հրամանատարը՝ հնդկի զօրավար՝ Թիմայա:

ԱՆԳՒԼՈՅ եւ Ռոտտելիոյ պաղ պատե- րազմը կը շարունակուի: Իսան Սմիթ յայտարարեց թէ Ռոտտելիո պիտի զաղ- րեցնէ իր պարաքերուն վճարումը Մեծն Բրիտանիոյ:

ՃՈՆՍՏՐՆ — ԷՐԶԱՐՏ խօսակցութիւնները սկսան Ռուշինկիթնի մէջ: Դանիակային հանրապետութեան վարչապետը հերքեց այն լուրը ըստ որուն կ'ուզէ գաղտնի հա- մաձայնագիր մը ստորագրել Միացեալ Նահանգներուն հետ: Կը թուի թէ ձոն- սըն աւելի արամաղիլ է լսելու Պոնի կա- տալորութեան ղեկավարը քան զօճացում տալու անոր պահանջներուն:

ՀԻՒՍԻՍՍՅՈՒՆ Վիէթնամ կը հերքէ թէ Հօ Շի Մինն առաջարկած ըլլայ բանակ- ցիլ օրեւէ տեղ, սեւէ մէկուն հետ, խա- զազուրթեան վերահաստատման համար: Սպիտակ Տան հրապարակած լուրը այդ առընչութեամբ, իբրեւ ազդեւր ունէր ՄԱԿԻ ներկայ նախագահ՝ Փանֆանի, ո- րու աղբիւրն էր, իր կարգին, Ֆիլիպինի նախկին քաղաքապետը՝ Լա Փիլա: Այս վերջինը կը վերահաստատէ որ երբ Հա- նոյ էր, Հօ Շի Մինն նման յայտարարու- թիւն մը ըրած էր:

ԱՆԳՒԼՈՅԻ ձերուհի զրազէտը՝ Սո- մերէթ Մոմ մեծաւ երկար տահաքունէ մը ետք, 91 տարեկանին: Աշխարհի ամէ- նէն հարուստ զրազէտներէն մէկն էր: ՀՈՒՆԳԱՐԻՈՅ մէջ զիններ պիտի բար- ձրանան մեծ համեմատութեամբ, 1966ին: ԱՒՓԷ հասնելով, դեռ. Պոմեթոնի յայտարարեց թէ Մոսկուա իր այցելու- թիւնը պիտի ծառայէ ամբարշտելու Ալ- ժերիոյ եւ Թրոսի: Միութեան յարաբերու- թիւնները:

Օրը Օրիւ

ՈՍԿԵՐԵԱՆ ՄԵԾ ՄԱՅՐԻԿԸ

— Աս էրկիտին ժողովուրդը քրիստոն- եայ է ... Ասոնց բազաւոր քրիստոն- եայ է, հարցուց, յանկարծ, մեծ մայ- րիկը, երբ պատուին ամանը ներս բերին.

— Իհարկէ քրիստոնեայ է, մեծ մայ- րիկ ... Ա՛տ ինչ խեղճիս հարցումն է ... Անցած Կիրակի քեզ «ասոնց» եկեղեցին չտարիճեմ, հարսնիքի ... Սա պատու- հանէն դուրս նայէ ու տես քանի զանգա- կատուն կայ — աւելի շատ զանգակա- տուն քան քարդի ...

— Ատիկա բան մը ըսել չէ ... Ասոնք Քրիստոսի կը հաւատան ...

— Մեծ մայրիկ, քալէ՛ տեղդ պակէ, յոզներ էս եւ խեղճութեան քանի կ'ըսես ... Քրիստոնեան Քրիստոսի չհաւատայ, ըլլալի՞ք բան է ... Մտիկ չե՞ս ըներ — առտու իրիկուն ձայնափիւռին վրայ կ'աղօթեն ...

— Ատիկա բան մը ըսել չէ — Ասոնց Քրիստոսը մե՛ր Քրիստոսն է ...

— Մեծ մայրիկ, համը փախցուցիք ... Քանի՞ Քրիստոս կայ — միայն մէկ Քրիստոս ... Աստուած պապան միայն մէկ որդի ունեցաւ ... Ա՛տ ալ չէ՛ր զի- տեր ...

— Ինձի նայեցէ՛ք, էս անը չգիտցածը գիտեմ, էս անը՝ ծարաւ աղբիւրը կը տա- նիմ, ծարաւ ալ ես կը բերեմ ... Դո՛ւք եղաք իմ վրա խնայողներ ... Հիմա ինձի պատասխան տուէ՛ք նայիմ — եր- քտ ասոնք, անը ըսածին պէս, Քրիստոնեայ են, հապա ինչո՞ւ Տէրն մեր Յիսուս Քր- քիստոսի Ծնունդը կազանդէն առաջ կը տօնեն ...

— Ասոր պատճառը կայ, բայց բու խեղճ ատանկ բարակ բաներու չի հաս- նիր, մեծ մայրիկ ... Դուն ծերացեր ես ... — Աղեմ՝ օր չնախիք ... Քրիստոս ծնաւ Յունուար 6ին ... Մեք Սուրբ Ծնունդը կը տօնենք այդ օրը ... Ասոնք ի՞նչ իրա- տունք ունին Գեղեցնեք 25ին տօնելու ... Ըսել է որ ասոնք Քրիստոնեայ չեն ...

— Աղեմ, դուն ինչո՞ւ գիտես որ Քրիս- տոս Յունուար 6ին ծնաւ ...

— Չեզի կ'ըսեմ որ խեղճ չունիք, չէ՛ք հաւատար ... Ապրիլ 7էն համբայ ելէ՛ք, նայեցէ՛ք ինը ամիսը որ օրը կը վերջա- նայ — Յունուար 6ին ...

— Մեծ մայրիկ, եկուր նիւրբ փոխեմք ... Եկածը կազանդ է, մեզի ի՞նչ նուէր պիտի առնես, նայեմք ...

— Միջեւ ըսածիս պատասխան չտաք՝ նուէր չկայ — ասոնք ինչո՞ւ Սուրբ Ծը- նունդը Յունուար 6ին չեն բռներ ...

— Մեծ մայրիկ, ժամանակին, այսինքն միջեւ 1500 տարի առաջ այդ օրը կը բռնեն եղեր, բայց փոխեր են ... Իրենց բազաւորները ասանկ հրամայեր են ... — Հա՛, հիմա իմ ըսածիս եկաք ...

Ասոնք քրիստոնեայ չեն ... Մեզի պէս, մեզի չափ քրիստոնեայ չեն ... Թագա- տը ով կ'ըլլայ եղեր որ պիտի ելլէ իր- բանան ընէ որ «ես կ'ուզեմ որ Ծնունդը 13 օր կանուխ տօնէք» ... Արեւ սիրեմ իմ Տիգրան Մեծիս որ ասանկ հրաման չէ ըրեր ...

— Մեծ մայրիկ, ինչե՞ր կ'ըսես ... Մե- ծըն Տիգրանի ատեն Ծնունդ չկար ... Յա- մառուք իմ ընէր եւ խօսք մտիկ ըրէ — Աստուածաշունչին մէջ, երբեք, պատ- ուէր չկայ որ Ծնունդը Յունուար 6ին տօնենք ... Քրիստոս համեստ մարդ էր եւ երբեք «իմ ծնունդս տօնեցէ՛ք» չըսաւ ... Հիմա, ժամանակներ փոխուէր են, մարդիկ փոխուէր են եւ հասնողը կը սպասէ որ իր ծնած օրը յիշենք եւ իրեն բարեւ, մաղթանք եւ նուէր դրկենք ... Քանի որ զուն Աստուածաշունչին ամէն մէկ բառին, ամէն մէկ պատուէրին կը հաւա- տաս, մեր այս ըսածին ալ հաւատա՛ եւ ասկէ ետք ասդին անդին մի՛ ըսեր քէ

«ասոնք քրիստոնեայ չեն, մեք քրիստոնե- այ ենք ...» Գիտցած ըլլաս, ասոնց բազաւոր իմանայ, քեզ խաչը հանել կուտայ ...

— Ենդամ օր չլամ ... Անխեղճ արա- բաճներ ... Ես իմ անուշիկ Յիսուս Քր- քիստոսիս համար խաչն ալ կ'ըլլեմ, դը- ժոխեմ ալ ներս կը քալեմ ... Չե՛րա՛յ, չե՛րա՛յեցի՞, 1915ին ...

— Թո՛ւմած, նմարկուած բուշերով մեծ մայրիկը, ջոզանցած, սա՛քի ելաւ եւ քրիստոնեայ «հոքոնուրդ մեծ եւ սքան- չելի, որ յայտ աւուր յայտնեցաւ» եր- գելով, գաւազանին օգնութեամբ յառա- ջացաւ դէպի իր նկատմանակը, ուր իրեն կը սպասէր Աղօթագիրքը:

Երբ փեսաներէն մէկը ուզեց դուր բա- նալ իրեն համար, նեղացաւ:

— Անդի՛ն, հեքանուներ, անգի ... Դուք գացէ՛ք իմ Սուրբ Ծնունդս, կա- դանդէն առաջ տօնեցէ՛ք, գացէ՛ք ... Աչ- քիս չեքեւք ...

— Ուրիշ անգամ պատմած էին ինձի քէ ա՛յս մեծ մայրիկը — ուրիշ անգամ ու անգուզական հայ մեծ մայրիկներու նը- ման — Արիւսիքի տարին, տակաւին նոր — հարս, իր շալակով Տէր Չօր տա- բած էր իր վեց տարեկան Սարօն եւ չորս տարեկան Արամիկը, քառասուն օր ու քա- ռասուն գիշեր, քառասուն անգամ խաչը ելլելով եւ քառասուն անգամ դժխոք մտնելով:

Յանու՛ն.

— Իմ անուշիկ Յիսուս Քրիստոսիս ... Ոսկեքերան մեծ մայրիկ, հաւատոյ պաշտպան բազուկի, որուն վրայ կը խնդան, այսօր, փեսաներն ու հարսները, զուակներն ու բռները:

Որովհետեւ կոնչեր մնացեր է ասան — դական բուսակներ մը եւ ժամանակին հետ չի քալեր: Հարեանին հետ չի տօներ Աստուածորդիին ծննդեան տարեդարձը: Մէկ օրը հազար, մեծ մայրիկ: Ի- մաստո՛ւն մեծ մայրիկ:

— Կազանդէն առաջ Ծնունդը կուզայ, անխեղճներ, անհաւատներ ...

Որովհետեւ, երբ մեր Ծնունդն ալ, Կազանդէն առաջ գայ, Կազանդէն առաջ բերեմք մեր ազատ կամքով, օղակ մը եւս փրցուցած կ'ըլլանք այն շղթայէն, որ մեզ — մեր համապիւռ զանգուածը — կը կապէ երկուսան հետ:

Անխոյժ քնացի՛ր, մեծ մայրիկ:

Քանի դուն կաս, քանի մաւ սերունդը կայ, մեքնք քու անուշիկ Քրիստոսիդ Ծը- նունդը պիտի տօնենք Յունուար վեցին:

Երբ մեր ժողովուրդը խաչի նախապա- հէն կը քալէր, երեկ, չմոռցաւ ո՛չ ի՛ր Յունուար 6ի Ծնունդը, ո՛չ իր Չատիկը, ո՛չ իր Վարդավառը, ո՛չ ալ իր Աստուա- ծընկալ աղօթքները:

Այսօր պիտի լէ՛ր այդ ասանկութիւն — ներք, որոնք նրազի դեր կատարեցին մեր բազմութեան համար:

Ի՞նչ է մեր միակ նպատակը, վերջա- պէս, այս լուսայեղց համբաներուն վը- բայ — պահել մեր դիմագիծը, մեր տես- քը, մեր կերպարանքը:

Երբ դպրատունի երես չտեսած, բայց հազար հազար խաչ շալակ մեծ մայրիկ- ները կը պահանջեն որ Կազանդէն առաջ Ծնունդը չբերենք մեր չարակամքի, դպրա- տուն գացածներուն պարտքն է գուլիս ծը- ոնել այդ պահանջին:

Աստուածարանութեան քէ պատմու- րեան անտառներէն ներս մտած մէկու մը համար երկու բուսակներն ալ անցի՞ղ են: Ինչպէս անցի՞ղ է Քրիստոսի տարի- քը — 33:

Բայց, «դա՛ մի այլ հարց է»: Ոսկեքերան ու ջերմեանը մեծ մայրի- կըս, մեծ մայրիկը Յունուար 6ին կը հա- տատայ:

Մեքնք ալ պիտի հաւատանք: Հար չկայ:

ԵՒՐՈՊԱՅԻ

ՅՈՒՇԵՐ

ՆԻԿՈՂ ԱՂԲԱԼԵԱՆԻ ՀԵՏ

Ա.

Ես բախտը ունեցայ ամբողջ հինգ տարի (1923 - 1928) ապրելու Նիկոլ Աղբալեանի հետ, Աղբալեանի մէջ: Պօղոս - եան վարժարանի անօրէն էր ինք այդ տարիներուն, իսկ ես շարքային ուսուցիչ էի (կեանքիս մէջ միշտ շարքային եղած եմ արդէն):

1923 Հոկտեմբերին զպրոցը վերաբացուած էր եւ կը սպասէինք մեր նոր տնօրէնին ժամանման՝ Թեհմուզին, ուր կը գտնուէր իրբեւ տարաբեր, Հայաստանի Հանրապետութեան խորհրդայնացումէն եւ Փետրուարեան ապստամբութեան հաշուարկարէն ետք (1921 Ապրիլ):

Օր մըն ալ լուր տարածուեցաւ, թէ յաջորդ ատու չողենաւոյ Աղբալեանի կը հասնի մեր անօրէնը: Սուրբ մը ուսուցիչներ եւ ընկերներ նաւամատոյց գացինք զիմաւորելու: Ետեմաւի սանդուխներէն իմա Տիկին Հ. Իփիգենիա հետ: Դէմքին արտայայտութիւնը՝ ծանրարարոյ եւ խոհուն, անձէն բխող համայն, նոյնիսկ հարուստ - կապուտը խոր տըպաւորութիւն գործեցին մեր վրայ:

Ողջագործութիւն եւ բարի դաւուս մաղթելէ ետք, կը պատաստուէինք ինքնաշարժ աննիլ եւ ուղղուել վարժարան: Նոյն պահուն, չեմ գիտեր ինչ պատահեցաւ, մեր ընկերներէն մէկը ըսաւ.

— Սուր մը նետեցէք, ընկ. Աղբալեան: Պատասխանը հաճոյ թուեցաւ ինձի:

— Ես, — ըսաւ, — առհասարակ չեմ կրնար մետել, իսկ մասնաւորաբար չեմ կրնար աւտ խօսիլ:

Ասիկա բաւական եղաւ, որ Նիկոլ Աղբալեան մեծնայ իմ աչքիս, իրբեւ անձ: Ետտ տեսած էի «նետող»ներ եւ աւելի շատ՝ սուտ խօսողներ: Անկէ ետք ես յաճախ առիթ ունեցայ հաստատելու անձինքնդաշնակութիւնը մտաւորականին հետ եւ մտաւորականին ներդաշնակութիւնը անձին հետ:

Յաջորդ օրը, ատու կանուս, վարժարանի աշակերտութիւնը հաւաքուած էր բակին մէջ՝ ընդունելու նոր անօրէնը: Աղբալեան օրուան պատշաճ քանի մը խօսք ուղղեց աշակերտներուն, որոնք ուրախ եւ երկարատեւ ծափերով ողջունեցին Հայաստանի Հանրապետութեան երբեմնի կրթական նախարարը, որ եկած էր վաղելու Աղբալեանի Պօղոսեան վարժարանը:

Բարձրացանք տեսարան՝ փոխադարձաբար ծանօթանալու եւ գումարելու համար մեր առաջին մանկավարժական խորհուրդը: Մեր գիտցած ուսուցչական ժողովը դարձած եղած էր մանկավարժա-

կան խորհուրդ, նոյն ինքն Աղբալեանի բացատրութեամբ:

Այս անգամ խօսքը ուղղեց մեզի՝ մանկավարժական խորհուրդի անդամներուս եւ ըսաւ մօտաւորապէս.

— Ես առանձինն, առանց ձեզի, ոչինչ կրնամ ընել: Զեզի հետ գործակցարար շատ բան կրնանք ընել: Պիտի ընենք ուրեմն մեր կարելին՝ նախ մեր վրայ դրուած յոյսերը իրագործելու, այդ նաեւ բարձրացնելու համար վարժարանին կըրթական եւ բարոյական մակարդակը: Պէտք է աշխատինք, որ ամէն մարդ լաւ խօսի մեր մասին եւ իր ակնկալութիւններուն մէջ խաբուած չզրկայ ինքզինք: Ասկէ ետք մենք յաճախ առիթ կ'ունենանք տեսնելու զիրար զործի վրայ եւ զործի մէջ:

Կը զիտակցէինք, թէ պատուոյ հարց մըն էր մեր առջեւ դրուածը: Կամ վաճառնի վրայ, կամ վաճառնի տակ: Եւ կը խոստովանիմ, որ յետագային կարելին ըրինք՝ ուսուցչի մեր կոչումը առաքելութեան վերածելու համար: Երկու տարի ետք, Լեւոն Շանթին ալ մաս կազմեց մեր «պահակախումբ»ին, իրբեւ հայ լեզուի ուսուցիչ: Վեցամեայ նախակրթարանը դարձաւ բարձրագոյն նախակրթարան: Եթէ պաշտօնի վրայ մնայինք հինգ տարի եւս, կրնամ վկայել, որ Պօղոսեան վարժարանը կը դառնար ձեմարան, իսկ Պէյրութի «Փալանճեան» ձեմարանը գոյու-թիւն էր ունենար: Հակադաշնակցական Պրքը քարոզանք ըրաւ սկսուած զործը, եւ 1928ին Աղբալեան - Շանթ «պահակախումբ»ը ցիրուցան եղաւ:

Աղբալեան զործի ձեմարանից՝ իր ամբողջ դրամագումարը դնելով նժարին մէջ: 1926ին սկսանք հրատարակել «Հայ վարժարան» մանկավարժական ամսագիրը, որ յաջորդ տարին դադարեցաւ սակայն՝ մեր եւ վարժարանին շուրջ ստեղծուած անշնչելի մթնոլորտին պատճառով: Պրքը զործի անցած էր արդէն:

Աղբալեանի ժամանումէն շարք մը ետք, ի պատիւ իրեն ընդունելութիւն մը տեղի ունեցաւ Գաղափարական ակումբին մէջ: Ստուած ճառերէն բան մնացած չէ միտքս՝ շատ լաւ կը յիշեմ սակայն Աղբալեանի խօսքին վերջին նախադասութիւնը:

— Հայ ժողովուրդը, — ըսաւ, — մի անգամ հայրենիք ստեղծեց. մի անգամ էլ կը ստեղծի:

Ասիկա լիովին կը պատշաճէր այն օրերու պայմաններուն եւ մտայնութեան:

Պօղոսեան վարժարանի ուսուցիչները մեծ մասամբ զարիւյ մարդիկ էին: Իւրատեսակ զարիւյ մըն էր նաեւ մեր անօրէնը: Սմբովին կ'երթայինք ճաշելու հայկական ճաշարան մը, որ զպրոցին շատ մօտիկն էր:

Այդ շրջանին յաճախ կը խօսուէր Հայաստանի փախցուած պետական գանձին եւ նախարարներու ստացած իշխանական թոշակներուն մասին:

Առիթով մը, խօսակցութեան ընթացքին, ես հարցուցի Աղբալեանին.

— Ի՞նչ պետական գանձի մասին է խօսքը, որուն կ'ակնարկեն Գաղափարական հակառակորդները:

— Պետական գանձ... — տեսակ մը հեղանքով կրկնեց Աղբալեան, — Եղած չեղածը քանի մը հարիւր ոսկիի շուրջ կը գտնուի, եւ այդ գումարն ալ ծախսուեցաւ Երկրէն հեռացած մտաւորականներուն եւ տարագիրներուն համար: Հայ չինները քննուած, ստուգուած եւ վաւերացուած են հաշուեքննիչներու կողմէ: Հաշուետուութիւնը հրատարակուած է առանձին գրքով, Թեհմուզին մէջ:

Այս էր ուրեմն «գաղափարներու կողմուտած պետական գանձը»: Եւ ակամայ կը յիշեմ Մեղրեանի կտակը...

— Կը ներէք, — դարձեալ հարցուցի ես, — դուք հանրային կրթութեան նախարար էիք Սատիսեանի վերջին դաճիլ-ճին մէջ. կրնա՞ք ըսել, թէ ինչ թշուաղ կը ստանայիք իրբեւ նախարար:

Այս հարցումին պատասխանելէ առաջ, մատիտով քանի մը թուանշաններ գրեց թուղթի կտորի մը վրայ, հաշիւներ ըրաւ մատիլի եւ դարձաւ ըսաւ.

— Զեր դրամով (եզիպտական) ամիսը չորս ոսկի:

Հաւատալիք բան չէր, բայց ըսողին պարկեշտութիւնը վեր էր ամէն կասկածէ: Այդ օրերուն, սովորական դոնապանները կը ստանային աւելի, քան կը ստանար Հայաստանի Հանրապետութեան կըրթական նախարարը: Ետքէն Աղբալեանի խօսքը հաստատեց ուրիշ նախարար մը՝ Սիմոն Վրացեան: «Իշխանական թոշակ» ըսուածը 12 տոլար էր միայն. ո՛չ աւելի, ո՛չ պակաս, — ՏԱՄՆԵՐԿՈՒՄ տոլար...

Իրբեւ Պօղոսեան վարժարանի անօրէնը երբեմնի այս նախարարը կը ստանար ամիսը քսանը հինգ եզիպտ. ոսկի, այն օրուան սակով՝ հարիւր տոլար, այսօրուան սակով՝ 35 տոլար: Այս գումարը իրաւամբ կարելի էր իշխանական կոչել, բարդաւորմամբ Հայաստանի նախարարներուն ստացած թոշակին:

Աղբալեան իննասուներէն էր, կրնամ ըսել՝ նոյնիսկ ժլատ էր: Իր ուժերէն մաս մը կը զրկէր Հայաստան կնոջը եւ դաւակնութեան, մնացածով կ'ապրէր... պրոլետարի պէս: Սենեակ վարձած էր օտար ընտանիքի մը մօտ եւ յաճախ ինք կը պատրաստէր իր ուտելիքը: Կէտօրի մը, զըպրոցին վերաբերեալ զործով պահի իր սենեակի մը տեսայ, որ իւրի մէջ 3-4 հաւկիթ կը տասկէր գեանախնձորի հետ: Այս էր իր կէտօրուան ճաշը: Գլանիկը երկու մասի կը բաժնէր եւ կը ծխէր դատաւար...

Այսպէս կ'ապրէր իշխանական թոշակ ստացող եւ Հայաստանի պետական գանձը կողմուտող նախարարներէն այս մէկը:

Բ. ԹԱՇԵԱՆ

ՌԻՍՈՂԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

ՄԻՋՆԱԳԱՐԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Ուսողադիտութեան պատմութիւնը Հայաստանի մէջ կը սկսի Ե. դարուն եւ կապուած է Հայոց գիրերու գիւտին հետ: Աղբալեան, Ե. դարուն, երբ Մեսրոպ Մաշտոց կը յօրինէր հայերէն տառերը, միեւնոյն ատեն Հայաստան կը բերէ թուարանութեան այբուբենական եղանակը որ գտած էին Յոյները Ք. Ա. հինգերորդ դարուն: Այս մասին Հ. Աճառեան կը զըրէ. «Մեսրոպն էլ, երբ հնարեց հայերէն այբուբենը, տառերին տուեց թուական արժէքներ, համապատասխան իրենց գրուած շարքի՝ այբուբենի մէջ: Նա ոչ նրանց ձայնին կամ հնչիւնին ուղարկութիւն դարձրեց, ոչ էլ այն բանին, թէ արդեօք նրանց համապատասխան տառը ինչ թուական արժէք ունի յունական կամ ասորական այբուբենում»: Այնուհետեւ «Այս բաժանումը շատ աւելի յարմարուած է հայերէն մեսրոպեան այբուբենին, որ ունենալով միայն 36 տող, բաժանուած է ճիշդ չորս մասի, իւրաքանչիւր բաժնին ընկնելով 9 տառ եւ 9 թիւ: Այբուբենի յաւելուածական եւ, օ ֆ տառերը չեն մըտել հաշուի մէջ, որովհետեւ թուագրութիւնը այդ տառերի յաւելարկումից առաջ էր սկսել: Իսկ նոր տառերն աւելացնողները շատ խելօք են վարուել, որ, չքանդելով հինը, այն պահէն են անփոփոխ»:

Այս ձեւով, Մեսրոպ Մաշտոց Ե. դարուն Հայաստան ներմուծեց կրթական մարդկէ եղանակ մը — զպրոց, ուր առաջին առթիւ գաստանդուած է հայերէն եւ թուարանութիւն:

Ե. Զ. դարերուն ուսողադիտութեան վերաբերեալ հետաքրքրական փաստերու կը հանդիպինք Դաւիթ Անյաղթի «Սահմանք իմաստասիրութեան» աշխատութեան մէջ: Կը պարզուի, որ Յոյներու նման Հայերն ալ թուարանութիւնը հին շրջանին բաժնուած են երկու մասի. զործնական թուարանութիւն (համարաբար-թիւն) — հաշուականութիւն եւ տեսական թուարանութիւն: Այսպէս կոչուած բարձր մանկանային թիւերու վերաբերեալ բաւական օրինակներ կան Փիլոսոփ աշխատութիւններուն մէջ, որոնց հայերէն թարգմանութիւնը կատարուած է վեցերորդ դարուն: Այս աշխատութիւններուն հիման վրայ կարելի է ըսել, որ այդ դարերուն Հայոց զպրոցներուն մէջ թուարանութիւնը աւանդուած է գոնէ ամբողջ թիւերու սահմաններուն մէջ:

Սակայն, իրողութիւն է, որ վաղ միջնադարու ամենամեծ ուսողադիտը Անանիա Շիրակացին է, որ ծնած է վեցերորդ դարուն վերջերը եւ մեռած է 685ին: Շիրակացի ութ տարի գտնուած է Տիւրքիո-

ՌՈՒՍ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐԸ

ՊԻՏԻ ԳՐԱԻԷԻՆ ԱՆԱՏՈՂՈՒՆ

(ԻՆՉԵՐ ԿԸ ԳՐԵՆ)

ԹՐԻՔԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ

ԵՐՐՈՐԴ ՄԻՋԱՊԱՅՅԻՆԸ

ԿԸ ԳԻՏԵՐ ԹՈՒՐԿԻԱՆ

Թուրքիոյ Աղգային Մեծ Ժողովի կառավարութիւնը, որ ուշի ուշով եւ մեծ բծախնդրութեամբ կը հետեւէր Համա-գումարին կատարած աշխատանքներուն, հարկ եղած հրահանգները տուած էր արդէն նախապէս ալ, մասնակցող պատուիրակներուն:

Այս հրահանգներուն մէջ, պարտքան մասնաւորաբար շեշտուած էր հետեւեալ բառերով —

«... Այժմ պատերազմական վիճակի մէջ կը գտնուինք աշխարհակալ Եւրոպայի եւ Պոլսոյ կառավարութեան հետ:

Յեղաշրջումը եթէ դալու ըլլայ ստորին խաւերէն դէպի վեր եւ յառաջանայ այդ ձեւով, պատճառ կը հանդիսանայ կազմալուծութեան եւ քայքայման: Պէտք է Համազումարին պարզել եւ բացատրել, թէ ինչպիսի վարչաձեւ մը կը պատշաճի եւ ինչպիսի քաղաքականութիւն մը պէտք է մեր երկիրը կառավարելու համար: Մեր պատուիրակները, լիազօրուած չեն որեւէ որոշում անելու, ինչ ձեւի եւ բրնոյթի որ ալ ըլլայ ան եւ կապ ունենայ ուղղակի կամ անուղղակի թուրքիոյ պապային ու ճակատագրին հետ: Անոնք արտօնուած են միայն խօսակցութեանց հետեւելու եւ Աղգային Մեծ Ժողովին տեղեկութիւններ տալու, Համազումարին աշխատանքներուն մասին»:

Այս հրահանգին մէջ անգամ այնքան բացորոշ կերպով ի յայտ կուգայ Անգարայի կառավարութեան զրուշութիւնն ու բծախնդրութիւնը, մասնաւորաբար երկրին ապագային ընդգրկելիք գրքերն եւ որդեգրելիք վարչաձեւին նկատմամբ:

ՉԻՆՈՎԻԵԻԻ ՃԱՌԸ

Համազումարին ակնբերեօրէն յայտնի եղաւ այն արամազրութիւնները, որս Երրորդ Միջազգայնականը ունէր թուրքիոյ նկատմամբ եւ թէ ի՞նչ կը մտածէին այդ Համազումարին մասնակցող պատուիրակները, թուրքիոյ մասին:

Պարուի Համազումարին նախադաշնուորուած էր Ջիւնոյիլեւ, որ իր արտաստատութիւններուն մէջ խօսելով մեր երկրին մասին, ի մէջ այլոց յայտնած էր հետեւեալ կարծիքներն ու դադափարները.

«... Մենք կ'օղնենք նաեւ այն հաւաքականութիւններուն, որոնք տակաւին չեն սկսած մտածելու մեր ձեւով: Անոնք դեռ մեր մտածումին հակառակ մտածումներ ունին, դադափարաբանական տեսակէտով: Օրինակ, դիտէք թէ Սորհ-կառավարութիւնը օժանդակութիւն կ'ընծայէ թուրքիոյ, այսինքն Մուսթաֆա Բեմալի կառավարութեան:

ՎՐԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱՂՔԵՆԻ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ

«Մենք, միւս կողմէ, վայրկեան մը իսկ մտահան չենք ըրած այն իրողութիւնը, թէ Մուսթաֆա Բեմալէ զլիսաւորուած շարժում մը երբեք չի կրնար համայնապարական շարժում մը նկատուիլ:

«Այժմ իմ առջեւ ունիմ Անգարայի Ժող. կառավարութեան գումարած առաջին նիստին ատենադրութեան սղարեալ պատճէնը: Հոն, Մուսթաֆա Բեմալ կ'ըսէ, թէ «Սալիֆային եւ Սուլթանին անձը նուիրական է, անձեռնմխելի»:

Մուսթաֆա Բեմալէ զլիսաւորուած շարժումը, կ'ուզէ Սալիֆային անձը պաշտպանել ու փրկել իր թշնամիներէն: Ահա ասիկա է տեսակէտը այս կուսակցութեան: Ասիկա համայնապարական սղարութեան մըն է միթէ: Ոչ, երբեք, ամենեւին: Համայնքին զգացումները կը յարդենք, յարգանք ունինք անոր զգացումներուն հանդէպ: Մեզի համար անկարելի է փոփոխութեան ենթարկել այդ մէկը: Որովհետեւ, շատ պէտք է աշխատի նման բան մը կարենալ իրականացնելու համար: Մենք վերապահութեամբ կը մօտենանք Արեւելի եւ ուրիշ երկիրներու կրօնական ըմբռնումներուն եւ հաւատալիքներուն: Հակառակ այս իրողութեան, Մուսթաֆա Բեմալի կառավարութեան թուրքիոյ մէջ կիրարկած քաղաքականութիւնը երբեք չի պատշաճիր Համայնապար Միջազգայնականին զգափարներուն, այսինքն մեր զգափարաբանութեան որդեգրած քաղաքականութեան: Այսուհանդերձ, մենք նորէն ալ պատրաստ ենք օղնելու այն բոլոր քաղաքականութիւններուն եւ շարժումներուն, որոնք թիւյրացուած են հակառակ լիակամ նպատակներէ եւ նկատումներէ: Այդ պատճառաւ է, որ մենք կողմնակից ենք նման յեղաշրջութեան մը, որպիսին է Մուսթաֆա Բեմալէ զլիսաւորուած կառավարութեան քաղաքականութիւնը: (28 Եար.)

սի քով եւ, անկասկած, ստրկած անկէ : Այս վերջինը ունէր հարուստ դրամաւորան մը . ահա թէ ինչ կ'ընէ այդ մասին Շի - րակացի, «Ամենայն կար առ նմա՝ յայտ - նիք եւ պատիւիք, արուեստականք եւ պատմագիրք, բժշկականք, ժամանակա - գիրքք... քանզի չիք ինչ գիրքք, որ առ նը - մա ոչ գտաներ » :

Շիրակացի լայն աշխարհայեցողի տէր անձ մը եղած է : Ուսողազէտ, փիլիսո - փայ, տոմարադէտ, պատմաբան էր, սա - կայն աւելի շատ ճանչցուած էր իր բե - ուսողազէտ : Անկէ մնացած են դուստ - րուսի, հանուսի, բազմապատկուսի ա - զիւսակներ, խնդիրներ եւ խրատման - կաններ : Անոր կը վերագրուին նաեւ յայտնա կոչուած դարձ եւ խճառք թիւե - րը եւ բաժանումի մը աղիւսակը՝ վեց հազարեակը : Գծարարութեամբ մեր ձեռքը հասած են միայն պատմագիրներ, ինչ սր կը դժուարացնէ ուսումնասիրութիւնը : Շիրակացիին թուարանական աղիւսակնե - րը հնարաւորութիւն կուտան պատկերա - ցանկերու այն թուումները, որոնց միջոցաւ չին ժամանակներուն կը կատարուէին թուարանական շորս գործողութիւննե - րը : Այդ առումով անոր աշխատութիւնը ունի միջազգային արժէք : Գիտնականին խնդիրներուն մէկ կարեւոր մասը կը վե - րաբերի Հայաստանին . անոնց մէջ արե - ւաներ կան Հայոց քաղաքներու, գետե - րու, Հայաստանի բնակիչ հարստութիւն - ներուն մասին : Այս հանդիմանքը ցոյց կուտայ, որ գիտնականը դասադիրքը ինք կազմած է :

Թուարանութեան դասաւանդութիւնը այդ շրջանին կը կատարուէր իւրայա - տուէ ձեւով . ուսուցիչը լուծելով որեւէ խնդիր, կուտար միայն պատրաստի կա - նուր (նոյն ձեւի խնդիրներուն լուծումին համար), առանց բացատրելու, թէ ինչու պէտք է այսինչ թիւը բազմապատկել այսինչ թիւով եւ կամ բաժնել : Սակայն Շիրակացիի կազմած խնդիրները ցոյց կուտան, որ անոր աշակերտները պէտք է խնդիրները լուծէին սեփական դատողու - թեամբ : Այդ հարցին մէջ հայ ուսողա - ղէտը աւելի քան հազար տարի առաջ ան - ցած է եւրոպացի գիտնականներէն : Ահա թէ ինչ կը գրէ այս մասին ակնասուր մասնագէտ մը՝ Ի. Դիպման, «Միջին դա - րերուն թուարանութեան դասադիրքերու հեղինակները ուշադրութիւն չէին դար - ձընէր թուարանական գործողութիւննե - րու հիմնաւորման հարցին վրայ : Եւրո - պայի մէջ առաջին անգամ այդ մասին մտածած է Տարտուսեան (16րդ դար) : Մենք արդէն գիտել տուած ենք, որ հայ ուսողազէտ Անանիա Շիրակացիին 7րդ դարուն, մօտ հազար տարի առաջ, ըրած է նոյնը » :

Հայագիւր գիտնականը յատուկ ուշա - դրութիւն կը դարձնէր այն խնդիրներուն, որոնց լուծումը կը կատարուէր կոտո - բակներով : Այսօր մենք նոյնը կ'ընենք : Որպէսզի պարզ ըլլայ, թէ է. դարուն ինչ բարձրութեան վրայ կը գտնուէր թե - ւարանութեան դասաւանդութիւնը Հա -

յաստանի մէջ, յիշենք, որ «... Գործո - ղութիւնները կոտորակներու հետ եւ ի - բնեց կանոնը չեն յիշատակուած 16րդ դարու սկիզբի դերամանական համարս - բաններու դասադիրքերուն մէջ » :

Յետագային բազմակիւնային թիւերու վերաբերեալ աղիւսակներու կը հանդի - պինք Յովհաննէս Իմաստասէրին մօտ (11րդ դարուն վերջը, 12րդ դարուն ըս - կիցը) : Թուարանութեան դասաւանդը - ւած է Գրաձորի նշանաւոր համարարա - նին եւ Տաթևի դպրոցին մէջ : Այսպէս Եսայի Նչեցիի աշակերտներէն մէկը՝ Մը - խիթար Երզնկացի, 14րդ դարուն գրի ա - ռած է շարք մը խնդիրներ : Ազգութեամբ հայ է նաեւ 14րդ դարու բիւզանդացի ու - սողազէտ Նիկողայոս Արտաւազը : Սա - կայն յայտնի չէ, թէ Արտաւազը ինչ կա - պեր ունեցած է Հայոց դպրոցին եւ ընդ - հանրապէս հայ իրականութեան հետ : Թուարանական խնդիրներու կը հանդի - պինք Չաքարիա Սարկաւազի (Չաքարիա Քանաքեռցի, 17րդ դար) գրած պատ - մութեան յաւելումական դրուսին մէջ : Միջնադարու վերջաւորութեան մնացած ամէնէն աչքի գարկող ձեռագիրքը Կոնս - տանդին Չուրապեցիի կազմած թուարա - նական խնդիրներուն հաւաքածոն է (1667) : Կընդդրէ աւելի քան 130 լուծուած խն - դիրներ գտնադան հարցերու վերաբերեալ : Հետաքրքրական է, որ այդ ժամանակ Չուրապի դպրոցին մէջ կը սորվէին 250 աշակերտ, բացառիկ երեւոյթ մը 17րդ դարու հայ իրականութեան մէջ : Քանի մը ձեռագիրք թուարանութեան դասադիր - քեր կան՝ կազմուած ԺԲ. դարուն, բո - լորն ալ փոքրածաւալ տետրակներ են :

1675ին Մարտէյի մէջ լոյս տեսած է առաջին տպագիր թուարանութիւնը հայե - րէն լեզուով : Փոքր գրքոյի մըն է, 147 փոքր էջերով, գրուած յատկապէս առե - տրականներու համար :

1771ին լոյս տեսած է Խաչատուրի էր - դրամեցիի (կամ Խաչատուր Առաքելեա - նի) փիլիսոփայութեան երկու հատորեա - կը : Երկրորդ հատորին կարեւոր մասը (294 էջ) նուիրուած է թուարանութեան : Նոյն տարին, Մխիթար Սեբաստացի այդ գիրքը վերածած է դասադիրքի :

ԺԲ. դարուն լոյս տեսած դասադիրքե - րուն մէջ շատ արժէքաւոր է Սահակ Պրոնեանի երկրաչափութիւնը, որ լոյս տեսած է 1794ին Վենետիկ : Այնտեղ - թիւնը ցոյց կուտայ, որ հեղինակը տա - դանդաւոր թուարանագէտ - մանկավարժ մըն էր : Երկար առեւ հայերէն ամէնէն յաջող դասադիրքն էր մեր դպրոցներուն համար : Կարեւոր դեր կատարած է նաեւ 1781ին Վենետիկ լոյս տեսած Սուքիաս Աղամալեանի թուարանութիւնը, որ այդ տեսակի ամէնէն ընդարձակ առաջին դա - սադիրքն է հայերէն լեզուով : Ուշադրու - թեան արժանի է նաեւ Խաչատուր Տուր - մէկեանի համառօտ թուարանութիւնը՝ գրուած աշխարհարար, 1788ին :

Ա. ԵԿԱՆԵԱՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

ԱՐԱ ՊԱՐԹԵՒԵԱՆԻ ՆՈՐ ՍԱԼԻՆ ԱՌԹԻԻ

Սաւրու (տիւսի) միջազգային շուկային մէջ ապահովարար պատուաւոր տեղ մը գրուեցին հայկական ստեղծագործու - թիւնները որոնք՝ ներկայ շրջաններուն ի - բնեց անմիջական օգուտը ունեցան աղա - պահանջման գործին հանդէպ :

Այս մարզին մէջ, առանց հաշուելու հայրենիքի հեղինակներու բազմաթիւ ար - ծածաւալ սալերով, որոնց ընդհ. պարու - նակութիւնը կը հասնի մօտ երկու հարիւր կտորներու դաշնաւորում կամ հեղինա - կութիւն :

Ասոնց մէջ եկեղեցական երգերը դացին մինչեւ հետաւոր երկինքներու տակ ապ - րող տարազի Հայութեան սիմֆոնիք տա - լու, իսկ ժողովրդական գործերը ձայ - նաւիւտի միջոցաւ օտարներու ծանօ - թացուցին հայ ինքնարուստ արուեստի յատկանիշները եւ հայ ընտանիքներէ ներս ալ աղջկային միջոցով ստեղծեցին :

Այս անգամ սակայն, նոր սալով մը հեղինակը կը հրատարակէ իր համանու - պային հեղինակութիւններէն մէկ քանին, եւ առաջին անգամն է որ անոնց կատա - ռուսը եղած է Փարիզեան հանրաժանութ - նուագախումբին Բօսնէր Բօլօնի նուա - դախումբով, իր ղեկավարութեամբ :

Հայ սեփօնիք երաժշտութեան նմոյշ - ներ են, զորս հատուածներով, որոնք Ե - րեւանի մէջ տուած իր նուագահանդէսին առթիւ տեղական մամուլին ջերմ դնահա - տուութեան արժանացած էին : Ասոնք են կովկասեան համալուսար, Անտառի մէջ Նոյնմերիին բնապատկերը, Հովիւները լեռան վրայ եւ Գեղջկական խրատմանը :

Սոյն կտորներուն վերլուծումը թէեւ մանրամասն տրուած է սալին կողքին վը - րայ, սակայն խօսքը տանք Երեւանի հան - րաժանութ մանկավարժ երաժիշտ Է. Բըն - նադաս Յիբիկիա Բրուտեանի, որ սալէս կը մեկնաբանէ սոյն գործերը, ի թուելով յետոյ երգահանին ստեղծագործական գործունէութեան մասին : (Սովետ. Հա - յաստան, թիւ 2 Փետր. 1964) :

« Պարթեւեանի ռաբսոթիայի մէճ օգ - տագործուած է հայ եւ կովկասեան քե - մաները, հետաքրքրական գործ է կոչոյ - քային Է մեղեդիական գաղցալմանը :

«Անտառի մէջ Նոյնմերիին, սեփօնիք պատկերը տերեւաքափ անտառի խորհրդ - դաւոր ամալուսեան մէջ մեմաւոր ան - ցորդի յոյգերի անդրադարձումն է : Այս ծրագրային երկու կարծես բնութեան պատկերներն են ձայների արձագանգը միանկարում է մարդու ներշնչանքին, նրա հոգեկան ելեւէջներին : Հայկական մեղեդու մը հատուած հնչում է իբրեւ կրկնուող քեմա, պատկերելով կարծես տարազիբ Հայու հոգեվիճակն ու յոյգե - րը : Երկույ է, մինչ մի քանի քոչնկիկե - րի դայալը իբրեւ վերջաբան հնչում է

«ԵԱՌԱՋ»-Ի ԹԵՐԹՈՒՆԸ (7)

ԿԱՆԱՋ ԱԴԱՄԱՆԴԸ

Մէնթ Ֆուսա այդ հրաշայի գոհարեղէնը մասներուն մէջ քանի մը անգամ դար - ձուց : Ամէն դարձնելուն, զօրաւոր շո - դեր, իշխորական ցոլքերու պէս իր գէմ - քը կը լուսաւորէին : Քառասուն մեթրնոց շրջանակ մը, աղամանդին լոյսէն լուսա - տրուած էր : Երգերը մինչեւ քառասուն մեթր կ'երթային եւ ամէն բան կանաչի կը ներկէին ... :

Յեղապետը պահ մը մտածելէ ետք ը - սաւ .
— Եկուր :
Եւ զինուորականին թեւէն բռնելով, դայն թանձրախիտ հերձիներով շրջա - պատուած ծառաստան մը առաջնորդեց, ուր երկուքը մէկ աներեւոյթ եղան :
Ափրիկեան արշալոյսը վարդի մը պէս բացուել սկսած էր երբ երկու մարդիկը հերձիներուն տակէն դուրս ելան :
Չինուորականին բերանը բաց մնացած

էր տեսածներէն, իսկ ցեղապետը լու - թիւն կը պահէր :

Երբունին քանի մը քայլ առնելով դա - ուրիւյրին մօտեցաւ : Մէնթ Ֆուսա անոր հետեւեցաւ : Երբ չոնկէ գէպի ձիւրուն զտնուած տեղը պիտի ուղղուէին, յան - կարծ Հաճի Մոհամէտ անդունդի մը ե - վերքը վաղելով գլուխը վար կախեց եւ սկսաւ մտիկ ընել ... : Տարօրինակ շուկ մը լսեց :

Պահ մը այդ գիրքին մէջ մնալէ եւ չորս կողմը լուս մը աչքէ անցրնելէ ետք, դար - ձեալ զինուորականին քով դարձաւ :

Այս անգամ ցեղապետին գէմը մտա - հօգութեան արտայայտութիւն մը ստա - ցած էր :

— Ես սէլտի, առեւէ մը ի վեր կաս - կանդերս աւելցան, խօսք առաւ ան ցած ձայնով եւ զլուխը թոթիւրով :

Կը վախնամ որ այս գանձերուն երեսէն թշնամիներ շահն : Գանձին գաղտնիքը ինձմէ ուրիշ մարդ չզիտեր, ատոր վըս - տահ եմ, բայց երկու ամիսէ ի վեր այս կողմերը օտարականներ թափառել սկսած են... : Աղդեցիկ եւ հարուստ մարդիկ, որոնք Չարգարներուն մեծ մեծ կա - շառքներ, պաշտօններ բաժնած են մեզ կտորել տալու համար... : Այդ օտար - կանները քանի մը անգամ այս կողմերը եկան եւ մետաղի հանքեր փնտռելու պատրուակով զիս հարցափորձեցին ... :

Եթէ այդ մարդիկը իմանան, որ մեր եր - ջանակաշխատակ Սուլթան Սէլիմի գանձին պահապանը ես եմ եւ այժմ քեզի ձգած եմ իմ ժառանգութիւնս, բնաւ կասկած չստանա, որ այդ գանձը քու ձեռքէջ խլե - լու համար ամէն ստորնութիւն ի գործ պիտի դնեն ... :

Այս միջոցին, երկու մարդոց ետեւէն քար մը գլորեցաւ անդունդն ի վար :

— Լըտես մըն է, մրմնջեց ցեղապետը : Իրենցմէ յիտուն քայլ անդիւնէ, ապա - ոստէ ապառժ, իրարու ետեւէ երկու պայթիւններ լուսեցան... Եւ զինուորա - կան ու ցեղապետը երկուքը մէկէն դար - նուած, իրարու ետեւէ գետին փր - ուեցան ... :

Մէնթ Ֆուսայի հաւատարիմ սպասաւո - րը գէնքի ձայնը առնելուն պէս գէպի իր տիրոջ կողմը խոյսցաւ եւ երբ կրակի ա - ըրաւթեամբ գառիվերէն վեր կ'ըլլալով բարձրի գաղաթը հասաւ, տեսաւ որ խո - շոր կապաններու մէջ փաթթուած երկու մարդկային շուքեր՝ անկենդան գետին փոռած երկու մարմիններու վրայ ծոած՝ անոնց զրպանները կը խուզարկէին ... :

Մէնթ Ֆուսայի հաւատարիմ սպասաւորը երկու մարդասպաններէն մէկուն վրայ խոյսցաւ. միւս մարդասպանը պահ մը վարանելէ ետք փախաւ :
Սպասաւորը քովը գէնք շուռէր : Չառի - վերէն վեր մաղցած միջոցին հրացանը

ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

Աթէնքի օփերան իր թատերաշրջանը բացաւ Փուլիսիի Թոսֆայով : Հիմնական դերերէն մին ստանձնած էր ուսումնասէր պարիթոն Գալիթ Յովհաննէսեան : Ներ - կայացման ներկայ գտնուած են Գոնս - թանթին թաղաւորը, Աննա Մարիա թա - դուհին, կառավարութեան անդամներ, երեսփոխաններ, յոյն եւ օտար լրագրող - ներ :

Թիւրքոստանի Սոխակը (Ռուսական) օփե - րային մէջ «Ռիկուլթթօ»-ի եւ «Թրափա - թա»-ի գլխաւոր դերերը ստանձնեց թեւոր Արշալիր Կարապետեան, Երեւանէն :

Պէթրոփթի թաղերէն Հայաչէնի մէջ ծրագրուած է շինել եկեղեցի եւ դպրոց մը : Կազմուած է յանձնախումբ մը՝ նա - իրազատութեամբ Լիբանանի առաջնորդ Տաճատ Արք.ի :

ՊՈՒՍ Ժամանեց երգչուհի Գոհար Գասպարեան : Գեկու. Տին, Պոլսոյ օղա - կայանը երգչուհին եւ դաշնակահարուհի էլէնտորա Ոսկանեանը զիմաւորեցին բազ - մաթիւ աղջկայիններ, որոնց մէջ նաեւ Գո - հարիկ Ղազարոսեան :

«Հայաստանի Սոխակը», ինչպէս կը սիրեն կոչել երգչուհին Հայաստանի մէջ, համերգ մը տուաւ Ծան շարժանկարի ըն - դարձակ սրահին մէջ : Յայտագիրը կը բաղկանար հայ եւ օտար դասական երգե - րէ : Հենալլ, Մոցարթ, Տոնիճեթթի, Սայաթ Նովա, Կոմիտաս, Կանաչեան եւ ուրիշներ :

Մեծ տպաւորութիւն ձգած է «Անուշ»-ի իւրազարութեան տեսարանը :

Երգչուհին հաւանաբար երգահանդէս մը տայ Փարիզի մէջ Գեկու-ի վերջերը : ԹՈՒՐԿԻՆՅԻ Կուսմարտի արխան Կարալիա Չաքարեան 9րդ «բաւնտ»-ին պարտութեան մասնեց իտալացի ծանօթ կուսմարտիկ Փիէրօ Մորճիօն :

անտառի խորը : Այս երկուսը ցայտուն կերպով դրսեւորուած է Պարթեւեանի նը - կայախմբային մտածողութիւնը » :

« Հովիւները լեռան վրայ՝ յիբաի հով - ուերգական անարատ եւ ազնիւ յոյգերի անմիջական արտայայտութիւն է, իսկ ե - րկույնեան խրատմանը կը յոյսալին սը - լացք ունեցող պատկերներ են, ազգային երաժշտութեան տարրերի օգտագործ - մանք » :

« Պետական նուագախումբը ջանասի - րաբար աշխատեց երգահան գիրիթօրի հետ, իսկ Երեւանի հասարակութիւնը շերտօրէն ընդունեց եւ ըստ արժանոյն գնահատեց նրա ստեղծագործական ձիւ - բերը » :

Սոյն վերջին սալին վրայ առնուած հա - մանուագային մտածուած հեղինակու - թիւնները քանիցս լուսած են հեղինակին նուագահանդէսներու ընթացքին : Գե - դարուեստական սալի մը վրայ անոնց վե - րաբարուումը իբրեւ մնայուն գործ, ա - պահովարար ջերմ դնահատութեամբ պի - տի ընդունուի երաժշտասէր հասարակու - թեան կողմէ : Գ.

ձեռքէն թոած էր, իսկ սուրն ալ թամբին վրայ ձգած էր :

Երկու մարդոց միջեւ կուրը սկսաւ : Երկուքն ալ ուժով էին եւ հաւատարիմ ըն - պասաւորները իր բոլոր ուժը ի մի հաւա - քելով վերջապէս յաղողեցաւ իր հակա - ոտակորդը ոտքին տակը առնելով անոր ե - րեսի քօրը քաշել :

Չարագործին գէմքը երեւան ելաւ :

— Դո՞ւն ես եղեր, Մուպարէք, դոչեց Սէնթ Ֆուսայի սպասաւորը ափ ի բերան մնալով : Աւազակի, մարդասպան ... :

Բայց ճիշդ նոյն պահուն բարի սպասա - տորը ցաւալի ճիւղ մը արձակեց :

Թուարէկը, որ ջարդարար արար մըն էր, պարսպ մնացած ձեռքովը դաշոյնը պատեանէն քաշելով, իր հակառակորդին կուշտը մխած էր :

Սպասաւորը վերջին ցաւէն դալարուե - լով ձեռքերը բացաւ . իսկ մարդասպանը կատուի տատմով մը ստքի ցատկելով, անդունդին մէջ ցատկեց եւ աներեւոյթ եղաւ :

— Անիծեալ շուն, անիծեալ դայլ, օր մը նորէն ձեռք կ'անցնիս, մոռնեց հա - ւատարիմ գաղաթը անդունդն ի վար ծո - լով եւ բոունցքները սպառնականօրէն սեղմելով :

ՓԻԷՐ ՄԱՐՏՕՏԵ (Շար.)

Շաբաթը կը հաղորդեն
Օրնեիկ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ

մահը :
Մանրամասնութիւնները յաջորդով :

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Պօմոնի Ս. Գ. Լուսաւորիչ եկեղեցւոյ
Թաղ. Խորհուրդը կը յայտնէ թէ՛ Ս. Ար-
մենակ Դաւիթեան հոգեհանգստեան պաշ-
տօն կատարել կուտայ եկեղեցւոյ մէջ ,
այս Կիրակի, իր ողբ. կնոջ, Մարիամի
հոգեւոյն համար, իր մահուան տարելիցին
առթիւ: Ինչպէս նաեւ՝ Դաւիթեան, Գա-
չըղճեան եւ Սրմաքէշեան զերդաստան -
ներու հին եւ նոր ննջեցելոց եւ նահա -
տակներու հոգւոյ ի յիշատակ :

Հոգեհանգստեան արարողութիւնը կը
հովանաւորէ, կը պատարագէ եւ կը քա-
րոզէ՝ թեմիս առաջնորդ ԱՐՏԱՄԱՉԳ.
ԵՊԻՍԿ. ԹՐԹՈՒԵԱՆ :

ՊԱՏԱՐԱԳ

Այս Շաբաթ առաւօտեան ժամը 10ին
Շարվիէօյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մատ-
րան մէջ տեղի պիտի ունենայ հանդիսա -
ւոր պատարագ: Կը պատարագէ եւ կը
քարոզէ Լիոնի եւ շրջանի հոգեւոր հովիւ
ԴԱԻԻԹ Ծ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մարտի 11-ի մէջ «Մանուկներու Օր»ը ,
Կապոյտ Խաչի, քաղաքի եւ շրջաններու
բոլոր մասնաճիւղերու մասնակցութեամբ,
Պօմոնի Ս. Սահակ Մեարոյ եկեղեցւոյ
սրահին մէջ, Յունուար 16ին ժամը 15ին:

×

ՊԱՏԱՐԱՍՏՈՒ ԵՑԷՔ

Կապոյտ Խաչի «Մանուկներու Օր»ուան,
Կիրակի Փետրուար 13ին :

×

Հ. Բ. Ը. Մ. տարեկան պարահանդէսը
Փետրուար 20ին, Ժորժ Ե.ի սրահը :

×

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ Կ'ԵՐԳԵՆ

ՄԱՐՏ 13ԻՆ
ՍՈՐՊՈՆԻ ՄԵԾ ԱՄՓԻԹԱՏՐՈՆԻՆ ՄԷՋ

×

Կապոյտ Խաչի Մարտի 11 քաղաքի մաս-
նաճիւղին տարեկան պարահանդէսը, Շա-
բաթ, Մարտ 5ին Սիւրանտիտի սրահին
մէջ :

×

Մուրատ - Ռափայէլեան Նախկին Աշա-
կերտաց Միութեան

ՊԱՐԱՀԱՆԳԻՍ

ՓԵՏՐՈՒԱՐ ԵՒՆ
Մամուլի Մուրատեան վարժարանի քա-
տերական ներկայացումը՝

ՄԱՐՏ 20ԻՆ

×

Դպրոցասէրի զեղարուեստական հան -
դէսը Մարտ 28ին, Կիրակի օր :

×

Վիէն. — Մանուկներուն օրը Յունուար
9ին, Սէրքը կաթնիկ սրահին մէջ :

×

Լիոն. — «Մանուկներու Օր»ը Յուն -
ուար 16ին Աղլայի Տան սրահը :

×

Մանուկներու Օրը կը սօնուի Տէսինի
մէջ Յունուար 9ին Շաբաթ երեկոյեան,
Հ. Յ. Դ. Տան մէջ :

ՄԱՐՏԵՅԻ
ՊՈԼՍԱՀԱՅԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

ԾՆՈՒՆԳԻ ՏՕՆԱԾԱՌ

Մարտի 11 Պոլսեցիներու Հայր. Մշա -
կութեան Միութեան կողմէ, Ծնունդի
սօնածառ մը կազմակերպուած է Յուն -
ուար 9ին (Հայկական Ծնունդի առթիւ) ,
կէսօրէ ետք ժամը 15ին մինչեւ կէս զի -
շեր, Պիպիլոքէֆ Փոփիլէտի սրահը, Բիւ
Ֆրանսիա Շիրա (նախկին Փլաս տ'Օպսեր-
վանս) :

Կը խնդրուի հայրենակիցներէն այժմէն
ապահովել մուտքը, զիմելով միութեան
նրա վարչական անդամներուն : Պօմոն 31
Պուլ. Պօմոն, Պ. Հրաչ Մարտիրոսեանի,
Իսկ քաղաքը 15 Բիւ տը լա Կոստ Արմէ
զերձակ Ասրանի, հեռ. 62-60-03 :

ՄԱՐՏԵՅԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Կիրակի (26 Դեկտ.) Տօն Ս. Սահակաւոր
սի նախաՎրային, հանդիսաւոր պատա -
րագ ժամը 10ին եւ Սարկաւազաց ընծա -
յարերու ժամը 11.30ին : Նոյն օրը հո -
գեհանգստեան պաշտօն կը կատարուի ե -
կեղեցւոյ մէջ բարեբար ողբ. ՎԱՀԱՆ
ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆԻ, հոգեւոյն ԳՐԻԳՈՐԻՍ
ԵՊՍԿ. ՊԱՍԿԵԱՆԻ եւ զպրապետ ողբ.
ՅԱԿՈՒ ՄԱՍԿԵԱՆԻ ի յիշատակ : Կը
խնդրուի սոյն երէք արժանաւորներու յի -
շատակը յարգել ներկայութեամբ :

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԳՈՅԱՄԱՐՏ

ՕՐԱՅՈՅՅ 1966

Հրատարակուիւն Հ. Յ. Դ. Նոր Սե -
րուի Մարտի 11 շրջանի :

Ազգայրանքներու համար ղիմել՝
O. DJARAYAN
2, Place de la Corderie
13 MARSEILLE (7e)

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍԵՆԷ

ՄԱՏԵՆԱՇԱՐ ՆԱՐԿԵԱՆ

ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆՅ

Թիւ 1

ԼՈՒՍԱՄԱՏԵԱՆ

(ՀԷՔԵԱԹ ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ)

Շ. ՆԱՐԿԻՆԻ

Ազգայրանքներու համար ղիմել հեղի -
նակին ՅԱՌԱՋԻ խմբադրութեան հաս -
ցէով : Գինը 10 Ֆրանք, փոստով՝ 12
Ֆրանք : Գումարները զրկել միայն ման -
տա -ֆաթով :

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ Է

Համախորրեղցիական Միութեան Ֆը -
րանսի շրջանի 1966ի օրացոյցը :

Գին 2.50 Ֆրանք, ղիմել մասնաճիւղե -
րու վարչութեանց :

ՊԱՇՏՕՆԵԱՅ ԿՈՒՉՈՒԻ

Աղքատախնամ ընկերակցութիւնը իր
Հանգստեան Տուններուն համար կը փնտը -
ռէ. — Ա. Տնօրէն, օժտուած վարչական
կարողութիւններով եւ տեղեակ հաշուա -
կալութեան :

Բ) Հիւանդապահուհիներ, վկայեալ
Փարիզէն կամ այլուր :

Գ) Կառավար (շօֆէոր) :

Թեկնածութիւնները ներկայացնել զը -
րուր Աղքատախնամի գրասենեակը՝

Association Arménienne d'Aide Sociale
32, Rue de Trévisse, Paris (9^e)

**ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԱՌԹԻ
ՆՈՒԻՐԵՑԷՔ
CONTES ET LEGENDES
ARMÉNIENS**

Ֆրանսերէնով պատրաստուած՝
Շ. Տէր - Մելիքեանի կողմէ

Գունաւոր կողք, մաքուր տպագր -
ութիւն, պատկերազարդ :

Գին՝ 5 ֆրանկ

Առաջին ծախքերով 6.50

Մասնաւոր համար ղիմել Հ. Սա -
մուէլեան գրատունը, եւ կամ՝

Mme C. DER-MELKONIAN
11, Rue Gabriel Péri

CHATILLON s/BAGNEUX (Seine
C. C. P. PARIS 19668-59

Կարելի է նաեւ անձամբ ղիմել Յա -
նաչի խմբադրութեան :

IMPRIMERIE SPÉCIALE
DU JOURNAL « HARATCH »
32, Rue de Trévisse, PARIS (9^e)

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲԱՅԱՌԻԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ

Կազմակերպուած Ֆ. Կապոյտ Խաչի Երջ. վարչութեան եւ մասնակիցերու
կողմանէ իրենց կայանի տասնամեակի առիթով եւ անոր ի նպատ :
Հրաւիրուած է Լուսնէն Հայ երիտասարդաց Միութեան թատերախումբը, ներ -
կայացնելու Գ. Սնդուկեանի

Պ Ե Պ Օ

Հինգշաբթի 23 Դեկտեմբեր ԱՄՖՈՐՎԻԼԻ մէջ ժամը 20.30ին
Մէլզոն - Ալֆորի քաղաքապետարանի սրահը, Բիւ ժամ - Ժօրէս :

Երեքշաբթի՝ 21 Դեկտեմբեր ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՅԻ մէջ ժամը 20.30ին
Քաղաքապետարանի սրահը :

Կիրակի՝ 26 Դեկտեմբեր ԼԻՈՆԻ մէջ ժամը 15ին
6րդ թաղամասի քաղաքապետարանի սրահը, 58 Բիւ տը Սէգ :

Չորեքշաբթի՝ 29 Դեկտեմբեր ՄԱՐՍԵՅԻԼԻ մէջ ժամը 20.30ին
Թէաթր տիւ Ժիմնազ :

Հինգշաբթի՝ 30 Դեկտեմբեր ՎԱԼԱՆՍԻ մէջ ժամը 20.30ին,
Թէաթր Միւնիսիպալ :

Տոմսեր կը վաճառեն Կապոյտ Խաչի գրասենեակը, հայ գրավաճառատները եւ
Խաչուհիները :

Ապահովեցէ՛ք ձեր տեղերը :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հայ Արիներու Միութեան Փարիզի
շրջանի տարեկան հանդէսը, Կիրակի
Մարտ 6, կէսօրէ ետք ժամը 2.30, Սալ
տը լա Շիմի :

×

Ս. Խաչ Ընկերակցութեան տարեկան
պարահանդէսը Փետրուար 27ին :

ՀՐԱՊԱՐԱԿ ԵՂԱԻ

ԱՐԱ ՊԱՐԹԵԻԵԱՆԻ

«ՀԱՅ ԱԷՆՖՈՆԻԻԲ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ» նոր երգապնակը
Mc 20176, Vogue — Série Artistique

« OEUVRES SYMPHONIQUES » d'ARA BARTEVIAN

Par le célèbre orchestre

DES CONCERTS COLONNE

- 1. — Rhapsodie Caucasienne (Կովկասեան Համախումբ)
- 2. — Dans une Forêt en Novembre (Անտառի մէջ՝ Նոյեմբերին)
- 3. — Bergers à la Montagne (Հովիտները լեռան վրայ)
- 4. — Fête Villageoise (Գեղջկական տօն)

Մասնաւոր համար ղիմել հեղինակին

Ա. ՊԱՐԹԵԻԵԱՆ — 14, Rue Petit, Paris (19^e), Tél. BOT 99-22
15, Rue Jean Goujon, Paris (8^e)

Գին՝ 30 ֆր.

Microsilon 33 tours, 30 cm. 45 վայրկեան
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԳՈՒՆԱՌՈՐ ԿՈՂՔ

ՆԱԽԿԻՆ ԵՐԳԱՊՆԱԿՆԵՐԸ

Եկմալեան պատարագ N° 20114 — Կոմիտասեան պատարագ 20150
Գանձարան Հայ-Եկեղեցական երգերու N° 20169 եւ 20175
Ժողովրդական երաժշտութիւն 20103 (Հայ Կովկասեան երգեր) 20136 (Arménie)
20157 Reflets d'Arménie, 20162 (Arménie Imortelle),
20169 (Promenade en Arménie)
20172 (Soirée Arménienne) — 10016 երգեր՝ Իրիս Պիլպիլեանէ
Գաւառներու աւաճում contre remboursement խնամուած ծրարով

ԸՆԹԱՅԻԿ ԱԶԳԵՐՈՒ ՍԱԿԱԳԻՆ

ՄԵԿ ԱՆԳԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԳ	45 ֆ.	մինչեւ 1/4 սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍ	25 ֆ.	մինչեւ 1/8 սիւնակ
ՅԱԻԱԿՑՈՒԹԻՒՆ	10 ֆ.	» » »
ՇՆՈՐՀԱԿԱԼԻԻԲ	20 ֆ.	» » »
ՀԱՐՍԱՆԻԲ : ՆՇԱՆՏՈՒԲ	25 ֆ.	» » »
ԾՆՈՒՆԳ	25 ֆ.	» » »
«ՓՈՒՍԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ»	10 ֆ.	» » »
«ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ»	10 ֆ.	» » »
ԾԱԽՈՒ Է	25 ֆ.	» » »

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ ճշմանկուած ծաւալով ազ -
դերու համար են, չորրորդ էջը :

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է :

Առետրակամ կամ այլ ազդերու մասնաւոր պայմաններում համար
գիմել վարչութեան :

ՕՐՈՒԱՆ ԵՕՍԲԸ

ԲԱՅՑ ԵՒ ԱՅՆՊԷՏ

ՅԱՂԹԵՑ

— * —

Ժողովուրդը, որ վերջին խոսողն է ժողովրդագրականության մեջ, վերջին վճռողն է ազատ երկրի մեջ, անդամ մը եւս ընտրեց տը Կոլը, կամ աւելի ճիշդ նախընտրեց տը Կոլը :

Ուրանալի չէ անշուշտ, թէ այս նախընտրութիւնը նոյնքան զերբութեամբ չըտուաւ այս անգամ : Զօրավարը վարժըւած էր աւելի զիւրին յայտնակներու, աւելի յաճախ շահած էր ժողովուրդին վտանգութիւնը եւ զանգուածային համակրութիւնը : Այս անգամուան իր յայտնակը նմանեցաւ չըմանաւարտի մը քննութեան : Եւ տը Կոլ իր վկայականը ստացաւ միայն երկրորդ անգամ, որ զպրոցական լեզուով արիւնջածի քննութիւն մըն է : Պարտաւորուեցաւ բացատրել իր քաղաքականութիւնը, լուսարանել հանրութիւն մը, որ յանկարծ սկսած էր կարծիք ունենալ, վասնզի մարդիկ եկած էին իրեն ըսելու թէ ամէն ինչ լաւ չընդհանր է : Հանրապետութեան մէջ եւ հարկ է փոխել անոր ղեկավարը :

Առաջին անգամ, Դեկտ. 5ին, նախագահ Կոլ մնաց համեմատականի, նոյն իսկ փոքրամասնութեան եթէ նկատի առնենք, ինչպէս քաղաքական կարգ մը անձնաւորութիւններ զիտել տուին, թէ ժողովուրդին ճիշտ հարկերը բռնակրկելով հանդերձ ճիշդ զանազան թեկնածուներու, քուէարկեց տը Կոլը զէմ :

Ասոնց մէջ կային ձախերը, զժողով մեծաւորներու քաղաքականութեան մը եւ ընկերային տեղեկայի : Այլընդոք հեղափոխական եւ արտադրական քաղաքականութեան : Ծայրայեղներ կամ ներքաղթածներ, զժողով Մայիս 13ին ետք, ծնած յուսարտութիւններէն :

Երիտասարդ մարդ մը, կեղծոյնի թեկնածու, մէկ օրէն միւսը ստացաւ մօտ 4 միլիոն ձայն, հակառակ իրեն զէմ տեղացած խճճանքներուն, ակոսներուն ճեղքուկութեան վերաբերեալ կամ ժեզեմ-Փրքիլի ժողովին : Այս ձայները կուգար ին տը Կոլին, մասամբ վերադարձան տը Կոլին, 15 օր ետք, երբ ասպարէզը մնաց երկու թեկնածուներու միայն :

Միթրան զիտէր թէ առաւելագոյն յայտնակը պիտի ըլլար ձայներու այն համեմատութիւնը զոր ստացաւ : Խնդրոյ առարկայ չընելով հանդերձ իր անձը, հարկ է ընդունիլ թէ ձախերու ընտրութիւն էր ձախերու ընտրութիւնը : Աւելի արժանաւորական կը թուէր ըլլալ Տէֆէրի մը ծրագիրը, որ կ'ուզէր ձախ — կեղծոյն համախմբում մը, առանց համայնավար օժանդակութեան : Արդարեւ բերելով հանդերձ աւելի քան չորս միլիոն ձայն, համայնավար կուսակցութեան օժանդակութեամբ թեկնածուներու հետեւեց Միթրանին : Միթրանին մը փախ — Բոզով տարուած էին : Եւ արդէն ինչո՞ւ համայնավարները զօրավար կեցան Միթրանին, որ քաղաքական ոչ մէկ զիջում ըրած էր իրենց : Հասանարար տարուած ընդդիմադիրներու այն տեսակէտէն թէ «նախ եւ առաջ տը Կոլը ձայները, յետոյ կը աւանդուին» : Բայց Ֆրանսայի յետագայ տարիներու պատմութիւնն ու տը Կոլի ճակատագիրը նոյնպէս, ինչպէս կը սերէ նկատել նախագահը, թոյլ չտուին որ «աւանդուին» : Ու իրենց յոյս դրած են ներկայիս 1967ի երեսփոխանական ընտրութեանց վրայ : Մինչ այդ հարկ է որ կարենան ճակատ կազմել ու համաձայնել թէ կ'ուզեն իրաւունք չտալ տը Կոլին, երբ կը ձայնի իրենց ներքին հաշիւներն ու վէճերը, երբ կը դատաւարաբէ կուսակցութեանց վարչաձեւը :

Անոնք, որ կը յարդեն վերընտրուած

ՕՐՈՒԱՆ ԴԵՊԲԵՐԸ

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐԸ

— * —

ՏԸ ԿՈՒ ՓԱՐԻՁ ՎԵՐԱԿԱՐՁԱԻ

Երեքշաբթի օր, նախագահ տը Կոլ փարիզ վերադարձաւ, ուր Զորեքշաբթի օր կը նախագահէ նախարարաց հերթական խորհուրդին :

Եթէ Ֆրանսայի մէջ, զանազան հոսանքներու ներկայացուցիչներ մտած են թէ նորընտիր նախագահը այլեւս չի կրնար շարունակել նոյն քաղաքականութիւնը, արտասահմանի մէջ նոյն կարծիքը չկայ ամէն կողմ :

ԳԵՐՄԱՆԻԱ : Դանիակցային Հանրապետութեան համար տը Կոլի ընտրութիւնը նուազագոյն չարիք մը կը նկատուի : Նախկին վարչապետ Ատլանտը չի ծածկեր իր գոհունակութիւնը «իրբեւ զերմանացի եւ իրբեւ Եւրոպացի» մինչ պաշտօնակցի շրջանակները կ'ուզեն ձեւ մը գտնել «տը Կոլի հետ ապրելու համար» : Անկախ Ֆրանսիոյ Այլընդոքը կը զրէ թէ Լըքանիւէի երեք միլիոն 600 հարզայնէրը նախընտրեցին տը Կոլը, երկրորդ շրջանին, ժողովրդական ձայնի վախճն : Պարզապէս նուազագոյն չարիքն ընտրեցին :

ՊԵՆՏԻՆԱ : Պենտինը կը յուսան որ տը Կոլ կը բարեփոխէ եւրոպական իր քաղաքականութիւնը : Պրիւսիայի անկախ Լը Սաւաը կը զրէ թէ Պետութեան զեկա վարին կը մնայ ցոյց տալ թէ պոստիւրթութիւն չէ : Կաթոլիկ Լիպըր Պիլիքի համար, արկածանդրութեան ձայնն փակ է, տը Կոլի վերընտրութեամբ : Բնութիւնը, ի վերջոյ ձախին եւ արդէն միջին է : Կոլը այլ անկատար կարողութեան մը եւ շատ վտանգաւոր տակնուրացութեան մը : Կարելի է մտայնել թէ միջազգային զեմի վրայ, մանաւանդ եւրոպական, Ֆրանսան այսօր աւելի ժպտուն եւ նըւազ արհամարհական զիրք մը բռնէ :

ԻՏԱԼԻԱ : Ընկերավարական Ավանքի կը խորհուրդը «տը Կոլ» յայտնական, կոլիզմը՝ պարտուած », ընտրութեան նախօրէակին իսկ Եսթրաթ : Գլխաւոր հարցը կը մնայ զիտնալ թէ տը Կոլ պիտի փոխուի : Քոռիէտէ տէլլա Սեռա չի հաստատար : Զօրավարը եւրոպականութեան չէ դարձած : Չի կրնար փոխուիլ : Բան չտրվեցաւ : Չափաւորական իլ թեմիո նոյն կարծիքն ունի : Տը Կոլ այն մարդը չէ որ զէպքերէն զու մը քայլէ :

ԱՄԵՐԻԿԱ : Նիւ Եորք Թայմզ կը Նիւ Եորք Հերալտ կը խորհին թէ այլեւս ամէն բան կախում ունի այն մեկնութեանց զոր տը Կոլ պիտի տայ ընտրութեան արդիւնքներուն : Հարկ է զիտնալ թէ Զօր տը Կոլ պարզ ազգային քաղաքականութիւնը պիտի վերադրէ նուազագոյն չէ համեմատականութեան :

Նախագահը, չըլլալով կոյր համակիրն էր, կը յուսան թէ տը Կոլ նկատի պիտի առնէ կեղծը եւ աւելի կարեւորութիւն տայ ուրիշ կարծիքներու եւ բարեփոխի իր քաղաքականութեան կարգ մը անդիւնդ երեւոյթները :

Ու այսպէս քանի մը օրէն, կը սկսի Եւրոպական հանրապետութեան երկրորդ եօթնամեակը : Աւելի պայծառ քան նախորդը, վաւերի վէճերը կը սպիանան, դառնու թիւնները կը հեռանան, ու մարդը, որ զարնանային օրուան մը կոչով, դարձաւ հեղափոխիչ զէմը մը, իր կեանքի վերջալոյսին ստացաւ փորձառութեան մը դասը : Երկար քաջատրեց իր անհրաժեշտութիւնը : Դժուար համոզեց բայց եւ այնպէս համոզեց, զժուար յայտեց բայց եւ այնպէս յայտեց :

«ՅԱՌԱՋ»

ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԷՃԵՐԸ

ԽՄԲ. — Էջմիածնէն ստացանք Գերա — գոյն Հոգեւոր Խորհուրդին հետեւեալ «Հայտարարութեամբ», նոյն խորհուրդին անդամներէն՝ Յուսիկ Եպիսկոպոսի մէկ երկտողով, «Խրատարակման Խնդրաւոյ» :

Ամենայն Հայոց Հայրապետի նախագահութեամբ, Հայ Եկեղեցու Եպիսկոպոսական Ժողովը՝ դուժարով Ս. Էջմիածնում այս ատարի Նոյեմբերի 2ին, վշտով տեղեկացաւ եւ իր վրոյմունքը արձանակեց Անթիլիասի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռի նոր կանոնադրութեան 32 եւ 33րդ հոդվածների համար, որոնք հանդիսանում են ծանրակշիռ խախտում Հայ Եկեղեցու նվիրապետական կարգի եւ իրավասութեանց սահմանների, բացահայտ կերպով հակադրում Հայ Եկեղեցու միութեան ու նվիրապետական անձնակազմի միջին համեմաշի կործակումը — թյան սիրունքի, ինչպէս եւ ամբողջական ժրխտում Երուսաղեմի 1963ի ողջագործան ոյու :

Վհահաւառ Հայրապետի բարձր նախագահութեան ներքո Գերազույն Հոգեւոր Խորհուրդը իր Նոյեմբեր 18ի նիստում խորունկ տրտմութեամբ հաստատեց եւ դատապարտեց վերոհիշյալ ողբեր իր ուղեւորները, որը Միջուրը Հայ Եկեղեցական — ազգային կյանքի մէջ ծնունդ է տալու աղետալի նոր տագնապների ու պառակտումների :

Հանուն մեր Սուրբ Եկեղեցու եւ ժողովրդի գերազույն իղձերի ու շահերի, մի անգամ եւս կոչ ենք անում Տանն Կիլիկիոյ Երեւոյնքը Գահակալին եւ Անթիլիասի պատարանաւոր մարմիններին, հետ կանգնելու այս անօրինական, եկեղեցաքանդ ու ազգամատն ընթացքից : Չեղալ համարել վերոհիշյալ հոդվածները եւ ուղղամտորեն կործել Երուսաղեմի ողջագործումի ողբով, որ միակ ուղին է եկեղեցական կյանքի ամբողջութեան ու ծաղկման, եղբայրական սիրո եւ խաղի զուլում մէջ :

Չեմոպէս կոչ ենք անում նաեւ Հայ Եկեղեցու բոլոր սպասաւորներին անխրատի, բոլոր Հայ կաղմակերպութեաններին, Հայ մամուլին եւ համայն հալա — սացալ մեր ժողովրդին՝ թույլ չտալու որ անօրինական արարքներ, ոտնձգութեաններ ու պառակտումներ տարածվեն Միջուրը Հայ Եկեղեցական կյանքի մէջ եւ արթուն կերպով հակելու, որպէսզի

մատականի մնալը թէ ընդհակառակն իրբեւ դաս մը :

ԽՈՐՀ. ՄԻՈՒԹԻՒՆ : Արձագանքները շատ չափուած են : Նկատելի միակ կէտն այն է թէ մամուլը աւելի տեղ տուաւ ընդդիմադիր թեկնածուին ներքին քաղաքականութեան եւ տը Կոլի արտաքին քաղաքականութեան :

Լիբանան եւ Եգիպտոս մեծ ուրախութեամբ ողջունած են տը Կոլի վերընտրութիւնը : Փեքին կը լռէ չկարենալով ծածկել որոշ գոհունակութիւն մը : Թոքիո կը խորհի թէ պէտք է աւելի ճկուն դարձնել կարգ մը զէրքեր :

Վարդ մը ապրիլներու համաձայն նախագահ տ Կոլ պիտի խօսի այս շարքու կամ պաշտօնական յայտարարութիւն մը ընէ :

ՇՈՒ ԷՆ ԱՅ քոլորովին զէմ արտա — յայտուած է բանակցութեան օրեւէ զաւարի : Չին վարչապետ կ'ըսէ թէ վիէթնամցի ժողովուրդին համար միակ լուծումը որ կայ կ'ուր շարունակելն է մինչեւ որ «ամերիկացի յարձակողները երկրէ վանուին» :

պաշտպանվեն մեր Եկեղեցու նվիրապետութեան դարավոր կարգն ու կանոնը, ներքին միութեանը եւ հայ հավատացալ ժողովրդի միասնութեանը :

ԳԵՐՄԱՆԻԱՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ (ԿՆԻՔ)

7 Դեկտեմբեր 1965 թ.

Ս. ԷՋՄԻԱԾՆ

X

Կրնայինք չհրատարակել այս «Հայտարարութեան», մեղաւորեց չըտնալու համար Էջմիածնի «Գերազույն Հոգեւոր Խորհուրդին» ընթացքին :

Կրնայինք չհրատարակել այս «Հայտարարութեան», չմանկալու համար արտասահմանական այն խմբադասութեան, որոնք դարձած են Էջմիածնական զանգուհատուն, կամ եթէ կ'ուզէք՝ պէժրուա, պատրաստ՝ հնչեցնելու համար հրեքի եւ պատերազմի անգանդները :

Նախ որովհետեւ չուզեցինք հրճել զերկատարել կամ մարտակող կարգալ՝ առանց վախճալու որ կը զրկուինք Մայր Աթոռին խունկէն ու մոմէն :

Եպիսկոպոսական Ժողովներու նորահաս անդամները եթէ բաւական բան հասկցած ըլլային մեր պատմութեան հին աւանդութիւններէն ու նոր պայմաններէն, բաւական փիւտեռ ունենային՝ ցլամարտի յատուկ կրկններու մէջ չնկատու համար եկեղեցական ու կրօնական հարցերը, (բաւական չեղանք միթէ հին օրերու կոխները, որոնք սպառնեցին մեր ժողովուրդին ուժը), վերջապէս բաւական հաղորդակից ըլլային արդի ժամանակներու ողբին, պիտի չուզէին մամուլը մասնակից դարձնել իրենց այս վէճերուն ու կրիւններուն :

Ուրեմն, նախ չուզեցինք հրատարակել այս «Հայտարարութեան», բարեւոք համարելով նամակ մը զրել առ որ անկէ, ըսելու համար — Այ կը բաւէ՞, եթէ վէճ ունիք՝ նամակով բացատրեցէք, մարդ զրկեցէք, բանակցութեան կատարեցէք, բայց Աստուածն'ը սիրէք, մի գրադեցէք այս յոյնած ու զժրխտ ժողովուրդը : Քիչ մը տարբերութիւն զրէք՝ հեռաւորով մրցակից առաւորակներէն, որոնք իրենց սովին ու սխառակն ծանուցումը թերթով միայն կուտան : Չեր մէջ չկա՞ր խորհուրդ տուող մը, որ ըսէր թէ ասանկ վէճեր կը լուծուին թղթակցու — թեամբ եւ բանակցութեամբ, զպատիւ նամակներով եւ զպատիւ բանադնացներով :

Եկեղեցական պաշտամունքներու եւ խորհուրդներու նկարահանումով օրա — թերթեր պատկերազարդելու սովորութեանէն ետք, որ շատ ընդհանրապէս՝ հակառակ աւանդութեանց, — չէ՞ որ սարկաւալը կ'ազգապէս պատարալի պահուն՝ « մի օք ... մերձեցիլ յաստուածային խորհուրդ », վասնզի զիտնին իսկ մեկը կը համարուէր, — այժմ կ'ուզէք մամուլին մէջ փոխադրել եւ պատարալի կ'ը կրի ու կալ : Բայց ի՞նչ փոխթ մեր ընդ — վրոյմը, վստահ ենք որ Էջմիածնի արտասահմանական պէժրուաները պիտի զօղանջեն՝ հրատարակելով հրճիւղային այս « Հայտարարութեան » : Ուրեմն, մենք եւս կը հրատարակենք, իրբեւ նիւթ պատմութեան : Ու կ'աւանդենք . — Աստուած սահմանական հայ մամուլին մէջ՝ Յուսիկ ըլլալով այն միակ թերթը, որ չէ ծածկած երբեք իր ընդվրոյմը կ'ըրապետութեան հանդէպ, ու մեկնելով այն սկզբունքէն թէ կրօնքը անհատական հոգեկան գոհացման հարց է (խղճի հարց է կ'ըսէին հիները), մենք պիտի ներկայացնենք մեր քննադատութիւնը բացում այս վէճին մէջ, առանց խնայելու մէկ կամ միւս կողմին, յայտարարելով բարձրապակի . —

Ազգը ամէն բանէ վեր :

Իսկ թէ ի՞նչ է ազգը, աւելի լաւ է հետեւի մեր քննադատութեանց :

ԽՄԲ.

ՆԻԿՈՒ ԱՂԲԱԼԵԱՆԻ ՀԵՏ

Բ.

Հակառակ նիւթական իր անձուկ վիճակին եւ աղբուստի նեղ պայմաններուն: Աղբուստի չէր յօժարեր զրել զբամով եւ զբամի համար: 1926ին էր կարծեմ, « Հայրենիք » ամսագրի խմբագիրը՝ Ռուբէն Գարբինեան նամակով մը կը խնդրէր Աղբուստին աշխատակցել ամսագրին եւ կը խոստանար ամէն մէկ էջին բացառաբար երեք տուր վճարել իրեն: Նամակը տուաւ ինծի կարգաւ: Հայրենիքը, որ եթէ տասը էջ բան գրէր ամէն ամիս, պիտի ստանար երեսուն տուր, ինչ որ բաւական շուշափելի դուրս մըն էր իրեն պէս մէկուսն համար:

— Ե՛հ, — ուրախացայ ես, — այս գումարով կրնաք ... նախարարի պէս ապրել:

Նամակը ծարեց զրոյանը զրաւ եւ, շեղակի նայելով ինծի, յարեց.

— Ես կեանքի մէջ զեմօղորտ եմ, բայց զբաղանութեան մէջ արիստոկրատ եմ:

Բնաւ չեմ մոռնար այս յայտարարութիւնը, որ զրոյի իր հպարտութիւնը կը հաստատէր: Հմուտ մարդ էր, բարձրակողմանի կարողութիւններով օժտուած ամէն ամիս զրուակեամբ կրնար 8 - 10 էջ բան գրել ամսագրին մէջ, սակայն կը տեսնէի ահաւաստի, որ կը մերժէր զբաղանութեան մէջ ալ զեմօղորտ ըլլալ, ինչպէս էր կեանքի մէջ:

Այս անգամ զրոյին արժէքը բարձրացաւ իմ աչքին, ինչպէս նախատեսողին մէջ բարձրացած էր անձին արժէքը, երբ կը յայտարարէր, թէ ոչ «նետեղ» կրնայ, ոչ ալ մանուկն ուստ խօսիլ:

Կեանքի մէջ ժլատ այս մարդը զրակաւորութեան մէջ ալ ժլատ էր ուրեմն: Աւելի շատ կը սիրէր խօսիլ, քան գրել, բայց շատ աւելի կը սիրէր կարգաւ, քան խօսիլ ու գրել: Մոլի ընթերցող էր: Օրերով կը կարդար առանց յոգնելու, առանց իսկ ձանձրանալու: Բարեբաղ մը դուրս եւ բերել տուած էր Վիլհելմայի հայագիտական ամբողջ մատենաշարը եւ բառին բուն առումով «թագուցեաց» ընթերցումի մէջ տունը, զպրօքը, սրճարանը, ուր որ պատահէր: «Գիրքերը — կ'ըսէր, — անխարդախ բարեկամներ են: Կը հանին» կը շարունակէր կարգաւ, չէս հանիր՝ կը նետուէր մէկ կողմ: Ատոր համար ոչ քէն կ'ընեն, ոչ ալ կը բամբասեն քեզ»:

Եղիա Տէմիրճիպաշեանի համար կ'ըսեն, թէ Հայոց մէջ ամէնէն շատ զիրք կարգացող մարդն էր: Նոյն բանը կրնանք ըսել Նիկոլ Աղբալեանի համար ալ:

— Ես, — կ'ըսէր ուրիշ անիթով մը, — կենցաղով աշխարհական եմ, իսկ խառնուածքով՝ վանական:

Աշխարհը վանք դարձուցած էր, ինչպէս ուրիշներ վանքը աշխարհ դարձուցած են:

Նիկոլ Աղբալեան իրական իմաստով մատուցող մըն էր: Մատուցողներ կրնայ զրոյ չըլլալ, ինչպէս զրոյը կրնայ մատուցող չըլլալ: Ուրիշ խօսքով՝ ամէն զրոյ մատուցողն է, ինչպէս ամէն մատուցողն զրոյ չէ:

Պիտի ըսեմ աւելին. — Նիկոլ Աղբալեան հայ մատուցողն էր եւ ոչ թէ մատուցողական Հայ: Տարբերութիւն մը կայ, անշուշտ, այս երկուսը:

Նախ հայ է, յետո՛յ՝ մատուցողական, մինչ երկրորդը նախ մատուցողական է, յետո՛յ՝ հայ: Այսպէս, օրինակ, բարձրարժէք արուեստագետ մըն է Տիրան Չրաբեան եւ կասկած չկայ, որ շատ աւելի մեծ զբաղէտ է, քան Հրանդը: Բայց Հրանդն է հայ զբաղէտը:

Աղբալեանի կը վերագրուի այն խօսքը, թէ հայ զրոյը պէտք է նախ հայ ըլլայ, որպէսզի կարենայ հասնիլ ինքնատուութեան: Արուեստագետ կուգայ «հայ» լեզուով: Այս իմաստով՝ զերգանց Հայն էր ինք, զերգանց մտաւորական մը ըլլալէ առաջ: Ըսած կամ գրած է տեղ մը, որ հայանալու համար պէտք է Բաֆֆի կարգաւ, պէտք է Արուեստի կարգաւ: Իր կարծիքով — եւ իմ կարծիքով ալ — Բաֆֆին հայ զրոյ է, Արուեստի հայ զրոյ է: Միւսները զբաղէտ Հայեր են, իսկ այս երկուքը հայ զբաղէտներ են: Եւ անուշտ այս երկուքով չի վերջանար հայ զրոյներու շարքը:

Պէ՛տք է ըսել, թէ Աղբալեան քաջա՝ հմուտ էր հայ հին ու նոր զրականութեան: Կարգացած եւ խորագետ ուսումնասիրած էր մեր բոլոր պատմիչները, Աղբալեանը կուգայ մինչեւ Չամչեան: Հայը սիրելի էր իրեն, հայերէնը՝ նոյնպէս, Հայութիւնը՝ ստուելի էր: Իր գործով ու նախասիրութիւններով, բանակէր, իմաստարան, բայց անխտելիօրէն արուեստագետ էր խառնուածքով եւ զգայնութեամբ:

Հետամուտ էր հմտանալու: Լայն էին իր հետաքրքրութիւններն ալ: Հետզհետէ բանասէրը կ'իշխէր քննադատին եւ լեզուաբանը՝ զբաղէտին վրայ: Իր անօրէնութեան չըջանին՝ կը կանչէր վարժարանին աստուցի անոնքը եւ անկողն շարքումներ կ'ուղղէր անոր, բոսեր արտասանել կուտար՝ Սասունի բարբառը եւ բառերու շեշտադրութիւնը ուսումնասիրելու համար: Կը զարմանայինք, երբ կը տեսնէինք, որ անօրէն եւ անտես, ժամերով կ'ըլլէր — զլլի տուած, անկողն կը խօսէին: Ետքին միայն հասկցանք, թէ «բանը ինչուսն էր»:

Ատեն մըն ալ սկսաւ Օմար Սայիամ կարգաւ: Կը փորձէր թարգմանել պարսիկ բանաստեղծին քառյակները: Բնագիրը թեհարանէն բերել տուած էր: Ինք կը հետեւէր բնագրին, իսկ Գարբին թարգմանութիւնները կը թարգմանէր իր թարգմանութիւններէն:

ՌՈՒՍ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐԸ ՊԻՏԻ ԳՐԱԿԻՆ ԱՆԱՏՈՂՈՒՆ

(Ինքնօր կը ԳՐԵՆ)

ԹՐԳԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ

Ներկայիս, Թուրքիոյ մէջ նմարը կը հակի այն մարդուն կողմը, որ աւելի ունենոր է, աւելի հարուստ: Եւ սակայն, պիտի դայ օրը, ուր ասիկա այսպէս պիտի չըլլայ եւ նոր ձեւ մը, նոր վիճակ մը պիտի ստանայ»:

ՓԱՒՈՎԻԶԻ ԵՂՈՅԹԸ

Գործադիր Կոմիտէի անունով ալ խօսք առած է Փաւլովիչ, որ անդրադասնալով Թուրքիան հետաքրքրող խնդիրներու եւ օրուան տիրող պայմաններուն, ի մէջ այլոց ըսած է հետեւեալները.

— «Եթէ իշխանութիւնը պիտի մնայ հարուստներուն, կալուածատիրոջ եւ շա՛

ԲԻԻԶԱՆԴԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾԻՆ ՄԷՋ

Ա.

Փառաստ Բիւզանդացի զերբը կը վերջացնէ հետեւեալ տողերով.

«Նախարարները զիմեցին պարսիկին եւ խնդրեցին որ Արշակունի թագաւոր մը գնէ: Արքայից արքան մեծ ուրախութեամբ ընդունաւ, Սոսրովը նշանակեց կնութեան տայով իր քույրը: Արշակ Յուսուս թագաւորը: Յոյն զորքերը Արշակին, պարսիկ զորքերը Սոսրովին օգնութեան եկան: Դեսպաններ փոխանակուեցան, թագաւորներ խորհուրդ ունեցան եւ համաձայնեցան Հայոց աշխարհը բաժնելու: Անոնք կ'ըսէին. «Մեր երկիրներուն միջեւ ինկած այս հզօր եւ հարուստ թագաւորութիւնը թուրքներու ենք եւ խանդարելու՝ բաժնելով երկու Արշակունի թագաւորներով, յետոյ կը կրճատենք, կ'աղքատացնենք, որպէսզի չկրնան զլուր բարձրացնել: Ուրիշ դուրս մաս մը մնաց հայ թագաւորներուն: Սոսրովի բաժինը Արշակինն աւելի մեծ էր»:

Բաժանումը կը կատարուի ուրեմն նախարարներու խնդրանքով 387 թուին (389ին Մարտիտարի, 390ին համաձայն) շատ քրիստոնեայ թէոտոս (379 - 395) եւ Շապուհ Գ. (384 - 389) միջեւ: Հաւանական կը թուի որ նկատի ա՛նր կը բաղդատէր իրարու հետ: Չեմ զիտես սակայն, թէ բաւական ծանօթ էր պարսիկէնի կամ թէ ինչ եղան իր թարգմանած քառյակները: Գիտցածս այն է, որ Օմար Սայիամ կը կարգար:

Գրակախութիւնը աւելի շատ կ'ապրէր, քան կը գրէր: Ըսել կ'ուզեմ՝ զրեւով զբաղանութիւն չէ ըրած այնքան, որքան ըրած է բերնով խօսելով: Եւ իր խօսքը զբաղանութիւն էր արդէն: Կան, որ նախ բանասէր են, լեզուաբան եւ այսպէս միայն արուեստագետ: Նիկոլ Աղբալեան հակառակն էր, նախ արուեստագետ էր եւ այսպէս՝ միւսները:

Իր քննադատութիւնը ստեղծագործութիւն մըն էր ուրիշ ստեղծագործութեան մը մէջ, ինչպէս որ պիտի ըսէր Օսկար Ուայլը: Գրակախ զործ մը կը վերջանէր այնպէս որ ըրածը այլեւ վերլուծում չէր ըլլար, այլ կ'ըլլար զրական ստեղծագործութիւն: «Երազ եւ մեկուսացում»ը, զրուած՝ Շանթի «Հին Աստուածներ»ուն մասին, այս դասին կը պատկանի: Երբ առաջին անգամ կարդացի դայն «Նոր Հոսանք»ի մէջ, խոր տպաւորութիւն ստացայ եւ այսպէս ալ ըսի իրեն:

